

ՍԱՐԳԻՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ

**ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ
ԿՅԱՆՔԸ
ԵՎ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ**

ԵՐԵՎԱՆ 2001

ԴՏՀ 891. 981. 0

ԳՄԴ 83.3 Հ1

Գ 885₄

Գիրքը հովանավորել է՝
Վիկտորյա Ալեքսանի Ադամյանը
Համակարգչային ծախսերը հոգացել է
որդին՝ Սամվել Գուրգենի Հայրապետյանը

Աշխատանքը հրատարակության էներաշխավորել Երևանի պետական
համալսարանի հայ գրակ. ամբիոնը և ֆակուլտետի խորհուրդը.
գրախոսներ՝

դոկտ. պրոֆ.՝ Զ. Վ. Ավետիսյան,

դոկտ. պրոֆ.՝ Վ. Հ. Սաֆարյան

Պատասխանատու խմբագիր՝

ակադ. Հ. Ս. Թամրազյան

Գ 885₄ ՄՆԻԹԱՐՅԱՆ Ս.

Գրիգոր Մագիստրոսի կյանքը և գեղարվեստական ժառանգությունը: Մենագրություն.-Եր.: Լուսակն, 2001թ., 165էջ:

Մենագրությունը նվիրված է հայ միջնադարյան գրականության մի կարևոր ժամանակաշրջանի՝ 11-րդ դարի քաղաքական, կրոնական, մշակութային դեմքերից մեկի՝ Գր. Մագիստրոս Պահլավունու կյանքի և գեղարվեստական ժառանգության քննությանը:

Գ 4603010000 2001թ.
0150(01) 2001

ԳՄԴ 83.3 Հ 1

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Թեև հայագիտությունը երկար և արգասաբեր ճանապարհ է անցել, այդուհանդերձ մեր մշակույթը կարիք ունի նորոգվի քննության ու գնահատմանը: Պա այդպես է, որովհետև համամարդկային իդեալի բարձրագույն դրսևորումների գեղարվեստական մարմնավորման ձևերը շատ բնագավառներում մեզանում հայտնագործված են եղել / քաղաքաշինության, եկեղեցաշինություն, խաչքարային արվեստի, մանրանկարչության, խոսքարվեստի և այլ բնագավառներում/: Այստեղ և ... այլուր հայ մտքի մեծերը հասել են լուրջ նվաճումների, հետևաբար նրանց ձեռքբերումը միայն մերը չէ, այլ հանուր մարդկությանը: 10-11-րդ դարերում ասպարեզ են գալիս այնպիսիները, որոնցից յուրաքանչյուրը մի նոր երևույթ էր հայ և համաշխարհային մշակույթի պատմության մեջ: Ժողովրդի ստեղծած «Սասնա ծռեր»-ը, Գր. Նարեկացին, Գր. Մագիստրոսը և ուրիշներ իրենց ստեղծագործություններով հեղաշրջում են հայ մտավոր կյանքը, վերածնունդ անտիկ մշակույթի բարձր ձեռքբերումները: Այդ շղթայի կարևոր օղակներից մեկը Գր. Մագիստրոսի գրական և գիտական ժառանգությունն է: Պատկերավորման, ընկալման և յուրացման սահմանները ընդլայնվում են մինչև համատիգերական ընդգրկման աստիճանի: Շրջանառության մեջ են մտնում աշխարհա-ընկալման նոր չափանիշներ: Իրականության արտացոլման ազգային սահմանները ծավալվում ու տարածվում են նաև այնու, որ մեր մշակույթի մեծերն իրենց մեջ կրում են ժամանակի առաջավոր մտքի ողջ նվաճումները: Նրանք հարազատորեն են վերաբերվում գիտության մեծ սիրահար Պտղոմեոս Երկրորդին, Չերոդոտոս պատմիչին, ավետարանիչներին, եկեղեցական մեծ հայրերին, պարսից և արաբ իմստասերներին: Այստեղ ոչ մի սահմանափակում չկա, ինչպես սահմանափակում չենք տեսնում «Աստվածաշնչից» «արտաքին» գիտությունների ոլորտն անցնելիս և հակառակը: Գր. Մագիստրոս Պահլավունին խոր ակունքներ ունի և ուժեղ սկիզբ է: Նա այն բարձունքներից է, որը մի փորձից չի նվաճվում, Ընդհակառակն, ամեն մի առնչություն մղում է նոր բացահայտման: Հանրագիտակ մտածողի, բազմալեզու գիտնականի և խորաթափանց արվեստագետի թողածը պիտի համակողմանիորեն մեկնել ու ուսումնասիրել: Միջնադարյան գրականության մեջ Գր. Մագիստրոսը ոչ միայն մեծ սկիզբ է, այլև նոր շարունակություն: Նրա

կյանքի քննության վերաբերյալ մեծ աշխատանք կատարվել է նախկինում: Սակայն ստեղծագործությունների մասին շատ քիչ է գրվել: Պատճառները բազմաթիվ են. մի կողմից՝ հեղինակի բարդ լեզուն, մյուս կողմից՝ ստեղծագործությունների ոչ համակարգված ուսումնասիրությունները: Գործն ավելի շատ առաջ է տարվել պատմագիտական, որոշ մասնակի՝ գրական-պատմական, քննադատական մտքի պատմության և կենսագրական խնդիրների լուսաբանման տեսանկյունից: Մինչդեռ այդ ժառանգությունն անհրաժեշտ է խորությամբ և համակողմանիորեն ուսումնասիրել գրականագիտական ուղղվածությամբ ևս, ինչը և որոշել ենք իրագործել մենք:

Գր. ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Պահլավունիների ծագման հարցի շուրջ

Պահլավունյաց իշխանական տունը Բագրատունիների թագավորյան շրջանում համեմատաբար նոր առաջացած տոհմ էր, որը հայկյանքում երևան եկավ 10-րդ դարում և գոյատևեց մինչև Կիլիկյան թագավորության անկումը: *«Այդ ժամանակներից սկսած մոտ երեք հարյուր տարի շարունակ,- գրում է Կ. Կոստանյանցը,- այդ տունը տվեց հայրենիքին հոյակապ շառավիղներ, հավերժացած բազմադիմի օգտակար գործերով և հռչակված նաև Հայոց դպրության մեջ»:*¹

Այդ հայտնի տոհմից էին Անիի ճանաչված սպարապետ Վահրամ Պահլավունին, Գրիգոր Վկայասերը, Գրիգոր Տղան, Ներսես Շնորհալին, Գրիգոր Քարավեժը և ուրիշներ:

Պահլավունիների ծագման հարցի շուրջ գիտնականները տարակարծիք են: Նրանց մի մասը գտնում է, որ սա բոլորովին նոր առաջացած մի տոհմ էր՝ իր ծագման ծննդաբանական զրույցով: *«Մենք տեսնում ենք,- գրում է Լեոն,- որ Պահլավունիների ծննդաբանական զրույցը, չնայած որ ծագել է համեմատաբար շատ նոր ժամանակներում, ոչնչով չի տարբերվում հին զրույցներից՝ մանավանդ անվավեր և բռնազրոսիկ մեկնաբանությունների տեսակետից: Փաստը, ուրեմն, մնում է այն, որ մոտավորապես 10-րդ դարի վերջում հարստացած և ուժեղացած մի հայ ընտանիք հաղթանկորեն և մեծ քայլերով մտնում է ավատական դասակարգի մեջ՝ խոշոր դեր կատարելու համար»:*² Այս կարծիքը մի քիչ այլ ձևով կիսում է Լեոն Խաչերյանը, որը Գր. Մագիստրոսի մասին ծավալուն մի աշխատություն է գրել:³

*«Այս տոհմը,- նշում է նա,- եկվոր՝ «օտարական» լինելով հաստատվել է Անիում և կարճ ժամանակամիջոցում, հատկապես գինական հաջող գործողությունների ծավալման ընթացքում դրսևորած ռազմական բացառիկ ընդունակությունների շնորհիվ, մեծ հեղինակություն և կշիռ է ձեռք բերել Բագրատունյաց արքունիքում»:*⁴

Մյուս տեսակետն այն է, որ Պահլավունները բնիկներ են: Ղևոնդ

Ալիշանը սրանց ծագումը բխեցնում է Լուսավորչի տոհմից: Նա կարծում է, որ նրանք ոչ թե նորակազմ ընտանիք են, այլ Մամիկոնյաններից կամ Կամսարականներից սերված մի երրորդ ճյուղի շարունակողներ, որ մի քանի դար «լռությունից» հետո կրկին ասպարեզ են գալիս:⁶

Հայտնի է, որ 775 թվականին Բագրևադի արյունալի ճակատամարտում արաբները ջարդեցին այս և շատ այլ ազդեցիկ տոհմերի ասպետների: Ն. Ադոնցն, ահա, գրում է. *«Մամիկոնյան կարմիր գինվորները իջան պատմության ասպարեզից... Քիչ հետո կորավ նաև Կամսարական նշանավոր տունը: խաչակրաց արշավանքի նրանց դեմ ելնելով, /արաբների- Ս.Ս./ մեռավ Ներսեհ Կամսարականը 785 թվին, և նրանով վերջացավ Կամսարական տոհմը, Մամիկոնյանների ազգական և հավատարիմ դաշնակիցը: Այս երկու փայլուն աստղերն ընկան գրեթե միաժամանակ հայ երկնակամարից»:*⁶

Սակայն այս երկու տոհմերից էլ եղան նաև այնպիսիները, ովքեր փրկվեցին և տեղավորվեցին Վրաստան և Բյուզանդիա: Կամսարականները 783 թ. Բագրատունիներին վաճառեցին Անին Շիրակ և Արշարունիք գավառներով,⁷ հանգրվանելով կայսրության սահմաններում, իսկ Մամիկոնյանները տեղափոխվեցին Վիրք՝ հիմնելով այնտեղ Օրբելյան իշխանական տունը: Նրանց մի մասն էլ ապրում էր կայսրության մեջ:

Բացառված չէ բնավ, որ այս տոհմերի ներկայացուցիչներից ոմանք «ծալտյալ» մնային Հայաստանում և հետագայում հզորանալով՝ վերականգնեին վաղեմի փառքը: Նաև կարող էին վերադառնալ: Շնորհիվ, ավելի հավանական է թվում նրանց կապն ու մերձավորությունը Կամսարականների իշխանական տան, քան Մամիկոնյանների հետ: Դա հիմնավորվում նաև այն փաստով. *«որ Կամսարականներն իրենց Պահլավունի էլ են անվանել. այսպես օրինակ դեռ Է.կամ Ը. դարում Ամաստաս անունով մի վարդապետ կազմում է Երուսաղեմի Հայոց վանքերի ցուցակն «ի խնդրոյ իշխանին Դամազասպայ Կամսարականի Պահլաունոյ»:*⁸

Կամսարականների հետ իրենց ազգակցությունը հաստատում են նաև իրենք՝ Պահլավունիները: Այս կապակցությամբ Մագիստրոսը գրում է. *«...Ո՛ր՝ զեղբայրն Վասակ, և յուրումն բազմեսցիս զոգս՝ ի մեծին Գրիգորի և հաւուն քո Աբուղամրի և Կամսարեանն Արտակայ: Քանզի ազգ սեփական և որդիք Աբրահամու յազգէն քետուրական, ի գաւառէն Պարթևաց, ի քաղաքէ Պահլաւ, ի ցեղէ Արշակունի, շառաւիղ մերոյն Լուսաւորչին»:*⁹

Խորենացու ներկայացրած Լուսավորիչի տոհմի պատմությունը Մագիստրոսը հասցնում է մինչև իր նախապապ Արտակ Կամսարականը: Այս միտքն է թույլ տալիս մեծն Շնորհալուս, որ «Վիպասանութեան» մեջ Պարթև Արշակունիների հետ իրենց ազգակցությունը վերահաստատի:¹⁰

Ուշագրավ է համոզիչ մի տեսակետ է առաջ քաշում Ն. Ակինյանը՝ գրելով, «....Արտակ վերադարձավ անշուշտ իր գերդաստանի հետ. թույլտվությամբ թագավորին, կանխավ հրաժարմամբ իր տոհմական անունեն և «Շիրակայ և Արշարունեաց տէր» հորջորջումեն. փոխարեն խոստում ընդունելով թագավորեն, թե պիտի ստանա կալվածք և բարձր.... Արտակ ոտք կոխեց հայական սահմանը « Պահլավունի» տոհմանունով, որ համագոր էր «Արշակունի»տոհմանունի.... Քանի գոյություն ուներ Բագրատունի թագավորությունը՝ Պահլավունիք հավատարիմ գտնվեցին իրենց խոստումին, չկիրարկել Կամսարական տոհմանունը. Գրիգոր Մագիստրոս Արտակի անունին կից զգուշորեն գրած էր «Կամսարեան». բայց երկրե դուրս համարձակած էր Տղա Վասիլ տալ իր տոհմանունը «Մայրենեօք Կամսարական»: Ուշադրության արժանի է, որ Պահլավունիները զգուշացած են նաև կրել հին Կամսարականներու հատուկ անձնանունները՝ Արշավիր, Ներսեհ, Չրահատ և այլ: Պահլավունիները հայ թագավորներու ծառայության մեջ ցույց տվին իրենց անձնավորությունը, հավատարմությունն ու առաքինությունները»:¹¹

Պահլավունիների տոհմական անվանումը՝ Պահլավունի, մի քանի կարևոր պատճառներ ուներ իր հիմքում: Պահլավունի ծագումը չափազանց ձեռնտու էր նրա ներկայացուցիչների համար: Եթե մի կողմից նրանք կարողանում էին քողարկել իրենց բուն ծագումը, որ վտանգում էր նրանց ֆիզիկական գոյությունը, ապա մյուս կողմից՝ շահում էին, քանի որ դրանով հնարավորություն էր ընձեռնվում՝ սերտորեն աղերսվելու հոգևոր և արքունական նախկին գահակալությունների հետ: Անշուշտ, իրենց տոհմի հնությունը ապացուցելով՝ Պահլավունիք անուղղակի հիշեցնում էին նաև Չայաստանում իրենց ունեցած ժառանգականության իրավունքները: Եվ,կամա թե ակամա,չթաքցրած և տևական պայքար էր սկսվում Պահլավունիների և Բագրատունիների միջև: Ի դեպ, դա երբեմն հիրավի ծայրահեղ ու սպառնալի տեսք էր ընդունում Պահլավունիների համար: Եթե ժամանակի գահակալները կասկածում էին նրանց հավատարմությանը, ապա անմիջապես հետևում էին բռնություններն ու ճնշումը, ինչպե դա եղավ հետագայում Կիլիկիայում: «Ուշադիր


նայելով ուղղակի և անուղղակի փաստերին՝ համոզվում ենք,- գրում է Աս. Մնացականյանը,- որ 1190-ական թվականների սկզբից, Լևոն Բ-ի գլխավորությամբ, հալածանք է սկսվում Պահլավունյաց տոհմի և նրանց հարազատների դեմ»:¹²

Համանման մի պայքար Պահլավունիների դեմ սկսվեց տակավին 11-րդ դարում: Դա բախտորոշ նշանակություն ունեցավ մեր ամբողջ ժողովրդի համար: Գագիկ Երկրորդի անփորձությունն ու սխալ դիրքորոշումը նրանց նկատմամբ՝ դեպքերը ողբերգական վախճանի հասցրեց:

Այս իշխանական տոհմի մասին առաջին անգամ հիշատակված է Ներսիսյան գահնամակում, որը խմբագրվել է 967 թվականին:¹³

Գահնամակներն արքունիքներում իշխանների ունեցած տեղերի մասին վավերական ցուցակներն էին, ուր տրվում էին նրանց տոհմանուններն՝ ըստ հերթականության: 10-րդ դարում խմբագրված «Ներսեսի վարք» - ում տրվում է մի ցանկ, որտեղ թվով 19-րդ տոհմանունը կոչված է Պալունիներ կամ Պահլավունիներ:¹⁴ Պահլավունիք հանդես են գալիս՝ իբրև նոր ու հզոր մի տոհմ, որը մրցում է Բագրատունյանց տոհմի հետ: Մինչև 11-րդ դարի սկիզբը նրանք իրենց Ապուղամրենց տոհմից սերված էին համարում, ինչքան էլ որ գիտակցում էին իրենց ազգակցությունը Կամսարականների և Արշակունիների հետ: Իբրև հաստատումն դրա՝ Անիում առ այսօր կա Ապուղամրենց սքանչելի եկեղեցին: Այսպես. «Թվի թե Պահլավունիք նախաբար ծանոթ էին Ապուղամրենք կոչումով և այդ այն պատճառով, որ Ապուղամրի որդին, Գրիգոր Համզե, մեծ ու անվանի ընտանիքի գլուխ էր և նշանավոր հիշատակներ է թողած....»:¹⁵

Հիմնվելով աղբյուրագիտական և վիմագրական որոշ տվյալների վրա՝ Կ. Կոստանյանցը Մագիստրոսին համարում է Արտակ Կամսարականից սերված 4-5-րդ սերնդի ներկայացուցիչ: Այսպես.



Անիում և նրա շրջակայքում Պաղատիոնիներն ունեին պալատներ, բերդեր, դաստակերտեր և կալվածքներ: Նրանց հարստությունը փաստորեն բաժանվում էր Գրիգոր Զամբե Սեօի երեք որդիների միջև: Ապլդարիպը ժառանգել էր Անիի կալվածքներն ու պալատները: Նա այդ ժամանակվա հայոց մարզպանն էր՝ արքունի գանձարանի տնօրենը: Վահրամը Անիի սպարապետն էր և նրան էին մնացել Անիի հայրական որոշ պալատներ և Ամբերդը՝ իր շրջակա տարածքներով: Իսկ Վասակ Գլուկունին ժառանգություն էր տրվել Բջնի ամրոցը՝ հսկայական տիրույթներով¹⁶: Դրանք հարավ-արևմուտքում հասնում էին մինչև Այրարատ նահանգը՝ Զրազդանի ստորին հոսանքը, արևելքում՝ Գեղամա լիճը, հյուսիսում՝ Աղստևի հովիտը և հարավում՝ Ազատի:¹⁷ Հայտնի չէ, սակայն, թե ինչի՞ համար և ի՞նչ հանգամանքներում Բջնին դարձավ Պաղատիոնիների սեփականությունը, և Վասակի տիրություններից միացան հեռու Չորագետում գտնվող Կայծոն և Կայեն բերդերը:

Գրիգորի հայր Վասակ Պաղատիոնին մի քաջ մարդ էր: Չոհվել է տակավին երիտասարդ հասակում՝ 1021 թվականին, թողնելով ընդամենը երկու երեխա՝ Գրիգորին և Սեդային¹⁸: Այդ մասին Ուռհայեցին հաղորդում է հետևյալը. «Այս ժամանակ դեմիկների թագավորը, զորահավաք անելով անսպասելիորեն գալիս հասնում է հայոց Նիզ գավառը, Բջնի ամրոցի մոտ, ուր մեծ ուրախությամբ հանգստանում էր հայոց սպարապետ Վասակն իր սիրելի որդի Գրիգորի ու անվանի այլ ազատների հետ»:¹⁹

Առնելով սելջուկյան հրոսակների հարձակման լուրը՝ Վասակն անմիջապես որոշում է մարտի դաշտ դուրս գալ: Անցնում է բերդում եղած 500 հոգուց բաղկացած ջոկատի և յոթ իշխանների գլուխ, բերդի պաշպանությունը հանձնում է Գրիգորին՝ պատվիրելով նրան հավաքել իշխանական 5 հազարանոց զորքը և հասնել օգնության:

Վասակը թշնամու հետ մարտի մեջ է մտնում ակամա: Յոթ Գայլ անունով հաղթանդամ մի սելջուկ ուզում է անձամբ մենամարտել իշխանի դեմ: Իշխանն ընդունում է մարտահրավերը և պայքարի թեժ պահին վարպետորեն խույս տալիս հակառակորդի նիզակից ու իր սրի շեշտակի հարվածով երկու կես անում նրան:

Սակայն Վասակի ջոկատը փոքրաթիվ էր, և շուտով զոհվում են համարյա քուրդը՝ թե իշխան, թե զինվոր: Մեծ ջանքերով Վասակին հաջողվում է ազատվել գերության վտանգից և պատսպարվել Սերկեսելո /այժմ

Արայի/ լեռան ժայռոտ ստորոտում: Սակայն «*փախստական գյուղացիները տեսնում են նրան,- գրում է Ուոհայեցին,- և ոճրագործ Կայենի մման մեկը, գտնելով նրան վշտահար քում մտած, ուժգին հարված հասցնելով՝ ժայռից ցած է գլորում: Ահա այդպես մեռավ քաջ Վասակ Պահլավունին*»:²⁰ Զաջ Վասակի անսպասելի ու ողբերգական մահը պատճառ դարձավ, որ երիտասարդ Գրիգորի ուսերին ծանրաման քրոջ խնամքն ու ընտանիքի բոլոր հոգսերը:

Գր. Մագիստրոսը ծնվել է մոտավորապես 990 թվականին, հավանական է, Անիի Պահլավունյանց շքեղ ապարանքներից մեկում, ուր անցել է նաև նրա երջանիկ մանկությունը: Բացառված չէ, որ դա տեղի ունեցած լինի և Բջնիում:

Անիում «*նա ստացել է իր փայլուն կրթությունը,- գրում է Ս. Արևշատյանը,- խորապես ուսումնասիրել աշխարհիկ, այսպես կոչված «արտաքին» գիտությունները՝ քերականությունը, ճարտասանությունը, փիլիսոփայությունը, երաժշտությունը, աստղագիտությունը և այլն: Հմտացել է նաև կրոնական գրականության մեջ, կրոնավորից ավելի քաջատեղյակ դարձել դավանաբանական և աստվածաբանական խնդիրներին: Գրիգորի կրթությունը չի սահմանափակվել առկա գրականությամբ... Մայրենի լեզվին հավասար Գրիգորը տիրապետում է հունարենին, իր ուսումը կատարելագործում Կոստանդնուպոլսում, դառնում հին հունական և բյուզանդական գրականության մեծ գիտակ*»:²¹

Նրա մանկության և պատանեկության մի մասն էլ, անշուշտ, անցել է հայրենի Բջնիում: Մագիստրոսի կյանքի վաղ շրջանի մասին մենք գիտենք այսքանը:

Այնուհետև ինքն է դառնում ուսուցիչ և վաստակում պատվավոր իմաստասեր մականունը: Կրթում ու դաստիարակում է մի քանի սերունդներ: Տարբեր ժամանակներում դասախոսում Սամահինի, Անիի, Կեչառիսի, Արգինայի բարձրագույն դպրոցներում: Հետագայում Տարոնի Սուրբ Կարապետ վանքում կրկին հիմնում է սեփական ճեմական դպրոց:

Մագիստրոսի գրական և գիտական գործունեությունը սկսում 11-րդ դարի 20-ական թվականներից՝ հասնելով մինչև 1058 թվականը: Գիշտ չորս տասնյամյակ, որոնց ընթացքում նա ծավալել է հասարակական և քաղաքական լայն գործունեություն, մասնակից ու ակնառատես եղել շատ նշանավոր ու ճակատագրական անցքերի:

Կյանքը

Գր. Մագիստրոսի բարդ ու հակասական կյանքն անցել է դժվարին ու անսովոր պայմաններում: Նրա մանկության և պատանեկության մասին շատ քիչ տեղեկություններ ունենք: Արդարցված կլինի, եթե մենք անդրադառնանք նրա կյանքի հասուն տարիքին, որը բաժանվում է երկու մասի՝ մինչև 1045 թ. Անիի դրամատիկ իրադարձություններն ընկած շրջան և դրանից հետո եկող:

Գործունեության 1-ին շրջանը

Սկզբից ևեթ Մագիստրոսն զբաղված է եղել մշակութային, քաղաքական և պետական բազմաթիվ ու բազմաբնույթ գործերով: Այդ բոլորի մեջ նա ցուցաբերել է խնամք ու սրտացավություն: Տակավին երիտասարդական հասակից ձգտել է երկիրը հզորացնել, այն շեն ու նորոգ դարձնել:

Դեռ 1013 թվականին, երբ նա ընդամենը 23-25 տարեկան պատանի էր, սկսեց Հավուց Թառի Ամենափրկիչ եկեղեցու կառացումը²², 1031թ. ձեռնարկեց Բջնիի Աստվածնի եկեղեցու²³ շինարարությունը, 1051թ. Կեչառիսի եկեղեցու զավիթից հետո վերակառուցեց Սուրբ Լուսավորչի²⁴ միազմբեթ՝ եկեղեցին՝ հետագայում նույնը անելով նաև Սուրբ Կարապետի²⁵ վանքում:

Անշուշտ, Մագիստրոսը կառուցել և վերակառուցել է նաև այլ վանքեր ու մատուռներ, քերդեր, պալատներ, կամուրջներ և այլն:

Այսքանով հանդերձ Մագիստրոսը հայ միջավայրում աճում է որպես ռազմիկ: *«Ուսումնական մարզություններից ավելի՝ սակայն, - նշում է Կ. Կոստանյանցը, - Պաիլավունյաց դեռահաս պայազատն հայոց արքունի ապարանների աչքի առաջ և սպարապետի հարկերին մոտ մարզվեցավ զենքի ու զինվորության արվեստի մեջ, որով և երևելի եղավ քաղաքական ասպարեզում:Մայրաքաղաքի այս կյանքին համեմատ սնավ և զարգացավ Պաիլավունյաց պայազատն իբրև մի մեծատուն և իշխան»:*²⁶ Եվ, իհարկե, Մագիստրոսը չէր կարող չմտածել երկրի ռազմական հզորության մասին: Հայաստանում տիրապետության հասնելու նպատակով կայսրությունը գործել սկսեց Անիի անկումից դեռ հարյուր տարի

առաջ: 949 թ. նա զավթեց Կարինը: «*Դա ոչ միայն արաբների, այլև հայերի և վրացիների պարտությունն էր կայսրության դեմ*»²⁷: Այնուհետև շարունակաբար կայսրությունը գրավեց այլ քաղաքներ ու գավառներ՝ 966 թ. տիրանալով Տարոնին, 1016 թ. Վանին, 1025 թ. Հարքին ու Բասենին:

*«Ամրապնդելով իր դիրքերը հայկական այդ հողերում,- գրում է Հր. Բարթիկյանը,- կայսրությունը դրանք վերածեց մի հենակետի՝ Անիի թագավորության դեմ ուսմոծություններ կատարելու և ապա այն զավթելու համար»*²⁸:

Չի ուշանում և բուն որոգայթը: 1021-1022 թթ. Վասիլ 2-րդը /976-1025/ արշավեց Արևելք: Փարվանա լճի մոտ ջարդվեց հայ-վրացական միացյալ զորքը, որով Վրաստանն ամբողջովին ենթարկվեց կայսերը, իսկ Հայաստանը հայտնվեց կիսանկախ դրության մեջ: Չմոռելու համար Վասիլը զորքերը Տրապիզոն տարավ: Նա գարնանը մտադիր էր Բագրատունիների «*հարցերով զբաղվել*»: Հովհաննես Սմբատը կայսեր մոտ ուղարկեց իր պատվիրակությունը՝ Պետրոս Գետադարծ կաթողիկոսի գլխավորությամբ, ուր և կնքվեց «*հայոց կորստյան գիրը*»: Սմբատը այդ պայմանագրով Անին հետմահու կտակում էր Բյուզանդիային. «*Յովհաննես պատուէր տուեալ էր Հայրապետին, եթէ գիր և տուր կտակ թագաւորին, զի յետ իմոյ վախճանին զիմ քաղաքս և երկիրս նմա տայ ի ժառանգութիւն, քանզի իւր ոչ գոյր որդի թագակալ թագաւորութեան, վասն զի որդի նորա վախճանեցաւ*»:²⁹

Երկրի անկախությունը զնալով դառնում էր խաբիսուլ: Վերահաս կործանումն անխուսափելի էր թվում:

Դրությունը ճգնաժամային էր, և ելք էին փնտրում բոլորը: Մագիստրոսը նրանց մեջ ամենաառաջիկաների թվում էր: Երբ 1023 թ. երևաց Գիսաստղը, իսկ 1036 թ. եղավ Արևի խավարումը, Հովհաննես Կոզեռնը լաց ու կոծով բացատրում էր, թե թուրքաց պիղծ ցեղերի ձեռքով քրիստոնյաները պատժվելու են: Դրա պատճառը ցոփ ու անբարեպաշտ կյանքն է: Դա կտևի 200 տարի: Ջիհուն գետի մոտ կկայանա վճռական ճակատամարտը և բյուզանդացիք կհաղթեն:³⁰

Կոզեռնի այս Տեսիլը ոչ միայն արտահայտությունն էր այդ դարաշրջանի այն մեծապես նպաստում էր հոգեբանական խուճապին:

Բարդ ու հակասական ժամանակաշրջանի պատկերն էր դա: Իսկ 10-12-րդ դարերը ամբողջ Քրիստոնյա Արևելքում գուշակությունների ու

կանխատեսումների մի դարաշրջան էր, ինչպես բոլոր հազարմյակների վերջերին: Ինչ կարելի էր անել, երբ գուշակվում էր Նեոի արձակումը և 1000-ամյա չարիքի սկիզբը:

Այսպես կոչված վախճանաբանական հիվանդությունը զալիս էր դեռևս առաքելական ժամանակներից: Ս. Մայիլյանը գրում է. «*Ընդհանրական եկեղեցին միշտ բախվել է նման «ապոկալիպտիկ» շարժումների հետ համարյա բոլոր դարերում»*³¹, երբ «*հաշվարկներ»* են կատարվում, կանխատեսումներ արվում:

Թեև հայերը ժամանակավորապես կարողանում են դիմագրավել արտաքին թշնամիներին և հաղթահարում ներքին երկպառակությունները, բայց 1041 թ. Յովհաննես Սմբատի մահվանից հետո, պայթում է զահակալական պայքարի փոթորիկը: Բյուզանդացիք անմիջապես մեջտեղ են բերում կտակը և պահանջում Անին:

«*Միքայել կայսրը, - տեղեկացնում է Ուռհայեցին, - գորհավաք անելով, հայոց երկիրը եկավ և սրով ու գերությամբ ավերեց այն. պատճառն այն էր, որ Յովհաննեսն իր կենդանության օրոք հռոմեներին գրություն էր տվել. թե իր մահվանից հետո Անին թող հռոմեներին լինի: Դրա հիման վրա էր, ահա, որ նա հռոմեներից տասնհինգ տարի շարունակ ստանում էր ռոճիկ և իշխանություն»*:³²

Դավաճանում է Սարգիս Վեստը և հռոմեներին խոստանում հայոց առաջին թագավորների գանձերը: Եվ ահա. «*Այն ժամանակ բարձրացավ Գագիկ անունով տասնութ տարեկան մի պատանի, - ոգևորված շարունակում է պատմիչը, - Բագրատունիների տոհմից, Աշոտ արքայի որդին... Պատանի Գագիկը շատ խոհեմ, երկյուղած և աստվածասեր էր: Հայոց բոլոր նախարարները, հավաքվելով տեղի Պետրոս հայրապետի մոտ, Սուրբ Հոգու շնորհիվ և ազգությանը հայկազնյան, Պառլամունդների տոհմին պատկանող, իր նախահոր անունով Գրիգոր կոչվող և սուրբ Գրիգորի ազգից սերող մեծ իշխանի հրամանով... Գագիկին օժեցին համայն Հայաստանի թագավոր: Գրիգորը հանդես եկավ որպես երկրորդ Սամուել, որ Դավթին օժեց Իսրայելի արքա: Նա Գագիկին Հայաստանի վրա թագավորեցրեց, շատ բարեպաշտ և աստվածասեր մի մարդու, իմաստասիրական շրջաններում անպարտելի: Նա մեծ խոհեմությամբ ջանք էր քափում ամրապնդել Հայաստանի թագավորական գահը և խնդրում Աստծուն, որ իրեն ու Բագրատունյց տոհմին նեցուկ կանգնի»*:³³

Սակայն մեծ խնամքով և երկարամյա համառ ջանքերով ձեռք բերվածը մատնվում է անդառնալի կորստի: Երիտասարդ արքան սկզբից ևեթ թույլ է տալիս երկու սխալ. նախ՝ անպատիժ է թողնում Վեստ Սարգսին և նույնիսկ պահում արքունիքում, և երկրորդ՝ ենթարկվում նրա և մյուսների լարած պալատական նուրբ խարդավանքներին: Կարճ ժամանակ անց հալածանքներ է սկսում Պաիլավունյաց իշխանի դեմ:

Չհանդուրժելով իր նկատմամբ սկսած անարգանքը՝ Գրիգորն ստիպված փակվում է Բջնիում: Սակայն արքան չի փոխում իր վերաբերմունքը: 1043 կամ 1044 թթ. Գր. Սագիստրոսն ստիպված էր թողնել հայրենի ամրոցն ու հարազատներին և հեռանալ բյուզանդահպատակ հայկական արևմտյան գավառները: Կայսրը ազդեցիկ իշխանին տալիս է Տարոնի կուսակալի պաշտոնը:

1042 թ. ծավալված գահակալական կռիվների կապակցությամբ Գր. Սագիստրոսը գրում է իր *«Առ որդին իւր գօրանալ...»* սքանչելի բանաստեղծությունը: Չնայած Աբգարյանը, հակադրվելով Յրաջ Բարթիկյանի տեսակետին³⁴, ըստ որի ուղանալովը գրված է 1028-1034 թթ., այնուամենայն է, որ այն գրված է ուշ. *«Դա Բագրատունյաց վերջին թագավոր Գագիկի և բյուզանդական զորավար պարակիմոնենոս Նիկողայոսի միջև հայոց քաղաքամայր Ամնի համար մղված պատերազմն էր, որը բյուզանդացիները ձեռնարկել էին Բագրատունյաց թագավորությունը իսպառ վերացնելու մտադրությամբ և որը պսակվեց հայ մարտիկների թեկուզև՝ ժամանակավոր, բայց հերոսական հաղթությամբ»*:³⁵ Եվ իզուր չէ, որ Սագիստրոսը համեմատում է այս պատերազմը Չայկի և Բելի կռվի հետ:

1037 թվականին Սագիստրոսը Յովհաննես Սմբատ կայսեր հրամանով Բջնիում փակեց կաթողիկոսին: Մինչ այդ Չորո վանքում ապաստանած Պետրոսը պետք է վերջապես վերադառնար Ամի, սակայն ենթարկվում է յուրատեսակ կալանքի: Մեկ տարի և հինգ ամիս նա մնում է Բջնիում և իր բնատուր խելքի և իմաստության շնորհիվ բարեկամանում Գրիգորի հետ: Շուտով եկեղեցու հայրերն ապստամբում են և Աթոռից հեռացնում Սանահինի հռչակավոր իմաստասեր՝ այդ ժամանակ կաթողիկոս ձեռնադրված Դիոսկորոսին: Պետրոսը մեկնում է Ամի և շարունակում կրել հայրապետական հանդերձներն ու գավազանը:

Գր. Սագիստրոսը բազմանդամ ընտանիքի հայր էր, գերդաստանի մեծերից մեկը՝ Վահրամ Պաիլավունուց հետո: Նա բացի իր բոլոր կարևոր ու երկրորդական գործերից շարունակում էր սնել ու դաստիարակել իր

Երեխաներին, որոնք ութն էին՝ չորս որդի և չորս դուստր: Նրա որդիները դարձան ժամանակի նշանավոր քաղաքական և կրոնական գործիչներ: Վեստ Վահրամն իրեն վերանվանեց Գրիգոր Վկայասեր և հայոց հայրապետներից մեկն էր Կիլիկիայում /1065-1105/: Վասակն Ամտիոքի դուքսն էր և կենդանի էր մինչև 1095 թվականը: Նրա մասին կենսագրական մանրամասները պակասում են: Մագիստրոսի մյուս երկու որդիները՝ Վասիլը և Փիլիպպեն, մեռան վաղ հասակում՝ մեծ վիշտ պատճառելով իրենց հորը: Մագիստրոսը դուստրերին ամուսնացրել է ժամանակի նշանավոր մարդկանց հետ. դրանք իշխաններ էին ու ազնվական մարդիկ: Առաջին դստեր ամուսինն էր Սարգիս Դայկազնը՝ հետագայում դավաճան Վեստ Սարգիսը: Երկրորդինը՝ Պահլավունյց մյուս ճյուղից սերված Վասակ անունով իշխանը: Սրա որդիներն են Բարսեղ Առաջինին կաթողիկոսը /1105-1113/ և Գրիգոր Պահլավունին, որը կրել է, *«Արևելքի Կյուրոպաղատ»* մականունը: Գրիգորը մի որդի ունեւ: Նա հետագայում Անիի հայտնի Բարսեղ արքեպիսկոպոսն էր /1180-1193/, որն այս տոհմի վերջին շառավիղ եղավ: Մագիստրոսի երրորդ դուստրը Ներսես Շնորհալու տատն է, Ապիրատի մայրը: Այդ տոհմից էր Գրիգոր Երրորդ Պահլավունին /1113-1165/: Զորորդ դստեր ամուսինն էր Թոռնիկ Մամիկոնյանը, զրը Տարոնի կուսակալն էր: Նա Մագիստրոսի նամակագիրներց մեկն է:³⁶

Պահլավունյաց տոհմը Անիի անկումից հետո էլ շարունակում է մնալ բարձրակետում՝ տալով թե՛ ռազմիկներ, թե՛ գիտնականներ ու կաթողիկոսներ:

Գործունեության 2-րդ շրջան

Գր. Սագիստրոսի կյանքի այս շրջանն սկսվում է Անիի դրամատիկ իրադարձություններով: Կոստանտին Մոնոմախ կայսրը /1042-1055/ անսպասելիորեն կարողանում է Հայաստանում հասնել հաջողության այն դեպքում, երբ կայսրության ամբողջ տարածքով մեկ բռնկվել էին հզոր ապստամբություններ հայազգի Վարդ Փոկասի /և ընդհանրապես Փոկասների իշխանական տան/, Վարդ Սկլերոսի և այլոց կողմից:

Բյուզանդացիք գործեցին իրենց վաղուց փորձված մեթոդով, որով նախկինում հաջողության էին հասել Իսպանիայում, Իտալիայում և Բալկաններում: Նախապես նրանք հասնում էին այն բանին, որ այս կամ այն երկրամասը կտակի միջոցով դրա օրինական տերերը ժառանգում էին կայսրությանը: Իսկ դրանից հետո ազատություն էին տալիս իրենց ձեռքերին: Այդ կերպ վարվեցին և այստեղ. *«Եւ յիշեցին Յոյնք զկտակն կորստեան վասն Անույ,- գրում է Վարդան պատմիչը,- զի անդարձ է ասեն, և հաստատուն է զկնի մահու՝ կտակ: Եւ կոչեցին երդմամբ զԳագիկ ի Կոստանդնուպոլիս, որպէս թէ անդէն դարձուցանեն պարզւօք և կորստեան եղին ինքեանք քաղաքին. և վերացուցին ի նմանէ զերկոսեան պսակս. զգահ հայրապետութեան և զթագաւորութեան, յականայս ածեալ զերկուսեան առ իւրեանց և անդէն ոչ դարձուցեալ»*:³⁷

Երիդասարդ ու անփորձ Գագիկ արքան հավատում է կայսեր կեղծ երդումներին և մեկնում կտակի շուրջը բանակցությունների: Սակայն իզուր չէին Վահրամ Պաիկավուհու զգուշացումներն ու հորդորները՝ չմեկնել Բյուզանդիա: Կայսրը դրժեց իր երդումը և Գագիկին թույլ չտվեց այլևս վերադառնալ և վերականգնել Բագրատունյաց թագավորությունը՝ արժանացնելով նրան Արշակ Եկրորդի ճակատագրին: Իրենց երդումը դրժեցին նաև հայոց հայրապետն ու Վեստ Սարգիսը: Անիի բանալիները նրանք հանձնեցին հույների ձեռքը, որով և ամբողջովին զինաթափ եղավ հայոց գերեվարված արքան:

Եվ այդ վճռական պահին, երբ դեռ աղոտ հույս կար գահին վերադարձնել Գագիկին, Կոստանդնուպոլիս է շտապում Սագիստրոսը: Նա ձգտում է ամեն կերպ օգնել արքային, գործի է դնում իր խելքն ու հմտությունը և վերջապես օգտագործում իր կապերը, սակայն ապարդյուն: Ամեն ինչ վճռված էր նախապես. բյուզանդացիք գործել էին հմտորեն: Թուլացնելու համար հայկական իշխանական և թագավորական տները

նրանք վերցնում էին սրանց կալվածքները և դրա փոխարեն հողեր ու կալվածքներ «շռայլում» կայսրության ներսում: Եվ, ահա, Գագիկ արքային «շնորհում» են Պիզու և Կալոն-Պեղատ փոքրիկ քաղաքները Կապադովկիայում, իսկ Գրիգոր Պաղլավունում ստիպում են հանձնել Բջինի՝ փոխարենը կալվածքներ տալով Տարոնում, Վասպուրականում և Սիջազետքում³⁸: Եվ անպայմանորեն Սագիստրոսը դժգոհ էր իրերի այսպիսի ողբերգական դասավորությունից: Այդ կապակցությամբ մեզ շատ բան է ասում նրա Գ թղթի հետևյալ դրվագը.

*«Ի գռեհիկս պատմի առականալ՝ արտուտի զգուշութիւն երկնի յստորս կործանիլ, և նա անկեալ պորտ յորսայս, զոտն ի վերայ յերկին քանայ կարկառել, զի մի՝ երկին յերկիր անկցի խափուցեալ. ի պարսաւ առեալ ոմանց թէ որո՞վ ծղէ ծնգօք ծառանաս ծտի՜կ քո ծովդ խելօք. պատասխանեալ հաւն ասաց. Որքան կարեմ, զայն առնեմ»*³⁹.

Փաստորեն նա իրեն համեմատում է արտուտի հետ, որը ոտքերով ուզում է պահել երկրի վրա փվվող երկինքը, և երբ ծաղրանքով հարցնում են, թե ինչպես պետք է փրկի, նա միայն պատասխանում է՝ ինչքան կարողանում եմ, այդքան եմ անում: Շտկել դրությունը հնարավոր չէր: Դա անել չհաջողվեց, և ցավալի էր:

Ճիշտ այս ճակատագրական պահին էլ ծնվում է մեր գրականության ամենահետաքրքրական և կյանքը այլբանորեն պատկերող ժանրը՝ առակը: Կանխելով որոշ իմաստով Վ. Այգեկցուն և Մ. Գոշին՝ Սագիստրոսը այս և իր մի քանի առակներով կյանքի է կոչում գրական մի նոր տեսակ: 1045-1047 թթ. նա Պոլսում է և գրում է իր նշանավոր «Ճազարատողեան» պոեմը: Այս ստեղծագործությունը ևս կարևոր նորություններ էր բերում մեր գրականության մեջ: Եվրոպացիք /Դ. Ալիգերի, Միլտոն և մյուսներ/ դեռևս չէին դիմել Աստվածաշնչյան թեմաների մշակումներին, դեռևս չէին առաջադրել գաղափարական ու գեղագիտական այն խնդիրները, որ արժանոքել սկսեցին մեզանում:

Նա նշանակվում է Սիջազետքի կուսակալ: Թուրքական ցեղերի վտանգը զնալով մեծանում էր, և նա մեկնում է Արևելք: 1048 կամ 1049 թթ. նա իր բանակներով միանում է կայսերական զորքին, որին միացել էր նաև հայազգի Կատակալոն Կեկավմենոսը /Ամիի և Իբերիայի զորավարը/: Այն դեկավարում էր Ահարոն Բուլղարը: Վրաստանից մասնակցում էին Լիպարիտ իշխանն ու նրա քեռորդի Չորտավանելը: Վճռական ճակատամարտը թուրքական ցեղերի դեմ տեղի է ունենում Բասենի⁴⁰

դաշտում: Ահարոն Բուլղարը մարտի թեժ պահին հեռացրեց իր ջոկատները, և բյուզանդական միացյալ բանակները պարտվեցին նրանցից:

1051-1053 թթ. Մագիստրոսը Սասունում է: Նա վերջնականորեն ճնշում է և ցրում թոնդրակյան աղանդը: Մագիստրոսը այդ աղանդը ոչնչացնում է թե՛ զենքով և թե՛ գաղափարապես: Բնակիչների մի մասին դուրս է հանում իր տարածքներից, մի զգալի մասին էլ դարձի բերում: Խնայում է ծերերին և երեխաներին. *«Մագիստրոսն, այնուամենայնիվ, օրենքի պահանջներից դուրս գալով, մեղմ է վարվել նրանց հետ,- գրում է Դրանտ Թամրազյանը,- մյուս պետերի ու զորավարների պես չի խոշտանգել մարդկանց: Այսինքն՝ գործել է որպես Բյուզանդական նշանավոր զորավար ու գործիչ, պաշտպանելով պետության և եկեղեցու շահերը, բայց և ինչ-որ տեղ տարբերվել է մյուսներից»*⁴¹: Աղանդավորական այս շարժումը վտանգավոր էր ոչ միայն եկեղեցու համար, այլ վտանգավոր էր նաև այն տեսակետից, որ պառակտում էր մտցնում հայոց դիմադրության ուժերի մեջ, իսկ բյուզանդացիք կամ ի վիճակի չէին, կամ չէին ուզում փոխել իրենց դիրքորոշումը հայերի տեղահանության հարցում՝ երկու դեպքում էլ նպատակ ունենալով թուլացնել թե՛ հայերին և թե՛ նորեկ սելջուկներին: Այս կապակցությամբ Զր. Թամրազյանը շարունակության մեջ նկատում է. *«Պետք է ավելի նուրբ վերաբերմունք ունենալ ժամանակի երևույթների նկատմամբ, քանի որ սոցիալական խնդրի հետ միասին պետք է հաշվի առնել նաև քաղաքականը: Չպետք է մոռանալ Դայաստանի և քրիստոնյա Արևմուտքի քաղաքական ծանր վիճակը: Արևելքից բարբարոս հորդանքերը հող ու փոշի դարձնելով գյուղերը, քաղաքները, ոտքի տակ էին տալիս երկիրը. սպառնալիքներն արշավում էին Անդրկովկաս, Սիջազետը, Բյուզանդիա: Այս պայմաններում թոնդրակյան աղանդն զգալիորեն դժվարացնում էր պայքարը թշնամու դեմ»*:⁴²

Այս հանգամանքը գալիս էր երկրի բարձիթողի վիճակից: Պոլսում էր պահվում նաև Պետրոս Գետադարձը/1047-1051/, և երկիրը զրկված էր հոգևոր հովվից ևս:

Իր կյանքի *«երեկոյացյալ հասակում»* հիշատակության արժանի շատ գործեր է կատարել Պահլավունյաց մեծ իշխանը: Նա Սուրբ Կարապետի վանքում դարձյալ շարունակում էր ուսուցանել իր սաներին՝ միաժամանակ կատարելով գրական ու թարգմանչական իր գործը:

Այնուհետև Մագիստրոսը կյանքի համեմատաբար մի խաղաղ շրջան է ապրում, կարգի գցում իր անավարտ աշխատանքներն ու ստեղծագոր-

ծությունները: Եկավ նաև հրաժեշտի պահը. 1058 թ. նա այլևս չկար: Մագիստրոսի գերեզմանը գտնվում է Բասենի վանքում /Յասան Ղալա/:⁴³ 1073 թ. հետո Գրիգոր Վկայասերը /Վահրամը/ այցելել է այդ ժամանակ դեռևս կենդանի իր մորը և, ըստ երևույթին, մոր հետ միասին այցելել է հոր շիրիմին: Այսպես ապրեց Մագիստրոսը, որը. *«Յուր պեսպես գործերով հավերժացած է պատմության մեջ. նորա շինած ու զարդարած վանքերի արձանագրերը ծայնակից են պատմական այլ հիշատակարաններին. նորա գրավոր երկերը մնում են իբրև անկապտելի ժառանգություն հաջորդող սերունդներին: Թեպետև հայտնի են Աշոտ պատրիկ Բագրատունի և Յամամ Արևելցի իբրև աշխարհական հեղինակների ազնվական տոհմից, բայց Գրիգոր Մագիստրոս Պահլավունին միակ աշխարհական հեղինակն է Յայոց նախնի գրականության ներկայացուցիչների կաճառում՝ իբրև իմաստասեր, հռետոր և բերթող»:*⁴⁴

Պետք է առանց թաքցնելու ասել, որ լինելով իր , իսկապես, քարոշ ժամանակի ծնունդը, հանգամանքների բերումով նա ունեցել է որոշ բացթողումներ ու նահանջներ, որոնք միանգամայն ստվեր չեն գցում մեծ գրողի կերպարի վրա: Արքայի հետ ընդհարված լինելն ու Բյուզանդիայի նկատմամբ ունեցած համակրանքը չեն կարող պաճառ դառնալ, որ Մագիստրոսը համարվի հայրենադավ մարդ:

Հայերը հույների հետ հարյուրամյակներ շարունակ հարևաններ էին և ունեին տնտեսական և մշակութային բազմաթիվ կապեր, որոնք գնալով խորանում էին: Մյուս կողմից՝ Բյուզանդիան քրիստոնեական երկիր էր և կարող էր նեցուկ լինել քոչվոր ու վայրագ ցեղերի դեմ մեր ժողովրդի պայքարին: Չմոռանանք նաև, որ արաբական երկարամյա տիրապետության տարիներին մեր ժողովուրդն իր հոգևոր արմատներով կապված էր այդ երկրի մշակույթի հետ: Նա միակն էր, որ ի վիճակի էր հակահարված տալու արաբների համաշխարհային տիրապետությանը և սովեց:

Մեր մշակույթի մեծերից ո՞վ արդյոք չի հիացել հունական մեծ մշակույթով՝ սկսած մեծն Խորենացուց և Շիրակացուց՝ մինչև 10-11-րդ դարի իմաստասերները: Այս փաստը բնավ չի կարելի ծայրահեղացնել, ինչպես դա անում է Լեոն:

Հարկավոր է մշտապես հիշել երկու կարևոր հանգամանք, որ ամենևին կապ չունենին Մագիստրոսի հետ և որոնք ամենագլխավորը պատճառներն էին երկրի անկախության կորստի.

1/ կտակի գոյությունը.

2/ արքայի Կոստանդնուպոլիս մեկնելը:

Փաստ է, որ 1021 թ. գոյություն ունեւ չարաբաստիկ կտակը: Դրա իրականացման ճանապարհին միակ խոչընդոտը հայոց նորընծա արքան էր: Բյուզանդիայի խնդիրը պարզ էր. մեջտեղից հանել Գագիկ եկրորդին, որով կտակը իրավունք կտար նրանց վարվել ըստ իրենց հայեցողության: Իսկ հայոց արքան ականա մեկնում է կայսեր պալատ, ուր նա այլևս Դայոց արքա չէր, այլ գերի: Հասկանալի էր, որ նա այլևս Դայաստան վերդառնալ չէր կարող: Ո՞վ թույլ կտար:

Գիտենք, որ 1042 թ. Գագիկի գահ բարձրացնողը ուղղակիորեն և անմիջապես Գրիգորն էր: Դայոց զորքը Ար. Լաստիվերտցու վկայությամբ չորս անգամ ճակատամարտեց բյուզանդական մեծաթիվ զորքերի դեմ: Ախուրյանը արյունով և դիակներով էր լցվել: Եվ դրանից հետո միայն հաջողվեց Գագիկ 2-րդին հաստատել հայոց գահին: Հասկանալի է, որ եթե Գրիգորը դավաճան լիներ, կդավաճաներ այդ պահին, որովհետև *«վարձատրությունը»* այս դեպքում տասնապատիկ ավելին կլիներ և հեշտ: Իսկ եթե նա և՛ հարստություն էր տեղում, և՛ իշխանություն, ապա կփորձեր ինքը նստել գահին: Դա միանգամայն ռեալ փաստ էր: Մագիստրոսի ամբողջ պայքարն ուղղված է հենց կտակի դեմ, հետևաբար և՛ բյուզանդական քաղաքականության: Նա ավելի, քան որևէ մեկը՝ լավ էր գիտակցում, որ կտակը կայսրության համար պատրվակ է՝ մշտապես և չթուլացող ուժով պայքարել Դայաստանը նվաճելու համար:

1043-1044 թթ. Գր.Մագիստրոսը պայքարում էր բյուզանդական շահերի դեմ, հետևաբար չէր կարող մեղադրվել գահի նկատմամբ պայքարի մեջ: Նա գահակալական ոչ մի պայքար չի մղել: Իսկ իրականում նրանց ընդհարումը գալիս էր արքայի անփորձությունից և Մագիստրոսի ու Պաիլապոլսիների դեմ որոշ աննշան մարդկանց կազմակերպած դավադրությունից, հեղինակագրվել մարդկանց և գրավել նրանց դիրքերը: Եվ իզուր չէր, որ այդ երիտասարդ գինեմուլները ծաղր ու ծանակի են ենթարկում Մագիստրոսին: Դա հաճելի էր արքային, քանի որ նա *«վրեժ էր լուծում»* իր թվացյալ հակառակորդից:

«Մեզ համար հավանական է ենթադրել, թե բյուզանդացիներն անմիջապես բանակցություններ սկսել էին Գրիգորի հետ, որ իբրև արդեն հայտնի հունամուլ, - գրում է 1045 թ. դեպքերի առնչությամբ Լեոն, - չկարողացավ այլևս առաջվա նման քաջամարտիկ հակառակորդի դեր

Բյուզանդական-արքունիքում Պաիլավուններին լավ էին ճանաչում ու գնահատում: Վահրամ Պաիլավունուն օրինակ բյուզանդացիք ժամանակին առաջարկել էին անցնել իրենց մոտ ծառայության: Սագիստրոսը ևս պակաս ռազմական տաղանդ չէր: Միակ աղբյուրը, որից այդպես «սնվում է» Լեոյի կարծիքը, և որի շուրջ մա և իր կողմնակիցներն այդքան բարձր աղմուկ են բարձրացնում, Սամուել Անեցու հետևյալ դիտողությունն է. «Տէր Պետրոս և ազատ Սարգիս և Գրիգոր Բջնեցին նենգեցին ԳԳազիկ և զԱնի եղին ի կայսերն Յունաց»: Բանն այն է, որ Սամուելի Պատմությունը գրված է դեպքերից 120-130 տարի հետո, մինչդեռ Արիստակես Լաստիվերտցին /11-րդ դ./ չի հիշում Գրիգորի անունը: Անիի ստոր վաճառքի կապակցությամբ Սագիստրոսի անունը չեն հիշում նաև Սամուելին նախորդող և Լաստիվերտցուն հաջորդող պատմիչները՝ Մատթեոս Ուռհայեցին /11-12-րդ/ և Վարդան Արևելցին/12-րդ դ./

Սագիստրոսին կարելի է թերևս մեղադրել Հայաստանից հեռանալու կապակցությամբ, որքան էլ որ դա նրա կողմից հարկադրական քայլ էր: Տեղափոխվելով սեփական կալվածքներից մա կամա թե ակամա իր հետևից տարագրության էր տանում մեծաքանակ ժողովուրդ, որով ամայանում ու հայազրկվում էր երկրի կենտրոնական մի ահագին երկրամասը, ինչպես որ դա եղել էր 1016 թ. Արծրունիների՝ Սեբաստիա տեխափոխվելու ժամանակ:

Զկարողանալով վերջնականորեն հաթել իր և Գազիկի միջև ծագած հակամարտ վեճը՝ մա կորցնում է հույսը ապագայի հանդեպ: Նրա հոգում արձատանում է մի այլ տեսակետ: Նա իր հայացքն ուղղում է դեպի քրիստոնյա Բյուզանդիա՝ նրանց կողմից ակնկալվելով վճռական քայլեր կայսրության սահմանների մոտ հայտնված սելջուկների դեմ, որով նպաստավոր դրություն կստեղծվեր մաև հայերի համար: Բայց վերջին հաշվով դա տանում էր քաղաքական ռոմանտիզմի, չէ՞ որ ամենահուսալի պաշտպանությունը սեփական ուժերին ապավինելն է:

Քաղաքացին, մանկավարժը և գրական գործիչը

Գր. Մագիստրոսը բազմաթիվ թելերով կապված է հայ կյանքին և մեծ ներդրում ունի հայ իրականության ու արվեստի զարգացման ամենատարբեր բնագավառներում /կառուցողական և ռազմական արվեստներ, քաղաքական ոլորտ, գիտություն և մշակույթ, քարզմանչական արվեստ, մանկավարժություն և այլն/:

Քաջ գիտակցելով ամեն մի բնակավայրի, ամրության և մշակութային օջախի խաղալիք դերը երկրի հետագա բարգավաճման գործում՝ Գր. Մագիստրոսը լայն շինարարական գործունեություն է ծավալել, կառուցել է տվել բազմաթիվ ամրություններ ու բերդեր և վերակառուցել հները: Դա թելադրվում էր ժամանակի պահանջով: Կառուցել է նաև մշակութային և կրթական նշանակություն ունեցող հուշարձաններ, որոնք առ այսօր կան և շատ թանկ են մեր ժողովրդի պատմության համար:

Առաջին հուշարձանը, որը նա արձանագրել է և թողել սերունդներին ի պահ, 1013 թ. կառուցված Հավուց Թառի Ամենափրկիչ եկեղեցին է: Այդ գլուխգործոցը տուժել է երկրաշաժից և դեռևս վերակառուցված չէ: Կատարված արձանագրությունն իր բովանդակությամբ կապված է «Ձորս ըստ պատկերի քում...» Գր. Մագիստրոսի միակ շարականի հետ:

Դրանք հետաքրքիր առնչություններ ունեն իրար հետ և մեր մշակույթի պատմության մեջ հանդես են գալիս մի քանի յուրատեսակ հոգեբանական աղերսներով ու ժամանակագրական կապերով: Թե՛ արձանագրության, թե՛ շարականի մասին մենք կխոսենք ավելի ուշ:

1031 թ. ավարտվել են Բջնիի Ս. Աստվածածնի եկեղեցու շինարարական աշխատանքները: Բնականաբար այն ստանձնել է կառնոր դեր և ունեցել է կենտրոնական նշանակություն ընդարձակածավալ ^{գաղափար} հոգևոր կյանքում: Մագիստրոսը Բջնին կարողացել է դարձնել թեմական կենտրոն, ուր նստում էր թեմի հոգևոր առաջնորդը: Ալիշանը նշում է, որ նորակազմ այդ թեմը մասնակցում էր համայն հայաստանյայց կաթողիկոսական ընտրություններին /իսկ դրանք ընդամենը չորսն էին/: Փաստորեն դա Արարատյան թեմի փոխադրումն էր Բջնի:⁴⁶

Ս. Աստվածածնի եկեղեցու արձանագրությունը հետևյալն է.

«Թ. ՆԶ, Շնորհիւն Աստծոյ այս հրամանք է իմ տեառն Պետրոսի եւ Սմբատ Շահնշահի որ հաստատեաց Եպիսկոպոսարան ի Բջնի քաղաքս գնուրբ Աստուածածինս. հիմնարկեալ կատարեաց Գրիգոր իշխանաց

իշխան որդի Վասակայ, եւ տուաւ վիճակ ի սուրբ Աստուածածինս ի փոշեհանից մինչև ի Նիգ եւ Դիւա /տուն/... զառակս եւ յԱղստեւ. տուաք զաւագան եւ սուրբ նշան եւ աթոռ. Արդ եթ ոք խափանել քանա զաթոռս կամ յայլ տեղիս փոխել կամ զհողն յապշտակել կամ զաւանդ եկեղեցոյս գողանալ, թէ յեպիսկոպոսաց կամ յիշխանաց, կամ ով որ հակառակի, նզովեսցի յԱստուծոյ եւ ի մէնջ եւ ի ՅԺԸ հայրապետաց ...»:⁴⁷

Շարունակության մեջ Սագիստրոսը նշում է, որ Աթոռի սահմանները տարածվում են. արևմուտքում՝ Ախուրյանից մինչև Ծար գետ , հյուսիսից՝ Աղստեւ, իսկ հարավում՝ անընթեռնելի է:

Շիրակից մինչև Զայոց Արևելից կողմանք էր ձգվում այս թեմը իր նաև վարչական սահմաններով: Այն հայաբնակ մի մեծ երկրամաս էր, երբ առաջին անգամ հայոց արևելյան դարպասների մոտ հայտնվեցին կանացիակերպ, նեղաչք սելջուկները, որոնք լավ նետածիգներ էին: Նրանց 20-րդ դ. սկզբում հաջողվեց յուրացնել երկրամասի հյուսիս-արևելյան որոշ մասեր⁴⁸:

1051 թ. կառուցվեց Կեչառիսի Ս. Լուսավորիչի եկեղեցին: Արծա-նագրության մեջ գրված է. «Ի. Շ. Թուականիս, ի ժամանակս Կոստանդնոյ Մոնոմախի՝ թագաւորի հայոց /Տ/՝ դուքս Վասպուրականի զաւառիս Ծաղկնուց եւ Գրիգոր Սագիստրոս որդի Վասակայ հրովարտակաւ և հրամանաւ վերոհայեալ թագաւորիս՝ հիմնադրեալ շինեցի զեկեղեցիս ի տեղւոջս որ կոչի Կեչառուս, ի նախասացեալ զաւառիս Ծաղկնուց հանդերձ մատրամբ և նուիրեցի զտաճարս և զեկեղեցիս յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի մերոյ, և զարդարեցի զսա սպասուք, արծաթեղինօք և ոսկեղինօք, գրովք և այլովք պիտոյիք, որպէս վայել էր տաճարիս: Դարձեալ ետու եկեղեցւոյս զեօղս երկուս և այգի մի»:⁴⁹

Նախապես գիտենք, որ Կեչառիսի կենտրոնագմբեթ եկեղեցին կառուցել է Ապիրատը: Սակայն հետագայում նրա կառուցածը կամ անավարտ է մնացել, կամ ավերվել է, ուստի այն կառուցել ու ավարտել է Գրիգոր Սագիստրոսը և արծաճագրել: Այդ մասին ավելի հանգամանա-լից է խոսում Գարեգին Դովսեփյանը՝ ապացուցելով, որ իսկապես Սագիս-տրոսն է դրա հեղինակը⁵⁰: Այդ եկեղեցու մուտքից դեպի ծախ, եկեղեցուն կից գավիթը նույնպես Սագիստրոսինն է: Գավթի մուտքի վրա նկարված են Քրիստոսի և տասներկու առաքյալների զուգավոր պատկերները, որոնք եզակի նմուշներ են հին վիմական նկարազարդումների: Այս մեծ կառուցումների շնորհիվ Կեչառիսը դարձել է մշակութային խոշոր կենտ-

րոն: Սկսած 11-րդ դարից՝ այնտեղ կրթվել են շատ նշանավոր մարդիկ, որոնցից մեկն էլ հռչակավոր հաջատուր Կեչառեցին է /13-14-րդ դդ./:

Ժողովուրդը ևս հիշուղության մեջ պահել է հեռավոր օրերի արծազանքները: Բնության անկրկնելի լրացումը կազմող տաճարի կառուցման մասին լեգենդը պատմում է. *«Իշխանի կամակոր դուստրը բերում և իրենց հողում ցանում է աշխարհի ամենագեղեցիկ ծաղիկները: Սակայն քամին և փոթորիկը ոչնչացնում են ծաղկած դաշտի ամբողջ հարստությունը: Եվ այդպես տարիներ շարունակ: Մի անգամ աղջիկը երազ է տեսնում և արթնանալով պահաջում է հորից կառուցել եկեղեցի: Հայրը ծաղիկների դաշտում եկեղեցի է կառուցում, որից հետո այլևս փոթորիկ չի լինում:*

*Իսկ դաշտը ծածկվում է խայտաբղետ ծաղիկներով: Այնուհետև այդ վայրը կոչվում է Ծաղկածոր»:*⁵¹

Ծաղկածոր անվան այս ստուգաբանությունն, իսկապես, գեղեցիկ է:

Բյաց դա մեզ հիշեցնում է համանման մեկ այլ անվանում. խոսքը Անիի Ծաղկոցածոր թաղամասի անվան մասին է, որը դարձյալ Պահլավունիներին էր պատկանում:

Գր.Մագիստրոսի վաստակը հնում առաջին հերթին գնահատվել է այն հանգամանքով, որ նրան ճանաչել են իբրև գիտնական և մանկավարժ: Հետևելով հին հելլենական մանկավարժական մտքի ձեռքբերումներին՝ նա հարստացնում է հայ մանկավարժական տեսական միտքը: *«Բոլոր ուսյալ աշխարհականների մեջ առանձնապես փայլում է այս Պահլավունի իշխանը,- գրում է Մ. Աբեղյանը,- մեր վաղ Վերածնության շրջանի լավագույն ներկայացուցիչը, իսկական լուսավորական գործիչ: Նա ոչ միայն ուրիշներին հորդորել է գիտությամբ պարապելու և դպրոց ունենալու, այլև ինքը շարունակ սիրով և անխոնջ հետևել է դրան...»:*⁵²

Մանկավարժության խնդիրներին Մագիստրոսն անդրադառնում է շատ անգամ և բազմաթիվ առիթներով: Իր տեսակետները նա համակարգված շարադրում է հատկապես իս բոլորում:⁵³ Պետրոս կաթողիկոսը համձնարարել էր նրա երկու աշակերտներին Արիստոտել ուսումնասիրել: Եվ համարելով, որ դա նրանց համար դեռ վաղ է, և մինչև դրան հասնելը նրանք պետք է այլ առարկաների հետ ծանոթանան, խնդրում է իրեն ուղարկել այդ մատյանը. *«Կամիմք եթե առաքեք դա մեզ. քանզի նախ պարտ է զբերականութիւնն հանդերձ թարգմանությամբն ուսանել տիրապես մակստացականութեամբ, և զկնի այսր գիտետորականն երիւք հանդիսիւք անսխալ տրոհութեամբ, և ապա զսահմանացն*

պարունակել և պղատոմական և արիստոտելական, և դարձեալ պիւթագորական կարականներտութեանն բացորոշմանց և դատողութեանց, նախուստ քան զայսոսիկ կրթեցելովք ներկուո վերժանութեամբ զՀին և զՆոր Կտակարանս, և առասպելավարժութիւնս ի բազում և զանազան տեղիս զեղեալ գորքանութեամբ արտայայտել հաւանիմք »:⁵⁴

Սագիստրոսի կարծիքով ուսումնանակն համակարգը պետք է լինի հետևյալ կերպ և ընդգրկի իր մեջ դրա չորս տեսակները.

- 1) առասպելավարժություն և Հին ու Նոր կտակարանների ուսուցում,
- 2) քերականություն՝ թարգմանությամբ հանդերձ,
- 3) հռետորական «զերիւք հանդիսիւք անսխալ տրոհութեամբ և ապա սահմանացն պարունակեալ»,
- 4) «պլատոնական», «արիստոտելական», «պիւթագորական» ուսմունքները:

Այս տեսակները բաժանվում են երկու մասի կամ ուսուցանվում են երկու աստիճանով: Առաջինը պարտադիր ուսուցումն է, իսկ երկրորդը՝ բարձրագույնը: Առաջին շրջանի դասընթացը Մ. Աբեղյանը հետևյալ կերպ է բնութագրում. «Ուսումը պետք է սկսել Մ. Գրքի ընթերցանությամբ և առասպելավարժությամբ, ապա հոմերական և պլատոնական և այլ գրքերի հատվածներից հետո «չորս արհեստները»՝ թվաբանություն, երաժշտություն, երկրաչափություն և աստղաբաշխություն, և նոր անցնել երկրորդ աստիճանի ուսման, որ է՝ քերականություն և մյուսները»:⁵⁵

Երկրորդ աստիճանը կամ բարձրագույն ուսումը լրացվում է եռյակ արվեստներով. այն է՝ քերականություն, ճարտասանություն և դիալեկտիկա:

Նրա կարծիքով ովքեր որ ուսման առաջին փուլը չեն անցել, չեն կարող սովորել երկրորդը, հետևաբար աստվածաբանությամբ զբաղվելու իրավունք չունեն, քանի որ դա անել ի վիճակի չեն լինի: «Քանզի պարտ է նախ ի բնաբանականէն յուսումնականն /Ֆիզիկայից մաթեմատիկային Մ. Մ./ ամբառնալ և անտուստ աստուածաբանականն»:⁵⁶

Նրանք պետք է հռետորական արվեստի մեջ խորանան, ինչպես «մասնաւոր գիողշտեսական գօրէն գործասէր մեղուի ամբարեաց ի մեղուանոցի այդր ի բազմավէտ մատենագրից Քաղդէացոց և Յունաց և ամենայն ազգաց առ ի ծանօթ լինելոյ»:⁵⁷

Հասկանալի է, որ նա պահանջում է գիտությամբ հասնել կատար-

յալին: Իսկ այդ կատարյալը մարմնավորված է Աստծու էության մեջ:

Մագիստրոսը մշտապես այն համոզումն ունի, որ սեփական մշակույթը պետք է հարստացվի և հագեցվի նաև հարևան ժողովուրդների մշակույթներն աչքի առաջ ունենալով: Դրա համար պետք է թարգմանել նրանց արժեքավորը, եղածին ավելացնելով և սեփականը. *«Քանզի մեր ոչ է սովորութիւն գողաբար զայլոցն իմաստասիրութիւն խորթս մեզ ստեղծանել»*:⁵⁸

Մագիստրոսը շատ վաղ հասակից է սկսում զբաղվել գիտությամբ և արվեստներով. *«Քանզի տրամադրութիւնքս այս վաղ ուրեմն պատահեաց մեզ մինչ տակաւին պատանեակ եղելոյ: Իսկ եթէ որչափ ջան եղեալ ոչ խոնջանս վարկանել սակս տառփելոյն յաւետ այսպիսի ժողովմանց, որոյ տեղեակ էք դուք ի պարսկականէ անտի և յիսմայէլացոցն, և այժմ Յունաց անդանդաղ քառիցն արհեստից հետևաբար միասին ինչ տեղեակ լինել»*:⁵⁹

Հասկանալի է նաև Մագիստրոսի մտահոգության պատճառը. նա շահագրգռված է, որ ուսումնական գործը կատարեն հմուտ և զարգացած մանկավարժներ: Դրանցից մեկն, օրինակ, Հովհաննես Կոզեռնն էր: Մանկավարժ էր ինքը՝ Մագիստրոսը, Սարգիս Անեցի տելետիսը, Հովհաննես արքեպիսկոպոսը և շատ-շատերը: Խոշոր գիտակրթական օջախներ էին Արգինայի վարդապետարանը՝ Անիի մոտ /10-րդ դ./, ուսուցչապետ՝ Գրիգոր Հնծացի, Նարեկի վարդապետարանը /10-րդ դ./, ուսուցչապետ՝ Անանիա Նարեկացի, Սանահինի և Հաղպատի ուսումնագիտական կենտրոնները /10-13 դդ./: Սանահինում՝ Դիոսկորոսը, Հաղպատում՝ Հովհաննես Իմաստասերը, Տաթևի, Կամրջաձորի, Կարսի, Կեչառիսի և այլ մշակավոր դպրոցներ ու վարդապետարաններ:

11-րդ դարը դառնում է տեսական մտքի զարգացման մի նոր ու աննախադեպ փուլ, որը պայմանավորված էր այդ դարի առաջին կեսում Հայաստանում գոյություն ունեցող Բագրատունյաց հարստությամբ ու երկրի բարգավաճ վիճակով: Մագիստրոսը և Վերածնության շարժման մյուս պարագլուխները ձգտում էին, *«Չբավականանալ միայն կրոնականով և եկեղեցական դպրոցներով, հայերի մեջ վերանորոգել և զարգացնել հին հունական գիտությունը, ուսումնասիրել մաթեմատիկա, երկրաչափություն, բժշկություն, ծանոթանալ հին հունական գրականությանը և ընդհանրապես բազմակողմանի գիտելիքներ ձեռք բերել»*:⁶⁰

Պահլավունյաց մեծ իշխանի հմայքն ազդել է այն մարդկանց վրա,

ովքեր երբևէ առիթ են ունեցել շփվել իր հետ: Իմաստասերի և բանաստեղծի խոհեմությունը խառնվել է գինվորականի ծիզ ու մշտադուրս կեցվածքին և նրան տվել մարդկանց մեջ ընտրյալ լինելու կերպը: Իշխանական և իմաստասիրական իր բարձունքից է տեսել ու քննել աշխարհը Գրիգոր Պաղիսիանոսին: Սակայն երբեք չի կորցրել իր գաղափարությունը և չի չարաշահել իր դիրքը: Նրան ասես մշապես ուղեկցել է այն միտքը, որ այս կյանքում տրված ամեն ինչ ունայն է դատապարտված կործանման ու անհետացման անթեկանելի օրենքին: Ընտանիքի հայր լինելու բախտավորությունը և հասարակության մեջ գրաված իր բարձր դիրքն այն թվացյալ պատրանքն են ստեղծել, թե Մագիստրոսը երջանիկ մարդ է: Իրականում նա շարունակ հիշում է անժամանակ զոհված հորը, վաղամեռիկ իր երկու մանուկներին, սգում հորեղբոր՝ Վահրամի եղբրական մահն Անիում և ողբում հայրենիքի անկումն ու թշվառ վիճակը:

Բարդ է և Մագիստրոսի աշխարհահայացքային համակարգը ու երբեմն խիստ հակասական: Նրա համար կյանքն ավարտ չունի:

«...Ըստ քում քաղցր և հեզահայեաց համդարտութեան լուր ինձ և բարեխօսեա, որում սպասեցերդ և յորմէ պսակեցար, թողութիւն յանցանաց իմոց և ուղղափառ խոստովանութեամբ և հայրենի կրօնիւք արծանի լինել յուսոյ կենացն յաւիտենից»»⁶¹ Սահն այն ամենախիստ վերջակետն է, որից հետո սկսվում է «կենդանի» կյանքը: Եվ դա այն դեպքում, եթե մարդ իր կյանքը «ծախսում» է կատարյալին հասնելու համար: Կատարյալն, ըստ նրա, հասանելի է:

Դրա իրականացումը մեծ իշխանը տեսնում է Փրկչի կերպարի մեջ մարմնավորված: Նա է, որ բարության աղբյուրն է, չարի խափանիչը. *«Եւ ահա ոչ այլ զոր ունել ինձ ապաստան,- գրում է նա,-այլ միայն զՏէր Յիսուս Քրիստոս այն, որ ի բազում նեղութեան մերում մխիթարէն զմեզ և ի պատերազմի յանկարծօրէն անյուսացելոց հեծեալ հասանէ և պատեալ զօրացն ի գիշերի սատակէ, և ի սովի առատացուցանէ կերակուր և ի հնոցի ցօղէ ընդ մեզ զիջեալ, ի կապանի և ի բանտի լույս ծագէ, և առաջի թագաւորաց տայ բարբառել, և յերկիւղէ գիշերոյ պահպանէ, որ ի տունջեան աներկիւղ առնէ, որ ի խորհողացն գաղտնի դիտաւորեալ զգուշացուցանէ»»⁶²*

Երևում է, անշուշտ, որ Մագիստրոսը ոգևորվում է Տիրոջ կերպարով: Նրա համար Յիսուսը կենդանի և գործող գոյ է, որի էությունից ամեն իսկում և նահանջ տանում է դեպի անխուսափելի մահ ու աղետալի կոր-

ծանուծ: Նա օգնում է մարդկանց, քանի որ գրում է նրանց, զգում նրանց ծանր կացությունը, սակայն փոխարենը ոչ մի հատուցում չի պահանջում:

Մագիստրոսը նաև իր հակասական ժամանակի ծնունդն է: Դա պատճառ է դարձել, որ նրա աշխարհայացքի մեջ ներթափանցեն որոշ հակասություններ: Նրա համար տարօրինակ չէ քրիստոնյա վարդապետների կողքին դնել հեթանոս փիլիսոփաներին ու իմաստասերներին, անթաքույց պերճախոսությամբ և անսահման համակրանքով խոսել Պլատոնի, Էվկլիդեսի և Զոմերոսի մասին: Նա փիլիսոփայությունը մեկ աստիճան ցածր է դնում աստվածաբանությունից և կարծում է, որ արտաքին գիտությունները ևս ուղղակիորեն աստվածաբանության ստորադաս և նրան նյութեր տրամադրող միջոցներ են. *«Մերձենալ առ Աստուած բարի է յոյժ: Եւ ոչ այլ ինչ է հնար մերձենալ, եթէ ոչ գիտութեամբ լուսաւորել զանձն: Վասն որոյ, որք հեռի արարին զանձինս կորուստ և պակասումն նոցա հասանէ»*⁶³

Գր. Մագիստրոսն իր մեջ կրում է իր ժամանակի հոգեբանությունը և աշխարհընկալումը: Նա մեծ մտածող է: Աստծո գոյության ընդունված և աներկբայելի հարցին փորձում է գիտական պատասխան տալ: Իր տեսական հայացքներով հարում է նորալատոնական ուսմունքին, հարազատ մնում Պլոտինին և Դավթին:

11-րդ դարում նա շարունակում է դեռևս Գր. Նարեկացուց սկիզբ առած Վերածնության մեծ շարժումը: Մ. Աբեղյանը նախապատվությունն այս շարժման մեջ տալիս է նրան շեշտելով. *«Գրիգոր Նարեկացին իր հանճարով ուներ բնության զգացումը, բայց իր երկով նա ռաիվիրա չի դարձել անմիջական հաջորդների համար: Գուցես եղել են նրան հետևողներ, ժամանակակից կամ քիչ ուշ հանդես եկող բանաստեղծներ, բայց այդպիսիների գրվածքները հանդես չեն եկել: Վերածնության առաջին «պոետիկոսը» բանաստեղծության բնագավառում Պաիվադունի Գրիգոր Մագիստրոսն է, Գրիգոր Նարեկացու շատ կրտսեր ժամանակակիցը...»*⁶⁴ Սակայն մեծ գիտնականը թերազնահատում է այն, ինչ անում է Գր. Նարեկացին աշխարհաճանաչման և իրականության նորովի ընկալման բնագավառում: Այս տեսակետից միանգամայն ճիշտ է նկատում Զրանտ Թամրազյանը՝ գրելով. *«Գրական նոր շարժման մեջ առաջին տեղը պատկանում է Գրիգոր Նարեկացուն»*⁶⁵ Ինչպես տեսնում ենք թե՛ մեկը, թե՛ մյուսը ոչ թե բացառում են միմյանց, այլ լրացնում:

Մագիստրոսը միանգամայն աշխարհիկ մարդ է: Նա 11-րդ դարի հետ

կապված է սոցիալական, քաղաքական և հոգեբանական բազմաթիվ հանգույցներով: Նա թոնդրակեցու մեջ, օրինակ, մի կողմից տեսնում է հակառակորդի, իսկ մյուս կողմից՝ ճնշված ու մոլորյալ մարդու: Մի կողմից՝ հզոր իշխան է ու պաշտոնյա, մյուս կողմից՝ զգայուն ու դուրազզաց բանաստեղծ, որ խոցվում է անտեսանելի նետերից: Այդ և շատ հատկանիշներ գալիս են հարստացնելու և ամբողջացնելու Մագիստրոսի կերպարը, որի մեջ թանձրանում է իր ժամանակաշրջանը: Այդ դարակազմիկ հեղինակին գնահատելիս չպետք է սահմանափակվել գործունեության միայն մեկ բնագավառով: Դա միակողմանի կդարձնի ասելիքը, այլ *«Ուրույն ձևով պետք է գնահատել Մագիստրոսին, քանի որ նրա մեծությունը բոլոր ծիրների ամբողջության մեջ է»*⁶⁶, ինչպես և գործունեության ամենատարբեր ոլորտների գնահատման և դրանցում իր մասնակցությունն ու ներդրումն ունենալու: Հասարակական և գրական շարժման այդ առաջնորդը *«Մեկն էր նրանցից, ովքեր ամեն կերպ ձգտում էին ճշգրիտ գիտությունները և բանաստեղծությունն արմատավորել հայ կյանքում, աշխարհի փորձը՝ բանաստեղծության, բնախոսության, աստվածաբանության ասպարեզում, օգտագործել հայ հողի վրա: Ուշագրավ երևույթ: Նույն ավյունով նա այդ գործը շարունակում է նաև բյուզանդական սահմանների վրա, շատ բան է անում հայ դպրոցի, կրթության ու գիտության համար, հովանավորում հայկական կրթական օջախները, պահում է իր ճեմարանները»*⁶⁷

Ունենալով գիտելիքների գրեթե անսպառ պաշարներ և տիրապետելով ժամանակի գիտության համարյա բոլոր ճյուղերին՝ բժշկագիտությունից մինչև մաթեմատիկա և աստեղագիտություն, նա հավասար իրավունքով համարվում է և գեղագետ: Գեղագետ, որը աշխարհին նայում է միանգամայն նոր հայացքով:

Վերածնության մյուս մեծերի պես Մագիստրոսն էլ գնում է դեպի ազգային և համաշխարհային մշակույթի ակունքները՝ հայ կյանքում վերահաստատելով անտիկ ավանդները: Նա անմնացորդ կերպով հիանում է Զոմբերոսի համճարով և վերածնում Պլատոնի և Արիստոտելի երկերը: Կատարվում է կյանքի աշխահականացում: Երևան են գալիս անտիկ ու աստվածաշնչյան այնպիսի կերպարներ, որոնք պայքարում են մարդկային ամենաբարձր իդալների հաղթանակի ու հաստատման համար:

Մագիստրոսն այդ շարժման կենտրոնում է: Նրա գեղարվեստական ամբողջ ժառանգությունը չէ, որ մեզ է հասել. Մեզ չեն հասել նաև նրա

թարգմանությունների ամբողջական բնագրերը: Բայց բանն այն է, որ հասածն էլ բավական է, որ մենք կարողանանք լուրջ ու աներկմիտ դատողություններ անել նրա հայացքների ու գեղագիտության մասին: Նա բանաստեղծությունը դարձնում է առօրյա հաղորդակցության միջոց, օժտում է այն միանգամայն աշխարհիկ բովանդակությամբ: Նրա տաղանդը փայլում է հատկապես արձակում: Գր. Մագիստրոսը կարողանում է արմատական փոփոխության ենթարկել մինչ այդ եղած թղթի ժանրը: Նրա հոգեկան ծավալումների ալիքը հասնում է մինչև ամենաողբերգական խորքերը և այնտեղից հորդում դեպի ծիծաղի ու երջանկության բարձունքը՝ բոլոր դեպքերում ունենալով համատիեզերական ընդգրկումներ ու չափեր: Նամակի նախկին ձևի մեջ դրվում է միանգամայն նոր բովանդակություն. *«Գրիգոր Մագիստրոսի մամակագրությունը էապես առանձնանում է հայ մամակի պատմության ավանդական ընթացքից գլխավորապես այն պատճառով, որ մամակագրական թեմաների մմանօրինակ բազմազանության երևույթը եզակի է և հայ մշակույթի պատմությամ մեջ»*⁶⁸: Մագիստրոսը խիզախորեն ձևափոխում է նաև մամակի ժանրային արտաքին կողմը: Այսպես, որ նա թե՛ բովանդակության, թե ձևի մեջ նորարար է: Նրա մամակը կառուցվածքային տեսակետից միանգամայն զանազանվում է նախորդ շրջանի մամակից: Սա անպայմանորեն ունի նոր թղթառաջ, միջնամաս և թղթավարտ: Դրանք էլ իրենց հերթին որոշ բաժանումների են ենթարկվում՝ ինչպես ասենք նախադրության, խնդրառության, վերջողջույնի բանածն և այլն:

Մագիստրոսն իր թղթերով կատարում է մի էական նվաճում ևս, որը որակական նոր աստիճան է նշանավորում մեր 11-րդ դարի գրական-հասարակական կյանքում: Նա մի դեպքում ինքնաբացահայտումների ճանապարհով բացում է մեր առջև իր հոգու գաղտնի ծալքերը, դրանով իսկ բացահայտելով իր մարդկային էությունը, մյուս կողմից՝ իր մամակագիրների ներքնաշխարհը՝ նկարագրելով կամ բնութագրելով նրանց այս անգամ *«դրսից»*: Աստիճանաբար կերտվում են նորանոր կերպարներ և դրանց կողքին համահավաք մի կերպար, որը իր՝ մամակագրի կերպարն է: Այդ հերոսի և նրա շուրջ կերտված բազմաթիվ ու բազմապիսի կերպարներով հարուստ մի աշխարհ է բացում մեր առջև Մագիստրոսը: Նա չի *«ափսոսում»* իր հոգու հարստությունն ու գիտելիքների պաշարը շռայլելուց և մինչև վերջ անկեղծանալուց:

«... Այժմ կարևորաբար ուսուցաք քեզ, քանզի սովորութիւն է մեղուաջ

գփոշօտեսական ծաղիկ ժողովել և քաղցր և անաբօր կերակուր մատուցանել»⁶⁹,- գրում է նա՝ տքնաջան աշխատանքի կարևորությունը նկատի ունենալով: Լինելով գիտնական նա բնավ չի դադարում գեղագետ լինել: Նրա գեղագիտական համակարգը նույնպես բազմաշերտ է: Եվ միանգամայն ճիշտ է նկատում Աշոտ Ալեքսանյանը գրելով. «Գրիգոր Մագիստրոսն ակնհայտորեն նամակի ժանրի շատ ավելի լայն ըմբռնում ունի, քան նախորդ և հաջորդ շրջանների հայ նամակագիրները: Նամակի առարկա Մագիստրոսի պատկերացմամբ կարող են հանդիսանալ իրականության և մշակութային կյանքի ամենաբազմազան երևույթները»⁷⁰:

Այնպես որ՝ 11-րդ դարը մեզ ներկայանում է իր գունային ծածանումների, զարգացման ու անկման բարձրակետերի, կենդանի կյանքի յուրօրինակությունների համայնապատկերի վրա: Եվ այդ ամենն իրենից մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

Գր. Մագիստրոսի թղթերի աչքի ընկնող առանձնահատկություններից ամենաեականը նրանց գեղարվեստական ատաղծն է: Նա պատկերավոր է դարձնում այն ամենը, ինչի շուրջ որ սկսում է խոսել: Անգամ թղթերում այնքան շատ հանդիպող բանավեճերը ոչ թե գրված են ընդամենը գիտական չափանիշերով ու հմտությամբ, այլ շարադրված են գեղագիտական սկզբունքների կիրառումով: Օգտագործված են բազմաթիվ պատկերավորության միջոցներ, որոնք ընթերցողի մոտ հանդես են գալիս գեղարվեստական հետաքրքրությունների աստիճանում: Վերջապես նա գեղագետ է, որովհետև նա կերտում է բազմաթիվ ու բազմաբնույթ կերպարներ՝ միջնադարյան մարդկանց կերպարներ:

Աղանդավորական շարժումները և Գր. Մագիստրոսը

Արևելքի խայտաբղետ ազգային կենցաղը, կրոնական տարաբնույթ ուղղությունների առկայությունը և ճշմարտության որոնման մարդկային հարատև ծգտումը բերել են մի այնպիսի իրավիճակի, երբ հաճախ շատ դժվար է եղել զանազանել ճշմարտությունն ու կեղծիքն իրարից: Դրանք էլ, ահա, ծնել են աղանդները, որոնց դեմ պայքարը շարունակվում է առ այսօր:

Գրիգոր Լուսավորչի և Տրդատ Մեծի՝ քրիստոնեության ընդունումից հետո /301թ./ նրա տարածման և ամրապնդման ուղղությամբ առանձնապես մեծ աշխատանք կատարեցին 5-րդ դարի մյուս երկու լուսավորիչները՝ Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը՝ թարգմանելով աստվածաշնչյան և քրիստոնյա հայրերի Գրքերը: Ցավալին ու հատկանշականն այն էր, սակայն, որ Ավարայրի դաշտում 451թ. հայերը տալիս էին քրիստոնյաների առաջին կրոնական պատերազմն ընդդեմ հեթանոսների, մինչդեռ Քաղկեդոնում բյուզանդացիք դնում էին երկաթնակության հարցը՝ երկպառակելով նոր- նոր ձևավորվող քրիստոնեական եկեղեցին: Եվ այդպիսով Հայոց առաքելական եկեղեցին մի կողմից ստիպված էր դիմակայելու մծղեականությունն ու մանիքեականությունը, մյուս կողմից՝ քույր եկեղեցիների գաղափարա-քաղաքական պարտադրանքներին: Դրա պատճառով 506թ. Դվինի եկեղեցական ժողովով Հայոց եկեղեցին իր կապերը ժամանակավորապես խզեց Արևմուտքի հետ⁷¹: Սակայն բյուզանդական կայսրերն ու պատրիարքները երբեք չդադարեցին ճնշումներ գործադրել: Բավական է հիշել Փոթ /857-867, 877-886/ պատրիարքի երկու նամակները՝ ուղղված Ջաքարիա կաթողիկոսին /855-878/⁷², երբ արդեն Հռոմեական եկեղեցին պատրաստվում էր հակազդել բյուզանդացիքին և արդյունքում 1054թ. անջատվեց նրանից⁷³: Նույնքան ցավալի էր Վրաց եկեղեցու անջատումը Հայոց եկեղեցուց և սկսած պայքարը /608թ./⁷⁴:

Պաշտոնական եկեղեցին սկզբից ևեթ արժանի գաղափարական հակահարված է տվել թե՛ պավլիկյաններին /7-8 դդ./, թե՛ թոնդրակյաններին /9-11դդ./: 10-րդ դարի նշանավոր մտածողներից մեկը՝ Անանիա Նարեկացին գրում է. *«Եւ գի նախ յայտնապէս զաւտարոտեացն չար կարծիս քերծեալ մերժեցից յինէն, որք ոչ ըստ աստուածային գրու-*

թեանցն հետևեցին հաւատոց, այլ ըստ իւրեանց մտացն խորհրդոց, և անաստուած վարդապետութեան հետևեալ ունայնավաստակ ջանիս՝ արտաքս անկեալ եղեն ... և որք ի մերում ժամանակիս, որք թոնդրակեցիք կոչեցին, նգովեալ եղիցին յաստուծոյ...»⁷⁵։ Նշանավոր վարդապետները իրենց սուր մտքով քննարկում և լուսարանում են սկզբունքային շատ լուրջ խնդիրներ, տալիս սպառիչ պատասխաններ՝ աղանդների հետ կապված։

Թոնդրակյան աղանդավորական շարժումը հզոր և կազմակերպված բնույթ ուներ։ Խորածանկ ու հնարամիտ աղանդապետերը կարողանում էին իրենց կողմը գրավել բազմաթիվ շինականների, ազնվականների ու նույնիսկ հոգևորականների։ Իսկ նրանք, ովքեր չէին ընկնում նրանց ծուղակը, իրենք էին աղանդավոր հայտարարում, կասկած սերմանում նրանց դեմ, ամբաստանագրեր գրում։ Դա էր թերևս պատճառը, որ Անանիա ու Գրիգոր Նարեկացիներին, Խոսրով Անձևացուն /բոլորն էլ նշանավոր կրոնական այրեր միևնույն ընտանիքից/ կասկածել են թոնդրակեցիության մեջ, դատավարություն բացել նրանց դեմ⁷⁶։

Չկա այս դարաշրջանի որևէ հայ մտածող, որ անդրադարձած չլինի աղանդի սկզբունքների քննությանն ու դրանց մերժմանը։ Դա խոսում է հերձվածի խիստ տարածվածության մասին։ Այն իր մեջ ներառում էր հայ կյանքի բոլոր դասերն ու սոցիալակ խմբերը։ Նրա շարքերում մեծ տեղ էին գրավում հատկապես կանայք, որոնք առավել դաժան էին ու սանձարձակ։ Արդեն պավլիկյան աղանդի մասին պատմվում էր մի գրույց, թե այն հիմնել է Շեթի անունով մի պարսկուհի, որ Պարսկաստանից 7-րդ դարում գալիս է Այրարատ և ամուսնանալով Պողոս անունով մի հայազգի տղամարդու հետ՝ տարածում այն։ Այդ աղանդի մեջ կա մի զարհուրելի սկզբունք։ Երբ սովորության համաձայն պոռնիկ կանայք ունենում էին իրենց առաջնեկ երեխան, շրջան էին կազմում և երեխան մեկի գրկից մյուսին նետում այնքան ժամանակ, մինչև որ նա չարամահ էր լինում։ Եվ ում ծեռքերի մեջ երեխան մեռներ, նրան էլ դարձնում էին իրենց աղանդապետը⁷⁷։ Թոնդրակյանների մեջ ևս ընդգրկված էին բազմաթիվ կանայք, որոնցից մի քանիսի անունները պահպանվել են՝ Գրանուշ, Ախնի, Կամարա⁷⁸։ Լինելով ազնվականուհիներ՝ նրանք ոչ միայն աղանդի շարքերը ներառան Վրվեռ իշխանին, այլև իրենց իսկ կալվածք հանդիսացող գյուղերը դարձրին շարժման կենտրոններից մեկը։

Մեր հին մատենագիրները նշում են, որ թոնդրակյան աղանդի

հիմնադիրն ու առաջին աղանդապետը Սմբատ Զարեհավանցին է, որ *«եկեալ ի գաւառէդ Ծաղկոտմէ ի գեղջէ Զարեհաւանէ, եկեալ բնակեցաւ ի Թոնդրակս և ուսուցանել սկսաւ զամենայն չարիս բոլոր»*⁷⁹։ Նա պատմության մեջ հայտնվեց *«յաւուրս տեառն Յովհաննիսի և Սմբատայ Բագրատունոյ, ուսեալ զչար մոլորութիւն յունեմնէ պարսկական բժշկէ և յասղաբաշխէ մոզէ, զոր Ս/ը/ջուսիկդ կոչէք»*, - գրում է Գր. Մազիս-տրոսը⁸⁰։ Ուրեմն նա սկսում է գործել 9-րդ դարի 40-ական թվականներից՝ ամրանալով նախ՝ Թոնդրակում, ապա՝ Հայաստանի այլ գավառներում։ Ղրա պատճառն այն էր նաև, որ այդ տարածքներում մեծ էր արաբա-բյուզանդական ազդեցությունը։ Ղա հնարավորություն էր տալիս օտար-ազգիներին հայկական կյանքը մշտապես տագնապի մեջ պահելու, խորացնելու երկպառակությունները, իսկ իրենց հարմար պահերին գլխատելու թե՛ առաջնորդներին, թե՛ շարժումը։ Գր. Նրեկացու վկայությամբ Սմբատին սպանում է Կայսիկների էմիր Աբուլ Բարդը /կամ Վարդ/, որը հետևյալն է ասում՝ քանի որ դու քեզ Զրիստոս ես անվանում, ապա մեռնելուց հետո ինքդ էլ քեզ կենդանացրու⁸¹։

Տարբեր ժամանակներում աղանդապետեր և առաջնորդներ են եղել Կյուղեը, Հեսուն, Ղազարը, Թողրոսը, Ամանեսը, Արքան, Սարգիսը և այլք⁸²։ Ցավոք Ար. Լաստիվերցին, բավականին մանրամասնելով իր խոսքը աղանդի և նրա առաջնորդներից ոմանց մասին, չի ցանկանում խոսել նրանց գործերից՝ վախենալով դրանք գայթակղեցնեն ուրիշներին⁸³։

Աղանդի մեծ տարածման ժամանակաշրջանը կարելի է համարել հատկապես 10-րդ դարի երկրորդ կեսը, մինչև 11-րդ դարի նույն ժամանակները, երբ Բյուզանդական կայսրությունը սկսում է լրջորեն անհանգստանալ աղանդի հետագա տարածման վտանգից։ Այստեղ լայն գործունեություն էին ծավալել. Մանանադիում՝ Կունծիկ արեղան /Շերի բերդաքաղաքից/, Հարջում՝ Հակոբ եպիսկոպոսը, որոնց դեմ պայքարում էր սկզբում Սարգիս կաթողիկոսը /992-1019/, իսկ քիչ ավելի ուշ՝ բյուզանդացիք։ Մանանադի և Հարջ գավառներն է ուղարկվում էլիասա անունով դատավորը, որը ոչնչացնում է առաջնորդներին և ավերում աղանդավորների տներն ու բնակավայրերը։ Այստեղից նրանք հեռանում են Հայաստանի արևելյան գավառները։ Իսկ նրանց Հարջում գտնվելը Ա. Հովհաննիսյանը բացատրում է նրանով, որ նրանք նախկին պալլիկյանների մնացորդներն էին, որ 9-րդ դարում հաստատվել էին այդտեղ⁸⁴։ Թոնդրակյան աղանդին կործանիչ հարված հասցնում է Գր. Մազիս-

տրուսը՝ իր գործերով մտնելով Թոնդրակ ավան։ Դա 1051 կամ 1052 թվականն էր⁸⁵։ Երևում է ավանը սկզբից մինչև վերջ մնում է աղանդի հոգևոր կենտրոնը։ Մագիստրոսը գրում է. *«Եւ ապա տեսեալ իմ զպղտորումն մաքրագոյն ջրոյն, որ ծաւալէր, և հետևեալ մինչև ցական աղբերն, հանդիպեցայ ատրուշանին Թոնդրակացմաքրեցի զամենայն որոմն չարութեան և պղծութեան»*⁸⁶։

Զհետևելով իր դաժան նախորդներին՝ նա ֆիզիկապես չի վնասում որևէ աղանդավորի։ Ավելին՝ նրանց դարձի է բերում. *«Յրամայեցին սուրբ եպիսկոպոսունքն մեր, յորոց մի էր Եփրեմ արքեպիսկոպոսն Բջնոյ և այլք. կանգնեցին ի միջի նոցա աւագան մկրտութեան և արժանի արարին զնոսա եռանձնեան երանաւէտ ծայնին դաւանութեան՝ ի բաց դնել նոցա զհին մարդն և զգեցեալ զնոր մարդն»*⁸⁷։ Իսկ առաջնորդներից նրանք, ովքեր դարձի չեն գալիս, աղվեսադոշմ է դնում և արտաքսում։ 1000-ից ավել մարդիկ մկրտվում են, իսկ աղանդը ֆիզիկապես ու բարոյապես քայքայվում է։ Մինչդեռ ինկվիզիցիայի ժամանակների Եվրոպայում /14-17-րդ դդ./, դաժանությունը սահման չէր ճանաչում։ Այրում էին, կախաղան հանում, քառատում, և սովորական մահապատիժը ամենամեղմ միջոցն էր։ Եվ այնուամենայնիվ, որոշ հետազոտողներ շարժման մեջ տեսնում են առաջադիմական գծեր։ Գ. Տեր-Ակրտչյանը գրում է. *«Ուշադրության արժանի է, որ հայկական մտքի որևէ արտահայտություն երբեք չունեցավ քիչ թե շատ զգալի ազդեցություն հայ նեղ ազգային սահմաններից դուրս....մինչդեռ միակ բացառությունը այս կանոնից, հայկական մտածողության միակ արտահայտությունը, թեպետ աղանդավոր և հակառողմափառական մտածողություն, որը դուրս եկավ Չայաստանի սահմաններից, տարածվելով հեռուն՝ Փոքր Ասիա, Միջագետք, Բալկանյան թերակղզին միակ հայկականը, որ դարձավ միջազգային և ահագին նշանակություն ստացավ մարդկային ընդհանուր պատմության մեջ, այդ թոնդրակեցիների աղանդն էր»*⁸⁸։

Ասվածի մեջ կա որոշ չափազանցություն, բայց մի բան պարզ է։ Այդ շարժումը ընդհանուր հայկական վերածնության ազատախոհության դրսևորումներից մեկն էր նաև։ Ցավոք, չեն պահպանվել այն բազմաթիվ փաստաթղթերն ու գրվածքները /աշխատությունները, նամակները, հակաճառությունները/ և նույնիսկ բանաքաղությունները, որոնցից օգտվելով հնարավոր լինե՞ր պատկերացում կազմել աղանդավորների մտավոր ունակությունների, կրթվածության աստիճանի և

աշխարհայացքի մասին: Այս ամենը ժամանկին եղել է: Սագիստրոսի մոտ վերադարձած երկու քահանաները՝ Նիկանորան ու Պողիկապոսը, ցույց են տալիս. *«նշանակեցին մեզ, եթե յայնմ պղծանոցի խոճքին զթուղթսն առ անօրէն առաջնորդն Յեսու, եկեալ լիւրաքանչիւրը զաւառագ, աղէ՛, առ ընթերցիր և գտցես ի նոսա զաղծատանս ծունելոցն դիւական: Եւ խուզեալ մեր գտեալ ընթերցաք լի չարաչար կախարդութեամբ և հայիոյութեամբ»*⁸⁹. Եզրակացությունը մեկն է. այդ գրությունները գոյություն են ունեցել, բայց և ոչնչացվել են:

Աղանդավորների հաջողության գաղտնիքը աղանդապետների ազդեցիկ ու զարգացած լինելով կարելի է բացատրել, այլապես ժողովրդի մեջ նրանք մեծ հաջողություններ չպիտի ունենաին: 1051թ. հետո աղանդի մնացորդները ցրվել են գրեթե ամենուր: Ալ. Երիցյանը *«Փորձ»*⁹⁰ ամսագրում բերում է հետաքրքիր տվյալներ այն մասին, որ 1828-1845 թթ. էջմիածնի Ս. Սիմոնը քննել է խնուսից Այրարատ և Շիրակ տեղափոխված գյուղացիների մասին գործեր, որոնց մեջ եղել են թոնդրակյան աղանդին հարած շատ մարդիկ, ովքեր նաև հայտնել են, որ իրենց գաղափարները վերցրել են *«Բանալի ճշմարտութեան»* կոչված մի գրքից, որը նրանց էր փոխանցել խնուսում քարոզիչ համարված ոմն Օհաննես⁹¹: Կարևոր հարց է, թե ինչու էին աղանդավորներն այդքան արագ համախոհներ գտնում հայ իրականության մեջ: 2^ե որ մեր վարդապետների քրիստոսասիրությունը և հմտությունը ամենևին էլ պակաս չէր, այլ նրանք արդյունք էր նախնական ազգային մտածողության: *«Սասնա ծռեր»* էպոսի թեկուզ շատ հպանցիկ վերլուծությունը հաստատում է դա: Այդ համատեքստում 10-11-րդ դարերը հայոց ընդհանուր Վերածնության /10-16դդ./ վաղ շրջանն են ներկայացնում, ինչը մենք կարող ենք նաև անվանել կասկածի դարեր: Հիշենք, որ Եվրոպական Վերածնության հիմնական /գուցեն կենտրոնական/ գաղափարը կասկածն էր՝ որպես փիլիսոփայական ելակետ այդ դարաշրջանի ոգու: Կասկածը թափանցում էր նաև կրոնական պատկերացումների ոլորտը: Այդ ոլորտում հանդես էին գալիս Սա. Լյութերի /1483-1546/ պես ռեֆորմատորներ:

Մեր էպոսում կառուցվածքային և կերպարների ծագումաբանական յուրահատկությունները, ինչպես նաև մտածողության արքետիպական եղանակները ամբողջովին բխում են դիցաբանական նախկին պատկերացումներից՝ ընդգրկելով 7-13-րդ դարերի մի ողջ պատմաշրջան: Պա են հաստատում զույգ եղբայրների ջրային ծնունդ լինելը, երկվորյա-

կությունը, ծովի հատակից զենք ու զրահներ հանելը, բերդ կառուցելը, ջրից հզորանալը, առյուծածնությունը, հորի մեջ ընկնելն ու դուրս գալը, հայրական անեծքը, քարայրում հերոսի փակվելը, աստղերի և լուսնի խավարման մասին երազներ տեսնելը և այլն:

Նույնքան արքեստիպական է Ծովի-Նարի /հայոց գետերի և լճերի հնագույն աստվածուհին/, Սանասարի և Բաղդասարի/ Սարասար և Բալտասար/, Քառսուն ճող ծամ Դեղձունի /Պղնձե քաղաքի թագավորի դուստրը՝ կախարդուհի/, Առյուծածն Միերի /Միիր – Միթրա՝ հնագույն արևի և կրակի աստվածը արիացիների մեջ/ և այլք: Հասարակ առարկաներ չեն և դարձյալ դիցաբանական ծագում ունեն թուր Կեծակին /Վահագնի արծակած կայծակի խոհրդանիշը/, պաշտպանիչ զրահները /զրեհ/, Քուռկիկ Ջալալին և այլն: Բերենք էպոսի այդ գեղեցիկ հատվածը, երբ Սանասարը մտնում է ծովի մեջ.

*Նայեց՝ եկեղեցի մը կա էնտեղ:
Ինչ մտալ եկեղեցին,
Ակահ գնաց, թավալեց, ընկավ:
Մեջ քնուն էրազ տեսավ,
Սայր Աստվածածին էկալ էրազ ասաց.
«Դե՛յ, Սանասար, էլի վեր:
Խաչ Պատերազմին կո էստեղ է ...
Ծովային ձին, Քուռկիկ Ջալալին,
էնտեղ թամքած, սանձն բերան զարկած,
էրկնուց իջած թուր Կեծկակին վերան կախած...
... շապիկ զրեհին.
Չրեհի քամարն ի մեջքին,
Գլխու գոտին զրեհին,
Չրեհի կոշիկն ի ոտին,
Ծանրիկ գուրգ փահլևանին,
Ամուր նիզակ, նետ ու աղեղ,
...պինդ վահան⁸²:*

Սա մեր միջնադարյան քրիստոնեական էպոսն է, որի ասացողների մեջ կան նաև հոգևորականներ: Վերջապես Խաչ Պատերազմին է ամրացված հերոսների բազուկներին, Աստվածամայրն է նրանց հովանավորը, բայց նրանց ծագումը և գործած հրաշքները գալիս են նախաքրիստոնեական արքեստիպական մտածողությունից: Ինչ վերաբերում է

թոնդրակյան աղանդի սկզբունքներին, ապա այստեղ անելիքներ դեռևս շատ-շատ են: 4. Յուզբաշյանը արդարացի կերպով զգուշացնում է, որ թոնդրակյան և պավլիկյան աղանդները չպետք է նույնացվեն⁹³ /նույնության եզրեր միջնադարյան բոլոր աղանդներն էլ՝ անգամ մահմեդական/ ունեն: Բայց դրանք նույնական չեն:

Որոշ կապեր ու ընդհանրություններ կարելի է տեսնել պարսից քուռամյանների ժողովրդական շարժման, 8-րդ դարում խալիֆաթում ծագած Մուժբադ մոզի ապստամբության և պավլիկյանների շարժման միջև: Հետևաբար այդ շարժումների և թոնդրակեցիության գաղափարական ակունքներում կան որոշ ընդհանրություններ: Եվ նրանց միմյանց հետ կապող հիմնական օղակը այդ շարժումների սոցիալական բնույթն է նաև: Ցածր խավերն իրենց դժգոհությունն այլ կերպ տիրող իրավիճակից արտահայտել չէին կարող, քան այդ դժգոհությանը կրոնական բնույթ տալով: Առաջին քրիստոնյաները ևս ամենուր և բացարձակ կերպով հանդես էին գալիս սոցիալական հավասարության սկզբունքների պաշտպանության տեսակետից:

Դատելով ամեն ինչից՝ դժվար է ընդունել, որ թոնդրակյանները ամբողջովին մերժեին Աստծու գաղափարը: Ամենայն հավանականությամբ նրանք իրենց առաջնորդներին Քրիստոս անվանելով, նրանց՝ Տիրոջ /Հայր Աստծու/ և համայնքի անդամների միջև միջնորդի դեր էին տալիս: Ինչ վերաբերում է դրախտի գոյության մերժմանը, ապա այդ դեպքում էլ մի վերապահում մենք կարող ենք անել: Չէ՞ որ հեթանոսներն ընդունում էին մեռյալ հոգիների թագավորության գաղափարը միայն, և Ոդիսևսը իջնում է Հադեսի թագավորություն, ահա թե ինչպիսին էր այն.

Այնտեղ, ահա, գտնվում են կիսմեռացի մարդկանց քաղաքն ու երկիրը,

*Որոնք հավերժ քողարկված են թուխ ամպերով, մութ մեզի մեջ,
Եվ չի նայում նրանց վրա արևն երբեք՝ ճառագայթով իր շողշողուն,
Ո՛չ այն ժամին, երբ բարձրանում է նա վերև, դեպի երկինքը*

աստղագարդ,

Ո՛չ էլ այնժամ, երբ երկնքից նա դեպ երկիրն է ետ գալիս⁹⁴:

Իհարկե, հին հույների /նաև մյուս ժողովուրդների/ պատկերացումներում դրախտի գաղափարը ավելի ուշ շրջանի հավատալիքի արդյունք էր: Որոշ չափով Բ. Սարգիսյանը ծայրահեղության մեջ է ընկնում նրանց

բացարձակ ոչնչականներ համարելով կամ անաստվածներ: Թոնդրակ-
յանները հակադրվում էին եկեղեցուն նախ ծիսական խնդիրներում: Գր.
Մագիստրոսը նշում է, որ նրանք գաղտնի լուծում էին քահանայական
կարգը և ձեռնադրում իրենց սուտ քահանաներին: Ծանակում էին
մյուռոնը և փշրում յուղի անոթը: Ոչինչ էին համարում խաչը, եկեղեցին
պատարագի սրբությունը, քահանայական զգեստները և ընդունում
դրանց խորհուրդը միայն: Ավելորդ էին համարում հաղորդությունը,
աղոթքը, մեղքերի խոստովանությունը: Ամուսնության մեջ առաջնայինը
համարում էին սեղը և ոչ թե պսակը:

Տեսական ոլորտում նրանք գտնում էին, որ Աստվածամայրն անեղ
ծնունդով չի ունեցել Որդուն, իսկ որոշ դեպքերում աստվածամայր էին
համարում երկինքը: Ղա մուկաես հնատիպական հեթանոսական
պատկերացման հետևանք էր.

Երկներ երկին, երկներ երկիր.....

Քրիստոսին մահկանացու համարելը նշանակում էր ամենա-
հիմնական ակզբունքից հրաժարում: Մինչդեռ աղբյուրները նշում են
նրանց հավատալիքներում դյութանքի, կախարդության և մոգության
գերակշռությունը: Մենք կարծես վերադառնում ենք մույն կետին: Նրանց
աշխարհայացը յուրատեսակ վերադարձ է եղել դեպի հեթանոսական
հավատալիքների համակարգ: Կարևորելով հենց այս հարցը՝ Գր.
Մագիստրոսը առանձնացնում է աղանդի հիմնական ուղղությունները.

1. Էպիկույաններին հարող /մատերիալիստական/ ուղղություն:
2. Մանիի /մեռ. 277 թ. Շապուհի ձեռքով/ ուսմունքին հարող թև,
ովքեր աշխարհի դուալիստական ընկալում ունեն՝ երկու նախա-
սկզբունքով՝ չար և բարի:
3. Քրիստոնեական հավտքին մոտ և իրենց Արամյան գնդից
համարած մի առանձին թև:
4. Արևորդիներ, որոնք «դեղված են Զրադաշտ մոգից» և ամենից
անառակն են իրենց բարքերի մեջ:
5. Խնուսցիներ, կաշեցիներ, թուլայեցիներ. թևեր, որոնք առանձ-
նանում են ըստ համայնքների, ընդունում կամ մերժում
Քրիստոսի թլպատված կամ ոչ թլպատված լինելու
հանգամանքը⁹⁵:

Զարմացնում է այն, որ գաղափարական այսպիսի խառնափնթոր

ուղղությունները միավորվել են մի ընդհանուր հոսանքի մեջ: Հավանաբար նրանց համատեղել է պայքարը Հայոց եկեղեցու և որոշ դեպքերում արտաքին ազդեցիկ ուժերի դեմ, ուստի այն ընկալվել է իբրև մեկ ամբողջություն:

Թոնդրակեցիների ամենաբնորոշ հատկությունը նրանց ծայրահեղ զգուշավոր լինելն է: Դարավոր քողարկվածությունը օտարներից ու յուրայիններից նրանց դարձրել է ծածկամիտ: Աղանդավորները չեն երկնչում ստել, կեղծ երդումներ տալ, առերես ընդունել քրիստոնեությունը, իսկ խորքում ուրանալ այն:

Մագիստրոսյան երկու թղթերը /ԿԷ, ԿԸ/ ուղղված են Ամիդի ասորի եպիսկոպոս Հովհան 7-րդ Դասրիգոս կաթողիկոսին: Դրանցում Գրիգոր Պաիլավունին ցուցաբերում է իրեն բնորոշ խորամտություն և տալիս համակարգված մի պատկեր, որով հնարավոր է դառնում տեսնել.

1. Շարժման կարևորագույն ուղղությունները.
2. Շարժման առաջնորդների ով լինելը.
3. Կապը նախորդ աղանդների հետ:

Ինչպես ասորի կաթողիկոսի դեպքում, այնպես էլ Պետրոս Գետադարձին նա դիմում է խնդրանքով, որ աղանդավորներին թույլ չտրվի վերադառնալ նախկին բնակության վայրերը, և նրանց նկատմամբ հանդուրժողականություն չդրսևորվի, ինչպես ոմն քահանայապետ Ներսեսի դեպքում է: Այս նույն թղթերում նա նաև առաջարկում է վերականգնել հայ-ասորական ավանդական եկեղեցական կապերը: Այսպիսով՝ պայքարը թոնդրակյան աղանդի դեմ 10 և առավելապես 11-րդ դարում պսակվեց հաջողությամբ: Թոնդրակեցիները 1051 թ. հետո չկարողացան վերամիավորվել և վերականգնակերպվել: Դրանով էլ գրեթե իսպառ դադրեց այն:

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՉԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Միջնադարյան ցանկացած հեղինակի ժառանգությանն անդրադառնալիս առաջնային խնդիր է դառնում նրա ձեռագրերի քննությունը: Հեղինակի ժառանգությունը հնում փոխանցվում էր ձեռագրական արտագրությունների ճանապարհով, իսկ դա մի հանգամանք է, որ խիստ կարևորում է գրողի ստեղծագործությունների ձեռագրերի արժեքը: Դրանք արտագրության և փոխանցման զարմանալի բարդ ճանապարհ են անցնում թե՛ ստեղծագործական, թե՛ արտագրության ու պահպանության տեսակետից: Հետևապես ավանդվածը պետք է ուսումնասիրվի ոչ միայն խմբավորումներ և ներքին ընդամրություններ պարզելու, այլև հեղինակային բնագրերը վերականգնելու նպատակով: Այդ ճանապարհին հատկապես մեծ նշանակություն են ձեռք բերում բառային վերծանություններն ու այլընթերցումների միջոցով դրանց ձևաիմաստային ճշգրտումները: Էլ չենք խոսում այն մասին, որ երբեմն ձեռագրերը անակնկալներ են մատուցում, ի հայտ են գալիս ուսումնասիրվող այս կամ այն հեղինակի թողած հիշատակարանները ու նաև այն ձեռագրերը, որ պատվիրել են նրանք:

Մագիստրոսի երկերի ձեռագրերը ևս անակնկալներ են մատուցում վարձատրելով ուսումնասիրող հետաքրքրասեր բանասերի ջանքերը: Մի կողմից՝ պարզվում են ձեռագրական նյութերի կարգն ու դասավորությունը ամենազանազան բնույթի ժողովածուներում և մատյաններում, որով բացահայտվում են որոշակի օրինաչաթություններ, մյուս կողմից՝ երևան են գալիս նոր նյութեր՝ թեկուզև դեռևս փոքրածավալ, որ հետաքրքրությունների նոր ճանապարհ են բացում և սկիզբ դնում ավելի համակողմանի ու խոր ուսումնասիրությունների:

Գր. Մագիստրոսի երկերի ծեռագրերի խմբավորումը

Գր. Մագիստրոսի ձեռագրերի ուսումնասիրության ուղղությամբ կատարված աշխատանքները խիստ անբավարար են: Թեև նրա թղթերի ամբողջական ժողովածուն հրատարակվել է և ուսումնասիրողներին ու ընթերցողներին տրամադրվել, բայց և կատարվածը դեռևս անհամեմատ քիչ է: Այդ խոստովանում է անգամ ինքը՝ դրանց առաջին հրատարակիչ Կարապետ Կոստանյանցը: Նա գրում է, թե թղթերի մասին ճշգրիտ գաղափար տալիս է միայն նրանց լիակատար ժողովածուն, որ առաջին անգամ ինքը լույս է ընծայում: *«Հնայելով այս ամենին, մենք դարձյալ չենք կարող ասել, թե մեր առաջարկած բնագիրը զերծ է անխուսափելի թերություններից, և այս այն պատճառով, որ Գրիգոր Մագիստրոսի թղթերը գրչության մեջ շատ աղճատված լինելով՝ զգալի դժվարություններ կան բնագիրը վերականգնելու»:*¹

Բազմավաստակ գիտնականի պրպտումները սահմանփակվել են ընդամենը մի քանի ձեռագրերի համեմատություններով, որոնց մասին կիսովի ստորև: Բնագրերի այդ սահմանափակ քանակը նրան հնաավորություն չի տվել ձեռագրերը խմբավորել և համապատասխան եզրահանգումներ կատարել: Նա թղթերի մի մասը ժանոթագրություններում կարողացել է թվագրել, սակայն դրանց մի մեծ մասն էլ մնացել են անթվակիր և հայտնի չէ, թե երբ կճշտվեն դրանց գրության ժամանակները և կճշտվեն՝ն արդյոք:

Գր. Մագիստրոսի գրական և գիտական ժառանգության ամբողջական պատկերն այսպիսին է .

1. *Թղթեր՝ թվով 87.*²
2. *«Հազարատողեան» պոեմ և երկու ներբողներ՝ «Ներբողեան ի սուրբ խաչն Քրիստոսընկալ» և «Առ սուրբ Կարապետն Յովհաննէս».*³
3. *Դիոնիսիոս Թրակացու «Քերականի մեկնութիւնը»⁴ և շարական՝ «Զորս ըստ պատկերի քում»⁵ սկսվածքով.*
4. *Թարգմանություններ.*⁶
5. *Հովհաննէս Իմաստասերի «Յաղագս խրատու մանկանց» երկը, որ դարձյալ նրան է վերագրվում:*⁷

Գր. Սագիստրոսի առաջին տպագիր երկը «*Հազարատողեան*» պոեմն է: Այն հրատարակվել է «*Տաղասացութիւն Գրիգորի Սագիստրոսի ճշմարիտ և ուղղափառ վարդապետի*», Դուխս, 1746թ./ վերտառութ-
յամբ⁸: Դրան հետևեցին ևս երկու վերահրատարակություններ՝ Դուխս, 1825թ. և Վենետիկ, 1868թ.: Վերջին /վենետիկյան/ հրատարակությունը լրացված է մի քանի չափածո թղթերով և արդեն նշված ներքողներով:

Թղթերը, որ Սագիստրոսի ստեղծագործության ավելի նշանակալից մասն են կազմում, 19-րդ դարի 2-րդ կեսից սկսեցին առանձին-առանձին երևան գալ մամուլի էջերում և միայն դարավերջում ամբողջացվեցին հրատարակության նպատակով: Դրանց հավաքման և ծանոթագրման առաջին փորձը կատարել է հայագետ Նորայր Բյուզանդացին⁹, որը սակայն չհասցրեց իր «*տետրակները*» հանձնել տպագրության:

Այսպիսով նամականու առաջին ամբողջական հրատարակության հեղինակը դարձավ մեր մշակույթի երախտավոր Կարապետ Կոստանյանցը: Նրա կազմած ժողովածուն առ այսօր միակն է: Գրքին կցված առաջաբանն ու ծանոթագրությունները արժեքավոր տեղեկություններ են տալիս Գր. Սագիստրոսի և նրա թղթերի մասին: Կարապետ Եզյանի օրինակից բացի, որն օգտագործել է Ն. Բյուզանդացին, Կ. Կոստանյանցն օգտագործել է նաև հետևյալ ձեռագրերը.

Թղթոց ժողովածուներ / երեք գրաչա օրինակ /.

ա. Թ. 92-ը / ըստ Կարինյան ցուցակի թ.87-1/- Մաշտոցյան մատենադարանի հ.98-ը¹⁰.

բ. Թ.1880-ը / ըստ Կարինյան ցուցակի թ.1838-4/- Մաշտոցյան մատենադարանի հ.1741-ը¹¹.

գ. Թ.58-ը / ըստ Գևորգյան ցուցակի /- Մաշտոցյան մատենադարանի հ.3062-ը¹²:

Ինչպես նաև չափածո թղթերի հետևյալ ձեռագրահամարները.

հ.հ.1638, 1715, 1740, 1752, 1805, 1813, 1837:

Բոլոր տասն ձեռագրերը գտնվում են Մաշտոցի անվան մատենադարանում: «*Քերականի մեկնութիւն*»-ը մեզ է հասել մեկ ձեռագիր օրինակով¹³: Ն. Աղոնցը նշում է, թե բնագրերը կազմելիս ինքը էջմիածնի ձեռագրի տվյալները համեմատել է Վենետիկում եղած ձեռագրի հետ¹⁴: Էջմիածնի ձեռագիր օրինակը նախկինում չի եղել այնքան վնասված, ինչպես այսօր:

Մաշտոցի անվան մատենադարանում այսօր կան ևս քառասուներկու

գրչագրեր: Նրանց ընդհանուր թիվը դառնում է հիսուներկու ձեռագիր /10+42/: Մագիստրոսի ձեռագրերի մի զգալի մասն էլ գտնվում է սփյուռքում: Երուսաղեմում կա 16 ձեռագիր. *h.h. 335, 401, 429, 447, 508, 877, 940, 1523, 1607, 1072, 1209, 1215, 1249, 1264, 1350, 2011*¹⁵:

Ընդգծված 6 ձեռագրերը Թղթոց ժողովածուներ են, իսկ հ.447-ում կա «*Չորս են ենթակայ....*» պատառիկի բնագիրը:

Վիեննայում գտնվող ութ ձեռագրերը հետևյալ թվահամարների տակ են.․

Չ. 7.27 /83 թուղթ/, 97, 334, 886, 1299, 1486, 1960, 2383:¹⁶

Բուլղարիայում կա 2 ձեռագիր: Ըստ Սանասարյան ցուցակի դրանք հետևյալ թվահամարներն են. *h.h. 33 և 34* (33-րդը Թղթոց ժողովածու է):¹⁷

Վենետիկյան ձեռագրերի մասին ցուցակներում տեղեկություններ չկան: Սիայն «*Հանդես ամսօրեայի*» 1912 թ. համարից¹⁸ իմանում ենք, որ Վենետիկում վեց ձեռագիր կա:

Ելնելով մեր ձեռքի տակ եղած տվյալներից՝ կարելի է ասել, որ Գր. Մագիստրոսի ստեղծագործությունների 32 ձեռագրեր գտնվում են դրսում: Դրանցից 7-ը Թղթոց ժողովածուներ են: Իսկ ձեռագրերի ընդհանուր թիվը երկուստեք հասնում է 84-ի:

**1. ԹՂԹՈՅ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԻ 1-ԻՆ ԽՈՒՄԲ - ՏԱՐԲԵՐԱԿԻ ԹՂԹԵՐԻ
ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՅՈՒՄԱԿ**

Չեռագրի համ.	I	II	III	IV	V
	98 *	1741 *	3068	4232	6988
Գրության թվակ.	1696 թ.	1651 թ.	1678 թ.	17դ.	1763-64 թթ.
Գրության տեղը	Կոնստանդնուպ.	---	---	---	Թեոդուպոլիս
Գրիչը	Եփրեմ եր.	---	---	Եփրեմ	Սեւքոն Կարն.
Նոր գտնված նյութը		---	---	Կա	Կա
Թղթերին նախորդող նյութեր	Հազարտ. պ.	Հազարտ. պ.	Հազարտ. պ.	Հազարտ. պ.	Հազարտ. պ.
	Ներբողեան	Ներբողեան	Ներբողեան	Ներբողեան	Ներբողեան
	Առ Կարապ.	Առ Կարապ.	Առ Կարապ.	Առ Կարապ.	Առ Կարապ.
Թղթերի հեղթական դասաւորու- թյունը մատ- յաններում	1	Թ	Թ	Թ	Թ
	2	ԿԷ	ԿԷ	ԿԷ	ԿԷ
	3	ԿԸ	ԿԸ	ԿԸ	ԿԸ
	4	ՉԷ	ՉԷ	ՉԷ	ՉԷ
	5	Ա	Ա	Ա	Ա
	6	ՀԲ	ՀԲ	ՀԲ	ՀԲ
	7	Հ	Հ	Հ	Հ
	8	ԿԳ	ԿԳ	ԿԳ	ԿԳ
	9	ԽԵ	ԽԵ	ԽԵ	ԽԵ
	10	ԾԸ	ԾԸ	ԾԸ	ԾԸ
	11	ՃԶ	ՃԶ	ՃԶ	ՃԶ
	12	ՀԵ	ՀԵ	ՀԵ	ՀԵ
	13	ՀԶ	ՀԶ	ՀԶ	ՀԶ
	14	ՀԴ	ՀԴ	ՀԴ	ՀԴ
	15	ՀԷ	ՀԷ	ՀԷ	ՀԷ
	16	ԺԱ	ԺԱ	ԺԱ	ԺԱ
	17	Գ	Գ	Գ	Գ
	18	Դ	Դ	Դ	Դ
	19	Բ	Բ	Բ	Բ
	20	ԿԱ	ԿԱ	ԿԱ	ԿԱ
	21	ԽԳ	ԽԳ	ԽԳ	ԽԳ
	...	ԺԸ	ԺԸ	ԺԸ	ԺԸ

23	ᑭ	ᑭ	ᑭ	ᑭ	ᑭ
24	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ
25	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ
26	ᑭ	ᑭ	ᑭ	ᑭ	ᑭ
27	ᑭ	ᑭ	ᑭ	ᑭ	ᑭ
28	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ
29	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ
30	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ
31	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ
32	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ
33	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ
34	ᑭ	ᑭ	ᑭ	ᑭ	ᑭ
35	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ
36	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	3 ᑭᑭᑭᑭ
37	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ
38	ᑭ	ᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ
39	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭ	ᑭ	ᑭᑭ
40	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭ
41	ᑭ	ᑭ	ᑭ	ᑭᑭ	ᑭᑭ
42	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭ	ᑭᑭ
43	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭ
44	ᑭ	ᑭ	ᑭ	ᑭᑭ	ᑭᑭ
45	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭ	ᑭᑭ
46	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭ
47	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ
48	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ
49	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ
50	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ
51	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ
52	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ
53	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ
54	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ	ᑭᑭ

55	Ը	ԶԶ	ԺԳ	ԺԲ	ՉԳ
56	ԽԶ	ԽԸ	Ը	ԺԳ	ԺԲ
57	ԽԸ	ԻԲ	ԽԶ	Ը	ԺԳ
58	ԻԲ	ԽԱ	ԽԸ	ԽԶ	Ը
59	ԽԱ	ԽԲ	ԻԲ	ԽԸ	ԽԶ
60	ԽԲ	ԻԳ	ԽԱ	ԻԲ	ԽԸ
61	ԻԳ	ԻԴ	ԽԲ	ԽԱ	ԻԲ
62	ԻԴ	ՕԵ	ԻԳ	ԽԲ	ԽԱ
63	ՕԵ	ՕԷ	ԻԴ	ԻԳ	ԽԲ
64	կրկնվ. հատ.	Լ	ՕԵ	ԻԴ	ԻԳ
65	ՕԷ	ԻԵ	ՕԷ	ՕԵ	ԻԴ
66	Լ	Ձ	Լ	ՕԷ	ՕԵ
67	ԻԵ	ԺԴ	ԻԵ	Լ	ՕԷ
68	Ձ	ՕԵ	Ձ	ԻԵ	Լ
69	ԺԴ	ԼԱ	ԺԴ	Ձ	ԻԵ
70	ՕԵ	ՕԶ	ՕԵ	ԺԴ	Ձ
71	ԼԱ	ԻԷ	ԼԱ	ՕԵ	ԺԴ
72	ՕԶ	ՕԷ	ՕԶ	ԼԱ	ՕԵ
73	ԻԷ	ԿԵ	ԻԷ	ՕԶ	ԼԱ
74	ՕԷ	ԻԸ	ՕԷ	ԻԷ	ՕԶ
75	ԿԵ	ԼԵ	ԿԵ	ՕԷ	ԻԷ
76	ՉԳ	ԻԶ	ԻԸ	ԿԵ	ՕԷ
77	ԻԸ	Կ	չորս եմ	ՉԳ	ԿԵ
78	ԻԹ	ԼԶ	ԼԵ	ԻԸ	ՉԳ
79	ԼԵ	ԼԷ	ԻԶ	ԻԹ	ԻԸ
80	ԻԶ	ԼԸ	Կ	չորս եմ	ԻԹ
81	Կ	ԿԶ	ԼԶ	ԼԵ	ԼԵ
82	ԼԶ	ԼԹ	ԼԷ	ԻԶ	ԻԶ
83	ԼԷ		ԼԸ	Կ	Կ
84	ԼԸ		ԿԶ	ԼԶ	ԼԶ
85	ԿԶ		ԼԹ	ԼԷ	ԼԷ
86	ԼԹ			ԼԸ	ԻԸ
87	չորս եմ			ԿԶ	ԿԶ
88				ԼԹ	ԼԹ

**2. ԹԱԹՈՑ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԻ 2-ՐԴ ԽՈՒՄԲ - ՏԱՐԲԵՐԱԿԻ
ԹԱԹԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՄԱԿ**

Ձեռագրի համ.	I	II	III	IV	V	
	3062*	3293	4330	6346	8312	
Գրության թվակ.	1765-67 թթ.	18 դ.	19 դ.	18դ.	17 դ.	
Գրության տեղը	Էջմիածին	—	---	—	---	
Գրիչը	Խաչատուր Պ.	---	—	Սկրտիչ	---	
Նոր գտնված նյութը	—	կա	կա	---	կա	
Թղթերի հերթական դասավորու- թյունը մատ- յաններում	1	ԿԷ	ԿԷ	ԿԷ	Հ	ԿԷ
	2	ԿԸ	ԿԸ	ԿԸ	ԿԳ	ԿԸ
	3	Ա	ՉԷ	Ա	ԽԵ	Ա
	4	ՀԲ	Ա	ՀԲ	ԾԸ	ՀԲ
	5	Հ	ՀԲ	Հ	ԾԶ	Հ
	6	ԿԳ	Հ	ԿԳ	ՀԵ	ԿԳ
	7	ԽԵ	ԿԳ	ԽԵ	ՀԶ	ԽԵ
	8	ԾԸ	ԽԵ	ԾԸ	ՀԴ	ԾԸ
	9	ԾԶ	ԾԸ	ԾԶ	ՀԷ	ՀԶ
	10	ՀԵ	ՀԵ	ՀԵ	ԺԱ	ՀԵ
	11	ՀԶ	ՀԶ	ՀԶ	Գ	ՀԶ
	12	ՀԴ	ՀԴ	ՀԴ	Դ	ՀԴ
	13	ՀԷ	ՀԷ	ՀԷ	Բ	ՀԷ
	14	ԺԱ	ԺԱ	ԺԱ	ԿԱ	ԺԱ
	15	Գ	Գ	Գ	ԽԳ	Գ
	16	Դ	Դ	ՉԷ	ԺԹ	ՉԷ
	17	Բ	Բ	Չ	Ե	Չ
	18	ԿԱ	ԿԱ	ՉԶ	ՀԱ	ՉԶ
	19	ԽԳ	ԽԳ	ՉԵ	ԺԸ	ՉԵ
	20	ԺԹ	ԺԹ	Խ	Ի	Խ
	21	Ե	Ե	ԽԷ	Ծ	ԽԷ
	22	ՀԱ	ՀԱ	ՉԲ	ԺԱ	ՉԲ
	23	ԺԸ	ԺԸ	Դ	ԾԴ	Դ
	24	Ի	Ի	Բ	ՀԹ	Բ
	25	Ծ	Ծ	ԿԱ	ԿԹ	ԿԱ
	26	ԺԱ	ԺԱ	ԽԳ	Չ	ԽԳ
	27	ԾԲ	ԾԲ	ԺԹ	ՉԱ	ԺԹ

28	ፅዓ	ፅዓ	ፔ	ጋገ	ፔ
29	ፅገ	ፅገ	ገሀ	ጋ፩	ገሀ
30	ገፀ	ገፀ	ፈሮ	ጋፔ	ፈሮ
31	ሃፀ	ሃፀ	ኮ	ኪ	ኮ
32	ጋ	ጋ	ፅ	ክፔ	ፅ
33	ጋሀ	ጋሀ	ፅሀ	ጋቶ	ፅሀ
34	ኪ	ጋገ	ፅቶ	ፅ	ፅቶ
35	ክፔ	ጋ፩	ፅገ	ፅፀ	ፅዓ
36	ፅ	ጋፔ	ሃፀ	ገሮ	ፅገ
37	ፅፀ	ኪ	ፅ	ፔ	ገፀ
38	ገሮ	ጋቶ	ፅፀ	ፅ/ሀገ./	ሃፀ
39	ፔ	ክፔ	ገሮ	ኪገ	ፅ
40	ኪፀ	ፅ	ፔ	ሃቶ	ፅፀ
41	ኪገ	ፅፀ	ኪፀ	ኮሀ	ገሮ
42	ሃቶ	ገሮ	ኪገ	ሃገ	ፔ
43	ኮሀ	ፔ	ሃቶ	ሊፃ/ሀገ./	ኪፀ
44	ሃገ	ኪፀ	ኮሀ	ሊቶ	ኪገ
45	ሊፃ	ኪገ	ሃገ	ሊገ	ሃቶ
46	ሊቶ	ሃቶ	ሊፃ	ገፃ	ኮሀ
47	ሊገ	ኮሀ	ሊቶ	ፅቶ	ሃገ
48	ገፃ	ሃገ	ሊገ	ሊፃ	ሊፃ
49	ፅቶ	ገቶ/ሀገ./	ገፃ	ፅዓ	ሊቶ
50	ፅዓ	ሊገ	ፅቶ	ሮ	ሊገ
51	ሮ	ገፃ	ፅዓ	ኪ፩	ገፃ
52	ኪ፩	ፅቶ	ሮ	ኪሮ	ፅቶ
53	ኪሮ	ፅዓ	ኪ፩	ኮቶ	ፅዓ
54	ኮቶ	ሮ	ኪሮ	ኪቶ	ሮ
55	ኪሀ	ኪ፩	ኮቶ	ኮፃ	ኪ፩
56	ኪቶ	ክፔ/ሀገ./	ኮፃ	ኮገ	ኪሮ
57	ኮፃ	ኮቶ	ኮገ	ፅፔ	ኮቶ
58	ኮገ	ኮሀ/ሀገ./	ፅፔ	ኪገ/ሀገ./	ኮፃ

59	ծե	ԽԲ	ծե	Չե	ԻԴ
60	ծե	ԻԳ	Լ	ծե	ծե
61	Լ	ԻԴ	Իե	Լ	ծե
62	Իե	ծե	Ջ	Իե	Լ
63	Ջ	Լ	ԺԴ	Ջ	ԻԱ/կր./
64	ԺԴ	Իե	ծե	ԺԴ	Ջ
65	ծե	ԺԴ	ԼԱ	ծե	ԺԴ
66	ԼԱ	ծե	ԺՋ	ԼԱ	ծե
67	ԺՋ	ԼԱ	Իե	ԺՋ	ԼԱ
68	Իե	ԺՋ	ծե	Իե	ԺՋ
69	ծե	Իե	Կե	ծե	Իե
70	Կե	Կե	ՉԳ	Կե	ծե
71	ԻԸ	ՉԳ	ԻԸ	ՉԳ	Կե
72	Լե	ԻԸ	Լե	Չե/կր./	ՉԳ
73	ԻԳ/կր./	ԻԹ	ԻՋ	Ա	ԻԸ
74	Կ	Լե	Կ	ՉԸ	ԼԱ
75	ԼՋ	ԻՋ	ԼՋ	Չ/կր./	ԻՋ
76	Լե	Կ	Լե		Կ
77	ԼԸ	ԼՋ	ԼԸ		ԼՋ
78	ԿՋ	Լե	ԿՋ		Լե
79	ԼԹ	ԼԸ	ԼԹ		ԼԸ
80	Չե	ԿՋ	Չորս են		ԿՋ
81	ՉՋ	ԼԹ			ԼԹ
82	Չե	Չորս են			Չորս են
83	ծԹ/կր./	Լե/կր./			Ներքողեան
84	ՉԳ	ծԹ/կր./			Թ
85	ՉԸ	Չե/կր./			
86	Ներքողեան				
87	Թ				
88	ՉԴ				

Թղթոց ժողովածուներ /Նամականիներ/

ժողովածուների ընդհանուր թիվն է տասնյոթ, իսկ միայն Երևանում կան տաս ձեռագրեր: Ղրանք կրում են հետևյալ հերթական թվահամարները /ըստ Երևանի Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրացուցակների/.

Չ.Չ. 98, 1741, 3068, 4232, 6988, 3062, 3293, 4330, 6346, 8312:

Ղրանք բաժանվում են երկու ենթախմբի. առաջինի մեջ մտնում են 17-րդ դարի չորս գրչա օրինակներ և 18-րդ դարի մեկ ձեռագիր: Երկրորդ ենթախմբի ձեռագրերը՝ դարձյալ գրչա հինգ օրինակ, տարբեր դարերի են. հ.հ. 8312-ը՝ 17-րդ դար, հ. 4330-ը՝ 19-րդ դար, իսկ մյուս երեքը՝ 18-րդ դար / մանրամասն տես, աղ. 1-ին և 2-րդ/:

Առաջին ենթախումբ. Առաջին ենթախումբը կազմում են աղ. 1-ին հինգ ձեռագիր ժողովածուների նյութերն ու թղթերն իրենց կառուցվածքով, դասավորությամբ և ընդգրկումով: Այս ենթախմբի ձեռագրերն ավելի վաղ են արտագրված, ավելի ամբողջական են ու համապարփակ: Ելնելով ձեռագրերի՝ մեզ հասած տվյալներից՝ կարելի է նախնական որոշ դասդասումներ անել:

Առաջին ենթախմբի մեջ մտնում են հետևյալ 5 ձեռագրահամարները.
հ.հ. 98*, 1741*, 3068, 4232, 6988 /աղ. 1-ին/:

Այս խումբ-տարբերակը քնութագրվում է հետևյալ առանձնահատկություներով. նախ՝ արտագրված են լինում «Չգարատողեան» պոեմը, այնուհետև «Ներքողեան ի Սուրբ Խաչն Քրիստոսընկալ» և դրանցից հետո ամբողջ թղթերը: Թղթերի հերթականությունն այս ենթախմբի ձեռագրերում մինչև 37-րդ հորիզոնականը նույնական են բոլորում միաժամանակ, իսկ հ.հ. 4232-ում և 6988-ում մինչև վերջ էլ միատեսակ են մնում: Այն տարբերությամբ միայն, որ հ.6988-ում կան երեք անհայտ և գրչի կողմից աստղանիշի տակ առնված թղթեր: 1-ին և 2-րդ սյունակների /հ.հ. 98, 1741/ թղթերի հերթականությունը շարունակում է նույնական լինել մինչև 54-րդ հորիզոնականը, որից հետո դարձյալ նկատելի են թղթերի ինչ-որ կայուն հերթականության հետքեր: 3-րդ սյունակի /հ.3068/ թղթերի հերթականությունը համահունչ է 4-րդ և 5-րդ սյունակների հետ մինչև 75-րդ հորիզոնականը: Կառուցվածքային այսպիսի նմանությունները ցույց են տալիս, թե նախնական ձեռագիր-ժողովածուն եղել է մո-

տավորապես այնպիսին, ինչպիսին որ հ.հ. 4232 և 6988 ձեռագրերն են:

1-ին ենթախմբի ժողովածուներում թղթերի նվազագույն թիվն է 82-ը /ծեռ հ. 1741/, իսկ 2-րդ ենթախմբի նվազագույնը՝ 75-ը / ձեռ. հ.6346:

2-րդում բացակայում են պոեմը, *«Նեբրոդեանն»* ու *«Առ Սուրբ Կարապետն Յովհաննէս»* չափածո երկերը: Սակայն իրենց զգալի տարբերություններով հանդերձ թղթերի դասավորության մեջ երկու ենթախմբերի կապն անմիջական է ու ակնհայտ:

Երկրորդ ենթախումբ. Այս խումբ-տարբերակի ձեռագրերը կրում են հետևյալ հերթական համարները.

հ.հ. 3062*, 3293, 4330, 6346, 8312 / տես աղ.2-րդ/:

Պարզ է, որ այս ենթախումբն իր ժամանակագրական կարգով, թղթերի թվով ու դասավորությամբ հետագա ընդօրինակումների արդյունք է: Այդ երևում է նաև այն հանգամանքից, որ այստեղ առանձին գրչագրերի որոշ թղթեր կրկնվում են /բացառությամբ հ. 4330-ի/: Այս դեպքում *«մեղավորը»* գրիչներն են, որոնք որոշ դեպքերում *«կրճատումներ»* են կատարել՝ դուրս թողնելով առանձին թղթեր, որոշ դեպքերում էլ չեն խուսափել կրկնությունից: Սա նշանակում է, որ հ.6346-ից երբեք չեն արտագրվել առաջին ենթախմբի հ.4232 և հ. 6988 ձեռագրերը, այլ եղել է ընդհակառակն: Հետևաբար և՛ երկրորդ ենթախմբի համար իբրև հիմք-տարբերակ հանդիսացել է ավելի հին ու ընդգրկումով ավելի ընդարձակ ժողովածուների առաջին ենթախումբը /տես աղ. 1-ին և 2-րդ/: Եվ երբ հետագայում գոյացել է երկրորդ ենթախմբի ժողովածուների տարբերակը, գրիչներն օգտվել են նաև ձեռքի տակ եղած *«համառոտ»* օրինակներից՝ աստիճանաբար ձևավորելով այդ նոր ենթախումբը: Թեև հիմքում այն կապված է նախորդի հետ, բայց և առանձնանում է և ունի իր ներքին յուրահատկությունները:

Այստեղ գործում են ուրիշ օրինաչափություններ, և մի փոքր այլ են ժողովածուների ու թղթերի առնչությունները: Ձեռագրերից յուրաքանչյուրն արտագրված է կամ առաջին ենթախմբի որևէ ձեռագրից, կամ երկրորդի մեկ այլ ավելի հին ձեռագրից: Այս ենթախմբի ձեռագրերին հատուկ է *«Չորս են ենթակայ...»* պարբերությամբ սկսվող մի փոքրիկ հատվածի գոյությունը, որը խումբ է ներթափանցել երևի հ. 4232-ից: Երևան են եկել նաև որոշ հավելումներ: Այդ հավելումների մեջ է հայտնվում 20/88-րդ/ չափածո թուղթը, որի Սագիստրոսի գրչին պատկանելու վերաբերյալ Կ.Կոստանյանցը կասկած է հայտնում⁹: Իսկ

Բ. Չուգասյանը Մագիստրոսին վերագրված այդ ոտանավորի մասին գրում է հետևյալը. «1981թ. բանասեր Գևորգ Բամպուքճյանի՝ Ստամբուլում լույս տեսած «*Հակոբ պատրիարք Նալյան /1706-1764թթ./, կյանքը, գործը և աշակերտները*» ուշադրության արժանի հատորում որպես Յ. Նալյանի ստեղծագործությունն բերված է Գրիգոր Մագիստրոսին վերագրված վերոհիշյալ բանաստեղծությունը /իմա. ՁԸ թուղթ – Ա.Ա./, որն ունի հետևյալ վերնագիրը՝ «*Ոտանաւոր ի վրայ ունայնութեան կենցաղոյս.....*»»:²⁰

Երկրորդ ենթախմբում ևս թղթերի հերթականության մեջ կան շատ ընդհանրություններ: Հերթականությունների ընդհանրությունը երկու տարբերակների միջև հնարավորություն է ընձեռում հետազայում ճշգրտելու թղթերի նախնական դասավորությունը և բացահայտելու թղթերի ժամանակագրական կարգը:

Չեռ. հ. 6988-ի երեք նորահայտ թղթերը գրիչն աստղանիշի տակ է առել՝ ասես նկատելով, որ դրանք ձևախմաստային զգալի տարբերություններ ունեն Մագիստրոսի թղթերից: Հնարավոր է, որ դրանք Մագիստրոսին ուղղված լինեն: Սակայն նրանց ընդհանուր բնույթը, բովանդակությամբ մի տեսակ մթագնած լինելը՝ թույլ չի տալիս վերջնական եզրակացության հանգելու:

Կ. Կոստանյանցի կազմած ժողովածուում զետեղված է նաև իր օգտագործած բնագրերի թղթերի համեմատական տախտակը:²¹ Ինչպես ցույց տվեցին հետագա մանրակրկիտ ստուգումներն այդ աղյուսակի թ.92 /մեզ մոտ հ.98/ ձեռագրի թղթերի դասավորությունը խախտված է: Մենք հրաժարվել ենք այդ բարդ մեթոդից և նոր շփոթություններից խուսափելու համար ընտրել մեկ այլ մեթոդ. եթե նախկին տախտակում տրված է համապատասխանության բարդ ներքին դասավորությունը, ապա մեզ մոտ / տես աղ. 3-րդ, դրված են / + / կամ / - / նշանները: Իսկ դրանք ցույց են տալիս՝ կա՞ այդ թուղթը տվյալ ժողովածուում, թե՞ ոչ:

Եվ չնայած շատ տարընթերցումներ ու աղավաղումներ կան, բայց և այնպես թղթերն իրենց վերնագրերով, սկիզբ, միջին և վերջնամասով՝ նույնական են: Եթե պատահել է, որ առանձին դեպքերում բացակայել է այս կամ այն թղթի վերնագիրը, ապա գրիչների շփոթումները պարզել ենք մագիստրոսյան թղթի կայուն սկզբի և վերջնամասերի շնոհիվ: «*Ողջ լեր*», «*Ողջ լեռուք*», «*Եղիցի օրինեալ ամեն*» և այլ մաղթանքներով:

Չափածո երկերը և ժանրային այլ դրսևումները

Մագիստրոսի չափածոյի մեջ մտնում են ոչ միայն պոեմը և հիշատակված երկու չափածո երկերը, այլև չափածո թղթերը: Դրանց ձեռագիր օրինակների թիվը հասնում է 41-42 –ի /տես աղ. 4-րդ/: Այդ գրչագրերը հետևյալ քվադրաներն են կրում.

77. 6331, 874, 739, 1740*, 1739, 1742, 1748, 1764, 1805*, 3130, 4337, 4424, 5205, 6562, 7581, 1744, 1715*, 1752*, 1813*, 3914, 6897, 6045, 6485, 5997, 10182, 1638*, 2079, 3172, 7257, 6734. *խառը թղթեր. հհ. 3860, 9827, 5066, 1138, 9827, 1837*, 1797, 6009, 3917, 4669, 10982:*

Գրիչները նյութը կոչել են *«չափաբերականը»* և դրա տակ հասկացել չափածո մեծ կամ փոքր երկ, թուղթ և այլն: Այս դեպքում ևս ձեռագրերը հանդես են գալիս կառուցվածքային առանձին խմբերով և ենթախմբերով: Աղյուսակ 4-րդում տրված տվյալներով չափածո թղթերի դասավորությունը 1-ին և 2-րդ ենթախմբերում այսպիսին է.

2է - 2Ձ - 2Ե - 2Գ:

Ելնելով ձևական այն հատկանիշից, որ մի դեպքում 2Գ թուղթը *«Առ որդին իւր զօրանալ ի պատերազմին»* ձեռագրերում հանդես է գալիս *«Լուաք թէ եկն պապն պաղակ...»* և մյուս դեպքում. *«Լուաք թէ եկ...»* ձևերով, մենք առանձնացրել ենք երկու ենթախումբ /չափ. թղթերի 1-ին և 2-րդ ենթախմբերը/: Բայց հարկ է ասել, որ այդ ենթախմբերի միջև եական տարբերություններ քիչ կան:

1-ին ենթախմբի մեջ մտնում են 15, իսկ 2-րդի մեջ՝ 6 ձեռագրեր: 2-րդը խիստ կանոնիկ է 1-ի համեմատությամբ, որն ունի մի երկու բացառություններ: Այդ բացառությունները ձեռագիր հհ. 6331-ում և 874-ում հետևյալներն են, 2Ը թղթի հավելում և խախտված հերթագայություն՝ 2Ը-2Դ հավելում՝ հ. 874-ում /տես աղ. 4-րդ, 1-ին և 2-րդ ենթախմբերի սյունակները/:

Համեմատություններից պարզվում է, որ չափածո թղթերի կայուն դասավորությունն սկիզբ է առնում ժողովածուներից: Եվ հետագայում արդեն ձևավորվում են չափածոյի ինքնուրույն ենթախմբերը: Այս դեպքում *«Թուղթը չափաբերականը»* հասկացությունը դառնում է գրչական միավոր, ընդօրինակումը կատարվում է ոչ թե նամականուց,

3. ԲՆԱԳՐԻ ԹՂԹԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ՏԱԽՏԱԿ

[illegible]

41	huj	+	+	+	+	+	+	+	-	-	-
42	huf	+	+	+	+	+	+	+	+	+	-
43	huq	+	+	+	+	+	+	+	+	+	+
44	hug	+	+	+	+	+	+	+	+	+Agn	+
45	hut	+	+	+	+	+	+	+	+	+	+
46	hug	+	+	+	+	+	+	+	+	+	+
47	hut	+	+	+	+	+	+	+	+	+	+
48	huc	+	+	+	+	+	+	+	+	+	+
49	hug	+	+	+	+	+	+	+	+	-	+
50	h	+	+	+	+	+	+	+	+	+Agn	+
51	ou	+	+	+	+	+	+	+	+	+	+
52	op	+	+	+	+	+	+	+	+	-	+
53	oq	+	+	+	+	+	+	+	+	-	+
54	og	+	+	+	+	+	+	+	+	+	+
55	oc	+	+	+	+	+	+	+	+	+	+
56	oq	+	+	+	+	+	+	+	+	+	+
57	oc	+	+	+	+	+	+	+	+	+	+
58	oc	+	+	+	+	+	+	+	+	+	+
59	oc	+	+	+	+	+	+	+	+	+	+
60	h	+	+	+	+	+	+	+	+	-	+
61	huj	+	+	+	+	+	+	+	+	+	+
62	huf	+	+	+	+	+	+	+	+	+	+
63	huq	+	+	+	+	+	+	+	+	+	+
64	hug	+	+	+	+	+	+	+	+	+	+
65	hut	+	+	+	+	+	+	+	+	+	+
66	hug	+	+	+	+	+	+	+	+	+	+
67	hut	+	+	+	+	+	+	+	+	-	+
68	huc	+	+	+	+	+	+	+	+	-	+
69	hug	+	+	+	+	+	+	+	+	-	+
70	h	+	+	+	+	+	+	+	+	+	+
71	huj	+	+	+	+	+	+	+	+	+	+
72	huf	+	+	+	+	+	+	+	+	+	+
73	huq	+	+	+	+	+	+	+	+	+	+
74	hug	+	+	+	+	+	+	+	+	+	+
75	hut	+	+	+	+	+	+	+	+	+	+
76	hug	+	+	+	+	+	+	+	+	+	+
77	hut	+	+	+	+	+	+	+	+	+	+
78	huc	+	+	+	+	+	+	+	+	+	+
79	hug	+	+	+	+	+	+	+	+	+	+
80	h	+	+	+	+	+	+	+	+	+	+
81	ou	+	+	+	+	+	+	+	+	+	+
82	op	+	+	-	+	+	+	+	+	+	+
83	oq	+	-	-	+	+	+	+	+	+	+
84	og	+	+	+	+	+	+	+	+	+	+
85	oc	+	+	+	+	+	+	+	+	+	+
86	oq	+	+	+	+	+	+	+	+	+	+
87	oc	+	+	+	+	+	+	+	+	+	+
88	oc	-	-	-	-	-	-	+	+	-Agn	+

4. ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՀԱՓԱՃՈՅԻ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ԹՂԹԵՐԻ ՈՒ ՆՅՈՒԹԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՄԱԿ

Ձեռագրի խումբը		Ձեռագրի համարը	Գրության թվակ.	Գրության տեղը	Գրիչը	Թղթերի և նոր նյութերի հերթա- կան դասավորությունը					
Ձախածո թղթերի I ենթախումբ	1	6331	1851թ.	-	-	ՉԳ	ՉԵ	ՉԵ	ՉԶ	ՉԸ	
	2	874	1764թ.	Պոլիս	Խաչատուր	ՉԵ	ՉԶ	ՉԵ	ՉԳ	ՉԸ	ՉԴ
	3	739	1631թ.	-	Սիմեոն	ՉԵ	ՉԶ	ՉԵ	ՉԳ		
	4	1740*	1632թ.	Էջմիածին	Սիմեոն	ՉԵ	ՉԶ	ՉԵ	ՉԳ		
	5	1739	17դ.	-	Ալեքսան	ՉԵ	ՉԶ	ՉԵ	ՉԳ		
	6	1742	1646թ.	Տաթև - Էջմիածին	Սկրտիչ Լեւոնի	ՉԵ	ՉԶ	ՉԵ	ՉԳ		
	7	1748	1370թ. /առաջ/	-	-	ՉԵ	ՉԶ	ՉԵ	ՉԳ		
	8	1764	1654թ.	-	-	ՉԵ	ՉԶ	ՉԵ	ՉԳ		
	9	1805*	17դ.	-	-	ՉԵ	ՉԶ	ՉԵ	ՉԳ		
	10	3130	17դ.	-	-	ՉԵ	ՉԶ	ՉԵ	ՉԳ		
	11	4337	1818թ.	Նիկողիս- Էջմիածին	-	ՉԵ	ՉԶ	ՉԵ	ՉԳ	Օրհ	
	12	4424	14դ.	-	-	ՉԵ	ՉԶ	ՉԵ	ՉԳ		
	13	5205	14դ.	-	-	ՉԵ	ՉԶ	ՉԵ	ՉԳ		
	14	6562	1771թ.	-	-	ՉԵ	ՉԶ	ՉԵ	ՉԳ		
	15	7581	1822թ.	Պոլիս	Պողոս գր.	ՉԵ	ՉԶ	ՉԵ	ՉԳ		
Ձախածո թղթերի II ենթախումբ	16	1744	1637թ.	-	Իսրայել	ՉԵ	ՉԶ	ՉԵ	ՉԳ		
	17	1715*	15դ.	-	-	ՉԵ	ՉԶ	ՉԵ	ՉԳ		
	18	1752*	1651թ.	-	Դավիթ	ՉԵ	ՉԶ	ՉԵ	ՉԳ		
	19	1813*	1724թ.	Աղրիանյ.	Սիմաս	ՉԵ	ՉԶ	ՉԵ	ՉԳ		
	20	3914	1634թ.	-	Սկրտիչ	ՉԵ	ՉԶ	ՉԵ	ՉԳ		
	21	6897	1317թ.	Գլածոր	Կարապետ Երեց	ՉԵ	ՉԶ	ՉԵ	ՉԳ		
Ձախածո թղթերի III ենթախումբ	22	6045	15-17դդ.	-	Ստեփան եր	պոեմ	ՉԵ	ՉԶ	ՉԳ	ՉԵ	Չօր.
	23	6485	1639թ.	Արզրում	Յակոբ	ՉԳ					
	24	5997	18դ.	Սենարի գյուղ	Վլաս	ՉԵ /անավ/					
	25	10182	1346թ.	Գրոյ անապ.	Գրիգոր	ՉԵ	ՉԳ				
	26	1638	17դ.	-	-	պոեմ					
	27	2079	1622թ.	Լիմ	Յովիան.	պոեմ					
	28	3172	1677թ.	-	Սիմեոն	պոեմ	ՉԵ				
	29	7257	1822թ.	Կեսարիա	Յովիան.	պոեմ					
	30	6734	1570թ.	Կարին	Շմայսն	պոեմ	Ներք.	Թ			
	31	3860	18դ.	Պոլիս	Գրիգոր	ՉԵ	ՉԴ	ԺԸ	ԼԹ		
Ձախածո թղթերի IV ենթախումբ և խառը թղթեր ու նոր նյութեր	32	9827	1781թ.	Պոլիս	-	ԼԹ					
	33	5066	18դ.	Պոլիս	Յակոբ	ԿԵ	ԿԸ	ՉԵ	ՉԵ	ԺԹ	Ե
	34	1138	1347թ.	Սիս	Դավիթ	-					
	35	9827	1787թ.	Պոլիս	Մարտիրոս սարկ	ԽԸ	ԼԹ				
	36	1837	1782թ.	Էջմիածին	-	ԺԸ					
	37	1797	17դ.	-	Յովի. եր.	Դ					
	38	6009	1685թ.	Պոլիս	Գրիգ. եր.	Չ/անավ/					
	39	3917	14դ.	-	Լևոն	Քեր.					
	40	4669	1675թ.	Պերգամ	Գրիգոր եր.	-					
	41	0982	18դ.	-	-	ԿԵ ԾԵ ԺԱ	ԿԸ ՉԵ Գ	Ա ՉԶ	ՉԴ ՉԴ	ԿԳ ՉԵ	ԽԵ ԺԱ
	42	4207	-	-	-						

այլ չափաբերականքից: Այսպես է ձևավորվում դրանց խումբն ընդհանրապես:

Եվ քանի որ նախապես խոսք գնաց հավելումների մասին, ապա այստեղ կարելի է կրկին անդրադառնալ 2Ը թղթի խնդրին: Բանն այն է, որ եթե անգամ վերջնականորեն չափազվեր այդ ուսանավորի հեղինակային պատկանելության և հավելում լինելու հարցը, ապա ձեռագրական տվյալները գոնե թույլ էին տալիս ենթադրելու, որ դա Մագիստրոսի ստեղծագործությունը չէ /անկախ ոճի տարբերության/:

Աղյուսակներից քաղված տվյալներից պարզվում է, որ Կ. Կոստանյանցն այս թուղթը բնագիր է ներմուծել ձեռ. հ. 3062-ից /տես աղ. 2-րդ և 4-րդ/: Իսկ ձեռագրեր հ.3062-ը և հ. 874-ը ընդօրինակել է խաչատուր Կոստանյանցը: Նա 2Ը թուղթը հ. 874-ի մեջ ներմուծում է հ. 3062-ից: Քանի որ երկու ձեռագրերում էլ գրիչը պահել է թղթերի միևնույն հերթականությունը. 2է - 2Ձ - 2Ե - 2Գ - 2Ը - 2Դ /աղ. 2-րդի 1-ին սյունակ և աղ. 4-րդ/: Ուրեմն 2Ը թուղթը հայտնվել է այս խմբերում և ձեռագրերում գրչի /խաչատուրի/ արտագրության ճանապարհով: Իսկ հ. 874-ից էլ ընդօրինակվել է հ. 6331-ի 2Ը թուղթը, որովհետև այն տակավին 1851 թվականի գրչագիր է:

Ինչպես արդեն տեսանք հիշյալ երկու ենթախմբերն իրարից առանձնապես շատ չեն տարբերվում: Մինչդեռ 3-րդ ... ենթախմբում գետնված են դարձյալ Մագիստրոսի չափածո երկերն ու թղթերը, բայց դրանք չունեն կանոնավոր հերթականություն, և դրանց թիվը հասնում է նվազագույնի /այստեղ հանդիպում են մեկից երկու չափածո թղթեր կամ էլ միայն պոեմը/:

3-րդ ենթախմբի մեջ մտնում են հետևյալ ձեռագրահամարները.

ՀՀ. 6045, 6485, 5997, 10182, 1638, 2079, 3172, 7257 և 6734 /տես աղ. 4-րդ/:

Ընդամենը ինը ձեռագրերից բաղկացած այս ենթախմբում ձեռագիր հ. 6045-ն է ընդարձակը, ուր նախ «*Հազարտողեան*» պոեմն է արտագրված և հետո արդեն հետևյալ թղթերը. 2է - 2Ձ - 2Գ - 2Ե: Մնացած դեպքերում ստեղծագործությունների թիվն ավելի պակաս է: Մատենդարանի 52 ձեռագրերից 11-ը պահում են պոեմը: Գրիչները դրանք արտագրել են Մագիստրոսի երկերի ամենասկզբում: Դա պայմանավորված է եղել պոեմի բացառիկ կարևոր լինելու հանգամանքով:

Սեր վերջին 4-րդ ենթախումբը ձևավորվել է բացառապես այն ձեռագրերի շնորհիվ, որոնք չափածո թղթերի կամ երկերի հետ որևէ կապ չունեն /բացի ձեռ. հ. 3860-ից, ուր երկու չափածո թուղթ է պահպանվել՝ 2է, 2Ղ /տես աղ. 4-րդ, 4-րդ ենթախումբ/: Դրանք առանձին մեկ կամ մի քանի թղթեր են, որոնք ձեռագրերում արտագրված են որոշակի «միտումով»: Գրիչներն աստվածաբանական, դավանաբանական-փիլիսոփայական, բժշկագիտական և այլ կարգի առանձին թղթեր և հատվածներ ընտրել են իրենց համապատասխան աստվածաբանական, բժշկագիտական և այլ կարգի մատյաններում՝ որպես տվյալ գիտությանը կամ մասնագիտությանը ծառայող նյութ:

Առանձնակի ուշադրության է արժանի ձեռ. հ. 4689-ը, որը պատասխան մի նամակ է՝ ուղղված Գրիգոր Մագիստրոսին:²² Ու թեև այն իր տեսակի մեջ միակն է, բայց ապացույց է այն բանի, որ Մագիստրոսին ուղղված որոշ պատասխան թղթեր հետագայում կգտնվեն: Ի. 3917-ը «*Քերանի մեկնութեան*» միակ օրինակն է Մաշտոցյան մատենադարանում: Իսկ ձեռ. հ. 4207-ում Մագիստրոսից որևէ նյութ գոյությունի չունի, թեև ձեռագրացուցակները հղում են տալիս այդ մասին: Մի հետաքրքիր նմուշ է այս խմբում ձեռ. հ. 10982-ը, որը վերջերս է ստացվել Ֆրանսիայից /1989թ./: Այն 18-րդ դարի գրչագիր է: Պարունակում է տասներեք թուղթ և դրանց հերթականությունը հիշեցնում է ձեռագիր ժողովածուների 2-րդ խումբ-տարբերակի հերթականությունը /տե՛ս աղ. 2-րդ/: Սեր ստուգումը ցույց տվեց, որ ձեռագրի երկրորդ մասը պակասում է:

Որոշ դեպքերում ձեռագրերում հանդիպում են առանձին հավելումներ և կրճատումներ:

Նախ հավելումների մասին. Մագիստրոսի ձեռագրերն այնքան էլ «ծանրաբեռնված» չեն օտարամուտ տարրերով: Նրա խիստ ու խթին ոճը թույլ չի տալիս իր նկատմամբ «ոտնձգություններ» կատարել: Այն խիստ «դիմադրում» է արհեստական միջամտություններին և ուղղակի անշփոթելի է այլ հեղինակների հետ: Եվ, այնուամենայնիվ, հավելումներ հանդիպում են: Դրանց ամենատարածված ձևը միևնույն թուղթը միևնույն ձեռագրում երկրորդ անգամ արտագրված լինելն է: Այդպիսի կրկնվող թղթերի հաճախ ենք հանդիպում թղթոց ժողովածուների 2-րդ ենթախմբում /տես աղ. 2-րդ/: Հավելումների մյուս ձևը առանձին հատվածների ու պատառիկների երևան գալն է՝ Դժվար է այդ տարասեռ նյութը դասակարգել, կատարել ոճական և տեքստային ճշտումներ և պարզել հեղի-

**5. ԳՐ. ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ՀԱՏԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ**

Դարեր	Քանակը	Ձեռագրերի համարները
13դ.	1	4207 ¹
14դ.	6	1138, 1748, 3917, 5205, 6897, 10182
15դ.	2	1715*, 6045,
16դ.	1	6734
17դ.	22	98*, 739, 1638*, 1739, 1740*, 1741*, 1742, 1744, 1752*, 1764, 1794, 1805*, 2079, 3068, 3130, 3172, 3914, 4232, 4669, 6009, 6485, 8312
18դ.	15	874, 1813*, 1837*, 3062*, 3293, 3860, 4424, 5066, 5997, 6346, 6567, 6988, 9827, 10182, 10982 ²
19դ.	5	4330, 4337, 6331, 7257, 7581

¹ Այս ձեռագրում Մագիստրոսից ոչ մի նյութ չկա:

² Այս ձեռագրի գրության ժամանակաշրջանը ճշտված չէ:

նակային պատկանելության բարդ խնդիրը: Փոքրիկ պատահիկներն ու առանձին հատվածները կտրված են իրենց մայր տեքստից և խիստ «լռակյաց» են:

Կրճատումների կամ աղճատումների մասին պետք է ասել, որ իհարկե, դա ավելի է բնորոշ ձեռագրական աշխատանքին ու աշխարհին և տարածված հանգամանք է այս բնագավառում: Բանն այն է, որ այս կամ այն ձեռագրում գրիչներն արտագրել են իրենց անհամեշտ տեքստերը կամ հատվածները՝ միանգամայն ելնելով դրանց կիառական և գործնական նպատակներից: Մյուս կողմից՝ դեր են խաղացել բնական անփութությունը, հոգնածությունը և մոռացկոտությունը: Երբեմն շփոթվել են բառեր ու անուններ, դուրս են մնացել առանձին հատվածներ: Մագիստրոսի ստեղծագործությունների ձեռագրերի գրության վայրը մեծ մասամբ էջմիածինն ու Կոստանդնուպոլիսն են: Մյուս մասի գրության վայրն էլ դեռևս անհայտ է:

Ձեռագրերի ժամանակագրական հաճախականության աղյուսակը /տես աղ. 5-րդ/ցույց է տալիս, որ Մագիստրոսի ստեղծագործությունների ձեռագրերն սկսում են արտագրվել 14-րդ դարից /6 ձեռագիր/: Երեք-դարյա խզումը Մագիստրոսի ապրած ժամանակաշրջանի և նրա ձեռագրերի արտագրության միջև, թերևս, այն հանգամանքով պետք է բացատրել, որ մինչև 14-րդ դար եղած ձեռագրերի մեծ մասը վնասվել և չարքից դուրս են եկել հենց այդ ժամանակներում: Որը և բնական անհրաժեշտություն է առաջ բերել դրանց վերաարտագրության և տարածման: Այն, որ 16-րդ դարում արտագրվել է միայն մեկ ձեռագիր և դրան հակառակ՝ 17-րդ դարում՝ քսաներկուսը, բնավ չի կարելի ասել, թե նախկինում հետաքրքրությունը Մագիստրոսի երկերի նկատմամբ փոքր է եղել և հետո աստիճանաբար մեծացել հասնելով իր ժայռակետին հաջորդ դարում:

Ձեռագրեր արտագրվել են տակավին մինչև 19-րդ դարը /5 գրչյա օրինակ/: Այնպես որ դա անընդահատ մի գործընթաց է եղել: Ժամանակ առ ժամանակ փոխվել է հետաքրքրությունը Մագիստրոսի երկերի նկատմամբ: Սակայն հենց դա էլ պատճառ է դարձել, որ գրիչները նորից ու նորից անդրադառնան նրա ստեղծագործությանը՝ էլ ավելի բազմացնելու մինչ այդ արդեն գոյություն ունեցող Մագիստրոսի ձեռագրական ժառանգությունը:

Նորահայտ նյութի քննությունը

Մաշտոցյան մատենադարանում մեր կատարած որոնումների ընթացքում մեզ են հանդիպել ամբողջական թղթերի առանձին հատվածներ ու պատահիկներ, որոնք լուրջ ուսումնասիրման և դասակարգման կարիք են զգում: Դրանք հետևյալներն են.

1. Գրիգոր Մագիստրոսին ուղղված մի թղթի մասին

Դեռևս չեն գտնվել այն նամակները, որոնք գրվել են Մագիստրոսի թղթերին ի պատասխան: Սակայն այդ նպատակով կատարած մեր երկար որոնումների ընթացքում հայտնաբերվեց մեկը, որ ուղղված է հենց իրեն ու վերնագրված. *«Հարցմունք Գրիգորի Պահլավունույ և վեստարխի և պատասխանի Սարգիս վարդապետի և գիտնականի վասն Առաջաւորի պահոցն»*:²³ Սա ցույց է տալիս, որ ժամանակի ընթացքում Մագիստրոսի որոշ թղթեր ու դրանց առանձին հատվածներ իսպառ անհետացել են:

Նրա թղթերը գրված են միանգամայն գործնական նպատակներով և դրանց գրության շարժառիթներն ու բարձրացված հարցերը անսքող գործնական են: Դա էլ անհրաժեշտաբար առաջ է մղում պատասխան նամակների հարցը: Կարելի է հաստատապես ասել, որ գոյություն են ունեցել ժողովածուում զետեղված բոլոր թղթերի պատասխան նամակները: Դրանք կամ մեկ ընդհանուր ժողովածուի մեջ են արտագրվել, և, դժբախտաբար, ինչ-ինչ պատճառներով պատահականորեն կորել, կամ էլ մեկ ամբողջական մատյանում ընդգրկված չլինելու պատճառով աստիճանաբար անհետացել:

Հայտնաբերված թղթին նախապես ծանոթ է եղել Գարեգին Զարբիանալյանը²⁴: Նամակում հիշվող Գրիգոր Պահլավունին չի կարող նույնանալ Գրիգոր Վկայասերի, Գր. Տղայի կամ Գր. Քարավեժի անձնավորությունների հետ, քանի որ նրանք կրոնական գործիչներ են: Չի կարող նույնանալ նաև 11-րդ դարի 2-րդ կեսի մեծ գորավար և կյուրոպաղատ Գրիգոր Պահլավունու անձնավորության հետ, որը Բարսեղ Անեցի /1105-1113թթ./ կաթողիկոսի եղբայրն էր: Նրան ուղղված

կամ նրա գրչին պատկանող նամակներ մեր մատենագրության մեջ չեն պահպանվել: Չի հաստատվում նաև Գ. Զարբիանալյանի այն տեսակետը, որ թուղթը գրված է Սարգիս Շնորհալու կողմից և ուղղված է Շնորհալու ավագ եղբորը, որը 1113-1166 թթ. Ամենայն հայոց կաթողիկոսն էր: Նա ապրել է և գործել է Կիլիկիայում՝ 12-րդ դարում:

«Դարձյալ գրվածք մը կա Առաքավորաց պահոց վրա, ի խնդրոյ Գրիգոր Պաիլավունկո՝ գրված ի Սարգիս», - հաղորդում է գիտնականը:²⁷

Դարկ է նշել, որ այդ թղթակցությունը տեղի ունենալ չէր կարող զոնե այնքանով, որ այն ավելի վաղ գրված լինելու ոճական յուրահատկություններ ունի և ավելի կապիչաճեր աշխարհիկ հետազոտողի, քան քարծրաստիճան կրոնավորի:

Գրիգոր Պաիլավունին, որ թղթում վեստարիս /իշխան/ պատվանունն է կրում, կաթողիկոս Գրիգոր Պաիլավունին լինել չէր կարող: Իսկ ուրիշ մեկին այդ անուն-մականունով 12-րդ դրում մենք չգիտենք:

Եթե թղթի հեղինակը Սարգիս Շնորհալին լիներ, ապա նա իրեն հենց Շնորհալի էլ կկոչեր և ոչ թե հանդես կգար վարդապետ անվանումով:

Զեռագրական փաստը /այսինքն Մագիստրոսի թղթերի հետ դրվելը/ մղում են ենթադրելու, որ այն վերջինս է ուղղված²⁵:

1.Թղթի վերնագրում կա հստակ ցուցում այն մասին, թե դա գրել է Սարգիս վարդապետը և ուղղված է Գրիգոր Պաիլավունուն: Այդ մասին խոսվում է նրա վերջում:

Վերնագրում շեշտված է հատկապես վեստարիս պատվանունը: Այս կոչումով մեզ հայտնի է միայն Գրիգոր Մագիստրոս Պաիլավունին: Նրան մենք չենք կարող շփոթել Շնորհալու եղբայր Գրիգոր Պաիլավունու հետ, քանի որ «վեստարիս» բառը պարզաբանվում է վեստ՝ ազնվական, ազատ, իշխան և քաջ նշանակություններով, իսկ արիս /որ կրճատված հունական /բառն է/ առաջնորդ, իշխան և արխունտ /իբրև պետական աստիճանավոր/ նշանակություններով:

2. Նամակագիր Սարգիս վարդապետ: Նամականիից գիտենք , որ այդպիսիք չորսն են՝ Սարգիս Անուու, Սարգիս Սևանու, Սարգիս վարդապետ Սուրբ Կարապետի և Սարգիս Կառամարտիկ²⁸: Չի կարելի որոշակիորեն ասել, թե սրանցից հատկապես ով է այդ Սարգիսը: Բայց Թղթի բովանդակությունը մտածել է տալիս, որ հիշյալ Սարգիս վարդապետը և գիտնականը ամենից առաջ Սարգիս Անեցին կարող է լինել: Նրան է, որ ուղղված են Մագիստրոսի ԺԸ, ԺԹ, Ի, ԻԱ թղթերը և նրան է, որ

Մագիստրոսն անվանում է «հզոր հռետոր և աստուածայինը տելէտիս»:²⁷ Նրա հետ է, որ Պաիլափունին կարող է նմանատիպ թեմաներով նամակագրություն ունենալ:

3. Գր. Մագիստրոսը սիրում է երևույթների միջև զուգահեռներ անցկացնել, համեմատել դրանք: Տարօրինակ չէ, որ ուշադրություն դարձնել հայ և հույն եկեղեցական ծեսերի տարբերությունների վրա: Այդ կապակցությամբ Մարգիս վարդապետին նրա առաջադրած հարցերի բազմազանությունը Առաջավորաց պահքերի և այլ ծեսերի վերաբերյալ համահունչ են Մագիստրոսի հետաքրքրություններին:

Զգացվում է նաև, որ Մագիստրոսի յուրահատուկ ոճն, այնուամենայնիվ, ազդել է Սարգսի վրա: Միջնադարյան նամակի հեղինակը և հասցեատերը որոշվում են վերնագրական ցուցումներով: Սա է ամենաճիշտ ելքը:

Այս կապակցությամբ ասենք, սակայն, որ Սարգիսներին ուղղված նամակներից և ոչ մեկում պահքերի մասին խոսք կամ ակնարկ չենք գտնում: Այդ հանգամանքը հուշում է, որ մեր գտած թուղթը Մագիստրոսի մի այնպիսի թղթի պատասխան է, որը նա ինչ-որ պատճառներով հարմար չի գտել դնելու իր ժողովածուում, և կամ էլ այն ժողովածուից անհետացել է:

Սարգիս վարդապետի թուղթն սկսում է հետևյալ հարցով. «Որ հարցեալ էր ի քէն, թէ զինչ է պատճառն, որ հայ ազգդ պահեն Առաջաւորի Պահսն, և այլ ազգք ոչ պահեն, կամ զի՞նչ պատճառն, որ Հռոմոնք Պանրուտոյ առնեն և Հայք ոչ առնեն»²⁸:

Այս հարցերին նա մեկ առ մեկ սկսում պատասխանել՝ բերելով սկզբում ուրիշների կարծիքները նախնական պահքերի մասին: Հեղինակը գիտակցում է, որ պահքերը քրիստոնեական եկեղեցու ծիսակատարությունների կարևոր մասն են կազմում և դրանց անտեսումը նույնքան անթույլատրելի է, ինչպես աստվածաշնչյան պատվիրանների խախտումը:

«Ոմանք կարծում են,- ասում է նա,- /թե Տերը/ Ի նախաստեղծէն Աղամայ եղաւ առաջին պահս ի դրախտին» պատվիրելով ուտել բոլոր ծառերի պտուղները, բացի մեկից, որի պտուղը նրա համար մահացու էր: Այդ պատվիրանը խախտելու պատճառով էլ Ադամն արտաքսվել է դրախտից: Ոմանք էլ առաջին պահքերի պատիվը վերագրել են միսկեացիներին, որոնք պահքերը պահելու շնորհիվ չեն զրկվել աստվա-

ծային շնորհներից: Նամակագրի նպատակն է ցույց տալ, որ պահքերը չխախտողները շնորհների են արժանանում, իսկ խախտողները պատժվում են Ադամի պես:

Պահքերի տևողության կապակցությամբ նա հիշում է Հակոբոս և Սեղենատրոս սուրբ հայրերին, որոնք սահմանել են յոթնօրյա պահք, քանի որ այդքան օր են կարողացել դիմանալ: Իսկ մեզանում առաջին պահքերը սահմանվել են Տրդատի օրերում: Լուսավորիչը կարգել է հնգօրյա պահք. *«Եւ մեր վասն այսորիկ պահենք ամ ամէ և ասենք զսա Առաջաւորի Պահս»*:²⁹

Ավելի ամբողջական դարձնելու համար իր նկարագրությունը և ցանկանալով ներքին կապ ստեղծել 4-րդ դարի քրիստոնեության տարածման ժամանակների տարբեր անձնավորությունների ու սրբերի միջև՝ նա ավելացնում է, թե դրանք կատարվեցին, երբ մարտիրոսվեց սուրբ Սարգիս զորավարը, որի անունը հայ եկեղեցին սրբացրել է: Այս կապակցությամբ մանրամասն է խոսում Ներսես Շնորհալիւն:³⁰ Վերջինս հաստատում է, որ անկախ Սարգիս զորավարի հունական ծագումից՝ նա հայ եկեղեցու սրբերից է: Եվ մեզանում եկեղեցին սահմանել է եռօրյա պահք. *«Հայսմաւորքում»* կայունացվել են նրա տոնի օրերը,³¹ և նրա մասին գրվել է շարական:³²

Հայ և օտար /ասորական, եթովպական և այլ/ աղբյուրներում Սարգիսը վարձագրական պատումների գործող անձ է:³³ Դրանցում նա մարտնչում է հեթանոսության դեմ և առանց երկմտելու կյանքը տալիս քրիստոնեական հավատի գոյատևման համար:

Շարունակելով իր խոսքը ծեսերի վերաբերյալ՝ նամակագիրն այնուհետև անդրադառնում է Գրիգորի այն հարցին, թե ինչու են հույները պահում Պանրուտի պահքը, իսկ հայերը՝ ոչ: Նա բացատրում է, որ ինքն այդ առթիվ տեղեկություններ է քաղել Թեոդորոս «Խմաստասերի» երկերից: *«Սենք զայս զտաք պատճառ ի գրոցն Թեոդորոսի իմաստասերի և գիտնականի, - գրում է նա, - որ/ էր ազգաւ ի Յունաստանէ»*:³⁴

Սարգիս վարդապետը նրանից է տեղեկացել, որ բյուզանդական Հուլիանոս կայսեր օրոք /361-363/ քրիստոնյաները խիստ հալածանքների են ենթարկվել: Նա բոլորից անխտիր պահանջել է, որ պահքերի փոխարեն զոհի միս ուտեն: Սակայն քրիստոնյաները հաց ու պանիր են ուտում՝ ծածուկ պահելով սահմանված պահքերը: Այդ ծեսի մասին հայկական աղբյուրներում նա հիշատակություն չի կարողացել գտնել:

Դա պարզապես այդպես է այն պատճառով, որ հայ եկեղեցում այդպիսի պահք չեն պահում:

Այնուհետև Սարգիսն անդրադառնում է մեկ այլ ծեսի քննությանը. «*Կասն Աղուհացիցն էիք հարցեալ, -գրում է նա, -թէ ընդե՞ր ոմանք ոչ ուտեն*»:³⁵ Եվ դա այն պատճառով, որ հայոց Եզր կաթողիկոսը /630-641/³⁶ Կարինի 633 թվականի հայտնի ժողովում ընդունում է միակամությունը³⁷: Սարգիսը նրան պախարակում է «*Լուսաւորչի ուղղափառ և սուրբ*» հավատն ուրանալու համար: Հայ եկեղեցին ձևական համաձայնության է գնացել հունական եկեղեցու հետ: Այդպես էր պահանջում Արևելք եկած Հերակլ կայսրը /610-641/: Կայսեր նպատակն էր արաբների դեմ ընդհանուր քրիստոնեական ճակատ ստեղծել: Դա ձեռնտու էր երկուստեք, և Եզրն իր հերթին զիջումներ է կատարել: Սակայն նրա հաջորդ վեց կաթողիկոսներն իսկապես հարեցին քաղկեդոնականությանը, մինչև Հովհաննես Օծնեցի /717-728/: 728 թվականին նա գումարեց Դվինի ժողովը,³⁸ ուր կրկին վերահաստատեց հին հայկական ծեսերը և մերժեց «նորամուծությունները»: Լինելով շատ զարգացած անձնավորություն՝ նա կազմում է նաև «*Կանոնագիրքը*»՝ ի մի հավաքելով հայոց եկեղեցու նախորդ շրջանի կանոնները՝ մինչև իր օրերը³⁹: Նրա նպատակն էր վերջնականորեն հրաժարվել քաղկեդոնականությունից և, մյուս կողմից՝ խիստ հակահարված տալ 8-րդ դարում գոյություն ունեցող աղանդներին: Այսպիսով, անպայմանորեն Օծնեցին հասնում է կարևոր արդյունքի: Նա վերահաստատում է «*Առաջին հաւատս զոր սրբոյն Գրիգորի էր աւանդեալ*»:⁴⁰ Հայ կյանքում հաղթանակ է տանում հակաքաղկեդոնական հոսանքը, և Սագիստրոսի նամակագիրը զարմանում է, թե ինչու է հույն հոգևորականությունը թյուր տեսակետ պաշտպանում: Այս անգամ նա խոսում է Քառասնօրյայի մասին: Հույները, որ անշուշտ ծանոթ էին հայտնի բոլոր ծիսակարգերին, պաշտպանում են Քառասնօրյան լուծելու ամհիմն տեսակետը. «*Ուստի ընկալան այդպիսի անօրէն օրէնք, որոց ոչ մարգարէից ունին վկայութիւն և ոչ ի աւետարանչացն, զոր զկանոնական պահս լուծանէին*»:⁴¹ Զէ՛ որ, ինչպես վկայակոչում էր նա, Մովսեսը քառասուն օր կարողացավ անջուր և անուտեստ դիմանալ, ուստի և հայերը ճիշտ են իրենց պնդումի մեջ: Ծեսերի շուրջ 6-9-րդ դարերի խիստ ու անզիջում պայքարն, իհարկե, արտահայտությունն է այն բանի, որ հայ եկեղեցին ձգտում էր ազատվել բյուզանդական ազդեցությունից, որին և նա հասավ:

Նամակի վերջում խոսվում է, ընդհանրապես, ծեսերի ժամանակ օգտագործվող ձեթի, յուղի, ձկան և այլնի մասին: Մյուսոնը համեմատվում է Սատթեսուի Ավետարանի հինգ հիմար և հինգ խելոք կույսերի ճրագների յուղի հետ/Սատ. ԻԵ.7/: Շեշտվում է, որ օր ծերության յուրաքանչյուրը խնայի իր կյանքի սրբայուղը, ինչպես որ խնայեցին խելոք կույսերը: Այդ զրույցի այլաբանական նշանակությունն այն է, որ եթե այս կյանքում մարդիկ զրկանքներ չկրեն, ապա հանդերձալ կյանքում շնորհների չեն արժանանա: Այն միտքն է շեշտվում նաև, որ մարդ էակը պետք է իր նկատմամբ պահանջկոտ լինի:

Սարգիս վարդապետն իր խոսքն ավարտում է՝ ասելով, որ շատ բաների մասին էլ ինքը լռում է: Դրա պատճառն իր *«փանաքիմացութիւնն»* է:

Պետք է նշել, որ թղթի բնագիրը մեզ է հասել զգալի աղճատումներով և բազմաթիվ սխալներով: Դա մասամբ գրչի ոչ գրագետ լինելուց է:

Նրա միջոցով մենք ծանոթանում ենք 11-րդ դարի մտավորական Սարգիս վարդապետի նախասիրությունների, պատկերացումների և գիտելիքների հետ: Իբրև հոգևորական՝ նա իր տեսակետներն հիմնավորում է ավետարանիչների ու մարգարեների դրույթներով: Կիրթ մարդ է և ունի բարձր արժանապատվություն: Նա կարողանում է, չնվաստացնելով իր անձը, մեծարել Գրիգորին: Որոշակի բացասական վերաբերմունք ունի հայրենի եկեղեցուն վնաս հասցրած մարդկանց նկատմամբ և, ընդհակառակն, արժանին է մատուցում հայ եկեղեցուն և դավանանքին նվիրված գործիչներին: Մյուս կողմից՝ թուղթը հետաքրքրություն է ներկայացնում ժանրային առումով: Սենք տեսնում ենք, թե ինչպիսի ձևախմաստային փոփոխության է ենթարկվում նամակի ժանրը 11-րդ դարում:⁴²

2. Երեք նորահայտ թղթերի մասին

Ձեռագիր ժողովածուներից հ.6988-ում արտագրված են երեք նորահայտ թղթեր, որոնք իրենց ոճով տարբերվում են Գր. Մագիստրոսի թղթերից: Մագիստրոսի ձեռագրի ուսումնասիրողները ապագայում նկատի պիտի ունենան այս թղթերի գոյությանը: Չէ՞ որ երբեմն հենց այսպիսի «մանրույթների» տակ թաքնված են լինում մեծ փաստեր: Հնարավոր է, որ սրանք ուղղված լինեն Մագիստրոսին կամ նրա մերձավորներից որևէ մեկին, որը շատ կարևոր է: Արտաքուստ այն տպավորությունն է ստացվում, որ դրանք Մագիստրոսի գրչին չեն պատկանում, որովհետև սրանցում չկա Մագիստրոսի ընդգծված հունաբան հայերենը, և չկա այն կառուցվածքը, որով գրված են նրա թղթերը:

Առայժմ թղթերի հեղնակը մեզ անհայտ անձնավորություն է: Երկրորդ թղթում ակնարկներ կան այն մասին, որ նա իր ընկերներից ծանր լուր է ստացել և մտահոգ է. *«Զի գիտեցից, թե որպէս արժան է գրել թուղթ փոխանակ ձեր պաժառացեալ ծերին և հօրն մեր, զի առանց խրատու ոչ գիտեմ մատուցանել զծանր խնդրուածս ձեր յառաջի նորա»*:⁴³ Ըստ երևույթին թե նամակագիրները, թե իր բարեկամները հոգևորականներ են:

Երեք անհայտ թղթերի թե՛ հեղինակը, թե՛ հասցեատերը անհայտ են, բացակայում են վերնագրերը: Զի կարելի որևէ բան ասել դրանց Մագիստրոսին ուղղված լինելու կամ չլինելու մասին ևս: Միգուցե հետազայում պարզվի, որ դրանք, իսկապես, այնպիսի թղթեր են, որ ուղղված են հենց նրան:

Երեքն էլ ընդհանուր բնույթի են: Դրանք ըստ երևույթին շարունակում և լրացնում են միմյանց, իսկ իրենց միտվածությամբ մեկ ուղղություն ունեն՝ բացահայտել մարդու թերությունները: Այդ թղթերում չկան աշխարհագրական տեղանուններ, առանձին խոսք՝ պատմական անձնավորությունների մասին, եթե չհաշվենք մի քանի հատուկեմտ աստվածաշնչյան անունները՝ Նոյ, Ադամ, Հեսու և այլն:

Առաջին թղթում պատմվում է սիրո և մարդկային զանազան կարգի ախտերի անհամատեղության մասին: Եփրեմը /երևի Եփրեմ Ասորին/ ութօրյա քնից հետո, երբ աղբյուրի մոտ ողջույն է տալիս իր մերձավորներին՝ դրանով իսկ մաքրում է օրինազանցներին, մեղավորներին գարշելիներին, պղերգներին, ծուլներին, հիվանդներին, որ զրպարտությամբ

են ապրում: Նա ուզում է փրկել նրան, ով որ պատրաստ է լսել իրեն:⁴⁴

Բովանդակությունը մտածել է տալիս, որ նա աստվածային սիրո մեջ է տեսնում ամենակատարյալը: Սեր, որ ամոքում է, մաքրում, փրկում: Այդ սերը չպետք է խաթարվի, կեղծվի, այլ վերափոխի մոլորյալներին: Թուղթը կոնկրետ մի մարդու չէ ուղղված, այլ ավելի շուտ մարդկային խմբի կամ հանրության: Այն դժվար է համեմատել Սանահինի ուխտին ուղղված ԿԱ թղթի⁴⁵ հետ, ուր Մագիստրոսն այնքան կենդանի և պատկերավոր ոճ ունի:

Երկրորդ թուղթն էլ նախորդի պես քարոզչական բնույթի է: Այստեղ հեղինակն է ողջույն հղում իր բարեկամներին և սիրելիներին՝ բարի քրիստոնյանյաներին: Իսկ նրանցից ողջույն ընդունում է, որպես . *«Ի բարի երկրագործ է սերմանեցաւ ողջոյնն Ձեր ի սիրտ մեր»*:⁴⁶

Այդ հոգևոր սերմերն աճել են իր մեջ և ոչ մի պակասություն չունեն: Հետաքրքիր է, որ նամակագիրը թուղթն ընդունել է իբրև իր մերձավորին: Սա հոգևոր շնորհի բանաձևն է: Այսպես. *«Թուղթ ձեր իբրև գծեզ ընկալայ, և սրտի մտօք սիրաբար տեսի գծեզ սովաւ»*:⁴⁷ Այնտեղ թվարկված իր մերձավորների անուններն իրեն շատ գեղեցիկ են թվացել, իսկ ինքն ավելի է սիրել նրանց իրեն փոխադարձաբար սիրելու համար: Այդ սերը նախատիք է իրեն՝ իր մեղքերի փոխարեն. *«Ձի սերն /այդ/ ճշմարիտ է »*: Իսկ սերը՝ իր բարեկամների մեղքերը կվանի քանի որ նրանց թուղթն էլ. *«Մանեացի յականջս մեր զգոնութիւն»* և իմաստություն:

Այստեղ թղթի հեղինակը համակրում է այն մարդկանց ու իմաստուններին, ովքեր Կտակարանների ճշտությունն են բարբառում:

Ընդհանուր գաղափարն է՝ և եկեղեցին, և նրա քարոզիչներին համախումբ դարձնել, կապել իրար հետ սիրով: Բոլոր ջանքերն ուղղել մարդուն մեղսագործ կյանքից շեղելու դեպի բարեպաշտ վարքի և կատարյալ կյանքի ոլորտը: Բարձրացնել մարդուն զգայական մոլորություններից ու անասնական կրքերից և հասցնել իմաստության ու ողջախոհության բարձունքը:

Շրորորդ թղթում նամակագիրն ուրախ է իր բարեկամներից ստացած պատասխան թղթի առթիվ, որով ինքը հնարավորություն է ունեցել ճանաչելու արդար այրամարդուն, որն ապրում է իրենց դարում: Սերձենալով երանելու հետ՝ իր տկարությունն անցել է: *«Ողջոյն տաքիք ամենայն սիրելեաց մերոց, որք ծարաւի են ողջունի մերում... Թղթագիրը հիմնականում ողջունում է հատկապես նրանց, ովքեր չեն*

սպասում դրան: Նրանց խորհուրդներ է տալիս և խիստ քննադատում: Ինքը հասկանում է, որ այդ մարդիկ կբարկանան, քանի որ կարճատևությունն ու նախանձը խանգարում է նրանց բարձրանալ իրենց այդ վատթար վիճակից: Իսկ սերը կբարձրացնի նրանց: Նրանք չեն կարող դատել նաև Տիրոջ մասին, որովհետև Արարչի ստեղծած արարածները ի գորու չեն քննել նրա էությունը: Անթույլատրելի է, որ աստծուն իջեցնեն արարածների աստիճանը և քննեն նրա էությունը սրանց հետ: Այդպիսի «լրբություն» համար իրենք պարտավոր են սաստել անօրենների: Մինչ նրանք քննում են իրենց կարողություններից վեր այդ հարցը, հարկ էր, որ պատվվեր Արարիչը՝ հանուն իր մեծագործությունների: Եվ քանի որ նա մարդուն վեր է դասել մյուս արարածներից, ուստի չպիտի հետևի Ադամի օրինակին, որը չպահելով իր շներին՝ մահկանացու դարձավ:

Զգիտակցելով իրենց տրված շնորհը՝ մարդիկ գործեցին չարիքներ: Տերը վերջին դատաստանի ժամանակ կպարզի ճշմարտության սահմանը և կմերժի նրանց անիրավությունները: Այդ կարվի, որպեսզի բոլորը մեկ եկեղեցու հարկի տակ հավաքվեն՝ շնորհիվ Հիսուսի ողորմածության:

3. Պատառիկներ և նորահայտ հատվածներ

Պատառիկների և նորահայտ հատվածների մասին արդեն մի փոքր խոսվեց: Դրանք լրացուցիչ ձեռագրական նյութեր են, որոնք իսկապես նորություն են այս բնագավառում: Ու թեև նյութը շատ ընդգրկուն չէ, բայց և կան կարևոր ամբողջական հատվածներ, որոնք հատուկ ուշադրություն և վերաբերմունք են պահանջում:

ա/ ձեռագիր հ. 4337-ի նոր նյութը

Այս նորահայտ բնագիրը օրինություն է ուղղված աստծուն, և սկսվում է. *«Օրհնութիւն հօրն անեզականի սիրով խաչեցելոյն անեզակից գթութեամբ անեղ հոգոյն փառակցի մաղթանօք մօր անճառելագոյն»* մաղթանքով:⁴⁸

Ոճը շատ մոտ է Մագիստրոսի վերամբարծ ոճին: Կան երկարաշունչ նախադասություններ, որոնք մակդիրային համակարգով շատ են աչքի ընկնող: Երկի հոգեբանությունը նույնպես Մագիստրոս է հիշեցնում: Իսկ ժանրային առումով սա ներբողին մոտ գրական արձակի նմուշ է:

Այս պատառիկը ձեռագրում արտագրված է 2է - 2Ձ - 2ե - 2Գ թղթերի շարունակության մեջ: Թե ինչու է այս թուղթը միայն հ. 4337-ում հանդիպում, դժվար է ասել /տես աղ. 4-րդ /:

Այդ փոքրիկ բնագրի համառոտ բովանդակությունն այսպիսին է. հեղինակն օրհնություն է մաղթում Քրիստոսին, հրեշտակների լուսեղեն դասին և ընտրյալների գնդին՝ նահատակված հավատքի համար:

Ընտրյալների վրա քափվում են օրհնություն և շնորհներ, իմաստության հանճար և գթություն: Խոսքը գնալով պատկերավոր է դառնում. *«Ծաղկապանծ երկնափայլութեամբ պես-պես սլակօք անճառական պայծառակերպեսցէ զունակութիւն մասանց հոգւոյ և մարմնոյ փափաքողացն անճառելոց շնորհողին, իբցէ ի սիրտ լսողացդ և ծաւալեսցէ ի հոգի»*:⁴⁹

Այդ օրհնութիւնն ու շնորհը կիջնի հաճատացյալների վրա և նրանց ողորմության կարժանացնի. *«Ամփոփեսցէ յամենագօր ողորմութիւն առհասարակ զամենայն հաւատացեալդ»*: Նրանց վրա կծաղկի աստվածային ծիլը բարեգործության՝ աներկբա հույսով, պայծառ հավատով, և արժանին կմատուցվի աստծուն: Իսկ դրա փոխարեն Տերը կտա. *«Աչս արտասուաց, լեզու պաղատանաց, սիրտ հառաչանաց, և ամփործ կեալ ձեզ յայսմ աշխարհի»*:⁵⁰

Նրանք կհաղթեն խավարային պատերազմում և կմտնեն երկնքի արքայությունը, ուր և կսպասեն Ահեղ դատաստանի օրվան: Այնտեղ կլսեն Աստվածային օրհնություններ, որով Տերը կկոչի նրանց ժառանգելու անտրտունը և մշտնջենավոր կյանքը՝ ծնված Սուրբ երրորդությամբ: Այն վերջանում է. «*Ի փառս ամնասուրբ երրորդության, որում փառք յաւիտեանս ամէն*»: Այսպես սիրում է ավարտել Մագիստրոսը:

Այս բնագիրը ամբողջական է ու ավարտուն, բացակայում է վերնագիրը:

Բ/ 3. 6045 կամ «Զօրութիւն ոտանաւոր բանիս»

Այս պատառիկը վերնագրված է «*Զօրութիւն ոտանաւոր բանիս*» վերտառությամբ: Մագիստրոսի երկերի շարքում այն զետեղված է «*Հազարատողեան*» պոեմից և 2է - 2Զ - 2Գ - 2Ե թղթերից հետո: Բնագրի համառոտ բովանդակությունը հետևյալն է. հեղինակը նպատակամղված է ուսուցանել, թե ինչպես պետք է գրվի ներքողը, և դա անում է երկնքի նկարագրության օրինակով: Նախ՝ պետք է ցույց տալ տարրերի կարգն ու դրությունը և ապա շարժումը, որից ծնվում է ժամանակը: Դրան իմաստունները բնություն անվանեցին, իսկ իրականում բնությունն ինքնին աստվածային արվեստի արդյունք է: Պետք է ցույց տալ, թե ինչու՞ է երկինքը հաստատուն, և ի՞նչ կա նրանում, ինչպես և սովորեցնել հրեղեն երկնքի մասին, թե ի՞նչ տարբերություն կա մոլորակների և «անմոլար աստղային» կայանների միջև: Այնուհետև ինչ տարբերություն կա մոլար աստղերի և կենդանակերպերի միջև: Ինչպիսին է լուսինը՝ ներքին 6-7 աստղային գոտիների՝ հետ և ինչպես է այն երևան գալիս և ինչպիսի բնույթ ունի շրջակա աստղերի հետ վերցրած: Պետք է կարողանալ մեկնաբանել և ճանաչել այդ փոխազդեցություններից առաջացած նշանները և այն նշաններն իմանալ, որ օգուտ են բերում մեզ: Արեգակի տված օգուտն այն է, որ այն առաջացնում է օրերի և եղանակների փոփոխություն: Այդ նշաններն օգտակար նշաններ են: հետաքրքիր է, որ հեղինակն արեգակի և աստղերի նշանները մեկնաբանելի է համարում. «*Որ վասն մերոյ օգտի նշանք և գուշակմունք՝ երևի ի նշանս*»:⁵¹ Մենք իր տեղում ցույց կտանք այն կապը, որը գոյություն ունի Մագիստրոսի հայացքների և երկնային նշանների մեկնաբանելի լինելու հանգամանքի միջև: Հեղինակը շարունակում է իր միտքը ներքողյանի մասին. այսուհետև պետք է տալ. «*Ներքողական գովաստ երկնի, թէ որքան լուսաւորեղ յիմաստութիւն վարժէ զմեզ, զոր բնական օրէնք ասեմք*»:⁵²

Դա միաժամանակ պետք է արվի արեգակի այլաբանական խորհրդանիշը բացահայտելով. «Եթե Լուսինն օրինակ էր հնոց օրինացն և Արեգակն՝ Աւետարանին և աստեղքն՝ Մարգարէիցն: Եւ ապա զգալի Արեգակն օրինակ առեալ Քրիստոսի, իմանալի արեգականն արդարութիւն»:⁵³ Ավարտում է իր խոսքը դասական վերջավաճանի բանաձևով. «Աղօթիւք ձերօք՝ հանցանաց մերոց թողութիւն»:
Մտահղացման ձևով և առաջ քաշած խնդիրներով այս երկը կապվում է Մագիստրոսի ստեղծագործությունների հետ: Չնով այն շատ է նման թղթոց ժողովածուի ԽԸ թղթին:⁵⁴ Այնտեղ մասնավորապես գրված է. «Ո՛չ գիտես, եթե երկին և որ ի նմա և երկիր և որ ի սմա, ամենեքեան տարացոյց զմիոյ մարդոյ նշանակէ Քանգի խելապատական զերկնի ունի նշանակութիւն և զօրաւորագոյն. երակք, որ յուղղոյ անտի, զաստեղացն հնգից և խոհականութիւնն զնորայն մատակարարութեան ի բոլոր մարմինն, իսկ երկուց աչաց զարեգական և զլուսնի զընթացս և զգայութեանցն կրկնակի և միակի զայլոց աստեղաց և զտարերոց որպէս ի փշմանէ»:⁵⁵

Հավանական է, որ այս պատառիկը մի ամբողջական թուղթ լինի կամ ամբողջական միտք՝ ներբողյան գրելու մասին: Մագիստրոսի վերոհիշյալ թուղթը և սրա արծարծած խնդիրները, թեև տարբեր բնույթի են, մեկը՝ մարդակազմական-աստվածաբանական բնույթով, իսկ մյուսը՝ երկնքի գեղարվեստական և այլաբանական նկարագրության օրինակով, բայց և ընդհանուր են լուսատուների, նրանց «վարքագծի» և խաղացած դերի նույնատեսակ ըմբռնումով, թեև դա միջնադարում ընդունված պատկերացում էր: Պետք է խոստովանել, որ որոշակի ընդհանրություն կա այս պատառիկի և Գր. Նարեկացու «Վարդավառի» տաղի վերջնամասի միջև: Սակայն նարեկացու պարագայում այդ նշանները սիմվոլներ են, իսկ այստեղ՝ գուշակության առարկաներ:

զ/ «Չորս են ենթակայ...»⁵⁶

Ձեռագրում մեզ հանդիպող այս պատառիկը պայմանականորեն, «Չորս են ենթակայ...» վերնագրով ենք վերցրել. այն շատ փոքրիկ մի հատված է, որ մի տեսակ ավարտի է բերված: Եթե նույնիսկ թուղթ չէ, ապա երևի մագիստրոսյան մի անհայտ թղթի վերջնահատված է: իսկ որ Մագիստրոսի գրչի հետքերը կան սրանում, անկասկածելի է: Ստորև բերում ենք այդ փոքրիկ բնագիրը.

«Չորս են ենթակայ ի տրամախոհութիւն. յեղանակս մակացութիւն,

ենթադատությունն իրաւացի ըստ գոյին վերաբերութիւն, ըստ վերաբերութեան մտածութիւն և մտածութիւն լաւագոյնն:

Չորս են գրպարտութիւն մտածումն, հարստահարել զտկարս կամ որ է իշխանութիւն, ստել պարտապանին բարւոյ, ազահել, որում յաղթ կամ տարախոհ կարծիս կասկածանաց:

Արդ ասա, որոյ ենք այսօր սակս հրեշտակին ի քէն գրպարտիլ. ողջ լեր»:

Թղթերի վերնագրերի հարցը

«Գրիգոր Մագիստրոսի թղթերն ունեն վերնագրեր,- գրում է Մ. Աբեղյանը,- որոնք ծագում են հավանորեն հեղինակից, կամ նրան մոտիկ մարդկանցից, քանի որ վերնագրեր դնողներն իմացել են, թե ինչ առիթով են գրված և ում են ուղղված այս կամ այն թուղթը»:⁵⁷

Ամեն ինչ համարյա սպառիչ կերպով է ասված:

Վերնագրերը հետագա հավելումների արդյունք են թվում, բայց դա միայն առաջին հայացքից: Հավանական է թվում այն, որ թղթերը Գր. Մագիստրոսը վերնագրել է ժողովածուն կազմել-ամբողջացնելուց հետո: Պարզ է, որ դրանք մինչ այդ էլ համառոտ վերնագրեր ունեցել են, բայց հետո Մագիստրոսը վերախմբագրել է: Իսկ դա երևում է վերնագրերի նկարագրական-բացատրական բնույթից:

Մյուս կողմից՝ Մագիստրոսը շատ լավ գիտեր, որ անտիկ և միջնադարյան թուղթ վերնագրվում է: Իսկ ինքը, որ գրում էր դասակական թղթագրության հետևությամբ, այլ կերպ վարվել չէր կարող: Վերնագրերի չեզվառճական ձևերը ևս Մագիստրոս են հիշեցնում:



Գրիգոր Մագիստրոսը 11-րդ դարի ամենակարևոր դեմքերից մեկն է: Լինելով բարդ ու հակասական ժամանակների ծնունդ՝ նա չէր կարող և չի խուսափում իրեն բաժին ընկած ճակատագրից: Նրա և իր ժամանակակից բոլոր նշանավոր մարդկանց կյանքը սերտորեն շաղկապված են զարգացման գագաթնակետին հասած և եղերական անկման ենթարկված Բագրատույաց հարստության հետ:

Որքան էլ մարդն իր ժամանակի ծնունդն է ու արդյունքը, նույնքան էլ այդ ժամանակի կերտողն է: Ու այդ բոլորով հանդերձ մեծ համճարը մի առանձին աշխարհ է, որ ունի հետաքրքրությունների իր շրջանակը և վերջապես՝ իր ուրույն կյանքը: Ու նա էլ իր ժամանակաշրջանի չափ ուշագրավ է, արժանի խղճմիտ վերաբերմունքի:

Մարդկային մտքի տեղաշարժերն սկսվում են նաև այն բանից, թե ինչ մակարդակի վրա է գտնվում ուսումը: 11-րդ դարում այն բարձր որակ էր ապահովում մեզանում: Մտավոր իր խիստ ընդգոգծված

կարողություններով Գր. Մագիստրոսը չէր կարող իր մասնակցությունը չունենալ սերունդների դաստիարակության պատասխնատու գործին: Այս տեսակետից նրա առաջնակարգ խնդիրները մեկն էլ եղել է Դիոնիսիոս Թրակացու Քերականի «Մեկնութիւնը», որը հարյուրամյակներ շարունակ օգտագործվել է հայկական դպրոցներում: Նա այն առաջիններից է, ովքեր վերստին կյանքի կոչեցին Քառյակ և եռյակ արվեստների տեսության ուսումնասիրությունը, քանի որ ամտիկ ուսումնական այդ համակարգը վաղուց մոռացության էր մատնվել:

Գրիգոր Մագիստրոսը մասնակցել է նաև աղնդավորական շարժման դեմ պայքարին:

10-11-րդ դարերի համապարփակ մթնոլորտը պատկերացնելու համար պետք է հիշել նաև «Սասնա ծռեր» ժողովրդական էպոսի ձևավորման և տարածման կարևոր հանգամանքը: Հերոսականություն և կորցրած արդարության հաստատում՝ սա է ամենից առաջ մեր էպոսի և իր ժամանակաշրջանի պահանջը, որ և՛ համամարդկային է, և՛ բարոյական:

Ստավոր կյանքը մտնում է մի նոր հունի մեջ: Աշխարհիկ մտայնությունը սկսում է կարևոր տեղ գրավել իրականության ճանաչողության գործում: Սկսում է զարգանալ բուն փիլիսոփայությունը, և մեզանում մեծ տարածում է գտնում նորպլատոնական ուղղությունը: Սեն Արևշատյանը նկատում է, որ չնայած Դավիթը /իմա. Դավիթ Անհաղթը- Ս.Մ./ նորպլատոնական տեսությունը հայ իրականության մեջ ներմուծեց դոսից, Ալեքսանդրյան դպրոցից, բայց և նրա ուսմունքը Հայաստանում գտավ պարարտ հող:⁵⁸ Այդ ուսմունքը զարգացրեց և նոր աստիճանի բարձրացրեց ինքը՝ Մագիստրոսը, բնագիտական, մաթեմատիկական և գեղագիտական իր հայացքների ձևավորման ճանապարհին:

Մագիստրոսը Վերածնության շարժման կրողներից մեկն է մեզանում: Գրիգոր Նարեկացուց հետո նրա անվան հետ է կապվում այդ շարժման քախտը:

Հայ իրականության մեջ Վերածնական երևույթների առաջին բացահայտողը Մանուկ Աբեղյանն է: Նրա հայացքներն այսօր գիտական լայն ճանաչման են արժանացել, և բոլոր լուրջ գիտնականները համաձայնել են Ս. Աբեղյանի տեսակետների հետ: Այդ է հաստատում ակադիմիկոս Հրանտ Թամրազյանի հետևյալ միտքը. «Հայ մշակույթի Վերածնության համար ուժեղ հիմքեր են քաղաքական և տնտեսական վերածնությունը,

միջազգային առևտրական ճանապարհների ստեղծումը, գյուղերի և քաղաքների բարձրացումը, առևտրի և արհեստների ծաղկումը, սոցիալական բուռն շերտավորումը: Այս ամենը մեծագույն երևույթներ էին ժողովրդի կյանքում, Մարդուն համուժ էին դարավոր կապանքներից, նպաստում բանականության և եռանդի հզոր վերելքին: Նույն ժամանակ մի շարք կողմերով դրանք նման էին նաև եվրոպական Վերածնության մախնական շրջանին»:⁵⁹

11-րդ դարի առանց այն էլ հազեցած մթնոլորտը շիկացրեց հայտնի իմաստասեր Հո: Վիանենս Կոզեռնը, որը կարծում էր, թե իրենց ժամանակը մոտեցել է վերջնագծին: Դրան հաջորդելու են աղետներն ու դժբախտությունները: Մեղքերի ծովը խրված իր ժողովուրդը կպատժվի, և աստծո զայրուքը կիջնի նրա վրա: Ըստ նրա՝ այդ էին վկայում 1023 թ. հայտնված Գիսաստղի նշանը, 1036 թ. Արեգակի խավարումը և այլն: Այդ ժամանակ Հայաստանում տեղի էին ունենում ավերիչ երկրաշարժեր, որոնք ահաբեկում էին մարդկանց: Եվ Մագիստրոսը, որ Կոզեռնի առաջին ունկնդիրներից մեկն էր, մի՞թե կարող էր չազդվել երկրաշարժից էլ ազդեցիկ նրա խոսքերից: Եվ մի՞թե դա չէր հաստատվում արտաքին այն նշանների մեջ, որ պատկերվում էին նրան. սելջուկյան օրեցօր աճող հրոսակներ, Բյուզանդիայի անընդհատ աճող քաղաքական և ռազմական ճնշում, երկրի ներքին ուժերի պառակտված վիճակ և անկայուն քաղաքական իրադրություն: Դրան ավելանում է կիսահուսադրող, քայքայող խիստ վտանգավոր այն գաղափարը, որ Կոզեռնի կարծիքով 200 տարի հետո ամենուր կհաստատվի քրիստոնյա Բյուզանդիայի իշխանությունը և վերջ կտրվի խառնակություններ: ին:⁶⁰ Եվ ստացվում է, որ ամեն մի պայքար իզուր է: Այս մտքի ազդեցությունը կա ժամանակի համարյա բոլոր գործիչների վրա: Հովհաննես Սմբատ աղքայի կտակն էլ գուցե դրա արտահայտության մի ձևն էր: Դրությունը կարող էր շտկվել, եթե գահին տիրեր արքայաեղբայր Աշոտը, որ մի քաջ և պատերազմասեր մարդ էր: Ցավոք, նա մեռավ ավելի վաղ՝ 1040 թ. և մայրաքաղաք մտավ այլևս անշնչացած, քանի որ եղբայրներն ուխտել էին միմյանց տիրույթ չմտնել:

Մեր ժողովրդի ճակատագրի համար փոթորկուն ժամանակներում է ապրել ու ստեղծագործել Գրիգոր Մագիստրոսը: Նա իր ժողովրդի կողքին է եղել և արժանացել նրա իսկ ճակատագրին:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Թղթոց ժողովածուն՝ իբրև միջնադարյան արձակի կարևոր հուշարձան

Գրիգոր Մագիստրոսի «Թղթոց» ժողովածուն իր օրերի դասական նամականու ամենափայլուն արտահայտություններից մեկն է: Այս ժանրում նա հիմք է դնում սկզբունքորեն նոր որակ ունեցող ստեղծագործությունների, որոնք այլ են թե՛ բովանդակությամբ և ձևով, թե՛ իրենց միտվածությամբ: Մ. Աբեղյանը նշում է, որ «թղթերով մեր գրականության մեջ մտել է մի նոր գրական տեսակ՝ նամականի ասածը: Արդարև հայտնի են մեզանում «Գիրք թղթոց» ժողովածուի մեջ եղածները, բայց դրանք պաշտոնական գրություններ են, որևէ խնդրի առիթով, մինչդեռ Մագիստրոսի թղթերը մասնավոր նամակներ են, որոնց նմանները չեն պահված կամ երևան չեն եկած մեր գրականության նախորդ շրջանից»¹:

Եվ այնուամենայնիվ արդեն 5-րդ դարում գրվել է Ղ. Փարպեցու թուղթը, որը անձնական թղթի լավագույն նմուշներից է:

Գր.Մագիստրոսը գրում է գեղարվեստական արժեք ունեցող թղթեր, ժամանակի գրական ճաշակի ու ըմբռնումների համեմատ և գրում է տպավորություն գործելու նպատակով: Անշուշտ, նա գրում է իր ժամանակի պահանջներից ելնելով, դիմելով խոսքի պատկերավորության համարյա բոլոր ձևերին /փոխաբերություն, համեմատություն, այլաբանություն, փոխանունություն, մակդիր և այլն/: Նրա ոճը «զարդարում է», բայց ամենևին զուրկ չէ պատկերավորությունից և հուզականությունից:

Այդ հերոսը ընդհանրաբար է՝ իբրև ամբողջական մի կերպար: Դա 11-րդ դարի մտավորականի կերպարն է, որը շրջապատված է բազմաթիվ այլ գրական կերպարներով՝ արքաներ, զորավարներ, կաթողիկոսներ, գիտնականներ, աշակերտներ, քաղաքական գործիչներ և այլն:

Այդ հերոսը կենդանի մարդն է նաև: Նա ուրախանում է ու տխրում, հրճվում է ու տառապում, ծաղրում է ու կսկիծից կուչ գալիս: Եվ այդպես շարունակ: Մենք տեղափոխվում ենք այդ հեռավոր ժամանակները, ծանոթանում մարդկանց ճաշակի ու ձգտումների հետ, ինչպես և ճա-

նաչում նրանց նիստ ու կացը, կենցաղը: Իմանում ենք ոչ միայն այդօրյա առարկաների միասին, որոնք այսօր դուրս են եկել գործառնությունից և այլևս կիրճական չեն կամ առհավետ անհետացել են: Դրանք ամանեղեններ են, երաժշտական գործիքներ, ձեռագիր մատյաններ, որ այլևս չեն կազմվում, մատանի-կնիքներ և այլն:

Նրա նամակները բազմաթիվ են: Դա այդպես է արված մեկ ցույց տալու համար սերունդներին, թե ինչպես կարելի է նամակ գրել: Մանավանդ որ՝ թղթագրության մախորդ շրջանը դրա համար շատ նյութեր էր կուտակել: Կար անտիկ թուղթ՝ իր դասական կառուցվածքով, բյուզանդական թուղթ՝ իր տարբեր դպրոցներով ու անթիվ-անհամար հեղինակներով՝ կային Ավետարանի առաքելական թղթերը և այլն և այլն: Այս բոլորի հետ միաժամանակ կար հայ իրականությունը վերաիմաստավորող Վերածնության շարժումը: Այն աստիճանաբար ծավալվում էր արվեստի և գրականության նորանոր բնագավառների վրա: Եվ ինչու չէ, կար մեկ մախորդ շրջանի հայ թուղթը, որի հիմքի վրա է բարձրանում Գր.Մագիստրոսը: Հայ գրականության ձևավորման ամենասկզբնական շրջանից /5-րդ դարից/ սկսած մեզանում գրել ու առնչվել են թղթի ժանրի հետ: Ել չասենք, որ դա անձնական և պաշտոնական փոխհարաբերությունները ձևավորող առանցքային միջոցներից ու ժանրերից մեկն էր հնում: Եվ որպես գեղարվեստական արձակի ուրույն բնագավառ՝ թղթագրությունը էականորեն տարբերվում է պատմագրությունից: Պարզ է, որ պատմիչները բոլորովին այլ նպատակներ են հետապնդել իրենց երկն ստեղծելիս, քան թղթի հեղինակները: Պատմագիրն արձանագրում է դեպքերի հաջորդական շղթան և նրա համար կարևորը դեպքերի հավաստիությունը՝ հաստատելն է, իսկ թղթի հեղինակը մեզ է ներկայանում իր անմիջական տպավորություններով: Նրա խնդիրն է հուզել իր նամակն ստացողին և հասնել ցանկալի արդյունքի: Հենց այստեղ էլ թուղթը մեկ այլ կարևոր առանձնահատկությամբ է առանձնանում: Այն ոչ միայն արդյունք է տվյալ հեղինակի ճաշակի և հակումների, այլ ընդհանրապես այն կապի, որ գոյություն ունի երկու նամակագիրների միջև: Դրանով է պայմանավորվում մեկ նրանց փոխհարաբերությունները:

Մասնավորապես Մագիստրոսի թղթերի կապակցությամբ պետք է առանց կասկածի ասենք, որ նա ստեղծում է գեղարվեստական արժեք ունեցող երկեր:

Ահա մի դրվագ, ուր հեղինակն ստեղծում է սքանչելի մի պատկեր.

«Արդ այսմ ոչ հանդիպեալ մեր կամ թէ արժանացեալք որում ըղծացաք, և յայսմանէ առաւել տազնապաւ տրտմեալ տատանիմ, եթ տարագիր մեզ լինել տակաւին հասանէ, և ոչ յարկս հարցն հանգչիլ: Այսպիսի հիացուցանօղ և զարհուրեցուցիչ վէրս ընկալեալ անբժշկելի և դժոխաբույժ զօրէն եղջերուաց, որք ի գաղտնի մետիւք որսացեալք դեղօք դարանակալեալք դեղևին և արտաքս վագեալք ի պարէն իւրական սերին պաշարեալ և պարաւանդեալ ոտիւք, պասքելով աղբեր կարօտին և այսր անդր գլորելով յորս ոչ ժամանեն»²

Մարդկային ճակատագրի և քաղաքական անցքերի մի ցնցող համադրութիւնն է սա, ուր այնքան շեշտված են նաև մեր ամբողջ ժողովրդի ճակատագրի աղետալի արծազանքները:

Թղթերի հերոսը խոսում է ամենաբարդ ու ճակատագրական հարցերի շուրջ: Նա ոչ միայն համարձակ նայում է իր հոգու ամենախոր ու մութ անդունդները, այլև նավապետի խիզախությամբ փորձում է լողալ զգացմունքների ու կրքերի տարերքին ընդառաջ: Եվ հենց այդ հանգամանքներում հասնում է նուրբ ինքնավերլուծությունների: Հետաքրքիր է այն, որ Մագիստրոսը գնում է մոտավորապես նույն ճանապարհով, որով հետագայում պետք է անցնեին եվրոպական Վերածնության մեծերը: Մասնավորաբար փորձի մասին նա ուշագրավ մի միտք է հայտնում. *«Փորձն առեալն է, /որ/ կարող է փորձանաւորացն օգնական լինել...»³*

Գր. Մագիստրոսի փիլիսոփայական հայացքներն անմիջականորեն շաղկապվում են նորալատոնական ուղղության հետ և առաջին հերթին կրում Դավիթ Անհաղթի բարերար ազդեցությանը: Վերածնության շարժման հետ սկսած անսպառ հետաքրքրությունը դեպի անցյալի հեղինակները ցույց է տալիս, որ համաշխարհային գիտության ու մշակույթի նվաճումները մղվում են առաջին պլան: Քրիստոնյա հեղինակները՝ չմոռանալով, որ իրենք նաև հավատքի ու քրիստոնեական աշխարհայացքի պաշտպաններ են՝ կարևոր դեր էին հատկացնում արտաքին գիտություններին: Աստվածայինի և կատարյալին տիրապետելու ճանապարհին գիտությունները դառնում էին այն ամենավճռական միջոցները, որոնց շնորհիվ միայն հնարավոր կլիներ հասնել դրանց: Գրեթե այս կերպ է մոտենում հարցին ռացիոնալիզմի հայր Դեկարտը, որի աշխարհաճանաչման մեթոդը կասկածն է ⁴:

Թղթերում մենք շատ անգամ հանդիպում ենք այն սկեռուն գաղափարին, որ իմաստությունն ու իմացությունը բանական մարդու ամենա-

կարևոր հատկանիշներից են: Մագիստրոսն անուղղակիորեն Դեկարտի տեսակետն է հաստատում մտածողության և տրամաբանական օրենքների իմացության մասին դեռևս 11-րդ դարում՝ նշելով. *«Առաջանութիւնս Պիթագորեան և Պղատոնական և Ստագիրացոյն իբրու զստիկնս դիտեցաւ... տեսչացեալ ըզմայի քեզ արբուցանել անդանդադ»*⁵ Այլևս չենք խոսում այն մասին, թե ինչպիսի կրթով է նա համդիմանում ծուլ աշակերտներին և կշտամբում կիսագրագետ իմաստականներին, որոնք լավ չեն տիրապետում իրենց նյութին: Նրա վերաբերմունքը գիտության և ուսման կարևորության մասին արտահայտված է նրա մանկավարժական տեսական հայացքներում: Այսպես. *«Նա ոչ միայն ուրիշներին հորդորել է գիտությամբ պարապելու և դպրոց ունենալու, - գրում է Մ. Արեղյանը, - այլև ինքը շարունակ սիրով ու անխոնջ հետևել է դրան՝ նշանաբան ունենալով «պատարուն ընթերցմամբ», «գիտութեամբ լուսաւորել զանձն»*⁶: Դեռ վաղ հասակից տիրապետելով գիտության բարդ ու բազմազան ուղիքներին՝ Մագիստրոսը հետագայում աշակերտի իր համեստ դիրքերից բարձրանում է իմաստասերի բարձր աստիճանին: Եվ փիլիսոփայություն ուսանելու մասին համարձակվում է ուղղակի ասել. *«Այս պատահեաց մեզ մինչ տակաւին պատանեակ եղելոյ»*⁷:

Թղթերը առօրյական մամականեր լինելուց բայցի դառնում են ժամանակի հասարակական-քաղաքական և գրական-գիտական մտքի նվաճումը: Գեղինակը մեր առջև բացում է այն կենսատարածքը, ուր գործում են ինքն ու իր ժամանակակիցները: Նա խոսում է իրեն հուզող հարցերի մասին և իր զգացմունքների:


Գր. Մագիստրոսն իրականությունը ներկայացնում է այնպես, ինչպես որ այն կա: Դա ընդհանուր երևույթ է եղել ամբողջ Վերածնության մեջ նաև եվրոպայում⁸:

Հայկական Վերածնության բնորոշ հատկանիշները պետք է միաժամանակ կարողանալ զանազանել: Դա թե՛ հելլենիստական մշակույթի նորովի ընկալումն էր, թե՛ նախորդ շրջանի լավագույն ավանդների օգտագործումը, թե՛ իրապաշտությունն ու մարդասիրությունը /հումանիզմը/ և թե՛ Աստվածաշնչի գործնական կիրառումը մարդու դաստիարակության գործում: *«Անիի ժամանակաշրջանի Հայաստանում հումանիզմի հասկացությունը... հատուկ էր Գրիգոր Մագիստրոսին, այդ քերականին, բանասերին, իմաստասերին, մարդու և բնության այդ ջատագովին»*⁹:

Գր. Մագիստրոս երևույթը չի պարփակվում միայն ազգային շրջանակներում: Նրա վաստակը համամարդկային արժեք ու նշանակություն ունի: Դրա հետ մեկտեղ նա տեղյակ է համաշխարհային մշակույթի ամենաբարձր նվաճումներին և դրանց մասին խոսում է ընդգծված քաջատեղյակությամբ: Հունական, պարսկական, եբրայական և այլ ժողովուրդների մշակույթը մարսած մեկն է Մագիստրոսը, որն ամենևին չի խորշում կրոնական և ազգային տարբերություններից: Ավելի շատ ձգտում է ընդհանրություններ տեսնել տարբեր ազգերի միջև, քան հակամարտություններ: *«Պետք է չսխալենք,- գրում է Գ. Սենեկիշյանը,- եթե «ծովածավալ հմտությամբ» գիտնական հայ մը անվանենք զՄագիստրոս, որ կը վկայե յուր անձին համար, թե կարդացած ու թարգմանած է յուր ծեռքն անցած ամեն գիրք»*¹⁰:

Մագիստրոսն իբրև նորարար

Գրիգոր Մագիստրոսը մի հեղինակ է, որը հեղաշրջում է մտցնում իր գործունեության համարյա բոլոր բնագավառներում: Դա հատկապես երևում է իր թղթերի առումով, ուր առավելագույնս փայլում է նրա տաղանդը: Շատ դեպքերում ինքն է բնութագրում իր նամակները՝ կոչելով դրանք «տառ դամբանական», «տառ աւետաբերական», «բան գովական», «բան կեղերջական», «թուղթ օրհնութեան» և այլն: Ձևական առումով թղթերը խիստ կառուցիկ են և ունեն ընդգծված հակիրճ ավարտ. «Պաշտոնական գրագրությունների /այլև անտիկ նամակի/ հետևությամբ Մագիստրոսի թղթերում արտահայտություն գտած վերջողջույնի բանածևը խիստ հակիրճ է, պարզապես՝ «Ողջ լեր» կամ «Ողջ լերուք»¹¹: Մա մի տեսակ հեշտացնում է նրա գործը: Քննարկվող բարդ ու խճճված հարցերից հետո վերջապես կարողանում է մի տեսակ «թեթև» եզրափակումով ավարտել ասելիքը: Կանոնիկ են թե Մագիստրոսի թղթերի վերջնամասը, թե՛ առաջամասն ու միջնամասը: Նրա թղթերն այս տեսակետից ընդգծված նմանություն ունեն ժամանակի բյուզանդական նամակի կառուցվածքին: Դա մոտավորապես այսպիսին է.¹²



Իհարկե, պարտադիր չէ, որ Մագիստրոսի բոլոր թղթերը կառուցված

լինեն այս սկզբունքով: Նա երբեմն խախտում է այդ կարգը, հաճախ բաց թողնելով թղթառաջի երկու մասերը՝ միանգամից անցնելով միջնամասի բուն խնդրին կամ խնդրադրությանը: Հիշենք, օրինակ, Թոռնիկ Մամիկոնյանին ուղղված նրա ՀԴ թուղթը: Առաջաբանն ուղղակի բացակայում է: Մագիստրոսն սկսում է խնդրադրությունից՝ հայտնելով. *«Խոստացար երբեմն մեզ նպաստ առաքել զուղակս և այն յատուկ կարմրախայտ, արտակիտեալ զնա կարթիւք ի կաղկաջահոս և ի կոհակաւտ ականակիտ ականց»*¹³:

Այսպիսին է նաև Թոռնիկին ուղղված ՀԶ թուղթը, ուր նամակագիրն իմաստասիրում է ծառերի մասին, դարձյալ խնդրադրությունից սկսելով իր ասելիքը. *«կամինք իմանալ զժայրագոյնդ ծառէ...»*¹⁴:

Եվ հանդիպում են թղթեր, ուր Մագիստրոսը երկար առաջաբաններ է գրում՝ երևան հանելով իր հռետորական և իմաստասիրական ձիրքերը: Նրա այդպիսի երկար առաջաբան ունեցող թղթերը սովորաբար ուղղված են բարձր դիրք ունեցող մարդկանց, որոնց Մագիստրոսը ցանկանում է պատասխանել հռետորաբար և հարգանքի տուրքով: Այդպիսի են Իբրահիմ ամիրային, Հովհաննես արքեպիսկոպոսին, Պետրոս կաթողիկոսին և այլոց ուղարկված շատ թղթեր: Երկար նախադրության մի օրինակ է նաև Հ թուղթը, ուր Մագիստրոսը գրում է. *«Ձըղծաւտ տենչումն և զանծկալի փափագումն յօժարութեան ի բարի խոհականութիւն ի վեհագոյն քո խնդրոյս խուզման ծանեայ, ով մականունդ ամիրայական սերի Աբրահամ, յազգէ Աբրահամու իսմայէլական ծննդոց, ի թագաւորեցելոցն ազգաց և օրհնութեանն ժառանգորդ, ըստ մօր ի մերոյն Հայկեան և Արամեան, ի Սիսականայ հայկազն, ի նախնեացն շառավիղէ երկրքումբք»*¹⁵:

Ամենահատկանշական գծերը գտնելով՝ Մագիստրոսը կարողանում է ինչպես հարկն է հարգել իր բարեկամին և միաժամանակ շեշտել նրա՝ մոր կողմից հայկական ծագում ունենալը: Դրանով նա նաև նպատակ է հետապնդում նախապատրաստել այն խնդիրը, որի մասին պետք է խոսի հետագա շարադրանքի մեջ:

Գր. Մագիստրոսի թղթի միջնամասը ևս կանոնիկ է: Այստեղ երբեմն բացակայում է տույժը: Սակայն դա այն պատճառով, որ ոչ բոլոր դեպքերում է թղթակիցը ենթակա «պատժի»: Իսկ մեկ այլ դեպքում էլ առկա է խիստ տույժն ու սպառնալիքը: Այսպես, *«Բայց դու փութա գխոստացեալսն առաքել, թէ ոչ, զկնի այսմ նամակի, - գրում է նա Թոռնիկին,*

ճահեցուցից քեզ ճարտասան բանիւք ճայթնունս առասութեան, զի ոչ քաղցրասցի ի կոկորդս քո պարարտութիւն կարմախայտիդ. զի ոչ միայն զայդ, այլև զամենայն զեռունս և զբզիզսն և զծծիս, զոր յուրբաթու ճաշակեալ է քո, տաղտկացեալ ախտնդեացդ գօրէն Կոռնեայ ժայթքեալ արտաքս բերցես»¹⁶:

Թոթում միանգամից իրար են հաջորդում տույժը և ամրագրումը, իսկ վերջաբանը դուրս է մնում: Երբեմն էլ տույժը փոխարինվում է սպառնալիքի, հորդորի կամ պարզապես խնդրանքի: Ահա թե ինչպես է Մագիստրոսն սպառնում մի ոչ հմուտ գիտնականի «ուղղել» իրեն. «Ձոր աղաչեմ անհակամիտաբար ուղղել զքեզ յայսպիսի թևակոխութեանց և պարապել ծշմարտութեանն և զհետ երթեալ աւանդութեանցն հարցն. ապ' եթէ ոչ, զկնի այս հակաճառութիւն ի մէնջ գտցես հռետորական ճարտասանել զՊիթագորայն և զՄանինտոսին, զի այնու պատկառեալ մանկանց ճեմարանին զգաստացեալք զուղղագոյն խոկասցեն խուզմունս. և այս այսքան»¹⁷:

Մեկ այլ դեպքում է Պաիլավունյաց իշխանն ամրագրում է իր ասելիքը, կարևորում ու շեշտում այն. «Այլ իբր առ մանկականսն քեզ կամեցայ յստակ վճիտ շարագրել զայսոսիկ, զի մի՛ անկարելի ոմանց թուեցեալ, արտավազիկ արշաւանօք փախիցեն, այլ դիւրալուր եղեալ թերևս լսիցեն. զի սովորեալ կաթին, կարասցեն զկնի այսր զմերս փութացուցանել բանաստեղծութիւնս, զի զկատարեալն կերակուր տացուր իբր զքաջ խոհակեր: Ողջ լե՛ր»¹⁸:

Ընդհանուր գծերով Մագիստրոսի թղթերն աչքի են ընկնում հատկապես միջնամասի կառուցիկությամբ: Եվ եթե բացակայում են այս կամ այն մասերը նամակի ամբողջության մեջ, ապա անցումները կատարվում են այնքան նուրբ ու վարպետորեն, որ հակասություններ չեն առաջացնում: Իսկ դա խոսում է Մագիստրոսի մեծ տաղանդի ու շնորհաշատության մասին:

Մեզ համար պակաս կարևոր չէ քննել թղթերի բովանդակային հատկանիշների հարցը: Ա. Ալեքսանյանն այս կապակցությամբ գրում է. «Նա կյանքի կոչեց հայ նամակի պատմությունը նախկինում անծանոթ բազմաթիվ նամակագրական ենթաժանրեր /հորդորական, խրատական, իմաստասիրական, դամբանական, ներբողական, նկարագրական, կենցաղավարական, մեղադրական, ծաղրական, գիտական, էսսենամակ, չափածո թուղթ և այլն/»¹⁹: Ճիշտն ասած, նամակների բովան-

դակային բազմազանությունն ու խայտաբղետությունը կարող է ուսումնասիրողին ծայրահեղության հասցնել: Ամեն մի առիթ, որի պատճառով հորինվում է տվյալ նամակը, արդեն իսկ հուզում և նախապատրաստում է նրա գաղափարական ու բովանդակային կողմը: Եվ եթե բաժանման այս ձևը բնութագրում է այս կամ այն նամակի տեսակը, բայց և «տառապում» է բազմազանությունից: Այդ է հաստատում Թովմաճյանի հետևյալ պնդումը, թե. «*Բազմապատիկ են յոյժ ազգի և տեսակի թղթոց, մինչ զի որ ասաց՝ եթէ տեսակի թղթոց անթուելիք են, ոչ վրիպեաց զճշարտութիւնէ. քանզի կամէր ասել՝ եթէ նիւթք և առիթք զոելոյ զթուղթս ամհամարք են. և մի թուղթ ընդ միւսոյն ոչ գտնի երբէք համաձայն յամենայնի և ըստ ամենայնի...*»²⁰:

Ե. Թովմաճյանի բաժանումը կատարված է զուտ բովանդակային տիրույթում, և հասնում է մոտ երկու տասնյակ տեսակի: Նա բաժանում է

1. քաղաքավարականի և 2. գործառականի:

Քաղաքավարական թղթերի մեջ մտնում են՝ թուղթ շնորհավորությանը, ուրախակցությանը, ցավակցությանը, մխիթարությանը, շնորհակալությանը, գովությանը և մտերմությանը:

Գործառական թղթերի մեջ են մտնում՝ թուղթ հանձնարարությանը /ընծայության/, խնդրածու, հորդորանաց, խրատական, հանդիմանության, սպառնալիքի, անմեղության, ներման, հրավերքի, խորհրդի, ընծայաբերության և ծանուցման տեսակները:

Իհարկե, պարզ է, որ սա սպառնիչ թվարկումը չէ թղթի բոլոր տեսակների: Եվ մեր ամենաարդյունավետ բաժանումներն անգամ այս տեսակետից չեն կարող վերջնական ու կատարյալ լինել: Գործի բարդությունն արտահայտվում է նաև այն հանգամանքով, որ միջնադարյան ճառերը, դամբանականները, ներբողականները և առանձին դեպքերում նույնիսկ փիլիսոփայական տրակտատները գրված են նամակների ձևով, որոշակի շարժառիթներով և ունեն համապատասխան հասցեատեր: Ուրեմն ինչպե՞ս վարվել հենց այդ դեպքում, երբ դժվար է սահմանազատել թղթի վերածած այդ նյութը:

Սակայն թղթի ժանրում եղած խառնաշփոթը չի խանգարում ճիշտ գնահատել և մոտիկից ճանաչել Գր. Մագիստրոսի ստեղծագործությունները: Նա գրում է թղթի այն տեսակը, որը ձևախմաստային ներդաշնակությամբ հետևում է ժանրի դասական ավանդներին: Չեն խախտվում թղթի ծավալային մոտավոր սահմանները: Մագիստրոսի թղթին հատուկ

է այն, որ դա իբրև կառույց *«հատակ»* է և իբրև բառային ամբողջություն՝ բարդ:

Բառապաշարի բարդությունը թխում է այն համգամանքից, որ Գր. Մագիստրոսի լեզուն հունաբան հայերենի ամենախրթին տեսակն է: Հունարեն լեզվի շարահյուսական կանոններով հորինված նրա շատ թղթեր, նկարագրություններ ու հատվածներ պարզապես անվերժանելի են մնացել, և հարյուրամյակներ շարունակ ոչ ոք չի կարողացել գտնել դրանց բանալին: Այդ անհասկանալիությունը և արհեստականությունը շատ դեպքերում արված է միտումնավոր կերպով՝ մի դեպքում կիսագրագետ չերևալու համար, մյուս դեպքում՝ *«պատժելու»* իր թղթակցին կամ հակառակորդին: Գիտենք, որ Պաիլալունյաց իշխանի համար թուղթը հոգևոր հաղորդակցության, բարեկամների հետ կիսվելու միջոց է: Երբեմն էլ այն պատրանքը կա, թե նա այդ անում է վարժանքի համար: Եվ դա շատ դեպքերում նաև այդ նպատակով է արված: Մագիստրոսի մոտ խիստ տարածված բառակույտերը Մենեիշյանը կոչում է *«արիստոֆանիզմներ»*²¹:

Գր. Մագիստրոսի նամակներն ունեն նաև այլ կարևոր հատկանիշներ: Ա. Ալեքսանյանն այս կապակցությամբ նշում է. *«Նամակագրական ընդհանրական սկզբունքները ևս Մագիստրոսի նամակներին հաղորդում են կոնկրետությունից շեղման միտում»*²²: Շարունակության մեջ նա նկատում է, որ դրա պատճառը չքեղ նկարագրություններն են, որով հագեցվել է թղթերի գեղարվեստական կողմը:

*«Մագիստրոսի նամակների բովանդակային բազմազանությունը, - գրում է Ա. Ալեքսանյանն այնուհետև, - նրանցում իմաստասիրական ու գեղագիտական հատկանիշների գերառատությունը, աշխարհիկ շունչն ու կատակասեր ոգին գալիս են հաստատելու, որ նա նոր տիպի գիտնական է, հանրագիտակ մի անձնավորություն՝ նա նորովի է ընկալում ու մեկնաբանում հասարակական և մշակութային երևույթները և ձգտում է վերաիմաստավորել ամեն ինչ...»*²³:

Սրանք են Մագիստրոսի թղթերի մի քանի ամենաբնորոշ առանձնահատկությունները ժանրային և ձևաիմաստային տեսակետից:

Թղթոց ժողովածուի գեղարվեստական արժանիքները

Օրերի հեռավորությունից Թղթերը ձեռք են բերել պատմագիտական ան-գնահատելի արժեք: Երբեմն դրանով է պայմանավորվել այն հանգա՝ մանքը, որ նրա գեղարվեստական արժանիքները չեն գնահատվել ըստ արժանվույն: Ուսումնասիրողները գեղարվեստական գնահատման են ենթարկել ավելի շատ Մագիստրոսի չափածոն: Հասկանալի է, անշուշտ, որ դրանք պատմական փաստերի անսպառ պաշարներ են պարունակում, սակայն պատմական, սոցիալական, ազգագրական, մանկա-վարժական և փիլիսոփայական իրենց բովանդակությամբ հանդերձ՝ թղթերը պետք է գնահատել՝ իբրև գրական-գեղարվեստական ստեղծագործություններ: Նրանցում կան հարյուրավոր իմաստուն մտքեր և թևավոր խոսքեր, այսպես. *«Ձառողջութիւնսն անաշխատ միայն հայցեն ընդունիլ, իսկ գիւանդութիւնսն յոգնական ջանիւ հնարին յինքեանս քարշել...»*²⁴ կամ *«Ո՛չ միայն ի տեսակում, այլև յինքեան կրէ իւրաքանչիւր ոք քաջողջութիւնս և խօթութիւնս, քանզի և սոքա ի միում տեսակի յատուկ ներհակին...»*²⁵ և կամ *«...Եթէ որ խօսէր գաղտ զընկերէ իւրմէ, ի բաց հալածել հրամայեալ էր...»*²⁶ և այլն:

Նկատելի է, որ Մագիստրոսն իր բնորոշումներում կարողանում է հասնել տվյալ անձի կամ երևույթի ամենատեական հատկանիշների բացահայտմանը: Ինչպես. *«Եւ Պղատոն ի Սիկիլիայ վաճառեալ, թեպէտ և պատճառեն Եպիկուրեանքն սակս խրախճանութեանն չոգալ: Սոկրատես մեռանի սակս համբակացն դիտողութեան և ի կատական հեզմաբանութիւնսն»*²⁷: Ուզում է ասել, թե որքան անհեթեթ է Պլատոնի Սիցիլիա քշվելը և Սոկրատեսի մահապատիժը: Հունական հասարակությունը՝ այս դեպքում ամբոխը (խուժանը), մեծ փիլիսոփաներին կարողացավ չեզոքացնել: Գրողը դա դիտում է կյանքից վտարելու փաստ՝ ակնարկելով իր և Պետրոս կաթողիկոսի վիճակը: Պրա մեք տեսնում է մտքի կուրություն: Պահլավունյաց իշխանը կարողանում է գրավել ընթերցողին:

Անգամ այն պահին, երբ թվում է, թե դրությունը չի կարելի փրկել, և խորտակված են մարդկային վստահության ամենահզոր սյուները, նա վճռականորեն կանգ է առնում. *«Ժողովեցան յիս տանջանք և ոչ*

զղջացան, փորձեցայ արհամարհանօք և այլև արարեալ կրճատեցին ի վերայ իմ զատամունս: Տէր, ե՞րբ տեսցես, ի բաց արա զմիամօրութիւն իմ ի խորամանկութենէ նոցա, և ի խորագոյնն վարեալ հանդիսի, որպէս յարի անդ...»²⁸: Իր թշնամիների դեմ այլևս ոչ մի երկրային պաշտպանություն չգտնելով՝ Մագիստրոսը աչքերը երկինք է հառում Տիրոջից հայցելով այնքան ցանկալի աջակցությունն ու փրկությունը: «Միայն առ Տէր համբարձեալ զաչս, ակն ունելով ուստի եկեսցէ ինձ օգնութիւն», - գրում է նա:

Համատիեզերական ողբերգականությամբ Մագիստրոսն ընդառաջ է գնում իր դժբախտ ճակատագրին: Առնելով Վահրամ սպարապետի մահվան բոթը՝ նա ականայից սկսում է «շաղ տալ» իր շուրջ զգայացունց մակդիրներ, որոնք այնքան գեղեցկացնում են նրա ողբը. «Հի՛նչ զքոյդ ասացից ողբերգական, հայր, արի իբրև գՅեսու քաջամարտկութեամբ յոքնախուժք ճակատամարտս հրաշից արժանացեալ դիւցազնական ընդ քոց հաւոց, որ և ոչ Արտաշէսն այն երկայնածռն, կամ որ նախ քան զայսոսիկ Արշակ, որ և նորայն նմանապէս գեղոյն և ամենայար նման հասակաւ, գեղեցկապարանոց և չքնադադէմ տեսեամբ որպէս Արայն մեր և Անուշաւանն Սաւսանուէրն Արայեան, մաքուր վարուք և ողջախոհութեամբ յանգեալ ըստ քումն նախնւոյն մերոյ, Գրիգորի Լուսաւորչի և Ծնողի, հայրենասէր և աշխարհաշէն ըստ մերոյն Արամայ. քաջահամճար և ուշեղ, իմաստուն և խոհեմ, հեզ և հանդարտ, արդարադատ և անաչառու, առատ և իմաստուն և խոհեմ, հեզ և հանդարտ,անոխակալ և անյիշաչար, անապատասէր և կրօնաւորասէր, և ամենայն բոլոր բարերաց օթեան...»²⁹:

Մագիստրոսը համադրելով ամենաբնորոշ գծերը՝ կարողանում է ամբողջացնել ցանկալի կերպարը և կենդանացնել պատկերը: Ունի նուրբ զգացողություն ու նուրբ գրիչ, որն աչքի է ընկնում իր շեշտակի թափով ու գունեղ նկարագրությամբ: Հատկանշական է, որ նա սիրում է բառերի ու պատկերների «մրրիկը»: Երբեմն երևակայորեն դժվարանում ես պատկերացնել, թե դա գեղարվեստական ինչ հնարանքներով է կատարվում. «Քեզ /Վասակ Պաիլավունուն –Ս.Ս./ այսպէս վայելէր թագաւոր և յայսպիսի պաղատան ճեմել, յայսպիսի խրախճանությամբ խրախճանալ, յայսպիսի հայրենիս ստանալ, յայսպիսեօք գանձօք փարթամանալայսպիսի կառօք կառամարտել, յայսպիսի ծիրնբացս արշաւել, յայսպիսի ստադինս բազմել, յայսպիսի մրցումն տեսանել,

այսպիսի փողահարօք և թմբկօք ճոխանալ, այսպիսի որսօք զքօսնուլ, այսպիսի բաղանեօք մաքրիլ. քոյովդ ջերմագոյն արեամբ ի քունդ սպառազինեալ և հանդիսացեալ անձին այսպիսի հօր ըղծացեալ լինել որդի...»³⁰:

Բանաստեղծական գողտրիկ պատկեր է ստեղծում գրողը: Հռետորական հարցումներն ու համեմատությունները կենդանացնում են պահը և իրերին զգացմունք և շարժում հաղորդում: Շատ է գրվել մեծ զորավարի մասին, բայց այստեղ է կերտվում հայոց տան նահապետի, հանճարեղ զորավարի, մեծ հայրենասերի ու սքանչելի մարդու կերպարը: Գրիգորը խիստ ցավում է ու ափսոսում, որ չի կարողացել վերջին անգամ տեսնել և որդիական իր պարտքը նրա առաջ կատարել: Արտասվել է Սեծ իշխանը, և հոգու աղբյուրներից ցավի ու կսկիծի վտակներ են հոսել: Գրողը պատկերացնում է, որ Վահրամիս դիմավորելու են գալիս իր նրջանկահիշատակ Գրիգոր պապն ու Շուշան տատը: Իսկապես հիանում են՝ ռազմի դաշտից վերադարձող սքանչալտեսիլ Վահրամի և մոր սրտառուչ գրկախառնումը տեսնելով:

Սոռանալով, որ իր թուղթն ուղղված է Հովհաննես Սյունեցուն՝ Մագիստրոսը մետամորֆոզի մեջ դիմում է հորեղբորը, խոսում նրա հետ, անվանում «ակն տունջեան» և ներումն խնդրում, որպես սուրբ նահատակի, որը բարեխոսել կարող է Աստծու մոտ. *«Արդ որպէս մերծ եղելոյ առ քեզ կենդանի ընդ քեզ խօսելոյ, այսպէս համարձակապէս ըստ քում քաղցր և հեզահայեաց հանդարտութեան լուր ինձ և քարեխօսեա, որում սպասեցերդ և յորմէ պսակեցար, թողութիւն յանցանաց իմոց և ուղղափառ խոստովանութեամբ և հայրենի կրօնիւք արժանի լինել յուսոյ կենացն յաւիտենից»*³¹:

Գրիգոր Մագիստրոսը տառապող անձնավորություն է, ընտանիքի և պետության ճակատագրով մտահոգ, մշտագրադ և հոգաշատ մարդ: Կատակերգականի և ողբերգականի, չարի ու բարու, իրականի ու անիրականի բևեռներում մաքառում է նա՝ 11-րդ դարի բանաստեղծը, իմաստասերը և զորավարը: Զկարողանալով երբևէ ազատվել իրեն բաժին ընկած կյանքի հարատև բարդություններից՝ Մագիստրոսը դուրս է գալիս ճակատագրի դեմ, պայքարում հանում արդարության: Եվ քանի որ նա իր համար պարզել է, թե երբեք ինարավոր չէ խուսափել կյանքի հարատև դժվարություններից, այդ իսկ պատճառով գտնում է, որ պետք է արդարացի ու ճիշտ ապրել և ունենալ կատարյալի նկատմամբ մեծ

ծագում: «Քանզի զի՞նչ օգուտ մեզ երկարութիւն ամաց, և մեծագոյն բարկութիւնս և զտառապանս կրել և տեսանել և ի վերայ յոքունց առնուլ ողբս և զնոցայն ցաւակցել. վասն զի իմ է բոլորիցն բեկումն, և այնպէս յափշուքեան շանանդադեալ մտածութեամբ միզապէս նսեմացեալ, մթին և խաւարչտին խորհրդովք կեամ խափուցեալ, և միայն մորմոքիմ, ոչ տեսանելով զելս իրացն...»³²:

Այս բոլորով հանդերձ Մագիստրոսն ունի կյանքի սեփական իր կատարելատիպը: Դա 11-րդ դարի իդեալի մագիստրոսյան հայտնագործումն ու վերամարմնավորումն է: Եվ, իհարկե, հայտնագործումը, որովհետև դա է դառնում տվյալ դարաշրջանի ամենաբնորոշ առանձնահատկությունը: Միանգամայն ակնհայտ է, որ այդ դարաշրջանում իդեալականացվում էր Փրկչի կերպարը: Ծիշտ է, այդ կերպարը պատկերվում էր նաև նախորդ դարերում, բայց այժմ էականորեն փոխվում էր հարցի նկատմամբ հեղինակային մոտեցումը և դրվածքն ընդհանրապես: Որդու կերպարի մեջ դրվում էին մարդկային գծեր և հարստացվում այնպիսի թարմ գույներով, որ կորցնում էր իր անմատչելիությունը: Մարդը փորձում էր Աստծու հետ անմիջական հաղորդակցության մեջ մտնել, մաքրվել մեղքերից և ձգտել փրկության: Դա մի դեպքում անծի ֆիզիկական, մյուս դեպքում՝ հոգեկան փրկության պատկերացումն էր: «Տէր Աստուած իմ, - գրում է Մագիստրոսը, - ի քեզ յուսացայ, փրկեա զիս և ի բոլորն հալածչաց իմոց ապրեցո՞ղիս ... և արի՛, Տէր, օգնեա ինձ, զարթիր, ընդէ՞ր ննջես, և առ զգէն զասպար քո և արի յօգնել ինձ»³³:

Թ. Ռոսլինը և մյուս հայ վարպետները 2-3 դար առաջ են ընկնում իտալացիներից և համաքայլ են բյուզանդացիների հետ: Սա այն առանցքն է, որի շուրջ սկսվում է պտտվել հայկական վաղ Վերածնության շարժումը: Այդ կարծիքը կիսում են նաև արվեստի տեսաբանները. «Ջոտտոյին նախորդող, հետևաբար Թորոս Ռոսլինին ժամանակակից իտալական վարպետների մոտ կերպարների շարժումները կաշկանդված են, նրանք պակաս հուզական են, և մոնումենտալ հորինվածքների դեպքում գործողությունն էլ դառնում է անշարժունակ: Բոլոր գործող անձանց փոխհարաբերությունները և նրանցից յուրաքանչյուրի նշանակությունը, որ ամենուրեք այնպիսի պարզությամբ է տալիս Թորոս Ռոսլինը, իտալական վարպետների մոտ մինչև 14-րդ դարի սկիզբը բոլորովին բացակայում է»³⁴:

Վերածնության շարժումը, սակայն, մեխանիկական ու պարզ մի գործ-

ընթաց չէ, որ իր տարբերություններն ու յուրահատկությունները չունենա ազգությամբ և միջավայրով տարբեր ժողովուրդների մշակույթներում, ինչպես որ պարզ իմաստով հասկանալ վերածնություն և աշխարհակա-նացում հասկացությունների իմաստները՝ ամենաքիչը միամտություն կլինեն: Դրանք արտահայտության ձևով և իրենց բովանդակությամբ բարդ են ու հակասական: Հարցն այն է, որ, օրինակ, Գր. Նարեկացու ստեղծագործություններում պարզ իմաստով աշխարհիկ տարրեր փնտրելը միանգամայն անպտուղ մի բան պիտի լինեն: Մանավանդ որ՝ նրա մոտ գերակշռողը քրիստոնեական գաղափարաբանությունն ու թեմաներն են: Ուրեմն ի՞նչ կապ ունի նա այս ամենի հետ: Պատասխանը միանշանակ է. Գր. Նարեկացին հեղաշրջում է հայ բանաստեղծությունը նրանով, որ ամբողջապես ներթափանցում է մարդկային զգացմունքների ոլորտը: Բանաստեղծական հույզը դառնում է ներշնչանքների սկիզբ: Բացահայտելով այդ զգացմունքների հարստությունը՝ նա դրանց համար բազմաթիվ երանգներ է գտնում: Խոսքը հագնում է զգացմունքների գերառատությամբ: Շարունակաբար և շռայլորեն պեղելով իր հոգու գանձարանը՝ նա իրեն տեսնում է սարսափի ու ուրախության, անկման և վերելքի, մահվան և հարատևականի համապարփակ տիրույթներում: Իսկ դա բանաստեղծության մեջ աներկբայորեն նշանակում էր մարդու «մեռած» զգացմունքների վերածնունդ և վերակենդանացում: Դա սե-փական եսի նորովի հայտնագործումն էր, նրա համատիեզերական ընկալումը: Ոչ ուղղակի իմաստով դա խոսք էր կյանքի աշխարհիկ հոգսերի ու աշխարհիկ «մեղքերի» շուրջը:

Գր. Մագիստրոսի մոտ աշխարհիկ պատկերները միանգամայն բաց են ու անկաշկանդ: Վերածնության տարրերը միայն պատկերներում չէ, որ պիտի երևան, այլ նաև գեղարվեստական իդեալի մարմնավորման մեջ, քանի որ դրանով են բնորոշվում այս կամ այն ժամանակաշրջանի ամենաբնորոշ խնդիրները, ընդհանրություն մտցնում իրերի և երևույթ-ների միջև: Հատկանշական է, որ իր անառարկելի նվաճումների շնորհիվ քննտիկ մշակույթը սեփականվեց մարդկային հետազա սերունդների կողմից: Առաջին քայլերն այս ասպարեզում կատարեցին Վերածնության մեծերը: Դա միանգամայն բնորոշ է նաև հարևան ասորական, եթովպիա-կան, հնդկական, պարսկական և իսլամական մշակույթին լավատեղյակ Գր. Մագիստրոսին: Նա քննադատական վերաբերմունք ունի դեպի իր դարի արատները: Այսպես. «Այժմ վաճառաշահությամբ ոք հաճոյացի

կեալ. և եթէ ոչ այսոքիկ, զի՞նչ և կեալն դիւրութիւն. կամ ախորժակս երկարել ծիգ ամօք և արբանեկել որովայնի միայն և զքաղմանց բազմապատիր և յօգնասնոտի տարբերութեամբ ի փոփոխական և ի դառն տղմատիպ մեղկեալ հտպտանօք և շռայլութեամբ գյաղթելն միմեանց, որ ոչ ոք գծայրանալն եզոտ յանգական հասմամբ և բաւականացեալ հանգեաւ հեռասոյգ կուտակման կոհակաց...»³⁵:

Եվ մյուս կողմից՝ նա բնավ չի ժխտում կերուխումը և շռայլությունները: Խրախճանքն էլ իր կարևոր դերն ունի մարդկային կյանքում: Միայն թե այն էլ պիտի իր իսկական նպատակին ծառայի: Թոռնիկ Սամիկոն-յանին ուղղված ԴՂ թուղթը դա է հաստատում: Սկզբում խոսում է պարսկական խորտիկների, Զեփեստոսի կողմից շամփրված և խորովված կերակուրների և այլնի մասին: Այնուհետև փեսային զգուշացնում է, որ իրեն պարմենիոյան շան օրը չգցի և չթողնի սոված և ցանկալի կերակուրը չհամտեսած. «Որ ի կամուրջն ելեալ և կող ի բերանն իւր կալեալ, գստուերն-ի գետին տեսեալ, տենչայր ըղձացեալ այնմ հասանել, ի բաց ընկեցեալ և յստորս վազեալ, և ոչ այնմ հասեալ, նքթեալ հոլովիւր ի գետնն»³⁶:

Այսպիսի ազատ մտածողությունը բնորոշ է միայն աշխարհիկ մարդուն: Առակական խոսքի միջոցով հեղինակը հասնում է խոր ընդհանրացումների, տալիս իրավիճակի ամենաբնորոշ բնութագիրը: Սրանով նա կրկին հաստատում է թե՛ իր հավատարմությունը այլաբանական խոսքի հանդեպ, թե՛ ցույց տալիս իր կապը անտիկ մշակույթի հետ և թե՛ վերջապես նկարագրում դարաշրջանի կյանքն ու կենցաղը:

Գր. Սագիստրոսն ըստ թղթերի

Պահլավունյաց մեծ իշխանը բացի նշանավոր գործիչ լինելուց՝ նաև անձնական կարևոր հոգսեր ունեցող մեկն է։ Այդ հոգսերը ոչ պակաս նշանակալից են, քան պետական և քաղաքական անհետաձգելի գործերը։

Սագիստրոսն անձնական կյանքում բժբախտ մարդ է, թեև շատ հեռու է լավկայնությունից։ Գիտենք, որ երիտասարդական հասակում է կորցրել հորը, բայց ոչինչ չգիտենք նրա մոր մասին։ Այդ կապակցությամբ թղթերում պահպանված տարօրինակ «լռությունը» ենթադրել է տալիս, որ տակավին ամենավաղ մանկությունից նա զրկվել է մայրական խնամքից ու հոգատարությունից։ Դա ինչ-որ չափով հաստատվում է այն իրողությամբ, որ Վասակի ընտանիքը շատ փոքր էր՝ (ունեի ընդամենը երկու երեխա)։ Դրա մասին է խոսում նաև Սագիստրոսի՝ իր մանկության հիշողություններին համարյա չանդրադառնալը։

Երևում է, որ նրա մանկության մի մասը Սանահինի վանքում է անցել։ Այդ մասին շատ սրտառու է հիշողություններ ունի և գրում է. *«Արտօսը և կականումն ոչ սակաւ հասեցուցանէի, արտասորեալ իբրու ի վտակաց աղբրից ի ստորակայեալ երախանաց. որ և յերկիր ծովացեալ ծորմանն ծաւալէր շիթս. յիշելով գհայրական ծերոցդ ծայրագունից խնամս առ մեզ և խրատ և ողորմութեամբ բարեկարգութիւնս, և զերիտասարդացն, որք ի վարժարանսն, հռետորական և երաժշտական զնոցայն զմտաւ ածեալ հանդէս և զմրցումն և զգեղեցիկ մուլութիւնս և զմանկանցն սաղմոսերգութիւնս քաղցրածայնուամբ վերառեցեալ...»³⁷։*

Այսպես է հիշում իր ուսուցիչներին Սագիստրոսը՝ այդ վարք ու բարքի, ճգնակեցության, ցրտի ու տապի մեջ իրենց կյանքը մաշող հանճարներին, որոնք իրենց հավասարը չունեն սկյութների ու թեբեացիների մեջ անգամ։ Պարզ է, որ կարճատև արձակուրդների ընթացքում նա մշտապես այցելել է հորեղբորը՝ Վահրամին, շարունակաբար խաղացել նրա երեխաների հետ։ Սագիստրոսը նրան հայր է անվանում։ Խիզախ սպարապետը չի զլացել Գրիգորին ևս վարժեցնելու զինվորական արվեստի գաղտնիքներին։ Որպես իշխանագույն երիտասարդ՝ Գրիգորը նաև զինվորական կրթություն պետք է ստացած լիներ։ Գումարած դրան և այն, որ վաղաժամ զոհված Վասակ Պահլավունին էլ ռազմական

տաղանդ էր: Հոր մահվանից հետո Մագիստրոսը կորցրել է ծնողական իր վերջին սփոփանքը: Երջանիկ չի եղել մահ որպես հայր, քանի որ մանուկ հասակում են մահացել երկու որդիները՝ ցավ ու կսկիծ պատճառելով նրան: Պակաս դառնություն չեն պատճառել նրան 1043 թվականից իր դեմ սկսած հալածանքները, իր հարկադրական հեռացումը Հայաստանից դեպի բյուզանդահպատակ Տարոն և հորեղբոր եղերական մահը: Անհաջողությունների ու դժբախտությունների այդ անվերջանալի տարափը հետապնդել է Պահլավունյաց մեծ իշխանին մինչև իր կյանքի վերջը:

Սակայն, այնուհանդերձ, մահ չի կորցնում հավատը բարու հաղթանակի հանդեպ և հոգու արիությունը: Դա իր ցայտուն արտահայտությունն է գտնում նրա աշխարհայացքում: Կրկին առնչվում ենք փրկության մագիստրոսյան ձևակերպմանը. *«Յորժամ տեսնես զնշան խաչին, երկրպագես, յիշելով, որ վասն քո խաչեցաւ Յիսուս Քրիստոս, տեսցես զքեզ ընդ նմա խաչակցեալ, և ի բաց դիցես զամենայն կենցաղական մտածութիւնս...»*³⁸:

Մագիստրոսը կյանքի մարդ է: Որքան էլ որ մահ ձգտի խստակենցաղ կյանքի, այնուամենայնիվ, մնում է լիարժեք կենսասեր մարդ: Այս տեսակետից առատ նյութ է տալիս 10-րդ դարի հեղինակ Ամանուն Զրուցագրի Պատմությունը³⁹: Հայ կյանքի Վերածնության շրջանի մի իսկական բուկաչոյական նկարագրություն է այն, ուր հանդիպում են կնամուլ, գինեսեր և ռազմատենչ մարդիկ: Օրինակ՝ Գրիգոր Դերենը մսխում է հորից ստացած հարստությունը և Վանի *«մեյտանում»* նստած կեր ու խումի ընկեր փնտրում: Երբ սպառվում է իր հարստությունը, վաճառում է՝ սկզբում ծառայի ծին, իսկ հետո՝ մտադիր է իր ծին ու զնեքերը վաճառել, որպեսզի դարձյալ իր սեղանը հյուրերի համար առատ լինի: Երկի այս դրվագը շատ մանրամասներ ունի կապված Բաղդադի մեծ իշխանի հետ Դերենի հանդիպման, նրանց մտերմության և այնուհետև վերջինիս օգնությամբ Դերենի՝ իր նախկին դիրքին հասնելու պատմությամբ: Առանձին մանրամասներ կան կապված հայտնի քաջ Տաճատ Ամենացի իշխանի կյանքի և գործողության մասին:

Սրա թո՛ւ՝ Աշոտի որդի Դերենը *«աչքի»* է ընկնում կենսասիրությամբ: Պատմիչը վկայում է. *«էր Դերենն այն կնկասեր»*:

Սմբատ Տիեզերակալի քրոջ Հրանուշի հետ ամուսնացած այս իշխանը բացահայտ կապ է պահպանում Ապունդան արաբ իշխանի

դատեր՝ Քուլինարի հետ: Գործին չի օգնում Սմբատի միջամտությունը և զգուշացումը՝ թողնել զեղեցիկ Դրանուշին և չարատավորել իր պատիվը՝ այլազգի կնոջն այցելելով: Բայց ոչ միայն դա: Դերենը ենթակա բոլոր ազատների կանանց *«ապականել»* էր, ինչպես հիշում է Սմբատն իր թղթում: Իսկ նամակի զգուշացումների ու սպառնալիքների կապակցությամբ Դերենը կոպտորեն պատասխանում է. *«Իմ տանս տէր եմ ու իմ կամացս. զոր սիրեմ, զայն առնեմ, թէ չես հաճիլ դու ուղարկել ու առ զքոյրն քո, եթէ ոչ ես ուղարկեմ առ քեզ»*:

Նկարագրությունները, մարդկային հարաբերություններն ու զրույցները, ազգամիջյան և կրոնական հարաբերությունները հյութեղ են և աչքի են ընկնում վիպական պատումի ռեալիստականությամբ: Հարկ է ասել, որ Պատմության շատ դեպքեր ու հերոսներ, միաժամանակ նաև սյուժետային առանձին կարևոր գծեր ընկել են մեր էպոսի հիմքում և պայմանավորել նրա հետագա ձևավորումը: Կամ, ավելի ճիշտ՝ արդեն 10-րդ դարում պատմվող բանավոր այդ զրույցները քաղված են էպոսը նախապատրաստող սյուժեներից: Երկի ամբողջ երկրորդ մասը վիպական ուժելային բովանդակություն ունի: Դերենի կերպարը հիշեցնում է Մեծ Սիերին, որը վերջինիս պես մեկնում է օտար կնոջ մետ և երկար ժամանակով չի վերադառնում:

Էպոսի, Անանունի Պատմության միջավայրի, սոցիալական և աղանդավորական շարժումների, Կոզեռնի Տեսիլի և ստեղծված քաղաքական ծանր կացության հենքի վրա մենք տեսնում ենք 11-րդ դարի մարդուն ու մտածողին: Համարյա մշտապես Մագիստրոսը մասնակցել է զինվորական ծանր երթերի, ճակատամարտերի ու պատերազմների: Մի խոսքով՝ եղել է կյանքի և մահվան սահմանագծին մոտ: Սյոլպիսի մի դրվագ է նկարագրում Մ.Ուռհայեցին, երբ գրում է Բջնիի 1042թ. ճակատամարտի մասին, որը ղեկավարում էր Գր. Սագիստրոսը. *«Տեղի ունեցավ կատաղի ճակատամարտ, և հայոց զորքը հաղթեց պարսից զորքին, Հուրաստան /իմա. Դրագդան - Ս. Ս./ գետի ափին մեծ ջարդ տվեց և թուրք զորքերի հրամանատարին զերեց»*⁴⁰:

Սա նշանակում է, որ ռազմական գործը նրա կյանքի մշտական և անբաժանելի ուղեկիցն է եղել ու նա չի կարողացել երբևէ դադար առնել իր մյուս գործերով զբաղվելու համար: Բյուզանդական կայսրերի աչքից ևս չի վրիպել նրա մեծ տաղանդը, և նա ստիպված է եղել անգամ առաջացած տարիքում զինվորականի զգեստներ կրել:

Նա կյանքի մարդ է՝ համառ ու բռնկուն: ԽՇ թուղթն, օրինակ, կարծես միայն գիտական բանավեճ չէ Կիրակոսի հետ: Նկատում ենք, որ Սագիստրոսը կրքոտ հակաճառում է, քանի որ այդ հույնը ոչ հունական ամեն ինչ քամահրում է ու արհամարհում: Որպես հայ մարդ, նա իրեն վիրավորված է զգում: Եվ *«խայթելու»* համար այդ կիսագրագետ ու անտաղանդ մարդուն՝ նրան դիտողություններ է անում ու խորհուրդ է տալիս *«գիտելիքների պակասը»* լրացնել ծեր հասակում. *«... եթե կամեսցիս ի ծերութեանդ զմանկականն և այժմ ուսանել, ընթերցցիս զմատեանն երրորդ Գաղիանոսի ի չորրորդում տառի իւրում եպիդիմիական տիմին տրամաբանութեան, որ ի սակս կազմութեան մարդոյ, և զՍիսալիոսին, որ յառաջնունն մատենի ի բաղկացութիւն սերմնառութեանն ցուցանէ յիւրունն յայտարարական մատենին...»*⁴¹: Իսկ եթե այդ ամենի մասին համառոտ տեղեկություններ են իրեն պետք, ապա թող Գրիգոր Նյուսացու մատյանները թերթի:

Գր. Սագիստրոսը զայրացած է, որ այդ պարծենկոտ մարդը արհամարհում է հայ և օտար ժողովուրդների ներդրումը գիտության և արվեստների բնագավառում: Նա այդ ամենը հույն դպրի երեսին է շարտում՝ գրելով. *«Մեր ոչ է տվորութիւն գողաբար զայլոցն իմաստասիրութիւն խորթս մեզ ստեղծանել, բայց սուղ ինչ գտարախոհութեան քո անտեղութիւն յայտնեցից քեզ»*⁴²:

Եվ Պաիլավունյաց մեծ իշխանը հանգում է մի շատ կարևոր և, աշխարհայացքային տեսակետից ելակետային հիմնադրույթի: Նա շեշտում է, որ մշակույթների ու ժողովուրդների կապերն ու փոխառնչությունները պարզապես անխուսափելի են: Եթե բանն այնտեղ է հասել, որ հույներն իրենց ձեռքբերումներով պիտի պարծենան, ապա չէ՞ որ նրանք շատ բան վերցրել են օտարներից և պարտական են նրանց: Ուրեմն այդ նախորդներն էլ պետք է իրենց հերթին պարծենան հույներից առաջ և այդպես շարունակ:

«... Ձի՞արդ զմէջ ոմանք կասկածեն յիմաստնոց ծերոց իբրու թէ թարգմանեալք ի մէնք, զի՞արդ, հզօրագու ՚յն ելով քան զմեզ: Ասեմք, առ այնոսիկ, եթէ այսոքիկ ոչ իրաւացի տարակուսանս զտեղի կալցի առաջի մեր, քանզի թարգմանեալք ի Պտղոմէոսէ ոչ ի Յոյնս գտեալ էր զամենայն, որպէս և Յոյնք յերբայեցւոց և ի Քաղդէացւոց և յեգիպտացւոց և յեթովպացւոց, քանզի առ Յոյնս յուսումնականէն միայն յատուկ երաժշտականն բնաւորեցաւ և զայլսն յայլմանէ թարգմանեալ և

ժողովեալ, - գրում է նա: Եվ պաշտպան կանգնելով մեր մշակույթին ու նրա մեծերին Մագիստրոսն անսպասելիորեն և հողմացրիվ կերպով քննադատում է հելլենական մշակույթը, որի ամենամեծ սիրահարներից մեկն է ինքը, - Իսկ մերոցն արիական արանց և առաքինասէր իմաստուցն թուի ինձ եթէ յոյժ յայթօղ եղեալք ամենայն արհեստից և մակացութեանց, որ վեհ ինձ նոցա համարիմ ելոյ, քան գյոքունցն շփոթանաբութեան ձերոց ելլենական կարծեցելոցն»⁴³:

Գր. Մագիստրոսը չի ուզում շփոթել ամբողջ մարդկության ստեղծածը հունականի հետ, քանի որ հունալեզու ամեն ինչ չէ, որ հույների ստեղծածն ու հայտնագործածն է: Դրանց մի մեծ մասն էլ մյուս ժողովուրդների ջանքերի արտահայտությունն է: Իսկ թարգմանել հարևան ժողովուրդների լավագույն երկերը՝ նշանակում է քայլել առաջավորների հետ: Դա նշանակում է նաև՝ ճանաչելով մյուսներինը, գնահատելով, դրան տալ և ավելացնել սեփականը: Իսկ այս հայացքն այսօր էլ գործում է ու գիտական: Մագիստրոսի կարծիքով հայերը հետին տեղերում չեն համաշխարհային մշակույթին տված արժեքներով:

Մարդկանց միջև կապը մշտապես պայմանավորված է մտքերի փոխանակությամբ: Նամակագրական կապը դրան ավելացնում է նաև տարբեր կարգի հաղորդագրությունները, լուրերը, հայտարարությունները և այլն: Ընդունված կարգ է եղել նամակի հետ միաժամանակ առաքել որոշ նվերներ: Այդ նվիրատվությունները բարեկամների միջև մտերմության և հոգատարության նշաններ էին: Բայց ամեն ինչ չէ, որ կարելի էր նվիրել, այլ միայն առանձին առարկաներ: «Մագիստրոսի թղթերում վկայակոչված նվիրատվությունների առարկաների տեսականին հիմնականում համընկնում է բյուզանդական նամակագիրների կողմից թղթերին կցած բազմազան նվիրատվությունների տեսականու հետ»⁴⁴, - գրում է Ա. Ալեքսանյանը: Նվերների տեղափոխման հետ կապված դժվարություններն են նկարագրում հեղինակները, և դա առանձին թեմա է նամակագրական ժանրում: Իսկապես էլ՝ Մագիստրոսի նամակներում այդպիսի նվերները բավական շատ են. զինի, ձուկ, կաթսա, գավազան, նուռ, գուշ, մատյան, կնիք և այլն: Կան նաև դրանց առաքման ու ստացման հետ կապված ճանապարհների դժվարությունների նկարագրության տեսարաններ. «Այլ կամէի և կամիմ ձիր և ընծայ ինչ սուրբ ուխտիդ առաքել, - գրում է նա Սանահինի իր բարեկամներին, - որպէս պարտ է ճշմարիտ հարազատի ձեր և եղբօր... Սրբոյ խաչին ի մեզ մարդ

եկեսցէ, և մեք զկնի նորա մինչև ի Սարմաշէն առաքեմք»⁴⁵:

Սոսթենեսին ուղղված խԳ նամակում դարձյալ խոսք է գնում նվերների մասին: Մագիստրոսն ստացել է ուղարկված նվերը, իսկ ինքը քիչ ավելի ուշ իրենը կառաքի. *«Այլ ի ժամանակիս խոռվութենէ և ի ճանապարհիդ աւերմանէ ոչինչ առաքեցի քեզ այժմ, բայց սակաւ մի ծիր ինչ, զորոց անուանս իմով ծեռամբ նկատեալ ընթերցցիս, և այնքան պահանջեսցես ի բերողէդ»⁴⁶:*

Հասկանալի է, որ հոգեկան կապի միջից լինելուց բացի՝ նաև ժամանցի միջոց է առաքվող թուղթը և հետևաբար՝ նվերներն ու նրանց առավելությունների մանրամասն նկարագրությունը ևս: Այսպես, *«Աւաղիկ առաքեցի քեզ զոշ գեղեցիկ, գերունակեալ, յենթակայէն, ճախարակեալ մանուածոյ, այլ մեծ քան զսանսն Թեսպոդեան, մակաւստար է և սանին Ափոռոդիտեայ...»⁴⁷:*

Կամ՝ *«Աւաղիկ առաքեմ աւետաբերական տառ, տրամակայեալ յինքեան յոքնաբեղունն քարգոնական կնիք յազնուականէն Արաբացոց, յապարանէն արքունի, պերճ և պաճուրճ մակագրեալ, տարակայացեալ և ստորագրեալ կայծանիշ ատորոտական կարմրակերտ մելանաւն գիծ թագաւորական, անթառամի և անթորելի երբէք»⁴⁸:*

Սեփական նվերների այս գեղեցիկ նկարագրություններին հաջորդում են իր կողմից ստացվող նվերների առավելությունների *«Ժխտման»* և *«արժեզրկման»* պատկերները, երբ, իհարկե, դիմացինը ցածր դիրք ունեցող մարդ է: Այդպես է սկսվում Բջնու Եփրեմ եպիսկոպոսին ուղղված թուղթը. *«Ընկալայ զնոռնս ոչ ի կաթլացն կարծեցելոցն արեմէ Դիոնիսեայ...»⁴⁹:*

Դժգոհ է, որ դրանք այն կարմիր նոները չեն, որ ինքը կուզենար ստանալ:

Մի խոսքով՝ Մագիստրոսի սովորություններն ու անձնական հակումները բազմազան են: Նա և՛ հոգատար հայր է, և՛ հոգատար ուսուցիչ, և՛ իմաստուն մարդ: Առօրյա կյանքում էլ նույն վեհանձն ու պատկառելի մարդն է, ինչպես որ գիտության մեջ և պատմության էջերում:

Նա մեզ պատկերանում է որպես զգայուն, սրամիտ և մեղմ մի անձնավորություն:

Բանահյուսական նյութը թղթերում

Գր.Մագիստրոսի թղթերն աչքի են ընկնում նաև բանահյուսական նյութի առատությամբ: Այդ նյութը տարասեռ է և բազմաբնույթ: Այն բաժանվում է մի քանի խմբերի.

1. Հունական դիցաբանություն և առասպելներ՝ քաղված բազմաթիվ գրավոր և բանավոր աղբյուրներից.
2. Մյուս, հարևան ժողովուրդների առասպելներ, առակներ և դիցաբանություն /արաբական, պարսկական, հնդկական, եթովպական, քաղդեական, ասորական, հրեական և այլն/.
3. Հայկական դիցաբանություն և առասպելաբանական նյութ՝ քաղված Ազաթանգեղոսի, Խորենացու Պատմություններից և այլ աղբյուրներից, այլ խոսքով՝ ավանդական բանահյուսություն.
4. Իր ժամանակի հայկական իրականությունից վերցրած բանահյուսական նյութ կամ այսպես կոչված *«ի գռեհիկս պատմեալ»*:

Խոսելով հունական դիցաբանության և առասպելների մասին, պետք է ուղղակիորեն ասենք, որ դրանք սփռված են Մագիստրոսի համարյա բոլոր նամակներում, և դժվար թե հնարավոր լինի առանձին-առանձին դասդասել և խմբավորել դրանք: Այդ նյութերը գեղեցիկ շարադրանքով և թղթերում տեղին օգտագործված լինելով՝ լրացնում են հեղինակի միտքը և բացահայտում ասելիքի նությունը:

Իրենց թեմաներով այդ գրույցները մերթ երաժիշտների ու երաժշտության մասին են, մերթ ծառերի, մերթ հին հունական աստվածների և մերթ էլ Հունաստանի տարբեր շրջանների բնակչության բանավոր գրույցների ու կենցաղի: Համարյա միշտ Մագիստրոսը կարողանում է մի որևէ այլաբանությամբ կամ զուգահեռով սկսել և ավարտել իր խոսքը: Ահա մի օրինակ, ուր հանդիպում ենք առասպելների շարքի. *«... Ընդ Ապողոնի թռուցեալ երթայց է Կրիտ սակս աւետեացն հօրն Արամագդայ. կրկին թագաւորելոյ իջելոյ յերկնուստ: Կամ զԱռոքրոսին ի Պառնասոս երթվարաւն վազեալ: Գիտեմ և Զբիւրասպի ի լեռան Դարաւանդ, որ է Կենտոռոսն Պոիւդեայ: Ոչ մոռացայց զՍպանդիարն ի Սաբալանին կալով լերին, կամ զմեր Արտաւազ ի ծայրս Այրարատեայ ի Սասիքոհն»⁶⁰:*

Գր. Մագիստրոսին հատուկ է մի քանի վրձնահարվածով գծել

պատկերը և կերտել կտավը: Սովորաբար նրա գրելու այդ եղանակը ցույց է տալիս, որ նրա մամակագիրներն էլ ամբողջովին իմացել են նյութի մանրամասները և ինքը մնացածը թողել է նրանց երևակայությանը: Նրա այդօրինակ թղթերը հիմնականում ուղղված են համեմատաբար ավելի կիրթ ու գրագետ մարդկանց: Եվ Սազիստրոսի բարդ ոճ բանեցնելն այս դեպքում սկզբունք է, ոչ թե պարզ խոթնաբանություն:

Սեօ մասամբ նա «*իմաստասիրում*» է կամ բանավիճում՝ երբեմն էլ ուզենալով «*ցույց տալ*» իր իմացությունը: Եվ սկսում է ճոխ նկարագրությունն այն ամենի, ինչի շուրջ խոսելու է հետագա շարադրանքի մեջ: Այդպիսին է, օրինակ, երաժիշտ Դանիելին ուղղված ԾԳ թուղթը, ուր նա գրում է. «...*Պոռփիլոփոնոս երբեմն երթեալ յԱրգիացիսն, զտաղն Որփեայ զառաջին սկսեալ, մերկ երգով ձեղուն յարկին պատառէր և ռոստք սեանն ծաղկեալ բողբոջին և զհաւս ի վերայ կացեալ տեսանէին Արգիացիքն...*»:⁵¹ Պատկերն այնքան կենդանի է, որ թվում է, թե տեսնում ես լեզվով ճովողող Պոռփիլոփոնեսին, որին Սաղլլունը տանում է իր տաճարը և թառեցնում աստվածային սյուների վրա: Այդ պատճառով արգիացիները սկսում են պաշտել թռչնին և տաճարում կանգնեցնում են նրա արձանը:

Հունական դասական գրականության և արվեստի, սովորությունների և ճաշակի փայլուն գիտակ է Սագիստրոսը: Նա այնքան խորն ու բազմակողմանի է տիրապետում այդ նյութին, որ այլևս կասկած չի մնում այն մասին, թե նա ուսանել է մաս Բյուզանդիայում: Մանավանդ, որ «*իմաստասեր*» կոչումն էլ դա է հուշում: Զկա մի բնագավառ, որի մասին տեղեկություններ չունենա Գրիգոր Պաիվալունին: Եվ եթե արևե մեկը խեղաթյուրում է ճշմարտությունը, Սագիստրոսն անմիջապես «*շանթեր է տեղում*» նրա գլխին: Այդպես է նա պատժում մի մարդու, որ իմաստասիրում է, «*ոչ ուղղապէս*». «*Ո՛չ պատկառես, Պենտոկլէս, այլ վարդապետե՛ս և աստվածաբանե՛ս, և այն երաժշտական երգով կարծիս կասկածանաց ունել քեզ, եթէ Աթենաս հեռագոյն է և ոչ տեսանէ, սակայն ական Աթենացւոյ տեսանէ, Ամպոիոդոս*»⁵²:

Գր.Սագիստրոսը նյութի էությունը մեկնաբանում է անկաշկանդ և անբռնազգեսիկ կերպով: Ընդ որում՝ կարողանում է շարժել ընթերցողի հետաքրքրությունը՝ ընդհուպ մինչև գայթակղության աստիճանի: Իր ուժեղ հիշողության շնորհիվ նա դեպքերը շարադրում է արագ ու «անհոգ» և դա անում է բառերի անկաշկանդ ստուգաբանությունից մինչև

հարյուրավոր առասպելական հերոսների ու նրանց կյանքի հիշատակությունը: Անքնության և զգուշավորության օրինակներ բերելիս՝ որտեղից որտեղ նա հիշում է պարսկական դյուցազներգության հերոս Ռոստոմ Սազնիկին, որի կյանքը մշտապես կախված է եղել քնելու վտանգից: Եվ նա գտել է ելքը. *«Երիվարո նմա ունել ասի Ռաշ այսինքն աշխէն. և զի քնոյ էր Ռոստոմն այն, սպասէր նմա մահու Դիզեզն. և զի ոչ երբէք ննջէր Դիզեզն այն, զգուշութիւն եղեալ Ռոստեմեայ, զոր նայն խոկայր, իսկ Ռոստոմն բողոքեալ երիվարին Ռաշին զգուշանալ. և նա միշտ ոչ ննջէր...»*⁵³:

Այսպես փրկվում է քաջը և պայքարում նաև իր մյուս թշնամու՝ Սպանդարի դեմ: Այս և շատ այլ փաստեր ցույց են տալիս, որ Մագիստրոսը ծանոթ է եղել ոչ միայն արևմտյան ժողովուրդների կյանքին ու սովորություններին, այլև արևելյան ժողովուրդների թե՛ կյանքին, թե՛ մշակույթին: Կարելի է համարձակորեն ասել, որ նա իր ժամանակակիցների մեջ Արևելքը ճանաչող եզակի դեմքերից մեկն էր: Սասնավորաբար այս կամ այն ժողովրդի բանավարկության նրա իմացությունը նշանակում է, որ մոտիկից և ըստ էության է նա ճանաչել այդ ժողովուրդներին: Պատահական չէ, բնավ, որ առասպելական ձկների մասին խոսելիս նա սկսում է եգիպտական Փագրոս ձկան մասին տեղեկություններից և խոսքի կծիկը հասցնում է հնդկական արքայի ապարանքի շինության խորհրդավոր պատմությանը: Միթինա անունով մի հնդիկ ծովագերքին ապարանք է կառուցում և ուզում է, որ պարիսպները դրվեն ջրի մեջ: Սակայն վարպետներին ոչ մի կերպ չի հաջողվում պարսպի հիմքը դնել, և բարկացած ոռջան մահվան է դատապարտում նրանց: Սակայն նրա քույրը գաղտնի թաքցնում է սրանց՝ սպասելով իրերի ելքին: Եվ ահա. *«Ի տեսեան երևեալ նոցա ձկան միոյ փութալ առ եզր ծովուն առաւօտուն, և զվէմսն կոփեալ, առնոյր և տանէր, դնէր յատակս ծովուն, մինչև բարձրացեալ քան զջուրն և ապա անյայտ լինէր»*⁵⁴:

Աստվածային ձուկը փրկում է վարպետների կյանքը, որոնք այդ նույն պարիսպների վրա քանդակում են նրա արձանը և իրենք էլ մնում են այնտեղ՝ որպես երախտիքի նշան, և երկրպագում ձկանը՝ իբրև քրմեր:

Պետք է ասել, որ ոչ միայն Մագիստրոսի ընտրած բանահյուսական նյութն է հետաքրքիր, այլև իր իսկ սեփական խոսքը: Շատ են այն դեպքերը, երբ նա ինքնամոռացումի մեջ է ընկնում: Այդ համգամանքն առավել քան ցայտուն է Ս. Գրքի ավանդությունների իմացության դեպքերում:

Այդ ավանդույթները նա պատմում է ու կարևորում, որպեսզի դրանք դաս-
տիարակիչ միջոց հանդիսանան բոլորի համար: Մովսեսի, Աբրահամի,
Նոյի և մյուսների կյանքի օրինակը Մագիստրոսի համար իսկական չա-
փանիչ է: Իսկ Հիսուսը նրա պատկերացմամբ կատարելությունների
կատարելությունն է: Ջրհեղեղյան և ետջրհեղեղյան շրջանի պատմու-
թյուններ Մագիստրոսի համար իրական եղելություններ են. *«Առ Յրեցի
և յաստուածեղէն մատենից նաև ի Քաղղեաց գՔսիսութեւս իմանամք
զորք տնկեալ: Եւ ի ծերոց առասպելաբանեն ասել յԱկոռի, և
ստուգաբանեն եթէ Արկ ուռի: Ջոր թուի ինձ ոչ նախուստ այսոքիկ
քաղկացութեան պատճառ, այլ իմանամք նախ եղեալ այգիս, ապա ի
մեծ ջրհեղեղէն ապականեալ, և ապա Նոյի ի մայրս ուրեք անտառի ի
մնացելոցն ի ծայրս ծառոցն հատեալ, կրկին տնկեր զնա...*

Այլ ինձ յոյժ նախապատուելի մանաւանդ պաշտելի և երկրպագելի
իմոյն Յիսուսի և Աստուծոյն և Փրկչի, որ տնկեցաւ հերկրի որք ճշմարիտ
և ճմլեցաւ ի խաչին ողկոյզն անսպառ յուրախաթիւն տրտմեցելոց»⁵⁵:

Պատկերավոր է գրում Մագիստրոսը, և ակամայից ասելիքը դառնում
է հուզիչ: Նրա համար աստվածայինն ու իրականը ժամանակների հեռա-
վորության մեջ միախառնվում են: Հանկարծական ու անսպասելի նա
գյուտեր է անում: Արագ փոփոխելով հետաքրքրությունների իր շրջանա-
կը՝ նա նույնքան արագ փոխում է սեփական մտքի շառավիղն ու հունը:
Նրա համար խորք չէ խոսել օտար մշակույթների մասին մանկական
անկեղծությամբ և սքանչացումով, իսկ մեր ձեռքբերումների մասին
խոսել ճիշտ խորենացու պես: Ավելին. նա ուղղակիորեն գնում է դեպի
խորենացին ու նրա Պատմությունը, կապվում մեր հերոսական անցյալի
առասպելախառն իրականության հետ, ինչպես իր նախորդներն ու
հաջորդները: Խորենացուց կատարած նրա քաղվածքները գրեթե
բառացի են. *«Ձայսպիսի ելուզակ յարուցեալ գիտէր հայրենասէրն այն
զնոյն ինքն զՆիւքարն Մաղէս կոչեցեալ: Որ յառաջ քան զծայրն արևուն
ի վերայ հասեալ, ձերբակալ արարեալ, ածէր յԱրմաւիր և անդ ուրեմն ի
ծայրս աշտարակի պարսպին ցցէր, կարթ ընդ ճակատան վարեալ, ի յորմ
վարսել հրամայէր՝ ի տեսիլ անցաւորացն և եկելոցն առ նա»⁵⁶:*

Որքան որ նա հիանում է նախնիների քաջագործություններով, նույն-
քան էլ դառնացած է իր օրերի անշուք ու հայրենաքանդ վիճակով: Նա
այն գիտակցությունն ունի, որ Գագիկ Եկորոզի գահ բարձրանալով՝
հայրենասիրական ուժերի մեջ ճեղքվածք է առաջացել:

Այդ բանում նա ուղղակիորեն մեղադրում է արքային, որն իր շուրջն է հավաքել անփորձ ու սնափառ մարդկանց: Դա չափազանց ծանր վրիպում էր, որը տանում էր դաժան փոթորիկներում ամխուսափելի կործանման: Գուցե այդ բանը չէր նկատում արքան, բայց Մագիստրոսը տեսնում էր վտանգի մեծությունը: Ցավի ու կսկիծի պահին թախծում է բանաստեղծը: Նա եղերամոր հանդերձներ է հագնում և որդուն կորցրած հոր պես սկսում է անասելի դաժան, բայց միաժամանակ սքանչելիորեն գեղեցիկ ու անամոքելի ողբն *«ի վերայ Արամեանս նահանգի»* և ակունքում անպայմանորեն գնում դեպի խորենացու Ողբը: Այս պարագայում Մագիստրոսը շատ է հիշեցնում Երեմիա մարգարեին, որը ողբում էր Երուսաղեմի ավերման ու գերության համար:

«...Վա՛յ ի վերայ Չայկեան և Արամեան նահանգի իբրու նուիրական ստգտանք, զորս ասել փութանակի զանփարատելին անհօից ինձ քուրծ: Ու՛ր Յաբեթ, թեպետ կրտսեր, կորովի: Ու՛ր Յապետոսթեան յարմարութիւն մատանց և քաջութիւն. ուր Թիրասեան թագ և զօրութիւն, ուր Թորգոմեան թևակոխութիւն, ուր Չայկեան հանդէս և հիացուցանելի գործառնութիւն, ուր Արամեան արմատ և մեծութիւն, ուր Արամայիսեան արութիւն, ուր Ամասիայն աստանօր տեսութիւն, ուր Գեղամայն գեղեցկութիւն...»⁶⁷:

Սա մի գեղարվեստական հնարք է, երբ տվյալ անունը բնութագրվում է համապատասխան բառով, և միաժամանակ պատկերը հագեցվում է հնչյունային կուտակումներով:

Այստեղ կրկին փայլում է Մագիստրոսի բանաստեղծական տաղանդը: Նա կարողանում է ամեն մի անվան համաբանությամբ սքանչելի մակդիրներ ու համեմատություններ գտնել: Ներդաշնակությունն ու գեղեցկությունն այնքան հոգեպարար են, որ ուզած արվեստագետ կնախանձեր նրան: Սենք անմիջականորեն ականատես ենք լինում Մագիստրոսի անսահմանափակ ու անսանձ երևակայության խաղին: Չայրենասիրական կղքի մի նոր թոնկում բարձրացնում է նրան մի նոր աստիճանի: Որպես ռազմիկ՝ նա իր մեջ պայքարի ու քաջագործության վարակիչ լիցքեր է պարունակում: Նա իրենով համադրում է հայրենասիրությանը, քաջագործությանը և իմաստասերի խորը իմացականությունը: Մագիստրոսը կերտում է առաջին քաղաքական ոտանավորը: Դիմելով իր որդուն՝ Վահրամին, նա կոչ է անում նմանվել առասպելական Չայկին և նրա պես պայքարել թշնամիների դեմ.

«Այդ միլարեայն դու պնդեա զգայնալի՜ժ հայրանին.

Ձերեքքևեանն դու միտեա, յառաջ մատի՛ր և քաղեա՛:
Այս քեզ Բէլայն հաս հանդէս և թորգոմեանն Յայկայ.
Ածապարեա և փութա՛, զի ես Կաղմեանն Արամեան...»⁵⁸:

Բանաստեղծը որդուն դաստիարակում է նախնիների հերոսական վարքով:

Մագիստրոսը քաջատեղյակ է նաև այն բանահյուսական նյութերին, որը 11-րդ դար է ավանդվել բանավոր ճանապարհով: Մի տեսակ անբնական կլիներ, եթե նա չիմանար իր օրերում պատմվող զրույցների, այլաբանությունների, գայթակղիչ հեքիաթների և այլնի մասին: Ժողովուրդը միշտ էլ պատմել է և սիրել է ամբարել այն ամենը, ինչ առակական է ու զվարճալի: Եվ հենց Մագիստրոսի որոշ բանաստեղծությունների հանելուկային բնույթն ու նրանց գուշակելիության և վերծանելիության համար գրված լինելը ժողովրդական բանահյուսության հետ նրա անմիջական կապի մասին են խոսում: Նրա զվարճասիրությունն ու կատակաբան ոգին ևս դա են հաստատում:

Մագիստրոսը բարձր ճաշակ ունի բանահյուսական նյութի ընտրության հարցում: Արտաշեսի առասպելի սքանչելի պատառիկը՝ *«Ո՛ տայր ինձ զօնիս ծխանի»* նա է գրի առել, և այդ մասին ասում է, *«զոր և ի գռեհիկս աւանդեալ գտաք...»⁵⁹*: Երևում է, որ նա միանգամայն դրական վերաբերմունք ունի դեպի ժողովրդական բառն ու բանը և նրա ստեղծած մշակույթը: Այլապես մենք չէինք ունենա նշված առաջին հայրենասիրական հիմներգը, որն առասպելախառն ասքի մի բեկորն է ընդամենը՝ Խորենացուց վեց դար հետո գրի առնված:

Իսկ մի կիսագրագետ գիտնականի ցույց տալու համար արտաքին գիտությունների մեջ նրա խեղճուկրակ լինելը՝ հետևյալն է գրում այլաբանորեն. *«Ասեն ի գռեհիկս, թէ մուրցացի ոմն զկանափ մետաքս կարծեալ ի թրակացիս տանէր վաճառել. և ոմն մեղու օծեալ զքարնիս ասորորակս ի Պաղեստին վաճառել փութայր իբրու գռետին, և ոմն զբուս և զասրատակս, ըմբռնեալ առ լեռնոտամբն Կասրեայ, շրջեցուցանէր, բազէ զնոսա կասկածեալ: Իսկ մերձ առ մեզ ելոյ ոմն զորտ գտեալ ի Վիրացոցն կողմանէ ասեն ապախտ արարեալ և ի Կոթ գաւառին Գեղամայ ծայնէր ծուկն զնա կարծելով, զի գնեսցեն»⁶⁰:*

Նյութի այս բազմաշերտ նստվածքներում մենք տեսնում ենք, որ Գր. Մագիստրոսի տաղանդն ուրույն շողարձակումներ ունի: Նրա խոսքն այս տեսակետից ևս երբեք չի դադարում հուզել և հետաքրքրել մարդկանց:

Չափածո և անվերծանելի թղթեր

Մագիստրոսի չափածո թղթերը գրված են տարբեր առիթներով և տարբեր հասցեատերերի: Որպես թուղթ-ոտանավորներ՝ դրանք նորություն են մեր դասական բանաստեղծության պատմության մեջ: Այդ ոտանավորները գրված են նոր տաղաչափական սկզբունքներով և աչքի են ընկնում իրենց աշխարհիկ բովանդակությամբ:

11-րդ դարում թե՛ թղթի ժանրում, թե՛ բանաստեղծության մեջ Գր. Մագիստրոսը կարևոր առաջընթաց քայլեր է կատարում, հանդես գալիս որպես նորարար:

Նա միանգամայն աշխարհիկ ոգի է հաղորդում նաև բանաստեղծությանը, դարձնում այն առօրյա հաղորդակցության միջոց: Եթե նրան նախորդ բանաստեղծների մոտ աշխարհիկ տարրերը *«խառն»* են, ապա Մագիստրոսի մոտ երևան են գալիս իրենց *«մաքուր»* դրսևորումներով: Եվ եթե անգամ խրատաբանություններ են դրանք, ապա ոչ կրոնական, և գրված են ծույլ աշակերտներին դաստիարակելու, պարծենկոտ ու անգրագետ գիտնականներին *«դաս տալու»*, մանկանց մեջ հայրենասիրություն ներարկելու և այլ նպատակներով:

Գր. Մագիստրոսի բանաստեղծության տաղաչափությունը մի կողմից հետևում է հին նունական դասական և արաբական հոգևոր բանաստեղծությանը, իսկ մյուս կողմից՝ ստեղծված է հայկական վանկական բանաստեղծության սկզբունքներով: Ավելի ճիշտ՝ դա հայկական վանկական ոտանավորի ստեղծման առաջին փորձն է, որն իր արժաններն ունի մեր ժողովրդական բանավոր ստեղծագործությունների մեջ: Նա միանգամից դնում է նոր բանաստեղծության առաջացման և զարգացման սկզբունքների հիմքը: Այնպես որ՝ գործնականում մենք հանդիպում են բանաստեղծության որակական նոր փոփոխության: Թեև պետք է ասել, որ Մագիստրոսի բանաստեղծական աշխարհը երբեմն կաշկանդված է ձևերի գերակշռության մեջ: Մի համգամանք, որի դեպքում հաճախ է հուզականությունը տուժում:

Մագիստրոսի չափածոյում մենք առաջին անգամ հանդիպում ենք հանգավորման հետևողական կիրառման փորձին: Նրա հանգավոր բանաստեղծությունները կրում են միահամգության կնիքը, որը հոգնեցուցիչ է դարձնում խոսքը: Բայց այս դեպքում կարևորը հանգի

կիրառումն փաստն է:

Գր. Մագիստրոսի բանաստեղծությունները մեծ մասամբ չափածո թղթեր են: Դրանցում հիմնականում առաջարդվում են տաղաչափական սկզբունքներ կամ խոսվում է այն մասին, թե ինչ բանաստեղծական հնարքներով է գրված տվյալ բանաստեղծությունը և ինչու: Մագիստրոսն առանձնապես շարադրում է իր տեսակետներն այս կամ այն հարցի կապակցությամբ, որպեսզի իր ընթերցողին կամ նամակագրին հասկանալի լինի ասելիքի խորհուրդը: Նրա առաջին բանաստեղծություններից մեկը. «Առ որդին իւր զօրանալ ի պատերազմին...» թվով 29 /83-րդ/ թուղթն է⁶¹: Սենք արդեն գիտենք, որ նրանում Մագիստրոսը. «Առաջ է քաշում բոլորովին նոր, ժողովրդի համար խիստ կենսական ու ժամանակակից՝ հայրենիքի պաշտպանության թեման, մյուս կողմից՝ ընտրում է քնարական հերոսին և գրույց է բացում նրա հետ: Միջնադարյան բանաստեղծության մեջ առաջին անգամ հայ բանաստեղծը, 5-րդ դարի պատմիչների նման, քաջության և ուժի խրախույս է կարդում նորագույն սերնդին, իր հերոսին և ընթերցողին»⁶²:

Բանաստեղծությունն ավարտելուն պես նա անցնում է տաղաչափական խնդիրների քննությանը: «Աղէ՛ առ ընթերցիր զարհեստ ոտանաւորացդ, -գրում է Մագիստրոսը, -դիւցազնական է տաղդ, քաջ ուրբեալ...»⁶² և այլն: Ցույց է տալիս, որ այդ զեղեցիկ երկը զոդված է եռակի վանկերով: Այն ողորկ, շարժուն, կատարյալ բանաստեղծություն է: Ինքը դա գրել է պարզ ու մանուկներին հասկանալի լեզվով, որպեսզի նրանց անմատչելի չթվա, և նրանք «արտավազիկ» չփոխեն, այլ սովորեն և մոր կաթի հետ ընկալեն մեր բանաստեղծությունը: Զէ՛ որ ինքը կատարյալ կերակուր է տալիս, որպես հմուտ «խոհակեր»:

Սա 14 վանկանի քառոտնյա բանաստեղծություն է /4 + 3/ /4 + 3/ չափով: Հատածը գտնվում է տողի ճիշտ կենտրոնում: Հանգավոր չէ:

Լուաք թե եկն պապն պաղակ / / վարդասարն պիսակ...

Գր. Մագիստրոսի «Առ վեստն Վահրամ՝ որդին իւր» 29 թուղթը ևս բանաստեղծական արվեստի հարցերն է քննարկում: Այն ակրոստիքոս է և հոգում է «Վահրամ»: Տները կառուցված են արաբական բանաստեղծության նմանությամբ: Հայրը որդուն բացատրում է, որ նա պետք է սովորի հեղինակական կրթությամբ և կատարելագործվի հայրենական ավանդությամբ՝ սկզբից մինչև վերջ, ինչպես նաև Պյութագորական և Պլատոնական «առասուրբին»-ներով արբենա: Այս մեծագույն ձիրքերը

ոսկու և արծաթի պես նվիրում է որդուն՝ խնդրելով *«զաւանդութիւնն մեր ոչ մոռնալ երթէ...»*⁶³ :

Նրան հուզել է բանաստեղծության դաստիարակչական դերի հարցը՝ ընդհանուր և նեղ իմաստով, որով նա հարկ էր համարել պատմել ծուլ աշակերտներին, ապաշնորհներին, որոնք սեր չունեն գիտությունների նկատմամբ:

Այս ոտանավորը նույնպես ակրոստիքոս է՝ *«Գրիգոր ի հեղզս»* հոդումով⁶⁴ : Ոտանավորը հանգավորված է «եալ» ածանցով, իսկ որպես ռիթմական միավոր օգտագործված է 4-վանկյա ոտքը: Հատածը գտնվում է տողի կեստրոնում / 8 // 8/: 1-ին ոտքը տատանվում է 3-4 վանկերի միջև: Սակայն 16 վանկանի այս բանաստեղծության ռիթմը դրանից չի տուժում: Ի դեպ, քառանդամ այս բանաստեղծությունը համարվում է զուտ հայկական ոտանավոր, իսկ չափը՝ հայկական չափ:

Գր. Սագիստրոսն այն առաջիններից մեկն է մեզանում, որ սկսում է կիրառել վանկական ոտանավորը: Դա մի կարևոր քայլ է մեր ամբողջ բանաստեղծության զարգացման հետագա բախտի համար՝ ընդհուպ մինչև մեր օրերը, քանի որ հայկական տաղաչափությունը հիմնականում վանկական է, ու սա բխում է հայոց լեզվի առանձնահատկությունից⁶⁵ : Եվ ավարտվում է բանաստեղծությունը տեսական մի ընդհանրացումով. *«Դիրախաս զօտանաւորս սկսայ կատարել, սուղ սատարելով պարառական ի Հոմերովին անվարժասէր և հեղգից մեղկեալ մանկանց, որպէս զգովասանականն վեհիդ իմոյ սեփական վեստիդ Վահրամայ»*⁶⁶ :

Տաղաչափական և բանաստեղծական արվեստի տեսակետից ուշագրավ է թուրք Թ-Մ⁶⁷, որը տալիս է նամակ-հազներգության գնահատությունը: Այն վերագրված է՝ *«Յաղագս խաչանշան զաւագանին...»*:

Կարևոր են նաև Սագիստրոսի մտքերը և՛ այս բանաստեղծության, և՛ առհասարակ հազներգության մասին:

Այս քերթվածը հոմերական քաջ ոլորյալ տաղ է, որ չափաբերված է նույն հելլենների դյուցազնական տաղերի պես: Կարևոր է, որ ճեմարանական աշակերտները նախապես տիրապետեն այդ գիտությանը, քանի որ այդ արվեստն է ամենից մոտ գիտությանը և քառյակ արվեստներից է ծագել ու զարգացել:

«Բոլոր այս փաստերը ցույց են տալիս, որ Սագիստրոսն իր ճեմարանում մեծ ուշադրություն է դարձրել բանաստեղծական արվեստի ուսումնասիրությանը, նրա ճեմարանը ևս նարեկա դպրոցի պես եղել է

նաև գրական գիտողաց, գրականագետների դպրոց, ուր մեծապես զբաղվել են համաշխարհային գրական փորձի ուսումնասիրությամբ»⁶⁸:

Գր. Մագիստրոսի չափածոյի մյուս կարևոր առանձնահատկությունն է այն, որ բարդ լեզու ունի: Իսկ մի քանի չափածո երկեր էլ պարզապես գրված են այնքան խրթին հայերենով, որ բառարաններով անգամ դժվար է դրանց բնագրերի վերծանումը: Սակայն *«Չայկազեան բառարան»*-ի հեղինակների /Գ. Ավետիքյան, Խ. Սուրմելյան, Ս. Ավգերյան/ և հայագետներ Ն. Բյուզանդացու, Գ. Մենևիշյանի և Դր. Աճառյանի մեծ քանքերի շնորհիվ դրանց մեծ մասն ընթերցված են: *«Գաղտնիքն»* առաջին անգամ բացել է Նորայր Բյուզանդացին⁶⁹ նկատելով, որ *«Գամագտական»* թղթի առաջին վեց տների բացատրությունը տվել է հեղինակն՝ ինքը՝ Կիրակոս հույն դպրին ուղղված իր խե թղթում⁷⁰: Այս թուղթ-նոտանավորը նույնպես ակրոստիքոս է *«Գրիգոր Մագիստրոս»* գլխատառերով: Մագիստրոսը խե թղթում վերծանել է *«Գրիգոր»* գլխատառերով մասը՝ շարունակությունը թողնելով խորհրդավոր գալիքին: Այդ գործն ավարտին է հասցրել Գ.Մենևիշյանը՝ տեղեկացնելով, թե *«Մագիստրոս հետևած է հույն կատագերգակ Արիստոփանեսի գրությանց, և գոր այն «Գամագտականին» մեջ հանվանն կհիշե: Բայց երբ հետևած է կսենք, չենք իմանար թե ամբողջապես օրինակած է... այլ գրելու կերպը, դեզդեզ բառերը շեղջակուտելը, բառերի «երկդիմի նշանակությունները»⁷¹:*

Թղթի բովանդակությունը հույն դպրի քննադատությունն է, որպես կիսագրագետ գիտնականի: Մագիստրոսն ուզում է նրան *«տանջել»* իր խրթաբանությամբ, որպեսզի ծրիաբար կրթի ու սովորեցնի: Նա *«ոխակալություն»* մեջտեղ չի բերում, որ իր հակառակորդը թշվառ ու եղկելի չզգա իրեն: Ծաղրանքով ասում է, թե իր թուղթը վերծանելու դեպքում օլիմպիական մրցանակ կսահմանի նրա համար: Ինքն հետևում է հռչակավոր Արիստոփանեսի օրինակին, որին անգետները *«աղտեղի»* են անվանում, և լավ գիտի, թե ինչքան կտխրեցնի ու կծանձրացնի հեղգերին և տգետներին իր այս կեցվածքով: Պարզ երևում է, որ Մագիստրոսը շարունակում է մտավորականության հետ հաղորդակցվելիս խրթնաբան լեզու բանեցնելը՝ մի կողմից և մարդկանց դաստիարակելու իր գիծը՝ մյուս կողմից: *«Առ հեղզս ոմանս յաշակերտացն...»* /թուղթ 2Ձ/ բանաստեղծությունը նույնպես *«անվերծանելիների»* շարքին է դասվել: Այն վերծանել է Դրաչյա Աճառյանը⁷²: Բովանդակությունն այն մասին է, որ իր նվերները հակառա-

կորդն սկզբում աննշան բաների տեղ է ընդունել, բայց հետո լցվել է նախանձով և պայքար սկսել իր դեմ: Սակայն ճանապարհը կորցրել է ու թշվառացել: Հետո տանջվելով կարգի է եկել ու մարդ դարձել:

Սա նախորդի պես կատակերգական քովանդակությամբ երկ է, ուր դարձյալ Մագիստրոսը շարունակում է ծուլյերի դաստիարակության և «հաշվեհարդարի» իր գործը:

Զափածո թղթերից անվերծանելի է դեռևս ԾԹ թղթի⁷³ երկիրդ չափածո հատվածը /«Տրամախոս տարագրականը...» /:

Մագիստրոսի չափածո և պայմանականորեն անվերծանելի համարված թղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք հիմնականում դաստիարակչական նպատակներով են գրված՝ ուղղություն տալու կամ պատժելու միտումով: Սովորաբար անվերծանելիները գրված են Արիստոֆանեսի հետևությամբ և հիմնականում կատակերգական բնույթի են: Այնպես որ՝ այստեղ ևս Մագիստրոսը վեր է հանում հին հունական դասական արվեստի մոռացության մատնված կողմերն ու սկզբունքները: Նա «կենդանություն» է հաղորդում մի հեղինակի, որին «աղտեղի» են համարել իրենք՝ հույները: Սա, ահա, Վերածնության հեղինակի աներկդիմի և դրական վերաբերմունքի արտահայտությունն է անտիկ մշակույթի վերաբերյալ:

Գր. Մագիստրոսի չափածոն իր հետաքրքրական արտահայտությունն է գտել այլ ժանրերում ևս:

Չափածո այլ ստեղծագործություններ

Գր. Մագիստրոսը գրել է նաև մեծ ծավալի երկեր: Խոսքը «*Հազարատողեան*» պոեմի մասին է:

Բանաստեղծը հաճախակի է դիմում «*Աստվածաշնչին*», իսկ մտերիմներին և հետաքրքրասեր ու բանիմաց այլազգիներին հանձնարարում է. «*Արդ եթէ կամիս կարօտել և ողբախոս մտածութեամբ զլուսափայլ աստուածաւանդն ասացեալս ուսանել, աղէ՛ առ ընթերցի՛ր աստուածեղէն տառս Կտակարանաց*»⁷⁴:

Այս ազատախոհության մթնոլորտում էլծնվեց Գր. Մագիստրոսի «*Հազարատողեան*» /«*Առ Մանուչէ*»/պոեմը: Նախաբանում բանաստեղծը խոսում է երկի ստեղծագործական պատմության մասին: 1046 թ. Կոստանդնուպոլսում նա վեճի է բռնվում մի արաբ իմաստասերի հետ՝ Մանուչե անունով . «*յոյժ հմուտ խմայելական դպրութեան և ամենայն իմաստութեամբ պերճացեալ և վարժեալ ի տաղասացութիւնս և հռետորութիւնս և ի բանաստեղծութիւնս*»⁷⁵:

Նա պնդում է, որ Դուրամը աստվածային է, քանզի շարադրված է չափածո: Մագիստրոսը մերժում է այդ՝ գրելով . «*ոչ մարգարութեան տեսիլ և ոչ նշանք և ոչ արհեստք, այլ տաղասացութիւնք Արարացւոցն սովորաբար վարժաբանութեամբ մրցեալք միայոդ աւարտեալ գծի, զոր դուք կափայ անուանէք*»: Բանավեճն ավարտվում է գրագով, և Պահլավունյաց իշխանը պարտավորվում է. «*Սակայն թէ համարիս զայս մարգարեական տեսութիւնս՝ զոր Մահմէտ քոյ զքառասուն ամ գրեաց, քառօրեայ գծագրեցից քեզ*»⁷⁶:

Մագիստրոսը չորս օրում գրում է պոեմը և հաղթում: Հակառակորդը փոխում է դավանանքը. «*Նորա զարհուրեալ խոստովան եղև եթէ մեծ է աստուածն քրիստոնէից*»: Համաշխարհային գրականության մեջ առաջին անգամ հայ բանաստեղծը դիմում է «*Աստվածաշնչի*» ամբողջական վերաշարադրանքի՝ այս դեպքում թեմայի յուրատեսակ մշակման: Իհարկե, հեղինակը չի կատարում գրքի բովանդակության տառացի վերաբրտադրության, այլ անդրադառնում է նրա կարևոր դրվագներին, գեղարվեստական յուրատեսակ մշակման ենթարկում նյութը:

Մեծ են գործք աստուածային, սքանչելի նորա Բանին.

Հրաշալի անպատմելին, յամենայնի զարմանալին.

*Այն որ մատին յերկինս երկնից ի բարձրութիւն սերօքէին,
Լուսով ինքնամատոյց, պարածածկեալ անքննելին:⁷⁷*

Երկիրն արարվում է չորս տարրերից: Աստծո է-ի խնդիրը լուծվում է նորալատոնական փիլիսոփայական ուսմունքի շրջանակներում, որին հարում է բանաստեղծը: Այն է՝ Աստծո անմատչելի զոյը ճանաչելի է դառնում զգյական փորձի և բանականի շնորհիվ⁷⁸:

Աստված ստեղծում է Երկիրը, երկինքը, լուսատուները և մնացած արարածներին.

Արդ՝ ստեղծ զերկին ի վեր, զերկիր ի վայր հաստատողին.

.... Անթիւ սեռ կենդանեաց՝ ցամաքային և ծովային.

Թռչունք երկնից բարձանց, անբաւ անչափ ի համարին:

.... Ստեղծ մարդ ի հողոյ՝ անախտական յիւր պատկերին:

Փշեաց հոգի շնորհաց՝ իմանալի հրեշտակային.

Յերկուց ընդդիմակաց՝ զգայական հողեղինին.

Կանաւ կինն ի կողէն՝ խնդիր յիւրոյ ազգականին,

Ըզսա եղ ի դրախտին, իշխել բոլոր գոյականին:⁷⁹

Ադամը և իր կողակիցը դրվում են դրախտում, որպեսզի ապրեն անմահ կյանքով ու իշխեն բոլոր արարածների վրա: Սակայն «մախանօք բանսարկուին» նրանք ուտում են արգելված պտուղը, զրկվում դրախտից: Սարդը գործում է առաջին մեղքը: Այս առավել կարևոր խնդիրներին անդրադառնալիս հեղինակը չի էլ թաքցնում իր բացահայտ հուզական վերաբերմունքը:

Ադամի սերունդը խրվում է նոր մեղքերի ճահիճը: Կայենը դառնում է եղբայրասպան, կանանց և արանց միջև տեղի է ունենում սարսափելի խառնակություններ: Աստված ջրասույզ է անում առաջին մարդկանց՝ սկիզբ դնելով նոր մարդկության: Նոյյան տապանով սկսված նոր փրկությունը՝ արատավորվում է կռապաշտությանը և սնահավատական այլ մոլորություններով: Շինվում է աշտարակը.

Եղեալ այս բազմամեայ, դարձեալ զԱստուած մոռանային,

Կողոցն մոլութեամբ յարարողէն արտակացին,

Սերժեալ արտաքս էին երկրպագեալ ստեղծածին,

Այլ խորհուրդ առեալ բանին՝ աշտարակին գոր շինէին⁸⁰

Այս անգամ մարդկությունը հայտնվում է սողոմային հրի մեջ, կրկին արժանանում աստվածային պատժի: Իրար են հաջորդում աստվածաշնչյան հերոսներ Ղովտը, Աբրահամը, Իսահակը, Հովսեփը, սքանչելի

Դավիթը, որոնք նախորդում են Փրկչին:

Սինեական լեռան վրա Աստված խոսում է Մովսեսի հետ: Բանաստեղծը պոեմի հյուսվածքն է ներառում մարգարեների կյանքը և գործը՝ կառուցվածքային առումով ապահովելով Գրքի սյուժետային կողմը՝ հանրահայտ սյուժեի մեջ ազատ ծավալվելով:

Գր. Սագիստրոսի համար առավել կարևորը Նոր Կտակարանն է: Նա իր առջև խնդիր է դնում բազմակողմանի լուսաբանել Տիրոջ գործը: Ավետարանիչների հաղորդածի հիման վրա կերտում է Հիսուսի կերպարը: Փրկչի դերը բանաստեղծը առանձնապես կարևորում է նրանով, որ Որդին, որ նույն Հայրն է, իջնում է՝ մոլորյալ մարդկությանը վերջին անգամ փրկության ճանապարհ ցույց տալու: Մանկան հրաշալի ծնունդը, մոգերի երկրպագությունը, Հերովդեսի հետապնդումների դրվագները շարադրված են ըստ Մատթեոսի Ավետարանի՝ կյանքի մյուս դրվագները լրացված են ըստ մյուս ավետարանիչների: Անապատում փորձվելուց և Հորդանանում Հովի. Սկրտչի կողմից մկրտվելուց հետո Տերը ընտրում է իր աշակերտներին, փոխում նրանց անունները և պատվիրում.

Երթայք մկրտեցեք, ի Հայր յՈրդի ի սուրբ Հոգին.

Եւ մի՛ արծաթ ըստանայք, ես տամ անգին զառատ բարին.

Ասացեք, քարոզեցեք զիմ լուծըն քաղցր ու զփոքրոգին,

Մի՛ կայք ի թաքստի, մի՛ դուք վախեք յարդար բանին:

Դուք էք աղ երկրի՝ անմահութիւն որ համեմին⁸¹:

Հիսուսի և իր աշակերտների ձեռքով գործվում են բազմաթիվ հրաշքեր: Հիվանդները բուժվում են: Կատարվում է անմախաղեպը: Տիրոջ աղոթքներով մեռելներ են հարուսթյուն առնում:

Սարդկանց հոգիներում կրկին բորբոքվում է նախանձի հուրը: Կատարվում է մարգարեների գուշակությունը: 30 արծաթով Հուդան մատնում է Հիսուսին՝ հանձնելով նրան դաիիճների ձեռքը, որոնք և խաչում են նրան՝ արծանացնելով տանջանքների և նվաստացման.

Ինքըն ջուր հայցեալ խնդրէր՝ թէ ծարաւի է ի խաչին.

Լեղի խառնեալ ընդ քացախին՝ կապեալ ի ծայրոս նիզակին,

Տային նըմա ըմպել որպէս և գրեալ ի սաղմոսին,

Առեալ ըզպատմունճան, եղեալ վիճակս արկանէիմ⁸².

Հիսուսի մահվան և հարության մանրամասները տրվում են գեղարվեստական ուժեղ շնչով: Նրա գործի և բանաստեղծի կատարածի մասին կարելի է բերել Ավետարանի խոսքերը, թե . «Եվ ուրիշ շատ բաներ ալ

կան, որոնք Հիսուս ըրավ, որոնք եթե մեկիկ-մեկիկ գրված ըլլային, կարծենք աշխարհս ալ բավական պիտի չըլլար պարունակելու գրված գրքերը»: Մագիստրոսն էլ բավարարվում է՝ առավել կարևոր բաները նշելով:

Բանաստեղծն անդրադառնում է աղանական մեղքի և դրա սրբագրման կարևոր գաղափարին: Հիսուսի շնորհիվ մարդկությունը կրկին գտնում է իր փրկության ուղին, քանզի առաջին մարդը կորցրել էր այն: Բայց փրկության ուղին դժվարին է, պայքարը՝ երբեմն ծանր ու այրունոտ: Այդ պայքարում չեն խնայում, չեն զիջում: Դա պայքար է հանուն կյանքի՝ կենաց ու մահու կռիվ: Ի վերջո, կործանվում են Արամազդի, Աթենասի և մյուս կուռքերի արծանները: Հին աստվածներին փոխարինելու է գալիս նոր Աստվածը:

Պոեմի այս մասից Մագիստրոսը օգտագործում է նոր աղբյուրներ, անդրադառնում քրիստոնեության հաղթանակին, առաջին նշանավոր հայրերի գործունեությանը, որոնք դիմելով ամեն տեսակի զրկանքների՝ հաստատեցին Քրիստոսի ուսմունքը: Դրանց մեջ են Բարսեղ Կեսարացին, Գրիգոր Նազիանզացին, Եփրեմ Ասորին, Հովհան Ոսկեբերանը և այլք: Այս շարքն ավարտվում է.

Կամիմ աստ քեզ ասել յառաջ քան զայս զՊարթևին,

ՁԱրբոյն մեր Գրիգորի և զՀայոց լուսաւորչին,

Քաղաքաւրն Պաղլաւին և ըստ ազգին Արշակունին,

Չմաքուր հայրապետին և սքանչելի մարտիրոսին⁸³:

Բանաստեղծը գնում է հայոց մեծ դարձի պատմա-գեղարվեստական արտացոլմանը: Բացի արդեն հիշյալ հեղինակների կյանքին և ստեղծագործությանն անդրադառնալը, բանաստեղծը օգտվում է նաև 5-րդ դարի մեր ողջ մատենագրությունից, որը նրա համար ծառայում է իբրև լրացուցիչ աղբյուր *«Աստվածաշնչից»* հետո: Իր մտահղացումն ամբողջական դարձնելու համար Մագիստրոսը *«դուրս է գալիս»* *«Աստվածաշնչի»* սահմաններից և Հիսուսի գործը կարևորում նրա գաղափարների հետագա տարածմանը: Քրիստոնեության ճանապարհը մարտիրոսվածների մի ճանապարհ է, որ Ազաթանգեղոսի Պատմության մեջ կապվում է Հռիփսիմյանց կույսերի նահատակության հետ: Բանաստեղծը չի մոռանում և աստվածային գրերի գյուտը, որով տրամաբանական ավարտին է հասնում նրա միտքը: Թարգմանվում է *«Աստվածաշունչը»*: Մեսրոպը հայտնագործում է նաև վրացիների և աղվանների գրերը,

որպեսզի նրանք էլ հասու լինեն աստվածային Կտակարանների մեծ խոսքի խորհրդին:⁸⁴

Մեր ժողովրդի փրկությունը բանաստեղծը կապում է Գրքի հետ: Գրերի գյուտն արժևորվում է այդ կարևոր հանգամանքով: Պոեմի հետագա շարադրանքը նվիրված է քրիստոնեության ամրապնդման գաղափարին: Այս գործին իրենց կյանքն են նվիրել իր նախնիները՝ սերված Լուսավորչի տոհմից: Այդ մասին նա նշում է. «Արդ զիս յայս տոհմէ գիտեմ՝ ազգաւ Պարբէ իմ հայրերին»⁸⁵:

Իբրև պոեմի ավարտաբանություն Մագիստրոսը դնում է Տիրոջ երկրորդ գալստյան պատկերը: Նա արժանավորներին հարություն կտա, իսկ անարժաններին կզցի դժոխքը: Այդ օրը հետևյալ ձևով է նկարագրված.

*Ոչ ողորմի անողորմին, ոչ ընտանի ոք երևին,
Ոչ գթայ հայրն ի յորդին, սերուն հատած մարմնականին,
Ոչ տուր կայ ոչ առնուալ, բանըն կապած է Հռետորին,
Ոչ արքայ, ոչ թագաւոր, իշխան չկայ յայն համարին»⁸⁶:*

Բանաստեղծը կրկնությունների ժխտական ոճին զուգադրում է նաև մեկ այլ բանաստեղծական ոճ.

*Անդ լեզուք սուր կապին, ճարտասանքն կականին,
Անդ խաբողքն խափանին, ամբարտաւանքըն խոնարհին...»⁸⁷*

Մագիստրոսը հասնում է ասվածաշնչյան ճշմարտության արտահայտման այն աստիճանին, թե երկրորդ գալուստով լուծվում է տիեզերական չարիքի հարցը: Սատանան պատժվում է, իսկ բարիք և չարիք գործածները ստանում են արժանին: Կյանքի Գրքում գրվածները ապրում են հավիտենական կյանքով: Իսկական իմաստով կյանքն սկսվում է այդ պահից: Այդ պատճառով էլ պոեմն ավարտվում է աղոթք-դիմումով.

*Այսոց ամենեցուն ներող լսեա՝ Տէր Գրիգորին,
Եւ յիս դարձիւր բարով՝ այժմ և ի յելս իմ վախճանին.
Պահեա՝ խաղաղութեամբ զիս հաւատով ի քո բանին,
Եւ յաւուր վերջին տօնին որպէս և գրեալ եմ վերստին,
Արա՛ ողորմութիւն, տեղի ի քո առագաստին»⁸⁸:*

Պոեմում բանաստեղծն առաջադրում է փրկության գաղափարը. մի կողմից՝ առանձին ազգերի, մի կողմից՝ յուրաքանչյուր անհատի: Ասվածը նա հիմնավորում է Հիսուսի կերպարով՝ ամբողջացնելով պոեմի ներքին տրամաբանությունը:

Թե՛ ձևի, թե՛ բովանդակության առումով պոեմը նորություն է: Այս երկը մեզանում առաջին հանգավոր ստեղծագործությունն է: Նա կարևոր առաջընթաց էր մեր բանաստեղծության համար: Նրանում օգտագործված են վանկական բանաստեղծության ավանդները /քառոտյա ոտքը հետևյալ տաղաչափական յուրահատկությամբ՝ 1-ին ոտքը՝ ազատ, մնացած երեք ոտքերը՝ պարտադիր քառավանկ/: Ահա՝

1	2	3	4
Եւ արդ կամ	ահարեկեյալ	յորժամ յիշեմ	գոր վախճանին...
/ազատ/	/4 վանկ/	/4 վանկ/	/4 վանկ/

Փաստորեն Գր. Մզիստրոսի ստեղծագործություններում առաջին անգամ հանդիպում ենք վանկական չափածոյին, որով ավարտվում է ազատ բանաստեղծությունը: 11-րդ դարի կեսից բանաստեղծությունը դառնում է հանգավոր: «Հազարտողեան» պոեմը նոր ժամանակաշրջանի սկիզբ է հանդիսանում: Ճիշտ է, արագ գրված լինելու պատճառով պոեմը ավելի փաստաշատ է ու պակաս զգացմունքային, բայց իր մտահղացման, իրականացման և գեղավեստական իդեալի կարևորության իմաստով՝ չափազանց արժեքավոր:

Շարադրելիս Մագիստրոսը հիմնականում հետևում է Կտակարանների հաղորդած տեղեկություններին և չի կարողանում «ստեղծագործական շեղումներ» կատարել: Նրա խնդրի մեջ դա չի էլ մտնում այն պարզ պատճառով, որ նա ավելի շուտ հակված է հարազատ մնալ բնագրին, որով ցույց կտա նյութի վերաբերյալ իր քաջատեղյակությունը, և չի մեղանշի Սուրբ գրքի ճշմարտությունների դեմ: Հակառակ դեպքում կհեղինակագրկվի թե ինքը, թե իր երկը:

«Հազարատողեանը» ինքնատիպ գեղարվեստական ստեղծագործություն է նաև: Այն չափածո Աստվածաշունչ է՝ գրված մեկ հեղինակի կողմից: Նրանում դրսևորվել է հեղինակային եսը, որը քնարական հերոսի միջոցով որոշակի վերաբերմունք է դրսևորում մատուցվող նյութի վերաբերյալ: Գործին մեծապես նպաստել են բանաստեղծի ներշնչվածությունն ու ոգևորությունը: Հեղինակը առանձնակի նվիրումով է վերաբերվում խնդրին և իրեն ստեղծագործական տարերքի մեջ զգում: Այդ պատճառով էլ հենց իր հանրահայտ բովանդակությամբ հանդերձ երկը համդես է գալիս որպես միանգամայն նոր ու ինքնուրույն ստեղծագործություն:

Ինչպես նախերգանքում, այնպես էլ պոեմի վերջում, որը փաստորեն դառնում է նրա վերջերգը, բանաստեղծը հասկանալի չափով հեռանում է ասվածաշնչյան եղելություններից՝ ավարտելու համար այն: Երեկորդ գալստյան և մեծ դատաստանի օրվա նկարագրությունները միանգամայն իր բանաստեղծական երևակայության արդյունք են՝ օժտված գեղարվեստական որոշակի ինքնատիպությամբ:

Նրա «Ներքողեան ի սուրբ խաչն Քրիստոսընկալ» երկը դրա փաստական ապացույցներից ամենացայտունն է: Այն պոեմի ոգու ամնիջական շարունակությունն է: Այստեղ խաչափայտը սիմվոլիկ կերպով խորհրդանշում է Զայր Աստծո նկատմամբ հավատքի ընթացքը՝ Մովսեսից մինչև Հիսուս և քրիստոնեության տարածումը: Այն կենաց փայտի գովերգումն է նրա նշանակության պոետական ընկալումը:

«Իշխանացն զէն գօրաւոր ի պատերազմ անբացեալ.

Մանկանց դաստիարակ և պահապան դու պարգևեալ.

Արանց դու և կանանց հաղորդաբար միացուցեալ.

Քաղցելոցըն կերակուր և ծարաւեացն աղբիւր յայտնեալ.

Աղքատացն առատածիր կարօտելոցն գանձ բաշխեալ.

Մերկաց ըզգեստ եղալ որոց մայրեաց խնամ ածեալ...»⁸⁹:

Հավատքն իրականում նույնամում է խաչի խորհրդանշիչի հետ: Երկն ավարտվում է «Գրիգոր» գլխատառությամբ «ակրոստիքոսով», և Մագիստրոսը խնդրում է Տիրոջից թողություն իր մեղքերին, հավետենական հրից ազատում և նորոգում, քանի որ իր հույսը Աստծո արդարության վրա է:

Մագիստրոսի չափածոների այս շարքում մի հետաքրքիր նմուշ է «Առ սուրբ Կարապետն Յովհաննես» երկը: Այն ներքոյան է՝ նվիրված այս անգամ Յովհաննես Մկրտչին: Հպանցիկ կերպով խոսվում է նրա անապատ մեկնելու, այնտեղ փորձությունների ենթարկվելու և վերադարձի մասին:

«Երջանիկ յառաջընթաց եկիր մաքրող, ի Յորդանան.

Քարոզեցեր Գառն Աստուծոյ՝ որ գայ բառնայ

զմեղս աշխարհի»⁹⁰:

Բանաստեղծը հատկապես գնահատում է Հովհաննեսին նրա համար, որ նա Տիրոջ կողմից արժանացել է ամենամեծ շնորհին: Խոսքը Հորդանանում Հիսուսին մկրտելու իրավունքի մասին է, որտեղից և ծագում է նրա մականունը՝ Մկրտիչ: Հետաքրքիր զուգադիպությունն էլ այս

բանաստեղծության և Գրիգոր Նարեկոցու «Քարոզ Գրիգոր Նարեկացւոյ ասացեալ ի սուրբ Յովհաննէս Մկրտչին»⁹¹ գանձի միջև: Երկու ստեղծագործություններն էլ գրված են միևնույն նպատակով և կան պատկերային ու բառային նմանություններ: Դա ցույց է տալիս, որ երկու բանաստեղծներն էլ միանման են ընկալել Ավետարանի այդ Դովհաննեսին նվիրված հատվածը և համարյա միատեսակ էլ վերարտադրել: Այս բանաստեղծությամբ ահա, ավարտվում է կամ փակվում այն շարքը, որ Մագիստրոսը նվիրել է աստվածաշնչյան թեմաների մշակումներին: Բայց յուրատեսակ ձևով այս թեման իր արտահայտությունն է գտնում նրա շարականում: Ինչպես նախապես արդեն ասել ենք, այդ շարականը անմիջապես առնչվում է Հավիւց Թառի եկեղեցու հայտնի արձանագրության հետ: 1013 թ. կառուցված եկեղեցին Մագիստրոսը հետագայում վերակառուցել է, և խաչի վրա քանդակված է եղել Տիրոջ պատկերը: Այդ պատկերի գովեստն է արվում այս ստեղծագործության մեջ: Արձանագրության բնագիրն այսպիսին է.

*«Թուին ՆԿԲ ի թագաւորութեանն Գագկայ եւ ի հայրապետութեանն տեառն Սարգսի եւ Գրիգոր Մագիստրոս վերստին շինեցի զեկեղեցիս յիշատակ ինձ եւ ծնողացն իմոց. նա և ի տերանց աշխարհիս գանձագին արարի զվայրս սորա լերամբն եւ դաշտամբն եւ ամենայն կազմութեամբն որ ի սմա... եւ տուաք յիշատակ անջնջելի արձանագրով եւ աշխարհակալ թագաւորի թղթովն եւ կայսերական կնքովն. հաստատեցաք ձեռագրով և հայրապետական նամակաւն. և ի նաւակատիս տաճարիս, զոր շինեցաք զհայրենիս մեր սուրբ եկեղեցւոյս՝ որ է Հայոց Թառ, հանգստարան և աւթարան անձեռագործ սուրբ պատկերին Յիսուսի Քրիստոսի որ ի փայտին, խնդրելին Յովհաննու աւետարանչին, հրամանաւ մաւր տեառն մերոյ սուրբ Աստուածածինն. եւ նորոգեալ հաստատեցաք վերստին եղաք զվէմն հաւատոյ հիման սուրբ եկեղեցւոյ. Գրիգոր Վահրամ պատանին»*⁹²:

Կառուցումից հետո հորինվել է նաև շարականը, այն՝ շարականագիրները, իսկ հետագայում շարականները խմբագրողները կոչել են, «Զորս ըստ պատկերի...» և վեհագրել Մագիստրոսին: Այսպես.

«Եւ զԱնըսկիգբն՝ Սանդակունին

*Գրիգոր Մագիստրոն՝ զըստ պատկերին...»*⁹³:

/ըստ Զիգ Զուղայեցու խմբագրության/:

* * *

*«Այլ խաչ կենարարըն Մագիսրոս
Ձորս ի պատկեր նորա ի հոս...»⁹⁴*

/ըստ Հակոբ Սսեցու խմբագրության/

Սակայն հետագայում Գաբրիլ Ավետիքյանն ինչ-ինչ պատշգոններով այս շարականը վերագրել է Աշոտ իշխանին և գրության ժամանակը հասցրել 7-րդ դար: Նա փաստարկում է, որ Ներսես Լամբրոնացին այս շարականի մասին խոսում է երկու անգամ և այն չի վերագրում Մագիստրոսին, իսկ Վարդան պատմիչը հիշում է, թե այն երգել է Աշոտը՝ Սահակ կաթողիկոսի օրոք պարսիկների դեմ կռիվ գնալիս⁹⁵:

Եիշտ այս տեսակետն է պաշտպանում Գրիգոր Հակոբյանը: Նա ուղղակիորեն նշում է. *«Մագիստրոսը գրել է խաչի կանոնների երրորդ օրվա օրհնությունը՝ «խաչն կենարար».... և չի գրել այդ կանոնների հինգերորդ օրվա Ողորմեան՝ «Ձորս ըստ պատկերի քում ստեղծեր շարականը»⁹⁶*:

Շարականի տեքստը հետևյալն է.

«Ձորս ըստ պատկերի քում ըստեղծեր, նորոգելով քեզ տաճարացուցեր, զնորոգեալս ի մենջ գտաճարս ընկալ քեզ ի բնակութիւն:

Որ շնորհես մեզ կենաց տուող կենդանագիր քո ծառայական կերպի, բերելով զբոլորդի վերաբերողդ ի փառս սուրբ երրորդութեանդ:

Կեցո գորդի ծառայի քո ի հռովմայ գահիցն վերապատուեցեր. ուր եղին զվեմն հաւատոյ հիման սուրբ եկեղեցւոյ:

Որ վեջինս զայս հրաշագարդեցեր քեւ չափ բանակցութեամբ հիմնափայլեցեր, զպանծալի և զփայլեալ զփառս տանս այս վերջինս, բան գառաջիմն»⁹⁷:

Շարականի ոճն իսկապես Մագիստրոս է հիշեցնում: Դրա բովանդակությունն էլ կապվում է եկեղեցի կառուցելու և խաչն այնտեղ *«վերաբնակեցնելու»* հետ: Իսկ Գարեգին Հովսեփյանն այդ կապակցությամբ ուղղակի նշում է. *«Եթե համեմատելու լինենք շարականը արձանագրության հետ, շատ մեծ աղերս կգտնենք նրանց մեջ. շարականի մեջ պարզ արտահայտված է այն միտքը, որ հեղինակը նորոգել է մի տաճար..., որ միանգամայն համապատասխանում է «վերստին նորոգեցաք» և «նորոգեալ հաստատեցաք» խոսքերին: Շարականի հեղինակը շեշտում է նույնիսկ յուր շինած կամ նորոգած տաճարի առավելությունը կամ պայծառությունը առաջինի համեմատությամբ...:*

Ավետիքյանի բացատրությունը հին և նոր ուխտի, այսինքն քրիս-

տոնեական և հրեական եկեղեցիների համեմատության իմաստով, անտեղի է և անհամապատասխան շարականի ամբողջական բովանդակության...»⁹⁸ :

Հեղինակն այնուհետև պնդում է, որ շարականի բովանդակությունն էլ միանգամայն համապատասխանում է Գրիգորի բնավորությանը և հոգեբանությանը *«Արձանագրության և շարակնի աղերսն ապացույց է նրանց հեղինակների նույնության»* ենթադրում է հետազոտողը: Դրա գրության ժամանակաշրջանը նա դնում է 1013թ. ավելի ուշ, երբ Մագիստրոսը բյուզանդական պաշտոնյա էր⁹⁹ :

Ավելին՝ կա պատկերային համապատասխանության հարցը: Էջմիածնի հազվագյուտ թանգարանում է գտնվում Ամենափրկիչում սկզբնապես տեղակայված փայտյա քանդակազարդ՝ խաչված Քրիստոսի պատկերով, որի հետզա գոյության մասին ուսումնասիրողները չեն խոսում: Այն մի ոչ մեծ փայտյա տախտակ է /մոտավորապես 80x30 սմ/, ինչը հիմանավոր ապացույց այն մասին, որ Մագիստրոսն է այս շարականի իսկական հեղինակը:

Մագիստրոսի չափածոյի յուրահատկությունները բազմաթիվ են: Նրա արձակն էլ շատ դեպքերում իջինաբերեբար չափաբերվում է: Արձակ շատ թղթերի հատվածներ համարձակորեն կարելի է տողատել: Բաբկեն Զուգասյանն այդ մասին նակատում է *«Մագիստրոսի այս ինքնատիպ նամակում /իմա՝ թուրք ժԱ -Ս.Ա./ արձակ խոսքը ազուցված է բազմաթիվ չափածո տողերով, որոնք, թվում է, Վահրամ Պահլավունուն նվիրված դյուցազներգության բեկորներ են, աշխարհիկ մեր դպրության թանկարժեք մասունքներ: Ներքոյի առաջին տողերը ողբասացության բնույթ ունեն:*

Աւաղ որդոյս սիրեցեալ և կարոտեալ

ի սուրբ և քաղցր հօրէն,

Աւաղ տարագիր ու արտակացեալ,

յաստուածային քո խրատուէ,

*Աւաղ կենդանութեանս, որ երանեմ վախճանելոյդ...»*¹⁰⁰

Կամ՝

«Ո՞ զմեզ այժմ խրատէ,

Եւ ո՞ մատակարարէ զտկարութիւն մեր,

*Եւ ո՞ զանժուժութիւն համբերութեամբ իւրոյ մխիթարէ»*¹⁰¹.

Բայց հարցն այն է, որ Մագիստրոսի թղթերում այսպիսի *«մոռացված*

բեկորներն» ավելի քան շատ են: Դրանք հանդիպում են ոչ միայն ժԱ թղթում, այլ նաև այն թղթերում, ուր Մագիստրոսի զգացմունքներն առավել շիկացած են:

*«Ճանճն ճոխացեալ, ճողոպրեալ՝
Կամեցաւ զճաշակս ի ծամելեաց առիւծուն,
Ի քուն զնա գտեալ,
Ձոր այսր անդդ ագին գալարեալ,
Դողմհարիւր ի բաց մղեալ
Եւ ոչ ոստուցեալ թռչունն արտակայիլ,
Ապա կոծեաց կեռօքն կոփել.
Կոկորդակոփ կասեաց ընդ ժանեօքն և ժպտեալ,
Ձոմանս եթող կիսամահ ընդ ռնգունսն գերծեալք....»¹⁰²:*

Նմանաձայնությունների և բառախաղերի նմուշներ են սփռված այս տողերում: Այլաբանական, առակական իր սքանչելի խոսքերով Մագիստրոսը հասնում է մեծ գեղարվեստական ընդհանրացման: Այս այլաբանության մեջ տիրապետում է գրոտեսկը: Եվ այդ ամենը միասին կարող է համեմատվել Ագաթանգեղոսի, Եղիշեի, իսկ նոր ժամանակներում Խաչատուր Աբովյանի նմանատիպ արձակի հետ: Այս հանգամանքն էլ իր հերթին գալիս է հաստատելու, որ Մագիստրոսը բանաստեղծ է բառի ամենալայն իմաստով: Նրան հաջողվում է չափազանց հետաքրքրական գյուտեր անել:

Գր. Մագիստրոսը և իր նամակագիրները

Գր. Մագիստրոսի նամակագիրները ժամանակի նշանավոր հասարակակն^ը, կրոնական և քաղաքական գործիչներ են: Վերնագրական ցուցումներից գիտենք, որ նրանց մի մասը պատմությանը հայտնի անծինք են, ինչպես ասենք Գագիկ Երկրորդ արքան, Պետրոս Գետադարծ կաթողիկոսը, Թոռնիկ Մամիկոնյանը, Սարգիս Անեցին, Վահրամը և այլք:

Կա նամակագիրների մեկ այլ խումբ, որոնց անունները թեև հայտնի են, բայց դրանով շատ քիչ բան ենք իմանում այդ անձնավորությունների մասին: Ընդամենը պարզվում է նամակագրի անունը և զբաղմունքը: Այդպիսի թղթակիցների թվին են պատկանում Տեր Գրիգորը, Ստեփանոս արքեպիսկոպոսը, Գրիգոր Յնձացի տելետիսը, Խնատի Սամուելը, Կիրակոս հույն դպիրը, Շապուհ կրոնավորը և այլք:

Նամակագիրների մի մասն էլ պարզապես անհայտ են: Այդ թղթագիրների մասին ոչինչ ասել բառացիորեն հնարավոր չէ: Հետևենք թղթերի վերնագրերի պարզ թվարկմանը. «Առ ոմն իշխան», «Առ ոմն» «Առ կարծեցեալ ոմն գիտնական», «Առ ոմն կրոնաւոր» և այլն: Թղթի այս ենթաժանրը ժամանակին շատ տարածված էր և ընդունելի: Տվյալ դեպքում երևի միայն հեղինակին է հայտնի իր նմանատիպ թղթակիցների ով լինելը: Չխոսենք ծույլ ու հեղզ աշակերտներին ուղղված 22 չափածո թղթի մասին, որի հասցեատերերը դարձյալ անհայտ են:

Այն թղթակիցները, որոնք հայտնի են մեզ մաև պատմությունից և նշանավոր մարդիկ են՝ քսանհինգն են, իսկ նրանց ուղղված թղթերի թիվն է վաթսույոթը : Մնացած քսան թղթերի նամակագիրների մասին դեռևս ոչինչ հայտնի չէ:

Պետրոս Գետադարծ կաթողիկոսի /1019-1054/ հետ Մագիստրոսի բարեկամությունն ու մտերմությունը սկսվել է 1037-1038 թթ. Բջնիում նրա փակված լինելու ժամանակվանից մինչև իր կյանքի վերջը՝ 1058 թվականը: Զարգացած անձնավորություն է եղել նա և, ըստ երևույթին, մեղմ բնավորության տեր մեկը, որի համար սիրել է նրան Պահլավունյաց մեծ իշխանը: Քաղաքական գործերում դիվանագետի ճկունություն չի ունեցել և հեշտությամբ է գործիք դարձել ճարպիկ ու հաշվեմեկատ մարդկանց ձեռքին:

Ոսկու նկատմամբ բնական թուլությունը և հոգևորականի իր բարձր

կոչման մեջ անբնական այդ արատը՝ նրան հասցրել են ընդհուպ այն քանին, որ վերջինս Ամիի բանալիները վաճառել է Բյուզանդացիներին: Բյուզանդական նենգ դիվանագիտությունը կարողացել է հակամարտություն առաջացնել նրա և արքայի հարաբերությունների մեջ: Որպես տաղանդավոր մարդ՝ ունեցել է նաև որոշ բնական ծայրահեղություններ ու տարօրինակություններ, որոնք մշտապես շեղել են նրա կյանքի ուղին իր բնականոն ընթացքից: Անշուշտ, հետո միայն Պետրոսը հասկացել է, որ քրիստոնյա Բյուզանդիան բնավ էլ իբրև ազատարար չի մտնում Հայաստան:

Գր. Սագիստրոսից Պետրոսին ուղղված ինը թուղթ է պահպանվել, որոնցում տարբեր հարցեր են քննարկվում. Պետրոսի մի ինչ-որ նամակի կորստյան պատճառությունից, մինչև Բարսեղի և Եղիսեի դաստիարակության խնդիրը և մինչև խաչանշան գավազանի նվիրատվությունն ու գովերգը: Նրանց այս մեծ բարեկամությունը պատճառ է դարձել հետագայում Սագիստրոսին ևս Ամիի վաճառքի մեջ անտեղի մեղադրելուն:

Պետրոս Գետադարձը նաև այն դժբախտ կաթողիկոսն է, որով սկսվում է Հայրապետական Աթոռի տարագրությունը՝ սկզբում Սեբաստիա, իսկ հետո նաև՝ Կիլիկյան Հայաստան՝ մինչև 1441 թվականը:

Պահպվումու լավագույն բարեկամներից մեկն էլ Գագիկ Աբասյանն է՝ Կարսի թագավորը: Սագիստրոսը նրա մոտ է ուղարկում Գրիգոր Հնձացի տելետիսին՝ խնդրելով արքայից նրան պատշաճ ընդունելություն և հարգանք ցույց տալ: Եվ քանի որ երկուսն էլ իմաստասեներ էին, ուստի կարող էին բանավիճել Սուրբ Գրքի և արտաքին գիտությունների շուրջը: Բանաստեղծը հորդորում է *«գեղեցիկ մոլությունը»* երևան հանել իրենց ընդունակություններն այդ պայքարի մեջ: Գովում է Գագիկի բանաստեղծելու և իմաստասիրելու բարձր ձիրքերը ու համեմատում նրան Պտղոմեոսի հետ: Իր հերթին բարձր է գնահատում Գրիգոր Հնձացուն, որի հետ ինքը նամակագրական սերտ կապեր ուներ: Վերջինիս ուղղված թղթերում Սագիստրոսը անդրադառնում է հավատքին ու աղանդներին, թվերի մասին իմաստասիրությանը և աստվածաշնչյան լեռների ու ընդհանրապես լեռների բնութագրությանը:

Գագիկ Երկրորդ Բագրատունին /1042-1045/ ևս Սագիստրոսի նամակագիրներից մեկն է: Մեզ են հասել արքային ուղղված Սագիստրոսի երկու թղթերը միայն: Սռանձնապես մեծ համակրանք չունի իշխանը նրա նկատմամբ: Ընդհակառկն, կա ներքին խորշանք և վիրավորված ինքնա-

սիրության հարց:

Պատմիչները տեղեկացնում են, թե սկզբում բարեկամներ են եղել Գրիգոր մեծ իշխանը և նորընծա թագավորը: Մագիստրոսը նրան գահ է բարձրացրել, որպեսզի երկրի անկախությունն ապահոված լինի: Սակայն Գագիկը հերթական զոհն է դարձել պալատական խարդավանքների: Այդ մասին Պաիվափունյաց իշխանը չթաքցրած ակնարկներ է անում նրան. *«Աղէ՛ արծակեա զմեզ ի ձեռն գրոյ. և զօրութեամբն Աստուծոյ ցուցից տեսանդ իմոյ, մինչև յե՞րբ ոչ հասեր ի վերայ խաբօղ սուտակասպասից և թշնամեացն Աստուծոյ»*¹⁰³:

Այդ նույն /ԴԳ թղթում/ գրում է, որ ինքն արքայից փախել է ու խուսափել, բայց չի դավաճանել: Ինքը եղել է անտեղի հալածված և անհիմն կասկածի արժանացած մարդ: Իսկ արքան իր թշնամին է համարել նրան:

Գագիկ Երկրորդը եղել է իր ժամանակի ամենազարգացած անձնավորություններից մեկը: Ցավոք, իմաստասիրությունը նրա մոտ չի զուգակցվել կյանքի մեծ փորձի հետ, և տակավին երիտասարդ Գագիկը խճճվել է ներքին և արտաքին դավադրությունների ցանցում: Որպես երիտասարդ մարդ՝ վստահ է եղել իր ուժերին և անտեսել է իր հակառակորդների՝ իր դեմ ուղղված կործանիչ վճռականությունը: Եվ ընդհանրապես վստահել է մարդկանց, իսկ ոմանց վստահել է չափից ավելի: Նա առիթ է ունեցել հրապարակավ մրցելու հույն իմաստասերների հետ և հաղթելու: Պարտվել է նրանց՝ քաղաքականության և դիվանագիտական խարդավանքների ասպարեզում: Ավետադանի վրա երդված և իրենց երդումը դրժած հույների դեմ Գագիկը պայքարեց իր ողջ կայնքի ընթացքում, որն ավարտվեց նրանց իսկ ձեռքով, ցավալիորեն դավադրաբար¹⁰⁴:

Գր.Մագիստրոսի լավագույն բարեկամներից մեկն է Հովհաննես արքեպիսկոպոսը, որը Այունյաց հոգևոր առաջնորդն էր /1005-1056/: Կոստանյանցը գրում է. *«Թպի թե մի ժամանակ Հովհաննես եպիսկոպոսն ուսուցիչ կամ դաստիարակ է եղել Պաիվափունյց իշխանին»*: Նրան Մագիստրոսը գրել է յոթ թուղթ, սակայն Ս.Արևշատյանը կարծում է, որ անտեսված է մի թուղթ ևս: Խոսքը Հ.Սարկավագին վերագրված *«Յաղագս խրատու մանկանց....»* երկի մասին է: Նրանում *«....Օգտագործված.... արտահայտությունները, հունաբան լեզուն և մանավանդ բովանդակությունը ամենից շատ հիշեցնում են 11-րդ դարի խոշորագույն գիտնական, մտածող և քաղաքական գործիչ Գրիգոր Մագիստրոսի*

նամակները»¹⁰⁵: Հետևապես նա է սրա հեղինակը:

Հովահաններսին ուղղված Սագիստրոսի թղթերը իր ժողովածուի լավագույններից են: Դրանք փայլում են իրենց պատկերավորությամբ և խոսքի ճոխությամբ:/Ժվ թղթի մասին մենք խոսել ենք/: Սակայն նրա մյուս թղթերն էլ շատ արժեքավոր են: Այլաբանական խոսքի սքանչելի կտորներ կան, որոնց մանրամասների ուսումնասիրությունը դեռ ջանքեր ու աշխատանք են պահանջում: Չկների մասին գրված ԺԲ թուղթն օրինակ, միայն հետազայում կբացի իր խորիրոգավոր ու մշուշապատ *«գաղտնիքները»*: Ու՛մ նկատի ունի բնաջնջվող ձկների և ու՛մ նկատի ունի այլ տեղերում բնակվող ձկների անվան տակ Սագիստրոսը: Ի՞նչ է ուզում այդ այլաբանությամբ ասել նա:

Գր. Սագիստրոսի այս և մյուս շատ հասցեատերեր ժամանակի ամենաճանաչված դեմքերից են, և նրանց միջոցով մենք պատկերացնում ենք 11-րդ դարի անց ու դարձը: Սագիստրոսը լայն կապեր ունի ամենաբազմազան դասային և դասակարգային շերտերի հետ, և դա մեծացնում է մեր աշխարհաճանաչողությունը: Շատ հետաքրքիր է, օրինակ, Սագիստրոսի վերաբերմունքն իր աշակերտների նկատմամբ: Նա այնքան նրբանկատ է և այնպես է հորդորում Բասեղին և Եղիսեին համեստության և իմաստասիրության դասեր քաղել Պետրոս կաթողիկոսից, որ ականա զգում ես նրա սերն ու համակրանքը այդ պատանիների հանդեպ: Նա իր հանձնարարականով նպատակ ունի կրթելու և դաստիարակելու վաղվա մարդուն և գիտնականին, վաղվա քաղաքացուն: Իսկ այդ մարդը չի լուծի գիտության բարդ և կնճռոտ հարցերը, եթե չի ուսումնասիրել Արիստոտել և Պլատոն, եթե չգիտի սբ. Գիրքը և չի տիրապետում յոթ ազատ արվեստներն:

Եվ ինչքա՞ն սրտացավություն ու գուժ կա նրա նամակներում՝ Վահրամի և իր մյուս որդիների նկատմամբ: Հայրական այդ սեղ նրա հոգու ներդաշնակության ու գեղեցկության մի կողմն է արտացոլում միայն:

Սագիստրոսն ամեն ինչ անում է, որպեսզի իր շուրջ ստեղծի կատարելության և գեղեցիկի մի կախարդական մթնոլորտ: Որով, ի դեպ, նախապատրաստություն է տեսնվում երկրորդ կյանքի համար:

Գր. Սագիստրոս հանրագիտակը

Բազմակողմանի զարգացած այս անձնավորությունը հանրագիտակ է՝ իր ժամանակի տեսական մտքի համարյա բոլոր նվաճումներին լավատեսյակ և իր վերաբերմունքը դրանց նկատմամբ դրսևորած: Այդ բոլորի պատճառը ոչ միայն այն է, որ նա իսկապես մեծ տաղանդով օժտված մարդ է, այլ նաև այն, որ 11-րդ դարը պայմանավորում էր այդպիսի մտածողություն և այդպիսի անհատների գոյություն: Նրա շուրջ կարելի է հիշել շատ և շատ իմաստասերների, որոնք նպաստում էին այն բանին, որ տաղանդաւորը ավելի մեծ նվաճումների հասնեն, քան կարող են:

Դա երևում է թեկուզ նրանից, որ այդ ժամանակվա գիտնականները խիստ մտահոգված էին արվեստի ու գիտության հրատապ խնդիրներով և ամեն ինչ անում էին իմաստասիրությունը իրենց կյանքում արմատավորելու համար: Եվ սա համարում էին անհրաժեշտ մի պայման բարին ու գեղեցիկը մարդու մեջ արթնացնելու և զարգացնելու ճանապարհին:

Այդ ամենի հետ մեկտեղ ունեին գիտելիքների մեծ պաշար և բանավիճելու աննախադեպ բարձր ծիրը:

Հիշենք, օրինակ, *«Առ վարդապետն Սարգիս առաջնորդ ուխտին Սեւանայ, քանզի գրեալ էր Գագիկ առ վարդապետս այս, եթե եկեսցես առ իս և ի միասին գրոց պարապեսցուք»* թվով ԻԲ թուղթը¹⁰⁶: Այստեղ հիշատակվող Գագիկը նույն Գագիկ Երկրորդ արքան է, որը Սարգսին հրավիրում էր՝ միասին իմաստասիրությամբ զբաղվելու. այն է՝ բանավիճելու: Հանգամանք, որ ցույց է տալիս, թե գիրն ու գրականությունը որքան տարածված են եղել ազնվականության շրջանում, դարձրել ժամանցի ու հաճույքի առարկա:

Շատ գեղեցիկ է ու տպավորիչ նամակի մուտքը. *«Եկն եհաս առ մեզ յղեալն ի մերոյ նախուստն ելոյ արքայէ, զոր առաքեալ առ քեզ սրբազանդ և գերկատար բոլոր ճեմարանի Արամեան ազգին և քրիստոնեական լիքօնիւք և կուսական բրաբիոնիւ սաղաթթացեալ, որ և ինձ յոյժ ըղձալի և յոյս բարեաց. այլ մեր յոյժ երկիրդի եղեալ տապ տազնապի տարակուսանաց հասանէր, յորժամ զառնէս համբաւոյ իրոսակք նախընթացից ազդեցին մեզ, ոչ ուղղախօսելով զԳորոռնս Գորիհոն մեզ ծանուցին. զոր մեր յերկիրդի կասկածանաց եղեալ նախնւոյն այն կապտողի և յեղուզակի, ասեմ զիա՞րդ կրկին մատնեաց Տէր զտունս Սամիկոնեան ի*

ծեռս նորա. և ահա կարծիս կասկածանաց մեզ եղեալ յԱշտիշատայ դից
դիցազնական դիւական յարծակման, զուցէ սանդղամետականին խզեալ
կապանաց, կամ եթէ իղծք կիւսոյ հմայից դիւքութեան իբրու առ ի
շաւղովն յարուցանեն զՍամուէլ, կամ շուայտական շիղարացն շարս
շամանդադեալ շոհանան ի վերայ մեր: Սինչ յայսմ էաք զարհուրման,
վառեալ վահանօք և սպառազինեալ անարի միզակօք, պատահախտի
յուզական շիկորական որակեալ, ուշ եղեալ առ նախընթացն Ամլածին և
մերն Պարթև օգնականութեան կարօտեալ: Իսկ յայսմ եղեալ հանդիսի,
տեսի զԳոռիհոն եղեալ սա Գործոն, և ի Դիոնիւսեայ զմայեալ, ատորորակ
կայծակացեալ հրադիմական կարմրութեամբ, և գթեալ Գործոն
զայթակղեալ, զաղափարեալ զԳոռիհոն: Սակայն ծանոյց մեզ զբոյր
ողջնութիւն և զաւետեացն ծիր դմա շնորհելով, վեջնանահանք առ քոյդ
առաքեցաք սրբութիւն: Եւ այս այսքան գոեհօրէն և անկոփ կարկատուն
բան կատակական»¹⁰⁷:

Բերված հատվածը բավականին բարդ է, և առնչություններն այնտեղ
մեծ իմացություն և գիտելիքների պաշար են պահանջում: «Այստեղ կան
ակնարկներ և հայոց պատմությունից, և Սուրբ Գրքից, և հունական
դիցաբանությունից: Որպեսզի ընթերցողը հասկանա այդ «կատակա-
կան» խոսքը և հաճույք ստանա դրանից, նա պետք է գիտենա, թե ով է
եղել Գոռիհոնը /հսկապես Գդիհոն, Սյունիքի իշխանը, Վահան Սամիկո-
նյանի հակառակորդը, որ անցել էր պարսիկների կողմը և մարտերց մեկի
մեջ սպանվել/: Նա պետք է տեղեկություն ունենա Աշտիշատի աստված-
ների, Սանդղամետականի, վիուկի միջոցով Սամուելի հատուցման
առասպելի մասին ըստ Սուրբ Գրքի, այլև շիղարների /առանձին ոգիներ
են/ մասին: Նա պետք է իմանա, թե ով են «նախընթաց Ամլածինը» /Ս.
Կարապետ Զովհաննես Մկրտիչն Ամլորդի/, «մեր Պարթևը» /Գրիգոր
Լուսավորիչ/, և Դիոնիսոսը /գիմու աստվածը, «ի Դիոնիւսեայ զմայլեալ»-
հարբած/: Սարգիս վարդապետը հայոց պատմության և Սուրբ Գրքի
վերաբերյալ ակնարկներն անշուշտ շատ լավ գիտեր: Բայց նա անպա-
յաման ծանոթություն ուներ Դիոնիսոս /Բաբոս/ աստծու մասին» ևս¹⁰⁸:

Մ. Աբեղյանն այնուհետև նկատում է, որ «*Թղթի զվարճաբանական
առաջաբանից հետո Սագիստրոսը ծաղրում է Գագիկին ըստ երևույթին
նրա համար, որ նա կնոջից բաժանվել է ուզեցել....*»: Նա ինքնանապատակ
կերպով չի անդրադառնում բժշկագիտությանը, այլ այստեղ ուզում է
երևան հանել Գագիկի ֆիզիկական թերությունները: Նա կասկած ունի

արքայի շիտակության վրա և խորհուրդ է տալիս զգույշ լինել, որովհետև արքան *«մանուկ է»* և կարող է վնաս պատճառել, քանի որ չար ուսումից և վատ դաստիարակությունից է, որ վատ մարդիկ չեն ուղղվում:

Մագիստրոսը թուղթն ավարտում է խնդրելով Սարգսին մինչև արքայի մոտ գնալը հանդիպել իրեն. *«...Ձի թերևս գիղձ տենչանաց փափաքման յօժարութեան որ առ միմեանս սիրովն Աստուծոյ ողջունեմք և առ միմեանս զգեղեցիկ հակառակութիւնսն ճեպեմք իմաստասիրել»*¹⁰⁹:

Պարզվում է, որ բացի Գագիկի հետ կայանալիք բանավեճից Մագիստրոսը Սարգսին առաջարկում է նախապես հանդիպել իրեն, որպեսզի *«զեղեցիկ հակառակությամբ»* իմաստասիրեն: Ուրեմն ստացվում է, որ իմաստասիրությունն արվեստ էր, բանավեճը՝ հաճելի զբաղմունք: Մրադիկ ցանկանում էին ճանաչել աշխարհը, հաղորդակցվել ու նաև մրցել: Բայց կար մի այլ հանգամանք ևս: Հայտնի է, որ Պլատոնը ճշմարտության բացահայտման բանալին համարում էր բանավեճը, այդ կարծիքին է նաև Մագիստրոսը:

Բանավեճային բնույթի է օրինակ Իբրահիմ ամիրային ուղղված Հ թուղթը, ուր դարձյալ *«զեղեցիկ հակառակութեամբ»* նա սկսում է քննել քրիստոնեական և մահմեդական կրոնների տարբերությունը՝ նպատակ ունենալով ցույց տալու մահմեդական կրոնի հակասություններն ու թերությունները և ընդգծելու քրիստոնեության առավելությունները: Շատ է ուրախանում այն բանի կապակցությամբ, որ Իբրահիմը դիմել է իրեն նման մի ազնիվ խնդրանքով: Բարձր գնահատելով նրա այդ ձգտումը՝ Մագիստրոսը գրում է. *«...Իբրահիմ, ի Հազարայ և Իսմայելէ յառաջ խաղացեալ, այսպիսի զեղեցիկ գիւտից և խնդրոյ թևակոխելով, թափառեալ և հանդիսացեալ ջանիւ խոկաս հասանել: Այս ոչ ինձ զարմանալի է, քանզի Արրահամն առաջին, զորմէ վերագոյն գրեցաք, ոչ եթէ խնդրէր զԱստուած, որ ոչ էր, այլ զայն, որ էրն և էն և եղիցին.... Եւ դու, այսպէս ճշմարտությանն հետևելով, զարդարն և զուղիղն ճանապարհ հայցես ի մէնք ճանաչել»*¹¹⁰:

Ու թեև ինքը սիրում է *«կարճառոտ հատանել»* /կարճ կտրել/, բայց այստեղ բացում է իր գիտելիքների շտեմարանը և սփռում իր հոգու ողջ հարստությունը: Եվ կրկին ու կրկին Մագիստրոսը ցուցաբերում է մանրամասների զարմանալի իմացություն ու բազմազանություն: Երևույթների նրա նուրբ ընկալումն ու մեկնաբանությունը հիացմունք է պատճառում:

Նրա թղթերի մեծ մասը աչքի են ընկնում իրենց ընդգծված իմաստա-

սիրական ոգով: Այդպիսին են թե աշակերտներ Բաբսեղին և Եղիսեին ուղղված թուղթը, թե Պետրոս Գետադարձին հասցեգրված թղթերի գերակշիռ մասը, թե Գագիկ Աբասյանին ու մյուսներին գրված շատ թղթեր:

Մագիստրոսը հանրագետ է և աչքի է ընկնում գիտության իր խոր իմացությամբ, ճանաչում է մարդկային բնավորության ամենաբազմազան կողմերը, հասարակական խավերն ու միջավայրը:

Նա մոտիկից և ըստ էության գիտի հարևան և օտար ժողովուրդներին, ծանոթ է նրանց մշակույթներին, կյանքին ու կենցաղին, վարժ տիրապետում է ժամանակի առաջավոր ժողովուրդների շատ լեզուների:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԳ

ԳՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայ հին մատենագրությունը Մագիստրոսի տեսադաշտում

Նախորդ շրջանի հայ մատենագրության հետ Մագիստրոսի կապն ակնառու է: Նա անպայմանորեն իրեն հայ մտավորական ու բանաստեղծ է զգում և իր եսի անունից խոսելիս այդ շարունակական շրթայի մի մասնիկն համարում իրեն: Նա պարծենկոտ չէ, բայց և այնքան համարձակություն ունի, որ կարողանում է ճիշտ գնահատել իր արժանիքները: Գր. Մագիստրոս բանաստեղծը տրամաբանորեն կապված է իր նախորդ շրջանի մշակույթին, ինչպես՝ համաշխարհային, այնպես էլ՝ հայ: Գրականագետ Դր. Թամրազյանը նկատում է. «*Վերածնության կարևոր երևույթներից մեկն այն էր, որ նոր դարի մարդիկ խոր հետաքրքրություն էին ցուցաբերում անտիկ աշխարհի և արվեստի ու գիտության, ինչպես նաև հայրենի գիտության և գրականության անցյալի նկատմամբ*»:

Մեր առաջին հեղինակներից ամենաճանաչվածը Մագիստրոսի համար Մ. Խորենացին է: Մեր ժողովրդի ծագման ու հետագա զարգացման պատմությունը նա ընկալում է Պատմահոր ծևով և միանգամայն հոգեհարազատ է նրա Ոգուն: Զգացվում է, որ նա խոր հարգանք ունի հելլենաճաշակ այս մտավորականի նկատմամբ, քանի որ վեջինս տեղյակ է իր ժամանակի ամբողջ համաշխարհային մշակույթի և գիտության նվաճումներին: Իրեն լիարժեք մարդ զգալու համար նա մեկընդմիշտ կյանքի գիրք է դարձնում Խորենացու Պատմությունը, ոգևորվում նրա հերոսական կերպարներով. «*....Ուր՝ Արշամ և Արգաթ, կամ Սանատրուկ և Երուանդ, Արտաշէս և միւս Արտաւազդ, Տիրան, Տիգրան, Վաղարշ և Խոսրով, ուր մերն Տրդատ, Խոսրով, Տիրան և Տիգրան, Արշակ, Վարազդատ, Արշակ և վերջին Վաղարշակ*»:

Իսկապես, այդպիսի քաջերի պակաս է զգում իր շուրջ Գրիգոր իշխանը, ափսոսանք ու զարմանք, որ իր օրերը չեն շլացնում առասպելական հերոսականությամբ:

Գր. Մագիստրոսը ծանոթ է 5-րդ դարի մյուս կարևոր հուրշաձանցին՝

Ազաթանգեղոսի Պատմությանը: Այդ մասին տարբեր առիթներով նա հիշում է. *«Եւ զի՝նչ ինձ այսոքիկ երկարագոյն բանս և ծանօթագոյն իջրև ուխից ինչ նուազ ի ծով ծովացեալ, սակայն ոչ թողից զմերոյն Պարթևի, որ պար առաջին էր պարծանաց քում տողանի տէրութեան և հայր քո, յիւրումն խորագոյն գրի գիտւզողն Օտայ անունեալ, որ ի խնդիրն չոգաւ և ի խաւարչտին խորափտէ առասանելով բերեալ, բարի յիշատակի յիւրն աստուածեղէն տառս արժանի եղեալ գրէ Ազաթանգեղոս»³:*

Դենց Ազաթանգեղոսի երկից է, որ Պահլավունիները քաղում են իրենց տոհմի հետաքրքրական պատմությունը: Մագիստրոսը հպարտանում է, որ իր նախապապ Գրիգոր Լուսավորչի ձեռքով է գծվել մեր հավատքի ճանապարհը՝ փրկության և հերոսացումի ուղին:

Մագիստրոսը ճանաչում է 5-րդ դարի մյուս հեղինակներին ևս, թեև անուն առ անուն չի խոսում նրանց մասին: Եվ քիչ է ճանաչում և հիշատակում այդ ժամանակաշրջանից հետո ապրած և գործած մեծերին:

Նրա համար մյուս հեղինակությունները Դավթ Ամհաղթն ու Անանիա Շիրակացին են: Դավթի մասին նա հիշում է հունական տրամաբաններից կատարած իր թարգմանությունների կապակցությամբ՝ ասելով, թե Օլիմպիոդորոսի երկն էլ է հայերեն թարգմանված եղել, և այդ մասին հիշատակություն է թողել Դավթը ⁴: Նրա ազդեցությունն առավել քան մեծ է Մագիստրոսի վրա: Նա ամբողջապես կլանում է Դավթի փիլիսոփայական ուսումնքի միջուկը, որը դառնում է իր համար ելակետային սկզբնաղբյուր: Այդ մասին Ս. Արևշատյանը գրում է՝ Դավթի փիլիսոփայության ամենակրթոտ տարածողներից մեկը համդիսացել է Գրիգոր Մագիստրոս Պահլավունին: *«Նրա հիմնադրած Սանահինի ճեմարանում, իսկ այնուհետև Անի քաղաքի և Դադպատի վանքի փիլիսոփայական դպրոցներում Դավթի ժառանգությունը եռանդագին ուսումնասիրվում էր ու Արիստոտելի, Պորփյուրի, Փիլոն Ալեքսանդրացու և այլ անտիկ, ինչպես նաև վաղ քրիստոնեական մտածողների հետ միասին մտցված էր պարտադիր ուսումնական գրականության ցուցակի մեջ»⁵*, -գրում է նա:

Դավթի նորալատոնական ուղղությունը՝ Մագիստրոսը շարունակում է զարգացնել: Փիլիսոփայական այդ ուսմունքն էր ժառանգել Անանիա Շիրակացին, և այդ գիծը փոխանցվել էր նրան: Դրանով ամբողջանում է Դավթի-Անանիա-Մագիստրոս գիծը և շարունակվով հասնում Դովհանես Սարկավազ, /XI-XII դ./ Վահրամ Ռաբունի /13-րդ / և Գրիգոր Տաթևացի /14-15 դդ./:

Փիլիսոփայական այդ ուսմունքը մեզանում միանգամայն արդյունք է հունաբան դպրոցի գոյության և գաղափարական նպաստավոր գործունեության: Դպրոցը մեզանում ստեղծել է Դավիթը՝ մեր իրականությունը ներմուծելով նրա ավանդները Ալեքսանդրյան դպրոցից: Հունաբան դպրոցի՝ նրա հետևորդները գաղափարական, տերմինաբանական, փիլիսոփայական, մանկավարժական պարարտ հող ստեղծեցին նրա առաջընթացի⁶: Ձարգացման այս բոլոր ճանապարհները առկա են և Մագիստրոսի մոտ, որը արժանավայել կերպով շարունակում է ուսուցիչների գործը:

Շիրակացու ստեղծագործությունների նկատմամբ խոր հետաքրքրությունը ցույց է տալիս, որ Մագիստրոսը միանգամայն բարձր է գնահատում նրա ստեղծագործությունները: Նա խնդրում է Պետրոս Գետադարձից՝ իրեն ուղարկել Ա. Շիրակացու «*Քննիկոն*» աշխատությունը, որը գտնվում է կաթողիկոսի հարուստ և ընտիր գրադարանում. «*Փոխան Յիսուսի, համարձակիմք, միշտ սովորեալ յառատաձիր պարգևս, զկարևորսն և զպիտանացուսն յարատևական բաշխելով քեզ, որ ոչդ երբեք դանդաղիս զգիրս Անանիայի Շիրակայնոյ, որ բազում աշխատութեամբ և յաճաշու խոնջմամբ հաւաքեալ ի բազմազան և յընաբեղուն մատենից*»⁷:

Մագիստրոսն ուզում է ըստ էության ճանաչել 7-րդ դարի հանճարի ժառանգությանը, որը շատ կարևոր նորություններ է ներմուծել մեր իրականության մեջ և այն դրել գիտական հիմքերի վրա: Անանիայի բնագիտական հայացքների նկատմամբ հետաքրքրությունը նաև այն մասին է խոսում, որ Մագիստրոսը կարողանում է գնահատել մեծերին: Եվ որքան արդարացի է նա, երբ Անանիայի Մատյանի կապակցությամբ հիշում է, թե ինչքան մատյաններ են մոռացության մատնվել և գուցե նաև կորստի. «*Եւ արդ՝ քանզի սակս մատենին Անանիայի եղև յիշատակ իմաստասիրելոյս մեզ, բեր ոչինչ խրթին և անյայտբար. կամիմք զհայցուած մեր ծանուցանել մերոյ լուսաւորչիդ ի բազմաց անփոյթ եղելոյ այլպիսի գործառնութիւնք և հանդեսք, որ ոչ երբեք ի ստադին վարժելոց գրամարտկոսաց և քերդողաց հնացեալ, ի մոռացումն այսպիսոյ մատենի ոչ միայն եղև անկանել, այլ և բազմաց*»⁸:

Նորից այն նույն ցավը, որ դեռ Մ. Խորենացուն էր տանջում: Գր. Մագիստրոսը բողոքում է արքայական գրադարանում կուտակված և մոռացության մատնված հեղինակների ու նրանց երկերի համար: Դա

անփութության և արհամարհանքի արտահայտություն էր սեփական մշակույթի նկատմամբ:

Գր. Մագիստրոսին հետաքրքրել են իր ճախորդներից համարյա բոլորը: Սակայն արաբական նվաճումների ընթացքում ստեղծված արժեքները մի տեսակ մարսված չեն եղել 10-11-րդ դդ. ուսումնասիրողների կողմից: Մինչ այդ՝ ավելի շատ ուշադրություն է դարձվել աստվածաբանական և դավանաբանական գրականության, քան պատմագրության վրա: Եվ միայն սկսած 10-րդ դարից՝ մեծանում է հետաքրքրությունը և մյուս ճշգրիտ գիտությունների՝ բնագիտության նկատմամբ:

Մագիստրոսի համապարփակ ուշադրությունն ու հետաքրքրությունը թափանցել է ամենուր: Նա ուսումնասիրել է այն ամենը, ինչ հանգամանքների բերումով կամ պատահականորեն իր ձեռքն է ընկել: Երեմիայի գրքի մեկնության կապակցությամբ նա գրում է. *«Բանս հայցէ ի քէն զմեկնութիւն Երեմիայի մարգարէի, զոր գրեալն է Ասողկայ երջանիկ ծայրագոյնն ծերոյ շնորհել մեզ»*:

Ստ. Ասողիկի մեկնության մասին է գրում Մագիստրոսը նշված հատվածում: Մագիստրոսը սիրում է ասոցիատիվ մտածողությունը: Նրա հիշողությունը մեկից անցնում է մյուսին, մի երևույթից մեկ այլ երևույթ: Եվ այդ շղթայի մեջ նա համաշխարհային մշակույթի մեծերից գալիս է դեպի հայկական ավանդները, և ընդհակառակն, հայկականից գնում է դեպի համաշխարհայինը: Այն, ինչ արժեքավոր է, նրա համար կարևոր է, և բնավ էլ նշանակություն չունի, օտար է այն, թե իր սեփական ժողովրդինը: Եվ դա իսկապես նոր մտածողության ու նոր հայացքների արտահայտությունն է մեզանում: Ոչ բոլոր ժամանակներում և ոչ բոլոր հեղինակներն են, որ կարող են այդպիսի վերաբերմունք ունենալ և այդպես պարզ ու անկաշկանդ մտածել: Այս դեպքում անկողմնակալ մոտեցում է ցուցաբերվում նաև սեփական մեծերի ստեղծածի և գնահատության նկատմամբ: Ամբողջ նորն ու նորագույնը կարևորվում է, արժեքավորվում և դառնում տվյալ դարաշրջանի ամենաեական ու բնորոշ հատկանիշը:

Այստեղ գործունեության ծրագիր և նորագույն հայացք կա, որի շուրջ կենտրոնացնում են գիտելիքները: Սա այն ճանապարհն է, որով միավորվում են հայկականն ու համաշխարհայինը այն սահմանը, որտեղ դրանք միախառնվում են, ներթափանցում իրաի մեջ:

Հունական մշակույթը Գր.Մագիստրոսի գնահատմամբ

Գր.Մագիստրոս երևույթը չի կարելի պատկերացնել՝ առանց հունական մշակույթի հետ կապի ու այդ մշակույթի նկատմամբ ունեցած ջերմ վերաբերմունքի: Նրա գրեթե բոլոր թղթերում հարցադրումներն ուղղակի կամ անուղղակի առնչվում են հունական անտիկ և հետագա շրջանի հետ: Այստեղ է, որ մարդկությունը ստեղծել է այն ամբողջ վեհն ու բարձրագույնը, ուր ամեն ոք գտնում է իդեալի իր արտահայտությունը և դրա իր չափանիշը: Ինչպես Վերածննդի եվրոպական վարպետները՝ Մագիստրոսը միանգամայն ճիշտ պատկերացում ունի նաև հունական և մյուս ժողովուրդների մշակույթների փոխազդեցությունների մասին: Ամբողջ հունականը ստեղծվել է մարդկային լավագույն արժեքներն ու նվաճումները այդ լեզվով թարգմանելու և պահպանելու ճանապարհով: Հույները պետք է ուրախանան, բայց ոչ բնավ պարծենան դրանով, որովհետև եթովպացիներն ու եգիպտացիները ևս մեծ ներդրում ունեն նրա ձևավորման համար: Աշխարհի բոլոր անկյուններում ստեղծվածը թարգմանելով՝ հույները կորստից ու անհետացումից փրկել են անգնահատելի արժեքներ ու դա մարդկությանը վերադարձրել: Եվ դրա կողքին ավելացրել իրենցը: Դասական հելլենական մշակույթը նվաճում էր համաշխարհային իմաստով, և Մագիստրոսը՝ որպես զարգացած մարդ, սիրում է այն:

«...Ու՛ր մեր յայտոսիկ միտք և զգացութիւնք, որ յասպարիսի խաղացուցանէի ի բանս իբրու ի ստաղին Կոռիբոս կամ Սոեմնաս և Պիպալիոս, որ և զծովականն ստեղծանէր մրմունջս: Քեզ և հոմերականս հատանէի բան, ի պիստնի պուետեալ առաւել քան զԵւնոմէոս Լիսաղաղ կյանքի աստվածը՛, որոյ ճպուռն ի լծակին նստեալ և զպակասեալս լնոր զազի ի վերայ վիշապին, և զկաղնիսն մերկ երգով փոփոխէր և ուր կամսեցի տնկէր»¹⁰, - գրում է նա Իբրահիմ ամիրային: Այս դրվագում Գր. Մագիստրոսը ամենաբարձր գնահատականի է արժանացնում հույն հեղինակներին և դասական շրջանի հունական առասպելաբանությանը: Հասկանալի է, որ նշված հեղինակների ստեղծագործությունների մանրամասն իմացության դեպքում միայն կարող էր տեղի ունենալ փոխըմբռնում Իբրահիմի և նրա միջև:

Անտիկ մշակույթը նա համարում է մարդկության զարգացման

ճանապարհին մի հիմք, որի վրա հետագայում բարձրացել է քրիստոնեական մշակույթը: Այն մի աստիճան ցածր է վերջինից: Այստեղ կարծես բացահայտվում է Մագիստրոսի մտքի էական հատկանիշներից մեկը, որը հակասության մեջ է գցում նրան: Նա մի դեպքում անչափ բարձրացնում է անտիկ մշակույթը, իսկ մի այլ անգամ դնում այն ստորադաս վիճակում. *«Բայց զ՞ինչ մեզ ի հեթանոսացն բերել զվկայութիւնս, քանզի կաթիլ իմն աստուածային կաթեալ էր առ նոսա, այլ ոչ ոք ի մարգարէական կամ առաքելական»*¹¹:

Ըստ Մագիստրոսի՝ հունական դասական մշակույթին պակասել է մի կարևոր հատկանիշ: Այն, որ դա Սուրբ Զոգու կնիքը չի կրել իր վրա, անգամ Պլատոնին տրված չի եղել աստվածային այդ մեծ շնորհը, և նա նախախնամության ձեռքով մի աննշան չափով է ընդամենը առնչվել դրան. *«...Պղատոն փոքր ինչ իմաստասիրելով գերակատար գոյիցս ասելով կամեցաւ զարարչականն էութիւն յասելն իւրում այսպէս, թէ որ զամենեսեան ածեալ անեզական և մակաւասար բնութիւն ի վերայ կալով ամենայնի, նախախնամէ զամենեսեան...»*¹²:

Չետաքրքիրն այն է, որ Մագիստրոսն իսպառ չի ժխտում հեթանոսական մշակույթը, այլ ըստ արժանվույն է գնահատում դա: Դիտելով իրեն իրենց զարգացման աստիճանականության մեջ՝ նա ցուցաբերում է դիալեկտիկ մտածողություն: Հասկանալի է, որ 11-րդ դարում անտիկ մշակույթը չի մերժվում այնպես, ինչպես դա արվում է քրիստոնեության տարածման առաջին դարերում /4-6 դդ./: Շատ և շատ դեպքերում վերաբերմունքը փոխվել էր: Մշակվել էր նորը անտիկ արժեքների գնահատման վերաբերյալ: Արիստոտելի և Պլատոնի երկերը թարգմանվում և մեկնաբանվում էին եկեղցական նշանավոր հայրերի կողմից: Միջնադարյան այդ մեկնաբանությունների շնորհիվ այս հեղինակները բառացիորեն *«քրիստոնեացվեցին»*: Տվյալ դեպքում Մագիստրոսի վերաբերմունքը հարաբերականորեն է բացասական, իսկ ընդամուր առնամք՝ դրական է: Նա բազմաթիվ անգամներ կոչ է անում իր թղթակիցներին դասական շրջանի այս կամ այն երկի հետևությամբ համապատասխան եզրակացություն անելը: Եվ զարմանալի նրբությամբ ու խորիմացությամբ նա նորից սկսում է անցումները, անկաշկանդ երթերն ու կուտակումները մտքի ասպարեզում: Նրան մենք անմիջապես տեսնում ենք հին հույն բժիշկների ու մարդաբանների գնահատության դիրքերում: Փիլիսոփայությունից ու բարոյագիտությունից անցնելով

բժշկագիտությանը նա անսքող է խոսում նաև մարդկանց ֆիզիկական արատների ու պակասների մասին¹³: Դրանում դեր է խաղում այն հանգամանքը, որ Մագիստրոսը բժշկագիտությանը քաջատեղյակ և հմուտ մարդ է: Պարզ ասած՝ նա նաև բժիշկ է: Եվ բնավ էլ արտառոց չէ այն հանգամանքը, որ նա մատնացույց է անում արտաքին գիտությունները և դրանց հանճարեղ կրողներին լավ ճանաչելը. *«Եւ նախ զի գրեցից քեզ թուղթ յարտաքին իմաստասիրացն ատտիկեցի հոմերական ստորասացությունս ելլենական հանճարով ոչ պարզաբար, այլ պուլտիկոսաբար, որպէս Պամպէլասն այն Պիւթագորաս և Պոիմիդէս և Դոուփոս և Պիպալիաս և այլքն յոգնախումբ ի ճեմարանսն Աթենայ գտեալ և յելլադայ պատուեալ»*¹⁴:

Վերջիններս արեւմտական դպրոցի այնպիսի հզոր ներկայացուցիչներ են, որոնցից յուրաքանչյուրն իր ներդրումն ունի գիտության ու արվեստների զարգացման գործում: Այդ մեծ իմաստասերներն ու պոետները ամբարել են մարդկային մտքի նվաճումները, որի պատճառով Պտղոմեոսի պես հանճարամիտ թագավորները դրանք խնամքով պահել են իրենց պալատների գրադարաններում: Եվ դա օրինաչափ է, քանի որ փիլիսոփայելը, իմաստասիրելը և բանաստեղծելը մարդկային ամենամեծ շնորհներն են, որոնք հույների մոտ անսահման կատարելության էին հասցվել: Դա է պատճառը, որ նա հիացմունքով է ամեն անգամ խոսում Դոմեթոսի մասին. *«Յաճախ զգօրութիւն Աքիւղդայ ոչ դանդաղի Դոմեթոս պատուել...մանուածոյ, ոսկետեսակ, հրաշ առասական մակագրեալ տաղիւք յիւրումն սքանչելի տախտակին յառաջնում մատենին»*¹⁵:

Եվ հատկապես Մագիստրոսը նախընտրությունը տալիս է Դոմեթոսի առաջին գրքին՝ *«Իլիականին»*: Բարձր է գնահատում երկի բանաստեղծական արժանիքները, որով և այն ձեռք է բերել ամմահության իրավունք: Մագիստրոսը ծանոթ է ոչ միայն հունական մշակույթի պատմության մեջ երկրորդական թվացող անձանց, այլևս այս կամ այն երկի գեղարվեստական արժանիքներին մանրամասն: Դա հուշում է, որ նա այդ ժողովրդին և նրա ստեղծածը ճանաչում է ըստ էության:

Գր. Մագիստրոսը ծանոթ է հունական կյանքի և մշակույթի ամենահետաքրքիր մանրուքներին, որոնք շատ կողմերով պարզաբանում են երկվոյթի նշանակությունը և բացահայտում կերպարների էությունը: Երկրորդական չէ, բնավ, որ օրինակ, Սոկրատեսի հարկադրական մահը

համարում է համբակների հեզմաբանության¹⁶ արդյունք:

Հունական մշակույթի բյուզանդական կամ քրիստոնեական շրջանը ևս հոգեհարազատ է Մագիստրոսին: Նա այստեղ էլ կարևոր մանրամասներ ու դեմքեր է ճանաչում, լավատեսյակ է Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու և Գրիգոր Նյուսացու ստեղծագործություններին ու թղթերին, ինչպես նաև Գրիգոր Աստվածաբանի խրատներին ու ծառերին: Ահռելի է այն տեսահորիզոնը, որի վրա պատկերում ու պատկերացնում է այս մշակույթը Պահլավունյաց մեծ իշխանը: Ղա ձգվում է Հոմերոսից հույն ողբերգակներ ու հանճարեղ Արիստոֆանես և այնտեղից հասնում Բարսեղ Կեսարացի, շարունակվում մինչև Փոտ պատրիարք, մինչև Միքայել Փսելոս: Հատկապես քրիստոնեական շրջանի հեղինակների գործը մի քայլ առաջխաղացում է համարում նա՝ հեթանոսական շրջանի մշակույթի ստուգումը և վերաիմաստավորումն իբրև: Այդ նկատառումով է, որ նա Կիրակոս հույն դպրին բացի հեթանոս հեղինակների երկերը հանձնարարում է իր գիտելիքները լրացնել նաև բյուզանդացի իմաստասերների ուսումնասիրությամբ. վերցնել և ուշադիր ընթերցել Գրիգոր Նյուսացու մատյանը մարդու կազմության և բնության մասին¹⁷:

Ինչպես տեսնում ենք՝ չթուլացող հետաքրքրությամբ և համակրանքով է Մագիստրոսն անցնում բյուզանդական շրջանի մշակույթի և գեղարվեստական ու փիլիսոփայական ժառանգության գնահատմանը: Կիրակոսին կատարած որոշ դիտողությունները նրա մոտ տեսականորեն քիտում են Կեսարացու «*Կեցօրեայից*»: Խոսքը երկնքի, երկնային մարմինների դիրքի ու կառուցվածքի և մարդու մարմնի նմանության՝ նրա պատկերացումների մասին է¹⁸: Անկասկած, Մագիստրոսը ծանոթ է Բ. Կեսարացու նամականուն ևս:

Հունական մեծ մշակույթի հետ կապն ու կախվածությունը նա հաստատում է նաև Դիոնիսիոս Թրակացու «*Քերականի*» մեկնությամբ¹⁹: Այն դարեր շարունակ մանուկներին քերականության ուսուցանելու ձեռնարկներից մեկն է եղել և Մագիստրոսից մեծ ջանքեր ու գիտելիքներ է պահանջել:

Մագիստրոսն ամենահազվագյուտ մանրամասներով գիտի հունական փիլիսոփաներին: Էպիկուրից սկսած՝ նա ճանաչում է բոլոր մեծ ու միջակ փիլիսոփաներին՝ Սոկրատես, Պլատոն, Արիստոտել, Պյութագորաս, Պորփյուր, Պիպալիաս: Ուրեմն՝ ատոմիստական փիլիսոփա-

յությունից մինչև օբյեկտիվ և սուբյեկտիվ իդալիզմ:

Գեղարվեստական մտածողության առումով ամենակարևոր դեմքը նրա համար մնում է Հոմերոսը: Գագիկ Աբասյանին ուղղված իր թղթում նա գրում է. *«2ի տեսանենք զքեզ ի հոմերական տաղսն վերտառեալ չափաբերական և ոտանաւորս հազներկական կարկատեալ, զի և դա յայնոսիկ յարդարեալ, զի Թեովնեան արիեստն հռետորական յորդորեալ շարժել զքեզ մակտառեսցէ զօրէն Արիստոտէլի»²⁰:*

Գագիկը չափածո ստեղծագործություններ է գրում և արվեստի սիրահար ու հովանավոր է, որի պատճառով Պաիլավունյաց իշխանը նրան ընդունում է որպես մեծությոն:

Հոմերոսի համարը պոետական իմաստով մեծապես ազդել է Գր. Մագիստրոսի և իր արվեստի վրա: Նա լավ է ճանաչում հույն ողբերգակների՝ Սոփոկլեսին և Եվրիպիդեսին: Անկասկած է, որ նա ծանոթ է էսքիլեսի արվեստին ևս, թեև այդ մասին հիշատակություն չի թողել: Արիստոֆանեսը նրա համար սիրելի հեղինակ է ու մեծ հեղինակություն: Մագիստրոսը գիտի և տեղյակ է Հիպոկրատեսի, Կալիմաքոսի, Օլիմպիոդորոսի, Պարմենիդեսի, Աֆրիկանոսի, Ստինոսի, Նիկոմաքոսի, Հռուփոսի և այլոց ստեղծագործություններին:

Անտիկ քաղաքական և կրոնական նշանավոր գործիչներից նրան հայտնի են Ալեքսանդր Մակեդոնացին, Դեմոսթենեսը, Ոդիսևս Հռետորը, Կոստսդիանոս կայսրը, Պետրոս առաքյալը, Սեղբեստրոսը, Կյուրեղ Ալեքսանդրացին և այլոք: Անունների այս ցանկերը կարելի է ազատորեն շարունակել: Եվ թվարկվող անուններից յուրաքանչյուրն էլ իր հերթին կարևոր է:

Այս ամենը ցույց է տալիս, որ Մագիստրոսը խորապես հարգում է անտիկ մշակույթի մեծերին: Այդ կտպը բխում է ճանաչողության ամխուսափելի անհրաժեշտությունից: Դա ամբողջանում է նաև մյուս ժողովուրդների մշակույթների հետ կապով: Դրա համար էլ նա սկսում է թարգմանություններ կատարել: Ընդ որում տարբեր լեզուներից և ամենատարբեր ու կարևոր երկերի թարգմանությունները:

Մագիստրոսը որպես թարգմանիչ

Պահլավունու ձեռք բերած ընտիր ուսումնառությունը բնորոշվում է նաև իր բազմալեզվայնությամբ:

Այդ բարեմասնությունն առաջնակարգ նշանակություն ունի յուրաքանչյուր իմաստասերի համար: Նա գիտեր մի քանի օտար լեզուներ՝ եբրայերեն, հունարեն, պարսկերեն, արաբերեն, լատիներեն, վրացերեն և ասորերեն:

Գիտության մակարդակը տվյալ ժամանակաշրջանում որոշվում է թարգմանությունների հաճախականությամբ, ընտրված հեղինակների ու երկերի հրատապությամբ և հաջողվածությամբ: Անտարակույս, դրան գումարվում են թարգմանչի նախասիրությունները, օտար հեղինակներին *«սեփականելու»* հոգեբանական խթանները, որոնք ուղեկցվում են մշակութային աշխարհի յուրացման ձևով²¹: Թարգմանչական գործը մեզանում մշտապես եղավ զարգացման և ինքնակատարելագործման կարևորագույն մի ճանապարհ: Դիմելով Սարգիս Անեցուն՝ նա գրում է. *«Եւ կարօտիմք քեզ մերծ ելոյ մեզ օգնականութեան այսպիսում իրողութեանց»*: Ուրեմն, այդ կարևոր գործի մեջ նա մեծ օգնության կարիք է զգացել՝ դրանում ընդգրկելով թե ընկերներին ու մերձավորներին, թե նաև երբեմն իր աշակերտներին:

Պտղոմեոս Երկրորդի պես *«ամտեղյակ»* չէ մյուս ազգերի գրականության և արվեստի երկերին և փորձել է դրանք փրկել կորստից: Դրա համար նախապես ճշտել է, թե ի՞նչն է կորած, և ի՞նչը՝ առկա: *«Բազում մատեանս, զորս ոչ ենք գտեալ ի մեր լեզուս՝ գերկուս մատեանս Պղատոնի, զՏիմեոսի տրամաբանութեանն և զՓեդովնի, յորս բոլոր ճառսն նախագիտականին այն պարփակեալ կայ, և զայլս բազումս յիմաստասիրացն»*²², - գրում է նա:

Ս. Արևշատյանն, անդրադառնալով սույն խնդրին, նկատում է. *«Պղատոնի հինգ տրամախոսությունների պահպանված հայերեն թարգմանությունները, որ վերագրվում էին Մագիստրոսին, կատարված են նրանից մի քանի դար առաջ՝ հունական դպրոցի մյուս ներկայացուցիչների կողմից»*²³: Իր կարծիքը գիտնականը հիմնավորում է մի կարևոր փաստարկով: Անցյալ դարի 30-ական թվականներին *«Նոր Դայկագեան բառարանի»* հեղինակները Դնդկաստանից Վենետիկ են բերում մի ձեռագիր, ուր գտնվում են Պղատոնի հինգ հնագույն թարգմանու-

թյունները: Թե բառարանագիրները, թե հետազոտողը համոզված են դրանց վաղ թարգմանություն լինելու մեջ: իսկ Ա. Սուբոյանի մասին Ա. Արևշատյանն ավելացնում է թե. «շեղվեց այդ ճանապարհից, լույս ընծայելով երեք տրամախոսությունները /Եվթեփոռնը, Սոկրատը և Տիմեուսը/ որպես Մագիստրոսի թարգմանություններ»²⁴:

Եթե այս ասպարեզում դեռևս կան շատ լուրջ տարածայնություններ, և շատ հանգամանքներ ճշտված չեն , ապա կարիք չկա այսքան թերահավատ լինել: 24^o որ նա իր Նամականիում գրեթե ոչ մի առիթով կասկածելի ոչ մի բան չի հայտնում: Գ. Ջարքիանալյանը հիշյալ թարգմանությունների կապակցությամբ, կանխելով շատերին, նշում է, թե «Տիմեոս» և «Ֆեդոն» երկխոսությունները թարգմանված են Գր. Մագիստրոսի կողմից, թեև ոմանք «երիցագոյն» կարծեցի՞ն²⁵: Բացառված չէ, որ 11-րդ դարից առաջ էլ դրանք թարգմանված լինեին, բայց քանի որ նա այդ թարգմանությունները չի գտել, ուստի անհրաժեշտ է համարել հայացնել վերջիններս: Եվ իբրև հաստատումն ասվածի հիշենք նրա խոսքերն այն կապակցությամբ. «իւրաքանչիւր մատեանքս այս մեծագոյն է, քան զտարևոր տօնականս»: Գր. Մագիստրոսը ակնհայտորեն մատնանշում է մատյանների մեծ չափերը: Հավանաբար նա դրանց ընդարձակ ծավալների մեջ ներթափանցել էր: Եվ եթե թարգմանությունները հատվածաբար են հասել, ապա չենք կարող պնդել , որ Մագիստրոսը չի կատարել իր խոստումը և դրանք մինչև վերջ չի թարգմանել: Մենք կարծում ենք, որ Գրիգոր Պաղիստինյանը է հիշյալ մի քանի երկերի իսկական թարգմանիչը, որովհետև պահպանված պատահիկների խրթին ոճը դա է հաստատում:

Պլատոնի «Ֆեդոն»-ը հոգու անմահության մասին փիլիսոփայական շատ հիմնավոր ու հետաքրքրական երկ է, որ չէր կարող չգրավել Մագիստրոսի ուշադրությունը և անհրաժեշտության դեպքում չթարգմանվեր նրա կողմից: Հետազոտողների մեծ մասը ընդունում է մագիստրոսյան թարգմանության փաստը, և կասկածի առիթ չկա: Հ. Տաշյանը պնդում է , որ «Տիմեոս» երկխոսությունը կատարել է նա²⁶ : Դա առավելապես հիմնավորվում է նրանով, որ բժշկագիտական ուղղվածություն ունի: Մագիստրոսը ոչ միայն Սիսալիոսից է ազդված, այլև Պլատոնի հիշյալ ստեղծագործությունից: Նա ավարտին պետք է հասցնեք սկսած գործը, որովհետև չէր կարող բոլորը միաժամանակ սկսել և բոլորը միաժամանակ կիսավարտ թողնել, ինչպես ենթադրվում է:

Ինչ վերաբերում է Էվկլիդեսի «Երկրաչափության» թարգմանությանը,

ապա այստեղ ևս տարակարծությունները չեն պակասում: Ս. Արևշատ-
յանը համոզված է, որ Պաիլապունյաց իշխանը կատարել է իր միայն
մեկ խոստումը՝ թարգմանելով *«Երկրաչափությունը»*²⁷: Այս դեպքում էլ
տարօրինակ թերհավատություն են ցուցաբերում երկի հայերեն
հնագույն բնագրի կազմողները՝ Ա. Աբրահամյանն ու Գ. Պետրոսյանը,
այն դեպքում, երբ Մագիստրոսը հայտնում է թարգմանությունն սկսելու
մասին²⁸: Վերջին երկու գիտնականների կարծիքով, թարգմանության
պատիվը պատկանում է Ա. Շիրակացուն: Այս դեպքում ևս ընդունելով
վաղ թարգմանության վարկածը՝ մենք հակված ենք պնդել, որ 11-րդ
դարում այդ երկի հայերեն տարբերակը չի հայտնաբերվել, ուստի
Մագիստրոսն սկսել է թարգմանել այն՝ անկախ նախորդ թարգմանության
հանգամանքից: Եվ մեզ բնավ էլ չի թվում, թե պահպանվածը հենց 7-րդ
դարի է: Կարող է նաև այդ նախորդ թարգմանությունը առհասարակ գո-
յություն չունենալ: Հայտնի է նաև, որ 5-7-րդ դարերի շատ թարգմանու-
թյուններ ուղղակի 10-11-րդ դարեր չեն հասել՝ արաբական տիրապետու-
թյան շրջանում ոչնչացված լինելու պատճառով:

Ամենաուշագրավ փաստն այն է, որ *«Երկրաչափությունը»* արաբերե-
նից հետո երկրորդը հայերենով է թարգմանվել, եթե ընդունենք մագիս-
տրոսյան թարգմանության փաստը, և ավելի վաղ, եթե ընդունենք 5-րդ
դարի թարգմանության վարկածը²⁹:

Ինչպես Պլատոնի *«Ֆեդոն»* և *«Տիմեոս»* երկխոսությունները, այնպես
էլ էվկլիդեսի *«Երկրաչափությունը»* այսօր գոյություն ունեն հատվածա-
բար: Կարծում ենք, որ պատճառը նրանց անավարտ թարգմանություն-
ները չեն, այլ կիսատ-պռատ արտագրությունները, գրչական *«խմբա-
գրումները»*: Օրինակ, Մգիստրոսի նամականու ձեռագիր ժողովածու-
ները գրիչների *«ուշադրությունը գրավում»* են՝ սկսած 17-րդ դարի վեր-
ջից: Դա չի նշանակո՞ւմ արդյոք, որ *«լրության»* դարերում նաև մագիս-
տրոսյան թարգմանությունները կարող էին նախ՝ անտեսվել, այնուհետև
աղծատվել³⁰:

Շարունակելով 5-րդ դարի մշակութային գործիչների և թարգ-
մանիչների ավանդները՝ Մագիստրոսը և իր ժամանակակիցները խորաց-
նում և ամրապնդում են կապը հունական անտիկ մշակույթի հետ՝ ապահո-
վելով վիթխարի առաջընթաց հայկական վաղ Վերածնական շարժման
ասպարեզում: Զրիստոնեական շրջանի հույն հեղինակների և նրանց
երկերի թարգմանության մասին Պաիլապունյաց իշխանը ոչինչ չի ասում:

Նա շարունակում է ամրապնդել եկեղեցաքաղաքական դաշինքը և մշակութային համագործակցությունը ասորական գրականության հետ: Թոնդրակյան աղանդի դեմ իր մղած պայքարում դիմում է Ասորոց եկեղեցու առաջնորդ Յովհան Դասրիզդային³¹: Այդ քայլը թելադրված էր նրանով, որ երկու քույր եկեղեցիները, հատկապես 6-7-րդ դարերից սկսած, համախմբվեցին ընդդեմ բյուզանդական Երկաթնակ եկեղեցու (աղանդների հարցում էլ միատեսակ մոտեցում էին մշակում):

Ասորերենից կատարված թարգմանությունների մասին Գր. Մագիստրոսը գրում է. *«բազում հոգս յանձին կալեալ զմնացեալսն բոլոր Յունաց և Ասորոց թարգմանել ոչ դանդաղեցայց»*³²: Ասորական թարգմանությունների հարցը ոչ միայն բարդ է, այլև չափազանց անորոշ: Պարզ չէ, թե իրենից ի՞նչ է ներկայացնում *«ասորոց»* կոչվածն առհասարակ և տարածաժամանակային ի՞նչ ընդգրկումներ ու բովանդակություն ունի: Բայց զգացվում է, որ խոսքը վերաբերում է քրիստոնեական շրջանի սուրբ հայրերի գրվածքների և եկեղեցական կանոններին: Թոնդրակյանների առիթով նա որոշ փակագծեր, այնուամենայնիվ, բացում է՝ գրելով. *«Եթե ուստի գտեալ զսա, ի Բար-Շամովէ իմանամք և ոչ այլ ուստեք: Եւ գտօնիցն միաբանութիւն զսուրբ տեղեացն ընկալաք յերանելոյն Յակովբայ և Կիրեղէ... գիրք սրբոյն Բարսեղի և այլ ինչ...»*³³:

Այս հիշատակություններից կարելի է ենթադրել, որ Բար-Շամովեն նշանավոր եկեղեցական գործիչ է, Հակոբը՝ կամ Հ. Սծբեցին, կամ՝ Ջանգալոսը, Կյուրեղը՝ Կ. Ալեքսանդրացին, Բարսեղը Բ. Կեսարացին: Վերջիններս նշանավոր վարդապետներ էին, և հնարավոր է, որ Մագիստրոսը հենց նրանց աշխատություններից ինչ-որ բան թարգմանած լինի: Հիշելով մոտիկ անցյալը՝ նա մատնանշում է. *«յաւուրս տեառն Ձաքարիայի և տեառն Քրիստափորի»* /9-րդ դարի 2-րդ կես/, երբ երկու քույր եկեղեցիները վերստին միավորվեցին: Պարզաբանվում են այն կարևոր կապերը, որ կան երկու ժողովուրդների միջև: Անկասկած, Մագիստրոսը ծանոթ է եղել թե ասորական գրականության մեծերին, թե իր ժամանակի նշանավոր եկեղեցական գործիչներին: Բայց ի՞նչ է թարգմանել, մնում է կատարյալ մթության մեջ:

Նա ընդհանուր գծերով մեզ է ներկայացնում թարգմանական գրականության ընդհանուր վիճակը 11-րդ դարի կեսերին: Կազմում է հետաքրքիր մատենագիտական ցանկ՝ թարգմանվելիք և անհրաժեշտ հեղինակների ստեղծագործությունների: Նշում է, թե ինչը մեզանում չկա,

և ինչն է ինքը թարգմանում: Այսպես. «Գտեալ մեր իսկ ի հայ լեզու գրեալ թարգմանչացն՝ զգիրս Ողոմայիողորոսի, զոր Դաւիթ յիշատակէ ... գտեալ եմ և զԿալիմաքոսի և զԱնդրոսնիկեայն ի հայ լեզու»³⁴:

Հետաքրքիր է, որ հընթացս նա գնահատում է թե հեղինակներին, թե արդեն կատարած թարգմանությունների որակը՝ նկատելով. «կարի յոյժ սքանչելի և հրաշալի բանաստեղծութիւնս մակաւասար բոլոր իմաստասիրական բանից»: Մագիստրոսը նախընտրում է իմաստասերների երկերը կամ իմաստասիրական «բանաստեղծությունը»՝ թարգմանելով հատկապես այդպիսիք: Այստեղ բացահայտվում է մի կարևոր հանգամանք ևս: Չէ՞ որ Պլատոնի երկերը մախ՝ գեղարվեստական և հետո միայն փիլիսոփայական ստեղծագործություններ են: Եվ բոլոր դեպքերում Պաիւլաւունյաց իշխանին հետաքրքրող գրականությունը համաքրիստոնեական խնդիրների շուրջ են կամ նվիրված հոգու և մարմնի առողջության հիմնահարցերին: Առանձնապես հետաքրքրված է վաղ քրիստոնեական հիմնախնդիրներով, գաղափարական բազմաթիվ ուղղությունների լուսաբանմամբ՝ սկսած Մանիի ուսմունքից, մինչև Պապիկյանները: Առհասարակ դժգոհ է հայերենով առկա օտարալեզու գրականության թարգմանությունների ընդհանուր վիճակից: Նաև այս կնճիռը հարթելուն են ուղղված եղել իր ջանքերը: Նա հիացած է 5-րդ դարի մեծերի ստեղծագործական սխրանքով, առիթը բաց չի թողնում այդ շրջանի թարգմանիչներին բարձր գովեստների արժանացնելու:

Զգիւտն իմաստութեան և զարուեստի նոր հանճարին,

Զգիր մերոյ ազգին, ըզվիրացւոյ և զԱղուանին,

Առեալ նշանեցին, զարմանալի թարգմանեցին,

Առաւել նորոգեցին և լուսաւոր յօրինեցին...»³⁵:

Իր «Ճազարատողեան» պոեմում բանաստեղծը փառաբանում է թե գրերի գյուտը, թե թարգմանչական ծանր և արդար գործը: Դա այն պատճառով, որ 5 և 11-րդ դարերը նման են իրենց ներքին բովանդակությամբ: Նախասիրություններով մոտ են նաև հիշյալ դարերի թարգմանիչները: Նրանք գրեթե նույն լեզուներից և նույն հեղինակների երկերն են թարգմանում: Հատկապես հայ և ասորական եկեղեցիների հետապնդած նպատակները թելադրված էին ընդհանուր շահերով: Միջնադարում թուլացած ասորական եկեղեցին օգնություն և հովանավորություն էր ստանում հայկականից:

Գր. Մագիստրոսը և «Աստվածաշունչը»

Գր.Մագիստրոսի ստեղծագործությունն աշխարհայացքային և գաղափարական տեսակետից խստագույնս ազդված է «Աստվածաշնչից»: Գրքի իմացությունն իր բարերար ազդեցությունն է թողել Մագիստրոսի կյանքի հետագա ամբողջ ընթացքի վրա, այդ կապակցությամբ բնութագրական է այն, որ նա մի առիթով իր մասին նամակներում գրում է, *«Եթե ձկնորսացն եմ աշակերտ, սակայն ոչ եմ անտեղեակ Աթենացւոցն ստորագութեանցն եւ հելլենական հանճարոյ...»*, այսինքն՝ *«Թեև ձկնորսների /փոխաբերական իմաստով՝ քրիստոնեության/ հետևորդ է, սակայն անտեղյակ չէ միաժամանակ աթենացիների տրամաբանական ուսմունքին /ստորոգութեանց/ և հելլենական հանճարին»*:³⁶

Թղթերում «Աստվածաշնչին» և նրա հերոսներին Մագիստրոսը հաճախադեպ է անդրադառնում: Այդ գիրքը նրա առաջին և ամենաճիշտ ուղեցույցն է, բանի որ նա հավատում է /և չէր կարող չհավատալ/ երկրորդ կայնքի գոյությանը: Նրա համար արտաքին գիտությունները /ու նաև արվեստները/ միջոց են, որպիսզի մարդը մախապատրաստվի անդերկրային կյանքին: Որպես հիմնավորում այն բանի, որ աստվածաշնչյան հերոսներն իրական են, իսկ նրանում նկարագրվածը՝ իրականություն, նա հետևյալն է գրում. *«Զի՞նչ օգուտ էր մեզ այսքան ազանց իմաստնոց և գիտնոց Դոմմայեցւոց, Յունաց, Դայոց և Վիրացւոց, Աղուանից և այլ բազում ազգաց թիւրեւ զաւետարանն Աստուծոյ և երկրպագել մարդոյ իբր Աստուծոյ /իմա. Քրիստոսի/, մանաւանդ առաքելոցն, զին՞չ օգուտ է քարոզել ճշմարտութիւն ստուգութեան և ինքեանք մերկ և բոկք քաղցեալ և ծարաւի շրջելն, և ի վախճանին ոմն խաչի գլխիվայր որպէս Պետրոս և համբուրէ զխաչն և ի խաչին գնոյն քարոզէ զայն, որ վեմն է հավատոյ հիման առաքելոց և մարգարէից...»*:³⁷

Մագիստրոսը տրամաբանորեն է դնում այս հարցը՝ հիմնավորելու, որ եթե Դիսուսն ընդամենը մարդ էր և ոչ աստված, ապա այսքան իմաստուններ և առաքյալներ, բազմաթիվ ազգեր ու ազգություններ, ի՞նչ կարիք ունեին երկրպագել ու աստվածացնել նրան խաբելով և մոլորեցնելով և իրենց, և իրենց հաջորդներին: Եվ ինչու՞ պիտի այսքան զոհեր լինեին, եթե *«Սուտ են գրեալքն Աւետարանին»*:

Մագիստրոսի տաղանդը զարմացնում է նաև այն բանով, որ այս բնագավառում ևս այն բացահայտվում է իբրև նոր խոսք և իբրև նոր

հայացք աշխարհին: Որպես մտածող նա բնավ կույր հավատի ու սնոտիապաշտության կողմնակից չէ: Աստծո ճանաչողությունը Մագիստրոսն համարում է գիտություն: Այդ ճանաչողությունը չպետք է հակասի տրամաբանության օրենքներին, այլապես կդառնա թյուր ու անընդունելի: Հետևելով քրիստոնեական աստվածաբանության մեծերի՝ Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Աստվածաբանի հայացքներին, ինչպես նաև հենվելով Դավթի ու Ամանիա Շիրակացու հիմնադրումների վրա, Մագիստրոսն իսկապես իրավունք է ստանում աստվածաճանաչությունը համարելու կարևորագույն գործ և *«ժայրագոյն գիտութիւն»*: Արտահամն, օրինակ, քաղդեա լինելով, հնարավորություն ուներ աստղաբաշխության շնորհիվ ճանաչել տիգերքը և ճանաչեց, բայց չգտնելով տիգերքի բարձրագույն գաղտնիքը՝ հակվեց դեպի հավատը: Հավատքի շնորհիվ ճանաչեց արդեն Աստծուն. *«վասն որոյ երևեցաւ նմա Աստուած և ծանոյց իւր ժայրագոյնն գիտութիւն»*:³⁶

Ասեմք, որ առաջ քաշելով աշխարհի ստեղծման տիեզերագիտական սկզբունքը և ռացիոնալիստական հիմքի վրա դնելով գիտությունները և կրոնը՝ Մագիստրոսը կրկին անգամ հաստատում է Վերածնության ժամանակների մարդու և գիտնականի այն դրույթը, որ բնության մեջ ամեն ինչ պետք է ենթարկվի տրամաբանության օրենքներին, այլապես կդառնա անընդունելի: Այդ իսկ պատճառով նա «Աստվածաշունչն» համարում է կյանքի գիրք: Գիրք, որով մարդուն տրված է գտնել կյանքի բարձրագույն գաղտնիքը:

Սա է, անշուշտ, պատճառն այն բանի, որ Մագիստրոսն անգիջում է պայքարում թոնդրակյան աղանդի դեմ, սուր խոսքեր ասում Սմբատ Ձարեհավանցու հասցեին: Այդ շարժման դեմ նա առաջին հերթին պայքարում է գաղափարական-բարոյական տեսանկյունից: Դա էր, թերևս պատճառը, որ նա ոչ թե ոչնչացնում է աղանդավոր բնակչությանը, այլ ավելի շատ ձեռնարկում նրանց նորից քրիստոնեական հավատին բերելու գործը: Չէ՞ որ, եթե նա կարողացել էր հավատափոխ անել Մանուչեին, ինչու՞ ապա չպիտի կաթողանար դարձի բերել իր ազգակիցներին՝ այն էլ իր համարով ու խորագիտությամբ:

Թոնդրակյան աղանդի դեմ պայքարը, անկասկած, ուներ նաև սոցիալական և դասակարգային կողմ: Որպես ազնվական Մագիստրոսը չէր կարող հանդուրժել, որ շինականները ռաքի ելնեին իրենց տեղերի դեմ կազմեին ավազակային խմբեր և ավարի ու թալանի ենթարկեին

